

ՆԱ ՊԱՌՆԱՅՈՒ

ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ
ՀԱՄԱՆՈՒՂՆԵՐԸ
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ՝
ՀԱՅԵՐԵՆՈՒՄ



АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ЯЗЫКА ИМ. Р. АЧАРЯНА

Н. А. ПАРНАСЯН

ГРАММАТИЧЕСКИЕ ОМОНИМЫ
В СОВРЕМЕННОМ
АРМЯНСКОМ ЯЗЫКЕ


ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1979

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶԻԿՈՆՈՄԻՏ

Ն. Ա. ՊԱՌՆԱՍՅԱՆ

ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՆՈՒՆՆԵՐԸ
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ
ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

A
62185



Պատ. Խմբագիր
բանասիրական գիտությունների պոկտոր պրոֆեսոր
Վ. Ա. ՔԱՍՅԱՆ

Իբրք հրատարակւորյան և ևրաշխավորել գրախոսներ.
բանասիրական գիտությունների բեկեաժոսներ
Ն. Ն. ՀԱԿՈԲՅԱՆԸ և Ն. Ա. ՕՀԱՆՅԱՆԸ:

Պատնասւյան Ն. Ա.
Պ 255 Բերականական համանունները ժամանակակից հա-
լերենում յՊատ. Խմբ. Վ. Ա. Քասյան.— Եր.: ՀՍՍՀ ԳԱ
հրատ., 1979.— 185 էջ.

Մենագրությունը նվիրված է ժամանակակից հայերենի բերա-
նական կառոցվածքի ուսումնասիրության համար խիստ կարեոր-
է առ ալտոր շուտոմնասիրված հարցերից մեկի՝ բերականական հո-
ւանո նո:քլան բնոթ թլանը: Պարզարանված է բերականական համա-
նո:քլան բմբոնումը, բնոթ:թլան ևն աոնոված ձեարանական և շա-
րալո սական համանո:քները ժամանակակից հայերենում: Ուսում-
նասիրո:թլո նր կատարված է ժամանակակից հայ գեղարվեստական
գրահանո:թլան և մամո:թլի լեզվից բաղված փաստական նլոթի,
խնչպես նաե: ժամանակակից հայերենի բերականական կառոցվածքի
ուսումնասիրո:թլանը նվիրված աշխատո:թլո:քների փման վրա:

4662020000
Պ 703 (02)—79 71—77

4 Ար
ԳԱԳ 51.2 շ-2

Ն Ե Ր Ա Մ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀԱՐՑԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՑ

Համանունությունը լեզվի արտահայտության և բովանդակության պլանների փոխհարաբերությունները բացահայտող լեզվական երևույթներից է: Այդ իսկ պատճառով նրա քննությունը ունի կարևոր նշանակություն լեզվական համակարգի, որպես հաղորդակցման միջոցի, ամբողջական ուսումնասիրությունը իրականացնելու համար: Պատահական չէ, որ այս պրոբլեմին տրվում է շատ մեծ նշանակություն տարբեր լեզվաբանական կոնցեպցիաներում և լեզվի ուսումնասիրության տարբեր բնագավառներում:

Կապված լինելով լեզվի ձևաիմաստային փոխհարաբերությունների հետ՝ համանունությունը ևս, ինչպես և համանիշությունը, երևան է գալիս լեզվական այն բոլոր մակարդակներում, որոնք ունեն լիմաստակիր միավորներ, այն է՝ բառական, ձևաբանական և շարահյուսական մակարդակներում: Վերջին երկու մակարդակներում՝ երևան եկած համանունները միավորվում են մեկ՝ քերականական համանուններ խմբի մեջ:

Եթե բառական համանունները ընդհանուր լեզվաբանական գրականության մեջ բավականաչափ ուսումնասիրվել են, ապա նույնը չի կարելի ասել քերականական համանունության մասին, որի վերաբերյալ հանդիպում են հիմնականում ընդհանուր ակնարկներ կամ առանձին դիտողություններ տարբեր լեզուների քերականական կառուցվածքների ուսումնասիրություններին, ինչպես նաև բառական համանուններին նվիրված առանձին աշխատություններում ու հոդվածներում:

Իհարկե, պետք է ընդգծել, որ վերջին շրջանում ուժեղացել է հետաքրքրությունը նաև դեպի քերականական համանունությունը՝ կապված խորքային կառույցների տեսության, լեզվական կաղապարների մշակման, ինչպես նաև մեքենական թարգմանության հարցերի հետ:

Հայ լեզվաբանական գրականության մեջ բառական համանունությունը ևս համառոտակի քննության է բաժնիված միայն դասագրքի-

րում: Վերջերս (1972 թ.) հրատարակային պաշտպանության ներկայացվեց Ռ. Շալունցի «Համանունները ժամանակակից հայերենում» գիտերտացիոն աշխատանքը¹։ Նվիրված ժամանակակից հայերենի բառական համանունների համակողմանի քննությանը: Աշխատության մեջ հեղինակը անդրադարձել է նաև տարբեր խոսքի մասերի պատկանող բառաձևերի համանունությանը, այսինքն՝ բառաբերականական համանուններին: Ռ. Շալունցը քննում է բառաբերականական համանունների այն խմբերը, որոնք տարբեր են և՛ բառական, և՛ բերականական իմաստներով: Նա տարբերակում է 18 ալոպիսի խումբ (գոյական-ածական՝ կապիտալ, կանգուն, կովան, գոյական-բայ՝ կիսել, շինել, կար, գոյական-մակբայ՝ ալել, գոյական-բիվական՝ հազար, գոյական-կապ՝ համար, հանդերձ, գոյական-գերանուն՝ այս և այլն)²:

Բուն բերականական համանունների վերաբերյալ առանձին դիտողությունների հանդիպում ենք միայն վերջին շրջանում՝ ժամանակակից հայերենի բերականական կառուցվածքի ուսումնասիրությանը նվիրված առանձին աշխատություններում³: Այսպես՝ պրոֆ. է. Աղայանը իր «Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը» աշխատության մեջ չեղոքացման երևույթին նվիրված զխում խոսելով ձևույթների, բերականական ձևերի և շարահյուսույթների իմաստադատիչ ու գործառական հակադրությունների չեղոքացման տեսության դեռևս ոչ լրիվ մշակված լինելու և շատ դժվարին խնդիրներ պարունակելու մասին՝ որպես ալոպիսին դիտում է չեղոքացման և համանունության փոխհարաբերության հարցը: Այս առիթով նա համառոտակի կանգ է առնում համանունության հարցի վրա. «Շատ հաճախ ձևականորեն նույնական ձևույթով արտահայտվում են տարբեր իմաստներ, որով ստեղծվում է բառերի ու բառաձևերի համանունություն»⁴: Որպես օրինակ է. Աղայանը բերում է իր գործում աչքի բնկած մառդ, մեքենան անխափան է գործում և զնացֆի շարժում կապակցությունները, որտեղ գործում, գործում և շարժում բառաձևերում կան երեք համանուն ում ձևույթներ: Այն, որ այստեղ

1 Ռ. Շալունց, Համանուն բառերը ժամանակակից հայերենում, գիտերտացիոն, 1972 թ., անտիպ:

2 Տե՛ս նույն տեղում, էջ 90—99:

3 Մեր աշխատանքը մոտենում էր ավարտին, երբ լույս տեսավ Ա. Աբրահամյանի «Հայերենի բերականական համանունության շուրջը» բնդարձակ հոդվածը (ՊԲՀ, 1974, № 1):

4 է. Աղայան, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, 1967, էջ 59:

առկա է համանունության երեւոյթը և ոչ թե չեզոքացման, է. Աղայանը ցույց է տալիս այն փաստարկով, որ հիշյալ ձևերը մերձավոր զույգեր չեն կազմում, իրար հակադրվում են իմաստային և գործածական բաղմաթիվ հատկանիշներով, զուգորդելիությամբ: Խոնարհման համակարգից համանունության օրինակներ են բերվում գրի-գրի ձևերը: Ընդհանուր գծերով տալով չեզոքացման ու համանունության առանձնահատկությունները և բանավիճելով Մուխինի հետ՝ է. Աղայանը իրավամբ ընդգծում է, որ ձևութային, բառային, ձևաբանական ու շարահյուսական մակարդակներում համանունությունն ու միաձուլությունը չի կարելի նույնացնել չեզոքացման հետ:

Գ. Զահուկյանը իր «Հայոց լեզվի դարգացումը և կառուցվածքը» աշխատության մեջ խոսելով լեզվական միավորների հարացուցային ու շարակարգային հարաբերությունների մասին՝ ընդգծում է, որ բովանդակության պլանի բնության հետ կապված՝ պետք է տարբերել քերականական համանունությունը քերականական բաղմիմաստությունից: «Առաջինը կապված է հարացուցային, երկրորդը՝ շարակարգային հարաբերությունների հետ: Եթե տվյալ միավորը կարելի է դիտել որպես տարբեր հարացուցաների անդամ, ապա մենք գործ ունենք համանունության հետ: Եթե տվյալ միավորի իմաստային տարբերությունները կախված են տարբեր կոնտեքստներից, ապա մենք գործ ունենք բաղմիմաստության հետ»⁵: Համանունության վերաբերյալ այլ դիտողության կամ ակնարկի այս աշխատության մեջ այլևս չենք հանդիպում: «Ժամանակակից հայերենի տեսության հիմունքներ» աշխատության մեջ թեև պետք է. Զահուկյանը չի քննում քերականական համանունության հարցը (մի բան, որ սովորելի էր), սակայն հիշվման և խոնարհման հարացուցաների բովանդակության պլանների, այսինքն՝ քերականական կարգերի քննությանը նվիրված գլուխներում նա խոսում է նաև քերականական համանունության մասին, այդ տերմինը գործածելով լայն առումով, և նրա տակ հասկանալով նաև միաձուլության (սինկրետիզմ) երեւոյթը: Այսպես՝ հիշվման համակարգի թեքութների ձևաիմաստային փոխհարաբերությունները քննելիս նա գրում է. «...Առաջին կարգի ոչ, վա(ն), ալ(ն) և նման թեքութները քերականորեն երկարժեք են, այսինքն՝ հանդես են գալիս որպես համառոտներ՝ արտահայտելով երկու տեսակ քերականական իմաստներ՝ դասային և հիշվական. երկրորդ կարգի հիշվանիշնե-

⁵ Գ. Զահուկյան, Հայոց լեզվի դարգացումը և կառուցվածքը, Երևան, 1963, էջ 104:

րից առաջ գտնված դիրքում համանունությունը չեղորանում է, և զրանք պահպանում են միայն դասանշային արժեքը (հոլովանշային արժեքն իրենց վրա են առնում երկրորդ կարգի հոլովանիշները)»⁶:

Գ. Զահուկյանը համանուն է համարում և՛ որոշյալ, և՛ ստացական հոդերը, բանի որ առաջինները բառերին հաղորդում են ստացականության իմաստ (տունը քանդվեց-նրա տունը քանդվեց), իսկ վերջինները բառերին տալիս են նաև որոշյալ առում (գիրքս, գիրքդ = իմ, քո որոշյալ գիրքը)⁷: Նույն ձևով նա համանուն է համարում այն բոլոր քերականական ձևերը, թերությունները, որոնք միաժամանակ արտահայտում են մեկից ավելի քերականական իմաստ: Մեր կարծիքով սա համանունության շատ լայն ըմբռնում է: Բերված բոլոր օրինակներում առկա է միաձուլության երևույթը, որը համանունություն կարելի է համարել միայն վերապահության մը՝ տարբերակելով այն բուն համանուններից (այս մասին մանրամասն տե՛ս «Քերականական համանունությունը և նրա տարբերակումը քերականական բաղմիմաստությունից» դրսում):

Մ. Ասատրյանը «Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր» աշխատության մեջ ապառնի դերբայի բնությունը նվիրված բաժնում անդրադառնում է նաև քերականական համանունության հարցին: Խոսելով ապառնի դերբայի ծագման մասին՝ նա գրում է. «Առաջանալով անորոշի սեռականից՝ ապառնի դերբայը, ռակայն, չի տարբերակվել նրանից ձևով, և այսպիսով ժամանակակից հայերենում ստեղծվել է համանուն ձևերի մի ամբողջ շարք»⁸:

Մ. Ասատրյանը համառոտակի բերում է համանունության օրինակներ ժամանակակից հայերենի քերականական կառուցվածքի այլ բնագավառներից (անորոշ-վաղակատար դերբայներ, անկատար դերբայբայանուն, ըղծական եղանակի ապառնի եղակի III գեմբ-ժխտական դերբայ)՝ րնդգծելով համանունության և բաղմիմաստության տարբերակման բարդությունը:

Քերականական համանունության հարցի բնությունն է նվիրված սյրոֆ. Ա. Աբրահամյանի «Հայերենի քերականական համանունության

6 Գ. Զահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974, էջ 203—204:

7 Տե՛ս նույն տեղում, էջ 212:

8 Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, հ. Բ, Երևան, 1973, էջ 291:

շուրջը» ուշագրավ հոգովածը⁹։ Ընդդեմով, որ քնդհանուր լեզվաբանության մեջ ժամանակակից ըմբռնմամբ քերականական համանունություն է համարվում քերականական երկրորդական ձևույթների համանունությունը, Ա. Աբրահամյանը ճիշտ կերպով նշում է, որ հաճախ անկախ բառաձևը բավարար չէ քերականական իմաստի, հետևաբար նաև համանունության երևույթը որոշելու համար։ Դրա համար բառաձևը պետք է վերցնել ոչ միայն հարացուցյալ, այլ նաև իր կիրառություններով։ Ա. Աբրահամյանը ընդունում է երկու տիպի համանունություն՝ ներհարացուցային և միջհարացուցային։ Ներհարացուցային համանունություն է համարում այն դեպքերը, երբ նույն հարացուցյի մեկից ավելի միավորները, ունենալով կարգային տարբեր իմաստներ, համընկնում են ձևով։ Իսկ միջհարացուցային է կոչում այնպիսի համանունությունը, երբ ձևով համընկնում են տարբեր հարացուցյների միավորները¹⁰։

Խոսելով գրաբարի հոլովման համակարգում նկատվող համանունության երևույթի մասին, Ա. Աբրահամյանը նշում է, որ այն ուներ կարգային վեց անգամ՝ վեց հոլով, որոնցից և ոչ մեկը ձևային բոլոր դրսևորումներով ամբողջական առումով չէր համընկնում ուրիշ հոլովի, այլապես վեց հոլով չէր ընդունվի¹¹։ Այնուհետև նա տալիս է գրաբարի հոլովման համակարգում նկատվող տարբեր հոլովների մասնակի համընկման դեպքերը (սեռական-տբական, ուղղական-հայցական, սեռական-տրական-գործիական և այլն)։

Անցնելով ժամանակակից հայերենի հոլովման համակարգին՝ Ա. Աբրահամյանը գրում է. «Այստեղ էլ յոթանգամանի հոլովական հարացուցյում և ոչ մի հոլով ամբողջական առումով (բոլոր դրսևորումներով) քերականական համանունություն չունի ուրիշ հոլովի հետ, որովհետև նրանցից յուրաքանչյուրը տարբեր իմաստով հանդերձ՝ մյուսներից այս կամ այն չափով տարբերվում է ձևով... Այստեղ նույնպես հոլովների համանունությունը հնարավոր է սահմանափակումներով, ոչ լիակատար չափով»¹²։ Մեր կարծիքով, եթե գրաբարի հոլովման համակարգում համանունությունը մասնակի ընդգրկում ուներ, որի հետևանքով էլ տարբերակվում էին վեց հոլովները, ապա ժամանակակից հայերենի դոյականի հոլովման համակարգում սեռական-տրական և հայցական-

9 Ա. Աբրահամյան, Հայերենի քերականական համանունության շուրջը, ՊՖՀ, 1974, № 1:

10 Տե՛ս նույն տեղում, էջ 26:

11 Տե՛ս նույն տեղում, էջ 27:

12 Նույն տեղում, էջ 29:

ուղղական, հայցական-տրական համընկնումները բնորոշում են ամբողջ հոլովական համակարգը, հետևաբար այս դեպքում պետք է խոսել ոչ թե համանունության, այլ չեզոքացման հետևանքով առաջացած բաղմիմաստության երևույթի մասին (այս մասին հանգամանորեն խոսվում է «Քերականական համանունությունը և նրա տարբերակումը քերականական բաղմիմաստությունից» գլխում)։ Այնուհետև Ա. Աբրահամյանը տալիս է դրաբարի և ժամանակակից արևելահայ դրական լեզվի խոնարհման համակարգում նկատվող ներհարացուցային համանունության դեպքերը, ինչպես նաև միջհարացուցային համանունության մի շարք դեպքեր՝ գրի (գրել, գիր), ջրի (ջրել, ջուր), բժշկի (բժշկել, բժիշկ), նաշեռ (ճաշել, ճաշ), լաւեռ, հարում, խնդում և այլն։

Ինչպես երևում է վերոբերյալ ակնարկից, հայ քերականագիտության մեջ քերականական համանունության մասին խոսվել է միայն կապված ձևությունների և բառաձևերի հետ, իսկ շարահյուսական մակարդակում համանունության երևույթի դրսևորման մասին գրեթե չի խոսվել։ «Շարահյուսական համանիշները ժամանակակից հայերենում» աշխատության մեջ մենք մատնանշել ենք միայն շարահյուսական համանուն հանդիսացող առաջին կառուցվածքներ¹³, իսկ Գ. Զահուկյանը «Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները» աշխատության մեջ ակնարկում է բառաձևերի գործառական համանունության մասին¹⁴։ Պատկերը նույնն է նաև ռուս քերականագիտության մեջ, որտեղ ևս քերականական համանունությանը նվիրված առանձին հոդվածները, ինչպես նաև ակնարկները վերաբերում են հիմնականում ձևաբանական համանուններին։

Ռուս քերականագիտության մեջ քերականական համանունության մասին ակնարկի առաջին անգամ հանդիպում ենք Լ. Բուլախովսկու մոտ, որը իր «Համանունների կյանքից» հոդվածում¹⁵ առաջարկում է տարբերակել բառական համանունները ձևաբանական համանուններից։

Ձևաբանական համանունության հարցերին է նվիրված Վինոգրադովի «Ժամանակակից ռուսերենի քերականական համանունության մասին» հոդվածը¹⁶։ Քերականական համանունության վերաբերյալ Վինո-

13 Ն. Պառնապյան, Շարահյուսական համանիշները ժամանակակից հայերենում, 1970, էջ 220։

14 Գ. Զահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները։

15 Л. А. Булаховский, Из жизни омонимом, «Русская речь», под ред. Щербы, Новая серия, III, Л., 1928.

16 В. В. Виноградов, О грамматической омонимии в современном русском языке, «Русский язык в школе», 1940, № 1.

գրագիտվել հետաքրքիր դիտողություններ ունի նաև «Համանունության և հարակից երևույթների մասին» հոդվածում: Վիճելով այն բանի դեմ, որ լեզվաբանական գրականության մեջ «ОМОНИМИЯ» տերմինը երբեմն դորձաժվում է շատ լայն առումով, որպես «ОМОФОНИЯ» բառի համանիշ, նա գրում է. «Համահնչությունը (ОМОФОНИЯ) ավելի լայն հասկացություն է, քան համանունությունը: Այն ընդգրկում է միատեսակ հնչման կամ նույնահնչության բոլոր տեսակները — և՛ ամբողջ կառուցվածքներում, և՛ բառերի կապակցության կամ նրանց մասերի մեջ, և՛ խոսքի առանձին հատվածներում, և՛ առանձին ձևույթներում»¹⁷: Համանուն տերմինը, ըստ Վինոգրադովի, պետք է կիրառել միայն իրենց բոլոր ձևվերում հնչյունական կառուցվածքով համընկնող տարբեր բառերի, բառական միավորների համար: Այդ պատճառով նա գտնում է, որ պետք է խուսափել ուսու և արևմտակարգական գրականության մեջ հանդիպող «շարահյուսական համանունություն», «ձևաբանական համանունություն» տերմիններից: Վինոգրադովը բնագրատում է Սմիռնիցկուն այն բանի համար, որ վերջինս համանուն տերմինը օգտագործում է նաև համահունչ ածանցների, ինչպես նաև այն համահունչ բառերի համար, որոնք տարբերվում են իրարից իրենց մյուս ձևերով: Նա առաջարկում է դրանք անվանել տարբեր անուններով. ալտախ, օրինակ, համահունչ ձևույթներն անվանել համաձևույթ (омоморфема): Սահմանադատելով վերջավորությունների համաձևույթությունը բառակազմական տարրերի և հիմքերի համաձևույթությունից՝ նա նպատակահարմար է համարում դրա համար դորձածել ОМОФОРМИЯ տերմինը: Վինոգրադովը գտնում է, որ ուսերենում համաձևեր (омоформы) հատկապես շատ են հանդիպում բայական համակարգում, ըստ որում պետք է տարբերակել տարբեր բառերի առանձին ձևերի համընկնումները խոնարհման հարացույցի որոշ օղակներում կամ շարքերում նկատվող հետևողական և ծավալված համաձևերից:

Նկատվում է որոշ հակասություն Վինոգրադովի տեսակետի մեջ: Մի կողմից նա գտնում է, որ համանուն շարքը է կոչել այն բառական ձևերը, որոնք իրենց բոլոր ձևերով չեն համընկնում, օրինակ՝ անդերենի դոյականները և բայերը ուղիղ ձևերում, մյուս կողմից ընդունում է մասնակի բառական համանուններ, երբ համահունչ բառերից մեկը ամբողջությամբ իր հնչյունական կառուցվածքով համընկնում է մյուս բառի

¹⁷ В. В. Виноградов, Об омонимии и смежных явлениях, ВЯ, 1960, № 5, стр. 4.

ձևաբանական ձևափոխության մի մասի հետ, նրա հարացույցի մի մասի կամ որևէ ձևի հետ (օրինակ՝ *чужом, даром, рядом* մակերաները և գոյականի գործիական հոլովները)¹⁸:

Մեր կարծիքով տերմինների ավելորդ խճողումից և ոչ հստակությունից խուսափելու համար ավելի նպատակահարմար է ընդհանուր հրեալոգիի համար պահել համաձայն տերմինը, նրա տարատեսակները (առանձին գրեթե անփոփոխելի) կոչելով բառական, քերականական (ձևաբանական և շարահյուսական), բառա-քերականական համանուններ:

Եթե ձևաբանական համանունությունը լեզվաբանական գրականության մեջ քիչ թիվ շատ ուսումնասիրված է, ապա նույնը չի կարելի ասել շարահյուսական համանունների մասին: Եթե նկատի չառնենք այն աշխատությունները, որտեղ ի հարկի խոսվում է շարահյուսական համանունների գոյության մասին¹⁹, ապա այդ պրոբլեմի բնությունը նվիրված են ընդամենը մի քանի հոդված: Դրանցից առանձնապես անհրաժեշտ է նշել չեխ լեզվաբան Դանեշի «Շարահյուսական համանունների տեսական մեկնաբանության փորձ» հոդվածը²⁰: Հեղինակը իրավացիորեն գտնում է, որ շարահյուսական համանունները կարելի է բոլորն էլ բառի լայն և նեղ առումով: Լայն առումով համանուն կարելի է համարել յուրաքանչյուր նախադասություն, որին լսողը կարող է տալ մեկից ավելի մեկնաբանություն՝ առանց հաշվի առնելու լեզվական կոնտեքստը և իրավիճակը (ситуация), որոնք կարող են թուլացնել, երբեմն նաև բանդել համակարգայնորեն պայմանավորված բաղմիմաստությունը: Այսպիսի ըմբռնմամբ համանուն կարելի է համարել նույնիսկ հարցական նախադասությունները («Ո՞ւմ», «Ո՞վ»), որտեղ գեհոտատի անհատականությունը երևան է դալիս միայն կոնտեքստի մեջ: Ըստ Դանեշի՝ շարահյուսական համանունության մի այլ տիպ բնորոշվում է այնպիսի բաղմիմաստությամբ, որ բխում է լեզվական միավորների շարահյուսական նշանակություն չունեցող բաղմիմաստությունից և համանունությունից, և այդ պատճառով նրա տեսական լուսաբանումը վերաբերում է բառական իմաստաբանությանը և ոչ թե քերականականին: Դանեշը շարահյուսական համանունությունից տարբերակում է նաև ձևաբանականը,

18 Տե՛ս նույն տեղում, էջ 13—14:

19 Տե՛ս օրինակ, А. Н. Гвоздев, Об одной проблеме стилистики, в кн. «Очерки по стилистике русского языка». Изд. 3-е, М., 1965, Г. А. Золотова, Очерк функционального синтаксиса русского языка, М., 1973.

20 Փր. Данеш, Опыт теоретической интерпретации синтаксической омонимии, ВЯ, 1964, № 6.

երբ տվյալ ձևը ունի ձևաբանական երկու նշանակություն: Շարաճյուսական համանունությունը նեղ իմաստով Դանեշը հասկանում է հետևյալ կերպ. «Եթե տվյալ ասույթը (высказывание) լսողը կարող է հասկանալ երկու ձևով՝ տմեն անգամ ալ կերպ կապելով տվյալ բառաձևերը, այդ դեպքում պետք է ենթադրել, որ լեզվի համակարգում գոյություն ունեն ինչ-որ երկու տարբեր կառուցվածքներ, որոնց համապատասխանում է միևնույն ասույթը, որը հանդիսանում է նրանց կոնկրետացումը, իրացումը (реализация)»²¹:

Հոգվածում Դանեշը փորձում է տեսականորեն լուսաբանել շարաճյուսական համանունությունը: Նրա ելակետը նախադասության շարաճյուսական բանաձև հասկացությունն է, որպես շարաճյուսական համակարգի վերացական միավոր: Շարաճյուսական բանաձևին նա հակադրում է ասույթը, այսինքն՝ խոսքի, լեզվական հազորդակցման նվազագույն միավորը, որը, որպես կանոն, հանդիսանում է որեւէ շարաճյուսական բանաձևի իրացումը: Դանեշը գտնում է, որ շարաճյուսական համանունության տեսական պարզաբանումը պետք է որոնել շարաճյուսական բանաձևերի իրացման գործընթացում: Այնուհետև նա տալիս է այն ուղիները, որոնք տանում են շարաճյուսական բանաձևից դեպի նրա վրա հիմնված ասույթը²²: Ըստ նրա՝ յուրաքանչյուր բանաձևին համապատասխանում է ասույթների որոշակի բազմություն՝ W: Դանեշը փորձում է ստացված իրաք հավասարաբեք «իդեալական» կադապարների օգելությանը տալ շարաճյուսական համանունների մեկնաբանությունը: Տարբեր շարաճյուսական բանաձևերը երբեմն ստանում են նույն բառական տեղադրումը և նույն հարացուցալին ձևաբանական ձևը, որով ստացվում են շարաճյուսական համանուններ: Նա տալիս է շարաճյուսական համանունների հետևյալ բնդհանուր սահմանումը. «Համանուն է այնպիսի ասույթը, որը B ալպի տարրաբաժանման ժամանակ նրա որոշ մակարդակներում պատկանում է մեկից ալելի ենթաբազմություններին»²³: Այնուհետև կառուցվածքալին վերլուծության միջոցով տալիս է չեխերենում իր կողմից դիտված շարաճյուսական համանունների տեսակները:

Շարաճյուսական համանունների հարցին մասամբ անդրադարձել է Վ. Ինզլին «Շարաճյուսությունը և բազմիմաստության խնդիրները» հոդ-

21 Նույն տեղում, էջ 3:

22 Մանրամասն տես նույն տեղում:

23 Նույն տեղում, էջ 14:

վածում²⁴։ Սակայն ինչպե՞ս աշտուղ խոսում է ընդհանրապես բազմիմաստություն երևույթի մասին՝ շտաբերակելով այն համանունությունից, մի բան, որ բխում է նրա առջև դրված խնդիրներից, այն է՝ պարզեւ, ինչ կարելի՞ է մերենայի միջոցով ստանալ ավելի կատարյալ թարգմանություն, քան բառացի թարգմանությունն է։ Նա գտնում է, որ բազմիմաստության պրոբլեմը լուծելու համար պետք է զիմել կոնտեքստին²⁵, ըստ որում որպես աչքպիսին կարելի է վերցնել նախադասությունը, որը մեծ մասամբ բավարար է բազմիմաստության հարցը լուծելու համար, քանի որ գրեթե բոլոր բերականական և շարահյուսական հատկանիշները երկվան ևն դալիս նախադասության սահմաններում։ Գտնելով, որ մերենական թարգմանության ժամանակ, բացի մասնագիտացված բառարանից (специализированный словарь), պետք է հենվել նախադասության բերականական կառուցվածքի վրա՝ նա եզրակացնում է, որ բերականական բազմիմաստության հարցի լուծումը պահանջում է շարահյուսական շատ հարցերի լուծում՝ ներառյալ բառերի շարահյուսության փոփոխությունը թարգմանության ժամանակ²⁶։ Ընդգծելով, որ յուրաքանչյուր բառ տրվելով կոնտեքստում կարող է պատկանել միայն մեկ խոսքի մասի և իրար բացառող խոսքի մասերը անվանելով բառական դասեր՝ ինչպե՞ս գտնում է, որ ըստ դասերի կարելի է դասակարգել նաև կոնտեքստները։ Ըստ որում բոլոր այն կոնտեքստները, որ տալիս ևն նույն կոնտեքստային ինֆորմացիան նախադասության մեջ բառական դասերի որոշակի դիրքի մասին (ինչպես, ասենք «ուղղական հոլով»), պետք է մտնեն մեկ դասի մեջ։ «Կոնտեքստների բաժանումը դասերի պետք է կատարել այնպես, որ նրանցից ստացվի հենց այն ինֆորմացիան, որն անհրաժեշտ է մի լեզվից մյուսը կատարվող թարգմանության ժամանակ բառերի շարահյուսության և բազմիմաստության պրոբլեմը լուծելու համար»²⁷։

Շարահյուսական համանունության վերաբերյալ հետաքրքիր դիտողություններ ունի Գ. Ա. Զոլոտովան, որն իր «Очерк функционального синтаксиса русского языка» աշխատության մեջ²⁸ անդրադարձել է անվան շարահյուսական ձևերի համանունության հարցին (այս մասին

24 В. Г. Ингве, Синтаксис и проблемы многозначности. «Машинный перевод». М., 1957.

25 Տե՛ս նույն տեղում, էջ 281։

26 Տե՛ս նույն տեղում, էջ 287։

27 Նույն տեղում, էջ 290։

28 Г. А. Золотова, Очерк функционального синтаксиса русского языка, М., 1973.

մանրամասն տե՛ս «Բառաձևերի և կապական կառույցների դորժառական համանունությունը» գլխում):

Սեքենական թարգմանության և տեքստի ավտոմատ վերլուծության ու համադրության խնդիրների հետ է կապված նաև Լ. Յորդանսկայայի «ողվածք» նվիրված ուսերենի շարահյուսական համանունների քննությանը: Ելակետ ընդունելով այն սկզբունքը, որ շարահյուսական համանուն պետք է համարել այն ասույթները, որոնց կարելի է վերադրել մեկից ավելի ճիշտ շարահյուսական կառուցվածքներ, հեղինակը նկարագրում է այն դեպքերը, երբ միևնույն կախյալ բառը նախադասության մեջ կարող է վերագրվել մեկից ավելի լրացյալի. օրինակ՝

кого тина фактам не соответствует, *կամ՝* Он решил раньше этой мысли начальника избегать²⁹:

Սա շարահյուսական համանունության մի մասնավոր դրսևորում է և, մեր կարծիքով, հատուկ է հիմնականում դրավոր խոսքին, քանի որ բանավոր խոսքում հնչերանգի միջոցով հնարավոր է լինում ճշտել, որոշակի դարձնել նախադասության անդամների շարակարգային կապերը (եթև դրանք շարադասական կամ ձևաբանական միջոցներով լրիվ չեն որոշվում): Հմտ. նաև հետևյալ հայերեն օրինակը՝ նայում եմ հուզված ջրերին:

Քանի որ քերականական համանունների խնդիրը ընդհանուր լեզվաբանական գրականության մեջ քննության է առնվում հիմնականում կապված բաղմիմաստության հետ, այդ իսկ պատճառով այդ հարցի վերաբերյալ առանձին լեզվաբանների տեսակետներին կանգրագանանք համանունության և բաղմիմաստության փոխհարաբերության քննությանը նվիրված գլխում:

ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՀԱՅԱՆՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ՏԱՐԲԵՐԱԿՈՒՄԸ
ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԲԱՉՄԻՄԱՍՏՈՒԹՅՈՒՆԵՅ

Ի՞նչ է համանունությունը ընդհանրապես և քերականական համանունությունը մասնավորապես, ի՞նչ տեղ է բռնում այն լեզվի արտահայ-

²⁹ Л. Н. Норданская, Синтаксическая омонимия в русском языке, НТИ серия 2, 1967, № 5.

տութիւնն և բովանդակութիւնն պլանների փոխհարաբերութիւնն մեջ, հնշով է աշխատարեւում բաղմիմաստութիւնից: Ահա հարցեր, որոնք առ այսօր համարվում են վիճելի և որոնց հայերենի ընձեռած նուրբ վրա կփորձենք պատասխանել:

Ինչպես ամբողջ լեզվի, այնպես էլ լեզվական յուրաքանչյուր իմաստակիր միավորի մեջ առկա է երկու կողմ. այն, որ նշանակվում է և աշխարհում նշանակում է: Դեռևս Սոսյուրը բնդգծել է, որ այս երկու կողմերի հարաբերությունը այնքան պարզ չէ, ինչքան թվում է առաջին հայացքից: Չնայած նշանակիչի (արտահայտութիւնն պլանն) և նշանակելի (բովանդակութիւնն պլանն), որպես լեզվական նշանի երկու կողմերի միասնութիւնը, նրանց միջև չկա ուղղադիմ հարաբերակցութիւն: Մեկ նշանը, որպէս արտահայտութիւնն միավոր, կարող է համապատասխանել բովանդակութիւնն մի բանի տարրերի և, ընդհակառակը, բովանդակութիւնն մեկ տարրը կարող է արտահայտվել տարբեր նշաններով: Առաջին դեպքում առկա է բաղմիմաստութիւնն և համանունութիւնն երկու վեց, երկրորդ դեպքում՝ համանիշութիւնն և նույնանիշութիւնն: Լեզվական այս օրինաչափութիւնը առավել հստակորեն ձևակերպել է Կարցեվսկին՝ անվանելով այն «լեզվական նշանի անհամաչափ երկվութիւնն»: Նրա կարծիքով համանունութիւնը և համանիշութիւնը ոչ այլ ինչ են եթէ ոչ մի ընդհանուր սկզբունքի երկու կողմերը: Յուրաքանչյուր նշան միաժամանակ մտնում է և՛ հենց տվյալ նշանի նշանակութիւնների շարքի մեջ, և՛ որիչ նշաններով արտահայտված նման նշանակութիւնների շարքի մեջ: Նշանի նշանակութիւնը կարելի է որոշել միայն իմաստով նրա տեղը երկու կողմի նմանների վրա, բայց որում երկու շարքերն էլ բաղ են: ու շարժական, բանի որ լեզվում անընդհատ տեղի է ունենում նշանների և նրանց նշանակութիւնների տեղաշարժ³⁰, նա գտնում է, որ համանունութիւնը և համանիշութիւնը հատուկ են լեզվական ամբողջ համակարգին, նրա բոլոր իմաստակիր միավորներին: Սակայն համաճեռն տեքմինր Կարցեվսկին գործածում է լայն տուումով՝ նրա տակ հասկանալով բաղմիմաստութիւնը ընդհանրապէս և այն հստակորեն շտարրերակելով համահնչութիւնն (արդի ըմբոմամբ՝ համանունութիւնն) երկուցից:

Ձեի և իմաստի փոխհարաբերութիւնն հարցին անդրադարձել է նաև Սկալիշկան³¹: նա ևս ընդգծում է ձեի և իմաստի փոխհարաբերութիւնն

³⁰ S. Karcevski, Du Dualisme asymetrique du signe linguistique, Cahiers Ferdinand de Saussure, 14, Geneve, 1956.

³¹ В. Скаличка, Асимметричный дуализм языковых единиц, «Пражский лингвистический кружок», М., 1967.

հարցի բարդությունը և դրա որոշման համար շատ կարևոր է համարում համանունությունը և համիմաստությունը (ОМОНИМИЯ և ОМОСЕМИЯ) երկ-
փուլյան բնությունը: Ճշմարիտ հանդիսանում է համիմաստ (ОМОСЕМИ-
ЧЕСТВИЕ) միավորը, այսինքն՝ այն միշտ ունի նույն նշանակությունը: Այն
արտահայտվում է համանուն միավորով, որն ունի միշտ նույն անվա-
նումը: Համանուն միավորի սահմանները սովորաբար համընկնում են
համիմաստ միավորի սահմաններին: Համանուն միավորի ծավալը եր-
բեմն ապելի լայն է համիմաստ միավորի սահմանից: Այսպես առաջա-
նում է համանունությունը և համանունական խումբը: Իսկ երբ ապելի
լայն է համիմաստ միավորի ծավալը, առկա է համիմաստությունը և
համիմաստ խումբը (իմա՝ նույնանիշ—ն. Պ.): Համանունական խումբը
ունի ձևական հիմք, նույնանիշական՝ իմաստային»³²: Հետևելով Կար-
ցեակուն՝ Սկալիչկան ևս ընդունում է լեզվական նշանի անհամաչափ
երկվությունը և ապա անցնում ձևությունների և սեմանների (բովանդակու-
թյան պլանի նվազագույն միավոր) փոխհարաբերությունների բնու-
թյանը: Նա ևս բազմիմաստության և համանունության միջև որոշակի
սահման չի դնում՝ համանունություն տեղափոխելով լայն առու-
մով և նրա տակ հասկանալով և՛ բազմիմաստությունը, և՛ բուն համա-
նությունը: Այնինչ դրանք երևույթներ են, որոնք թեև զովար, սա-
կայն անհրաժեշտ է սահմանադատել: Նույն նշանակիչի արտահայտած
տարբեր իմաստների միջև կարող է լինել իմաստային կապ համաժա-
մանակյա կտրվածքով, այդպիսի կապը կարող է միայն պատմականո-
րեն վերականգնվել, իսկ հաճախ այդպիսի կապ չի կարելի գտնել:

Առաջին դեպքում մենք զործ ունենք բազմիմաստության, մյուս դեպքե-
րում՝ համանունության երևույթի հետ:

Բառային բազմիմաստության և համանունության սահմանադա-
ման հարցը միշտ համարվել է համանունության հետ կապված ամենա-
զովար պրոբլեմը և եղել է իմաստաբանության հարցերով զբաղվող լեզ-
վաբանների ուշադրության կենտրոնում: Այն դարձել է նաև հասուն բա-
նավեճի նյութ (1957 թվականին): Հարցի զովարությունը հանդիսանում է
այն բանին, որ հաճախ անտեսվել են դրանց միջև եղած որակային տար-
բերությունները: Այսպես, շատերը բազմիմաստությունը (բառի մեջ մի
բանի՝ իրար կապված նշանակությունների առկայությունը) համարում
են գիտական ֆիկցիա (Շտայնիսլ, Կոտեբնյա, Շչիրբա, Զվեզդինյի և
այլն): Ըստ սրանց կարծիքի, ունենք այնքան բառ, որքան իմաստ ունի

³² Նույն տեղում, էջ 121: Սկալիչկան սխեմիմ է կոչում իմաստով մոտ ան-
վանումները:

տվյալ հնչյունական բառը³³։ Իսկ առանձին լեզվաբանների կողմից ավելորդ կեղծ է համարվում համանունություն հարցը։ Այսպես, օրինակ, Խաչենկոն գրում է. «Լեզվի ընդհանուր տեսության տեսակետից համանունության հարցը մեզ թվում է կարծեցյալ պրոբլեմ, որովհետև այն վերաբերում է ոչ թե բուն լեզվական նշանների նույնությանը և տարբերությանը (որոնց հետ զործ ունի լեզվաբանը), այլ միայն երկու կամ ավելի դեպիգնատորների նույնությանը»³⁴։ Այս երկու տեսակետներն էլ, մեր կարծիքով, ընդունելի չեն, բանի որ լեզվում գոյություն ունի ոչ միանշանակության (բազմանշանակության) երևույթը՝ իր երկու՝ որակապես իրարից տարբերվող տարատեսակներով³⁵։

Շենդելսը քերականական բաղմիմաստության հարցերին նվիրված ուշադրով հոդվածում³⁶ խոսելով բաղմիմաստության և համանունության սահմանադատման դժվարության մասին՝ գտնում է, որ այդ ընդհանուր երևույթը կարելի է կոչել կա՛մ համանունություն, կա՛մ բաղմիմաստություն։ Նա պայմանականորեն ընդունում է բաղմիմաստություն տերմինը և ապա բնութային է առնում գերմաներենի բառաձևերի (քերականական ձևերի) բաղմիմաստությունը. իհարկե, ինքն էլ ընդունում է, որ, օրինակ, գերմաներենում հոլովական մի բանի ձևերի բաղմիմաստությունը բոլորովին այլ ծագում ունի, քան պերֆեկտի և ապառնիի բաղմիմաստությունը։

Պասեկը անգլերենի բառափոխական տծանցների (վերջավորությունների) համանունության հարցին նվիրված հոդվածում³⁷ ընդունելով, որ համահունչ բառերի առկայության դեպքում թեև դժվար, բայց խիստ կարևոր է բաղմիմաստության և համանունության տարբերակումը, միաժամանակ գտնում է, որ քերականական համանունության դեպքում այդպիսի սահմանադատումը չունի վճռական նշանակություն։

Համանունության և բաղմիմաստության տարբերակման պրոբլեմը տնտեսվում է նաև մերենական լարգմանության հարցերին նվիրված հոդվածներում։ Այստեղ սովորաբար ընդունվում է համանունության

³³ *Sh"u A. A. Потебня*, Из записок по русской грамматике, т. IV, М.—Л., 1941, стр. 198; *И. В. Щерба*, Опыт общей теории лексикографии, «Избр. работы по языкознанию и фонетике», т. I, ЛГУ, 1958, стр. 54—91; *В. А. Звегинцев*, Семаснология, М., 1957, стр. 125.

³⁴ *А. В. Исаченко*, О грамматическом значении, ВЯ, 1961, № 1, стр. 29.

³⁵ *А. И. Смирницкий*, Лексикология английского языка, М., 1966, стр. 160.

³⁶ *Е. И. Шендельс*, О грамматической полисемии, ВЯ, 1962, № 3.

³⁷ *В. В. Пассек*, К омонимии словоизменительных суффиксов (окончаний) в английском языке, ВЯ, 1960, № 5.

աշխարհի սահմանում, որն ավելի գործնական է և ծառայում է իրենց սուգի գրված հարցի լուծմանը: «Եթե բառը ունի մի քանի նշանակություն, ապա դասի տեսության համար ավելի հարմար է աշխարհ: յուրաքանչյուր նշանակությունը համարել առանձին բառ, աշխինքն՝ համանունացնել աշխարհի նշանակությունները», — գրում է Խոլոդովիչը³⁸:

Չնայած համանունության և բազմիմաստության տարբերակումը չի հետաքրքրում կիրառական լեզվաբանության ներկայացուցիչներին, սակայն հենց բազմիմաստության պրոբլեմը (ըստ սրում ոչ միայն բառական, այլ նաև ձևաբանական բազմիմաստության) գտնվում է նրանց հետաքրքրությունների կենտրոնում: Այդ հարցին են նվիրված, օրինակ, ինչպես ասացինք, Ինգվիկի «Շարահյուսությունը և բազմիմաստության պրոբլեմը»³⁹, նաև Հարպերի «Կոնտեքստալին վերլուծություն» հոդվածները⁴⁰:

Բազմիմաստությունը և համանունությունը լեզվի համակարգում գործառուղ լեզվական նշանի ոչ մենիմաստության երևույթի երկու՝ իրարից սրակապես տարբեր տեսակներն են (հմմտ. փող-դրամ. փող-երաժշտական գործիք և, ասենք, դաստրան-դասասենյակ և աշակերտներ): Ըստ Սմիռնիցկու առաջին տիպի հարաբերակցությունները (փող-փող) պատահական են, ներքնապես չհասված լեզվի գոյության և դարպացման ընդհանուր օրինաչափությունների հետ, իսկ երկրորդ տիպի հարաբերությունները (դասարան), շատ տարածված են և բնականոն յուրաքանչյուր լեզվի համար⁴¹: Առաջին դեպքում գործ ունենք համանունության, երկրորդ դեպքում՝ բազմիմաստության երևույթի հետ:

Ընդհանուր սեմիոտիկական տեսանկյունից բազմիմաստությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ տնտեսման սկզբունքի երևույթ լեզվում, մարդկային մտածողության դասակարգող և ընդհանրացնող գործունեության արդյունք⁴²: Իրականությունը անսահման է, իսկ հիշողության հնարավորությունները՝ սահմանափակ: Եվ եթե լեզվի կողային կառույցի մեջ իրականության յուրաքանչյուր երևույթին համապատասխաներ առանձին նյութական միավոր, այն կվերածվեր պիտակների անսահման և

³⁸ А. А. Холдрович, Опыт теории подклассов слов, ВЯ, 1960, № 1.

³⁹ В. Г. Ингве, *նշված աշխ.*

⁴⁰ К. Е. Harper, Contextual Analysis, Меч. translation, vol. 4, № 3, 1956.

⁴¹ См. А. И. Смирницкий, Лексикология английского языка, стр. 160.

⁴² См. А. Мартине, Основы общей лингвистики, «Новое в лингвистике», вып. 3, М., 1963, стр. 532—538.

անսխտեմ հավաքածուի, որը պահել չի կարող ոչ մի բնական հիւղ կառուցվածք⁴³:

Հենց մարդկային հիշողության սահմանափակությունը և մարդկային գիտակցության դասակարգող գործունեությունն էլ պայմանավորում են լեզվական նշանի բազմաֆունկցիոնալությունը, այսինքն՝ նրա կցվածությունը ոչ թե իրականության ինչ-որ մեկ երևույթի, այլ երևույթների դասերի: Բայց դա հնարավոր է լինում միայն այնքան ժամանակ, բանի դեռ այդ երևույթները գիտակցության մեջ ինչ-որ ձևով դուրսդրվում, կապվում են իրար հետ: Հենց որ գիտակցության մեջ այդ կապը խախտվում է, խախտվում է նաև նշանի միասնությունը, այն բաժանվում է սովորական համահունչ ձևերի՝ оμοфон-ների: Վերջիններս արդեն ոչ թե մեկ նշան են, այլ մի բանի նշաններ, որոնք նույնն են միայն իրենց մեկ կողմով՝ արտահայտության պլանով: Ստեպանովը, հենվելով Կուրիլովիչի՝ առաջնային և երկրորդային ֆունկցիաների գրույթի վրա՝ և Ս. Կարցևսկով լեզվական նշանի անհամաչափ երկվորյան տեսության վրա, բազմիմաստության և համառոտության այդ անջատումը սահմանում է հետևյալ կերպ. «Հենց որ C₁-ի իմաստների տարբերակները (варнации) հասնում են այնպիսի աստիճանի, որ դանդում է այլ բառ այդ նույն իմաստով, այդ աստիճանը սլաակերվում է C₁ կետով, մենք ասում ենք, որ հասել է տարբերակների սահմանը: C₁-ը և C₂-ը արդեն նույնահունչ բառեր են տարբեր իմաստներով, այսինքն՝ համանուններ են»⁴⁵: Մի կողմ ընդհանրված այս տեսակետի բնագատությունը (փաստորեն այստեղ ջնջվում են բազմիմաստության և համանունության սահմանները), ասենք, որ սա համանունների առաջացման միայն մեկ ուղին է: Լիզվում համանուններ են առաջանում նաև լեզվական տարբեր նշանների հնչյունափոխության հետևանքով (օրինակ՝ գրել-գրել), փոխառությունների հետևանքով և պարզապես նույն հնչյունային կոմպլեքսը երևույթների տարբեր՝ շրջապատող դասերի ամրանալու հետևանքով:

Ընդունվում է, որ բազմիմաստությունը լեզվի գործառության անհրաժեշտ պայմանն է, իսկ համանունությունը՝ այդ գործառության կողմ-

⁴³ Sht. Karcevskiy, նշված աշխ., Дж. Локк, Опыт о человеческом разуме, М., 1898, стр. 403; Виноградов В. В., Русский язык Грамм. учение о слове, М., 1947, стр. 15.

⁴⁴ Е. Курилович, Заметки о значении слова, сб. «Очерки по лингвистике», М., 1962.

⁴⁵ Ю. С. Степанов, Основы языкознания, М., 1966, стр. 155.

նակի արդյունքը և այդ պատճառով գտնվում է լեզվական համակարգի ծայրամասում: Այս աեսանկյունով ելև զուգահեռ անցկացնենք բաղմիմաստություն-համանունություն և համանիշույթյուն-նույնանիշություն հասկացությունների միջև, ապա բաղմիմաստությունը կհարաբերակցի համանիշույթյանը, իսկ համանունությունը՝ նույնանիշույթյանը:

Բաղմիմաստության և համանունության սահմանման հիմքում հաճախ բնկած է լինում լեզվազգացողությունը, որի հիման վրա լեզվաբանը այս կամ այն հնչյունախումբը կարող է դիտել կա՛մ որպես բաղմիմաստ, կա՛մ որպես համանուն՝ կախված միայն այն բանից, թե ինչպիսին է նա դիտում տվյալ հնչյունախմբին կցված իմաստները՝ կապված, թե՛ չկապված, հետո՛ւ, թե մոտիկ, հիմնական, թե՛ փոխաբերական: Այս սուբյեկտիվիզմը հաղթահարելու համար կիրառվում են լեզվաբանական չափանիշներ, որոնք հիմնականում երեքն են՝ 1) ստուգաբանական, որի ժամանակ հիմք է ընդունվում բառերի ծագումնաբանական կապը, 2) ձևաբանական, որը հիմնված է ձևակազմական ու բառակազմական կաղապարների և իմաստների բառաշարահյուսական կապերի հաշվառման վրա և 3) իմաստաբանական, որը հաշվի է առնում իմաստների հարաբերակցությունը, բառի իմաստային կառուցվածքը: Այս չափանիշների վրա հանդամանորեն կանգ չենք առնում, քանի որ դրանք կիրառվում են բառական համանունությունը բաղմիմաստությունից սահմանազանելու համար: Մեր նպատակն է, խոսքը մասնավորելով քերականական համանունության շուրջը, տալ, թե ինչպես է այն դրսևորվում ժամանակակից հայերենում և ինչպես պետք է այն տարբերակել քերականական բաղմիմաստությունից:

Քերականական համանուններ առելով հասկանում ենք այն քերականական ձևույթները, բառաձևերը և շարահյուսական կառույցները, որոնք լինելով նույնական արտահայտությամբ պլանում, տարբերվում են բովանդակությամբ պլանում, այսինքն՝ տարբեր են իրենց իմաստով և ունեն գործառնության ու զուգորդելիության տարբեր ոլորտներ:

Ժամանակակից հայերենի քերականական համանունների մասին խոսելիս՝ առաջին հերթին պետք է անդրադառնալ քերականական ձևվույթներին, քանի որ վերջիններիս միջոցով են ժամանակակից հայերենում հիմնականում արտահայտվում քերականական իմաստներն ու հարաբերությունները:

Հայտնի է, որ քերականական ձևվույթները, չունենալով անկախ կիրառություն, հանդես են գալիս բառի կազմում և նրան հաղորդում են որոշակի քերականական հատկանիշներ (իմաստներ), իսկ խոսքի մեջ՝

շտրակարգում, արտահայտում են որոշակի քերականական հարաբերություններ: Քերականական ձևույթների դիտարկումից երևում է, որ շատ հաճախ արտահայտության պլանի մեկ միավորին (հնչյունին կամ հնչյունախմբին) բովանդակության պլանում համապատասխանում է մեկից ավելի միավոր, Սկալիչկայի տեքմինով ասած՝ սեմա-իմաստույթ (Սկալիչկան սեմա է առկա մեկ իմաստային նվագագույն միավորը): Այսպես, ժամանակակից հայերենի խոնարհման համակարգում գործառուղ ի ձևույթը արտահայտում է երեք քերականական իմաստ՝ I դեմքի, եղակի թվի, անցյալ ժամանակի (հմմտ. գրեցի, կարգացի, գրեի, կարգայի), այսինքն՝ մեկ ձևույթին (թերույթին) համապատասխանում է 3 սեմա: Հարց է առաջանում. այս դեպքում առկա է համանունության երկվույթը, թե՞ բաղմիմաստության: Սկալիչկան, խոսելով ձևույթի և սեմայի այսպիսի փոխհարաբերության մասին, գտնում է, որ ձևույթը, որ պարունակում է մի քանի սեմա, նման է համանունական իմբին⁴⁶: Գ. Զահուկյանը ևս, ինչպես ասացինք, այդպիսի ձևույթները համարում է համանուն⁴⁷: Սակայն այստեղ մենք գործ ունենք համանունությունից որակապես տարբեր երկույթի՝ բաղմիմաստության մի տեսակի հետ, որ լեզվաբանության մեջ հայտնի է միաձուլություն (սինկրետիզմ) անվանմամբ: Ժիշտ է, տվյալ դեպքում հնչյունական նույն ձևով արտահայտվում են իմաստային բնդհանրություն շունեցող քերականական իմաստներ (դեմք, թիվ, ժամանակ), սակայն դրանք, նախ, համատեղելի իմաստներ են, և հետո անբաժան հանդես են դալիս և՛ հարացույցի մեջ, և՛ շտրակարգային հարաբերություններում՝ գործառույթյան մեջ (հմմտ. ես գնացի տուն, և գնացի-գնացիր-գնաց): Այսպիսի բաղմիմաստությունը պայմանականորեն կարելի է կոչել համաժամանակյա բաղմիմաստություն: Բաղմիմաստության այս տարատեսակը հատուկ է նաև տվյալ ձևույթներով բաղադրված բառաձևերին, այսինքն՝ ձևույթը իր արտահայտած տարբեր քերականական իմաստները հաղորդում է բառին միաժամանակ (գր+եց+ի=I դեմք, եղակի թիվ ունեցող բառաձև): Ժամանակակից հայերենում այդպիսի բաղմիմաստ ձևույթներ և բառաձևեր հանդիպում են հատկապես խոնարհման համակարգում:

Քերականական բաղմիմաստության մյուս տեսակը, որն իր բնույթով նման է բառական բաղմիմաստությանը, կարելի է կոչել գործառական բաղմիմաստություն, երբ կոնտեքստում երևան է դալիս տվյալ ձև-

46 Տե՛ս В. Скаличка, նշված աշխ.

47 Տե՛ս Գ. Զահուկյան, Ժամանակակից հայերենի տեսական հիմունքները, էջ 203, 212 և այլն:

վույթի կամ բառաձևի՝ պոտենցիալ կերպով պարունակած և հիմնականում մեկ անփոփոխական իմաստով միավորված իմաստներից միայն մեկը: Այսպես, ժամանակակից հայերենի հոլովման համակարգում գործառուղ ից ձևույթը և նրանով կազմված բառաձևերը ունեն անջատման ընդհանուր քերականական իմաստ, սակայն գործառութիւն ընթացքում, պահպանելով իրենց հիմնական անջատման իմաստը, արտահայտում են զանազան հարաբերություններ. տեղային (նա հեռացավ քաղաքից), ժամանակային (գիշերվանից անձրև է գալիս), պատճառային (վախից քունը փախավ), մտանական (գրքերից մեկը կորավ) և այլն: Այսպիսի բաղմիմաստություն կարող են ունենալ նաև համաժամանակյա բաղմիմաստություն ունեցող բայաձևերը (հմմտ. «Երեկ զնացի թատրոն» և «Եթե զնացի, կ'աշտնեմ», կամ՝ «Եթե տեսնեմ, կ'ստեմ» և «Գնացի՛ տեսնեմ մարդ չկա»):

Քերականական համանունությունը որակապես տարբերվում է վերոբերյալ բաղմիմաստության ձևերից: Առաջին և ամենակարևոր տարբերությունը հետևյալն է: Եթե ավել ձևույթը, արտահայտելով տարբեր քերականական իմաստներ, գտնվում է հարացուցային նույն տեղում, ապա առկա է բաղմիմաստության երևույթը, իսկ եթե նույն հնչյունաւկազմն ունեցող ձևույթը երևան է գալիս տարբեր հարացույցներում՝ միաժամանակ արտահայտելով քերականական տարբեր իմաստներ, առկա է համանունության երևույթը: Այսինքն՝ քերականական համանունությունը բաղմիմաստությունից տարբերակելու համար անհրաժեշտ է նախ և առաջ որոշել ավել քերականական ձևի (ձևույթի, բառաձևի) տեղը լեզվի հարացուցային համակարգում: Դարձյալ անդրադառնանք վերևի օրինակին: Խ ձևույթը, ինչպես ասացինք, գործառելով խոնարհման հարացույցում արտահայտում է որոշակի քերականական իմաստներ (I դեմք, եղակի թիվ, անցյալ ժամանակ), այսինքն՝ բաղմիմաստ է: Սակայն ժամանակակից հայերենի հոլովման համակարգում ես մենք հանդիպում ենք Խ ձևույթին, որը գոյականներին հաղորդում է սեռական-արական հոլովի իմաստ: Խոնարհման և հոլովման հարացույցներում գործառուղ այս Խ-երը երկու տարբեր, սակայն նույնահունչ (նույն ձևն ունեցող) ձևույթներ են, որոնք տարբերվում են և՛ արտահայտած քերականական իմաստներով, և՛ գործառությամբ, և՛ զուգորդելիությամբ (մեկ Խ-ն զուգորդվում է գոյականներին, մյուսը՝ բայերին, ավելի ճիշտ՝ բայահիմքերին)⁴⁸, ինչպես նաև կազմած հակադրություններով:

⁴⁸ Խհարկեմ, բայահիմքն ու գոյականը երբեմն կարող են նույնանալ՝ ստեղծելով համանուն բայաձևեր (տե՛ս էջ 25)։

Բերենք մեկ այլ օրինակ. ժամանակակից հայերենում բերականական ձևույթի արժեք ունի ում հնչյունախումբը, որը դարձյալ զործառում է և՛ հոլովման, և՛ խոնարհման համակարգերում: Այստեղ ևս առկա է համանունության երևույթը, այսինքն՝ ունենք երկու նույնահունչ ձևույթ, որոնք հանդես են գալիս տարբեր հարացույցներում, արտահայտում են տարբեր բերականական իմաստներ, ունեն զործառության և զուգորդելիության տարբեր ոլորտներ (հմմտ. քար-քարի-քարում և կարգալ-կարգում, նաև՝ ջուր-ջրի-ջրում և ջրել-ջրում): Մակայն, ի տարբերություն նախորդ համանունների (ի-ի), սրանք ունեն ծագման ընդհանրություն. որը առանձին բնության նյութ է:

Համանուն ձևույթները կարող են երևան գալ ոչ միայն տարբեր հարացույցներում, այլ նաև նույն հարացույցի տարբեր ենթահարացույցներում: Այսպես, օրինակ, խոնարհման համակարգի ընդհանուր հարացույցում զործառում են երեք համանուն ի ձևույթներ: Մեկը վերելում հիշատակված անցյալ ժամանակի I դեմք, եզակի թիվ նշանակող ձևույթն է, որը երևան է գալիս սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակի ենթահարացույցում (գրեցի, գրեցիք, գրեց). մյուսը եզակի III դեմք նշանակող ձևույթ է, որ հանդես է գալիս և խոնարհման բայերի բղձական եղանակի սպառնի ժամանակի ենթահարացույցում, (գրեմ, գրես, գրի), երրորդը ժխտական դերբայի ի վերջավորությունն է (գրել, գրում, գրելու, գրած, գրել, գրող, գրի):

Բաղմիմաստ և համանուն ձևույթների երկրորդ տարբերությունը հետևյալն է. քանի որ բաղմիմաստ ձևույթը հանդես է գալիս հարացույցային նույն տեղում, ունի զուգորդելիության նույն ոլորտը, այն իր արտահայտած բոլոր իմաստները հաղորդում է այն բառաձևին, որի կազմի մեջ մտնում է: Ի հոլովման թևույթի արտահայտած բոլոր իմաստները զրոսերվում են քաբի, պապի, ջրի և այլ բառաձևերում, իսկ համանունն ի ձևույթի արտահայտած իմաստները՝ գրեցի, կարգացի, խմեցի և այլ բառաձևերում: Այսինքն՝ եթե ձևույթը բաղմիմաստ է, նույնպիսի բաղմիմաստություն ունի նաև նրանով բաղադրված բառաձևը:

Այլ է պատկերը համանունության դեպքում. այստեղ արդեն ձևույթների համանունությունից չի բխում բառաձևերի համանունություն, քանի որ նրանք զուգորդվում են տարբեր խոսքի մասերի (տարբեր բառահիմքերի). այսինքն՝ բառաձևերի մեջ ձևույթների համանունությունը չեզոքանում է: Այսպես օրինակ, ի համանուն ձևույթներով կազմված քարի, պատի և գրեցի, վագեցի բառաձևերը արդեն համանուն չեն:

Սակայն այս օրինաչափությունը համընդհանուր չէ: Հաճախ համա-
նուն ձևույթը, գրվելով տարբեր հարացույցներում կամ ենթահարա-
ցույցներում զործառուղ նույն բառահիմքի վրա, առաջացնում է համա-
նուն բառախմբեր: Ինքինք աշգրիտի համանուն բառաձևերի մի քանի
օրինակ: Հայտնի է, որ ժամանակակից հայերենում գոյականներից ել
բայականական ածանցով կազմվում են և խոնարհման պարզ բայեր,
ինչպես՝ ճաշ-ճաշել, գործ-գործել, ամբար-ամբարել, արդուկ-արդուկել,
բժշկ-բժշկել, թամբ-թամբել և այլն: Հայտնի է նաև, որ և խոնարհման
պարզ բայերի ըզձական ապառնու ձևերը կազմվում են ներկայի հիմ-
քից, սրբ հենց բացարձակ հիմքն է՝ բայարմատը. հետևաբար ըզձակա-
նի նշակի III դեմքի ձևը կլինի բացարձակ բայահիմք+ի, այսինքն՝
գործի, հաշի, ամբարի, արդուկի, բժշկի, բամբի և այլն: Սակայն, քանի
որ այս բայահիմքերը զործառու են նաև որպես գոյականներ, նրանց
սեռական-տրական հոլովաձևերը ձևով համընկնում են հիշյալ բայա-
ձևերին՝ նրանց հետ կազմելով համանունական շարք: Այս համանունա-
կան շարքի մեջ են մտնում նաև հիշյալ բայերի ժխտական դերբայները:
Այսպիսով, ժամանակակից հայերենում զործառու է գոյականի սե-
ռական-տրական հոլովաձև—նույնարմատ բայի ըզձականի եզակի III
դեմքի բայաձև — ժխտական դերբայ համանունական շարքը: Հիշյալ
բառաձևերը համանունական շարք չեն կազմում միայն հետևյալ դեպ-
քերում. ա) երբ տվյալ գոյականը չի պատկանում ի հոլովման (օրինակ՝
արյունեկ-արյունի, արյուն-արյան, սիրել-սիրի, սեր-սիրո, ձյունեկ-
ձյունի, ձյուն-ձյան և այլն)¹⁹. բ) երբ բայահիմքի գոյականը բայական-
մության ժամանակ ենթարկվում է հնչյունափոխության, իսկ հոլովման
ժամանակ՝ ոչ. օրինակ՝ վարագուրել-վարագուրի, վարագույր+ի, բու-
րել-բուրի, բույր+ի, դիզել-դիզի, դեզ+ի, նվիրել-նվիրի, նվեր+ի, ծըն-
կել-ծնկի, ծունկ+ի և այլն: Այստեղ հնչյունափոխություն-ոչ հնչյունա-
փոխություն հակադրությունը կատարում է նաև իմաստատարբեռա-
կիչ դեր:

Համանունական շարք են կազմում նաև վերոհիշյալ գոյականների
ներգոյական հոլովաձևերը և համապատասխան բայերի անկատար դեր-
բայները. ինչպես՝ ճաշ+ում, ճաշել-ճաշում (եմ), գործ+ում, գործել-
գործում (եմ), ամբար+ում, ամբարել-ամբարում (եմ) և այլն:

Ինչպես երևում է նաև բերված օրինակներից, ի տարբերություն բա-

49 եթե տվյալ գոյականը ունի ի-ով զուգահեռ հոլովաձև, առաջանում է բային հա-
մանուն ձև (հմտ. արյանի||արյունի՝ գ., արյունի՝ բ., ձյանի||ձյունի՝ գ., ձյունի՝ բ. և այլն):

ռական համանուններ, բառածեղի համանունությունը հիմնականում պատահական բնույթ չի կրում և ընդգրկում է որոշակի օրինաչափության ենթարկվող ամբողջական խմբեր, այսինքն՝ համակարգային բնույթ ունի (աշխատության մեջ բերված են ժամանակակից հայերենում գործածող բառածեղի՝ որոշակի օրինաչափության ենթարկվող բոլոր համանունական շարքերը):

Քերականական բազմիմաստության և համանունության տարբերակման լրացուցիչ չափանիշ են նաև այն համանիշական և նույնանիշական կապերը, որոնց մեջ մտնում է տվյալ ձևը: Եթե տվյալ ձևը միևնույն նույնանիշական շարքում արտահայտում է մի բանի քերականական իմաստներ, որոնք հատուկ են նաև նույնանիշական շարքի մյուս անդամներին, առկա է բազմիմաստության երևույթը: Իսկ եթե տվյալ ձևը մտնում է երկու կամ ավելի նույնանիշական շարքերի մեջ՝ յուրաքանչյուրում արտահայտելով բոլորովին տարբեր իմաստ կամ իմաստներ, առկա է համանունության երևույթը: Այսպես, ի համանուն ձևերից մեկը նույնանիշական շարք է կազմում սեռական-տրական հոլովական իմաստ արտահայտող ու, վա, ց, ա, ո, ոչ ձևերի հետ, (սեղան + ի, գին + ու, աղջկ + ա...) մյուսը՝ կզակի I դեմքի իմաստ արտահայտող ա ձևերի հետ (գրեց + ի, մտ + ա), երրորդը՝ ըզմականի կզակի III դեմքի վերջավորությունը՝ ա ձևերի հետ (գր + ի, կարդ + ա): Այս չափանիշը ընդհանրական չէ, որովհետև քերականական համանունական խմբի անդամները կաբող են նաև չունենալ նույնանիշ ձևեր (օրինակ՝ ում-ը):

Չնայած քերականական բազմիմաստության և համանունության տարբերակման չափանիշները ավելի որոշակի են, քան բառականինը, սակայն այստեղ ևս հանդիպում են դեպքեր, երբ դժվար է որոշել՝ քերականական բազմիմաստության, թե համանունության երևույթի հետ գործ ունենք. դեպքեր, որոնք նույնիսկ բանավեճերի նյութ են հանդիսացել: Բերենք մեկ-երկու օրինակ:

Ժամանակակից հայերենի գերբայների համակարգում գործառույթ է ապառնի գերբայը, որը կազմվում է անբոշ գերբայի վրա ավելացնելով ու ձևերով (գրելու, կարդալու և այլն): Սակայն անբոշ գերբայը, հոլովվելով և ենթարկվելով ու հոլովման, սեռական-տրական հոլովածեղում ստանում է դարձյալ ու, որով ժամանակակից հայերենում առաջանում է ամբողջ բայական համակարգն ընդգրկող անբոշ դերբայի սեռական-տրական հոլովածեղ-ապառնի դերբայը համանունական շարքը (հայանի է, որ ծագումով ապառնի դերբայը կապված է անբոշ սեռա-

կան հոլովաձևի հետ)։ Այն, որ այստեղ առկա է համանունություն, անվիճելի է, բայց ահա այդ համանունների սահմանափակ ընդհանրությունը ղեկավարություն է ներկայացնում և այդ պատճառով հայ քերականագիտության մեջ տարակարծությունների տեղիք է տրվել։ Այն, որ սահմանական եղանակի ապառնի ժամանակի կազմությանը մասնակցում է ապառնի դերբայը, անվիճելի է, սակայն այդ բայածիկ անկախ կիրառությունները տարբեր ձևով են մեկնաբանվում։ Պրոֆ. Սեակը, օրինակ, գտնում է, որ ապառնի դերբայը կարող է ունենալ նաև որոշչալին կիրառություն, իսկ պրոֆ. Ա. Աբրահամյանը գտնում է, որ ապառնի դերբայը ունի միայն ձևաբանական արժեք՝ կազմելով բաղադրյալ ժամանակներ (գրելու եմ, գրելու կլինեմ), պրոֆ. Աղայանը ավելի է նեղացնում ապառնի դերբայի դործառության սահմանները՝ գտնելով, որ երկրորդական բաղադրյալ ժամանակներում զնալու ձևը կարելի է դիտել և՛ որպես ապառնի դերբայ, և՛ որպես անբերդի սեռական հոլովաձև։ Մեր կարծիքով ավելի ընդունելի է պրոֆ. Ա. Աբրահամյանի կարծիքը։

Մեկ այլ օրինակ. ժամանակակից հայերենի գոյականների հոլովման համակարգում սեռական և արական հոլովական իմաստներն արտահայտելու համար գործառում է նույն ձևույթը, ավելի ճիշտ՝ նույնանիշ ձևույթների շարքը։ Բանավեճի նյութ է հանդիսացել այն հարցը, թե այս դեպքում մենք զործ ունենք նույն հոլովի բազմիմաստություն, թե տարբեր՝ համանուն հոլովների հետ։ Այն, որ այս ձևը հանդես է գալիս հոլովման հարացույցի նույն տեղում, և նրա արտահայտած իմաստները միավորվում են մեկ սեփականական իմաստի մեջ (որը տվյալ դեպքում հանգման իմաստն է), խոսում է այն տեսակետի օգտին, որ այստեղ առկա է մեկ հոլովի բազմիմաստության երևույթը։

Սակայն այս ձևույթով բաղադրված բառաձևերի տարբեր դիրքերում հանդես գալը (մի դեպքում զուգորդվում է գոյականի, մյուս դեպքում՝ բայի) և երկրորդ դիրքում որոշիչ հոդ ընդունելու առանձնահատկությունը (հմտ. սեղանի ոտը և սոսնձալ սեղանին) հիմք է հանդիսացել այն տեսակետի համար, որ այստեղ դիտվի տարբեր՝ սեռական և արական հոլովների համանունության երևույթը։

Համանունության և բազմիմաստության սահմանադատման համար կարևոր է նաև շեղոքացման երևույթի դիտարկումը⁵⁰։ Քերականական մեկարդակում շեղոքացում է համարվում այն երևույթը, երբ միևնույն

⁵⁰ См. А. А. Мартине, Нейтрализация и синкретизм, ВЯ, 1969, № 2; Мухом. О грамматической нейтрализации, ВЯ, 1962, № 5; է. Աղայան, նշված աշխ., էջ 56—69։

քերականական կարգի մեջ մտնող մերձավոր հակադրություն կազմող զույգերը ձևով կամ բովանդակությամբ նույնանում են, այսինքն՝ հակադրությունը վերանում է: Երբ այդպիսի նույնացում՝ չեզոքացում կատարվում է բովանդակության պլանում, գործում է համանիշության երկվայթը: Այսպես՝ «Շունը կենդանի է» և «Շները կենդանիներն են» նախադասություններում տեղի է ունեցել եղակիություն-հոգնակիություն հակադրության չեզոքացում, և երկու ձևերը՝ շունը, շները արտահայտում են նույն՝ համարականության — հոգնակիության իմաստը: Իսկ հետևյալ նախադասությունների մեջ՝ «Վաղը ևս մեկնելու եմ Մոսկվա» և «Վաղը ևս մեկնում եմ Մոսկվա», չեզոքացել է բաղբի ապառնի ժամանակ — ներկա ժամանակ հակադրությունը. երկու ձևերն էլ (մեկնում եմ, մեկնելու եմ) արտահայտում են ապառնի ժամանակի իմաստ, այսինքն՝ համանիշ են⁵¹:

Երբ հակադրությունը չեզոքանում է արտահայտության պլանում, այսինքն՝ երբ վերանում է միևնույն քերականական կարգի մերձավորագույն հակադրություն կազմող զույգերի ձևային տարբերությունը, ապա այս դեպքում արդեն չեզոքացման հետևանքով առաջանում է բաղձիմաստություն: Այսպես՝ վերևում բերված օրինակներում շունը և մեկնում եմ ձևերը, ձեռք բերելով նոր իմաստներ (առաջինը՝ հոգնակիության, երկրորդը՝ ապառնի ժամանակի), միաժամանակ դառնում են բաղձիմաստ, որովհետև պահպանում են նաև իրենց հիմնական իմաստները (եղակի թվի, ներկա ժամանակի): (Հմտ. վերևի նախադասությունները հետևյալների հետ՝ Շունը բնած է, Հիմա մեկնում եմ): Այստեղ առկա է բաղձիմաստության (ոչ համաձայնության) երևույթը, որովհետև շարակարգի մեջ ձեռք բերելով նոր իմաստ, հիշյալ ձևերը պահպանում են իրենց հիմնական իմաստի երանգը՝ այն հաղորդելով նոր իմաստին: Երբ խոսողը ապագայում կատարվելիք գործողության մասին հաղորդում է ներկա ժամանակի ձևով, ապա այն ներկայացնում է որպես խիստ հավաստի, կարծեք արդեն կատարման ընթացքի մեջ գտնվող (հմտ. վաղը գնում եմ (մեկնում եմ) Մոսկվա):

Եթե այս տեսանկյունով դիտենք ժամանակակից հայերենի հոլովման համակարգը, կտեսնենք, որ այստեղ պատմական դարգացման ընթացքում տեղի է ունեցել սեռական հոլով-տրական հոլով ձևային հակադրության չեզոքացում, որի հետևանքով ընդարձակվել է մեկ բառա-

⁵¹ Այս մասին մանրամասն տե՛ս Ն. Պառնապյան, Շարահյուսական համանիշները ժամանակակից հայերենում, 1970, էջ 127—183:

ձևի իմաստալին ծավալը, այսինքն՝ սեղանի, բռնջ, աղջկա և այլ ձևերը արտահայտում են և՛ սեռական հոլովի, և՛ տրական հոլովի իմաստները, սրոնք միավորվում են մեկ ընդհանուր հոլովական իմաստով՝ հանգման իմաստով: Եթե, ինչպես ճիշտ կերպով նշում է Ա. Աբրահամյանը⁵², ալոպիսի չկոորացումը, գրաբարի նման, լինել մասնակի, ապա մենք կխոսենք համանունության երևույթի մասին, ճիշտ աչնպես, ինչպես համանունություն ենք համարում անորոշ գերբայ — վաղակատար գերբայ ձևային հակադրության վերացումը բայերի որոշակի խմբում (բայց ոչ ամբողջ բայական համակարգում): Սակայն, բանի որ այդ նույնացումը ընդգրկում է գոյականների հոլովման ամբողջ համակարգը առանց բացառությունների, հետևաբար այստեղ հավանաբար պետք է խոսել բազմիմաստության երևույթի մասին⁵³:

Քերականական համանունության սահմանները որոշելու համար այն անհրաժեշտ է սահմանադատել նաև բառական համանունությունից: Առնչակցվում և սահմանադատման կարիք են զգում հատկապես համաձայնության բառակերպը և բառերը: Հայտնի է, որ բառական համանուն են համարվում այն բառերը, որոնք նույնական լինելով իրենց հնչյունակազմով՝ արտահայտում են բոլորովին տարբեր բառական իմաստներ (հմմտ. այր, մարտ, փող, տոն, շահ և այլն): Բառական համանունների տարբերակման որոշիչ չափանիշ է միևնույն խոսքի մասին պատկանելը, քերականական նույն հատկանիշներն ունենալը (օրինակ՝ ալոպիս և ալոպիս համանունները, երկուսն էլ գոյական են, ունեն եղակի թիվ, կարող են հոլովվել, ստանալ հոգ, զուգորդվել գոյականների և բայերի հետ): Ի տարբերություն բառական համանունների, համանուն բառաձևերը արտահայտում են տարբեր քերականական իմաստներ ու հարաբերություններ, ունեն տարբեր քերականական հատկանիշներ, նրանք, ինչպես կտեսնենք, հիմնականում պատկանում են տարբեր խոսքի մասերի: Ալոպիս՝ ջրեր և ջրեր համանուն բառաձևերից մեկը գոյական է՝ զրված հոգնակի թվով (ջուր-ջրեր), երկրորդը՝ բայի բղձական եղանակի անցյալ ժամանակի եղակի 3-րդ դեմքի բայաձև (ջրել-ջրեր): Հետևաբար սրանք քերականական համանուններ են:

Համանուն բառաձևերը տարբերվում են բառական համանուններից

⁵² Ա. Աբրահամյան, Հայերենի քերականական համանունության շուրջը, ՊՐՀ, 1974, № 1:

⁵³ Բայերի հետ զուգորդվելիս հիշյալ ձևերի և հոգ ստանալու հատկությունը դիտվում է գիրբային, գործառական առանձնահատկություն (տե՛ս Գ. Զախովյան, Հայոց լեզվի գարգացումը և կառուցվածքը, 1969):

նաև նրանով, որ դրանց բառահիմքերը ձևով նույնը լինելով՝ ծագումով և իմաստով ևս կապված են իրար: Նրանց քերականական, ինչպես նաև բառական նոր որակ տվողը համանուն քերականական ձևույթներն են՝ Գրի (գրել) և գրի (գիր) համանունների բառական և քերականական տարբերությունները պայմանավորված են իլ-իշ համանուն քերականական ձևույթների առկայությամբ (հմմտ. նաև քարեր-քարեր, հուշեր-հուշեր, ծաղկում-ծաղկում և այլն): Եթե համանունների բառական կամ քերականական իմաստային ընդհանրությունների առկայությունը նշանակենք + նշանով, տարբերությունները՝ —, ապա համանուն բառերի և բառաձևերի տարբերությունները կարելի էլինի պատկերել հետևյալ աղյուսակով՝

Համանունական խմբեր	Բառիմաստ (հիմնական ձևույթ)	Քերականական հատկանիշ
բառեր	—	—
բառաձևեր	+	—

Բառաձևերի համանունությունից պետք է տարբերակել նաև այն դեպքերը, երբ համանունության մի եզրում բառի ուղիղ ձև է, մյուսում՝ բառաձև և կամ երբ համանուն են տարբեր խոսքի մասերի պատկանող, սակայն բառերի ուղիղ ձևեր (հմմտ. կար-կար, արի- արի, ավել-ավել, աղային-աղային, շինել-շինել և այլն): Այսպիսի համանունները լեզվաբանական դրականության մեջ ընդունված է կոչել բառաքերականական համանուններ: Սրանք իրարից տարբերվում են և՛ բառիմաստով, և՛ քերականական իմաստներով: Մենք բառաքերականական համանուն ենք համարում տարբեր խոսքի մասերի պատկանող այն բառերն ու բառաձևերը, որոնց մեջ համանուն են և՛ հիմնական ձևույթները, և՛ հրկրորդական ձևույթները (հմմտ. աղ+ային₁, աղ+ային₂), իսկ երբ հիմնական ձևույթները նույնն են, սակայն բառերն ու բառաձևերը զործառույթ են տարբեր խոսքի մասերի համակարգում, դրանք մենք համարում ենք քերականական համանուններ (տե՛ս «Բառաձևերի համանունական շարքերը» գլուխը):

Մանր.— Սմիռնիցկին տարբերակում է պարզ բառաքերականական համանուններ (երբ գուցադիպող բառերը պատկանում են միևնույն խոսքի մասին) և բարդ բառաքերականական համանուններ (երբ դրանք պատկանում են տարբեր խոսքի մասերի)⁵⁴:

⁵⁴ А. И. Смирницкий, Лексикология английского языка. М., 1966.

Համանուն քերականական ձևույթները ևս հաճախ համանունական շարք են կազմում նաև լեզվական այնպիսի միավորների, հատկապես ձևույթների հետ, որոնց արժեքը զուտ քերականական չէ: Այսպես՝ քերականական ձևույթների համանունական շարքերում հաճախ հանդիպում են նաև բառակազմական ձևույթներ. օրինակ՝ ան₁—տես+ան, ան₂—բարձր+ան+ալ, ան₃—ան+տուն, ան₄—վաղ+ան: Համանունական այս շարքում առաջին երկու անդամները քերականական ձևույթներ են, վերջին երկուսը՝ բառակազմական: Իհարկե, բառակազմական արժեքի հետ միասին վերջիններս ունեն նաև որոշակի քերականական դեր (երկուսն էլ ածականակերտ ածանցներ են):

Այստեղ առաջանում է մի կարևոր հարց: Արդյո՞ք անհրաժեշտ է քերականական ձևույթների համանունական շարքում թվարկել նաև բառակազմական ձևույթները, և եթե այո, ապա ինչպես պետք է կոչել համանունական այդ շարքերը՝ քերականական ձևույթների համանունական շարքեր, թե՞ ընդհանրապես երկրորդական ձևույթների համանունական շարքեր: Իհարկե, ավելի լայն անվանումը կլինեի երկրորդական ձևույթների համանունական շարքեր անվանումը, սակայն նկատի ունենալով այն հանգամանքը, որ մեր այս աշխատության նպատակն է քննել քերականական համանունները, այն է՝ ձևի և բովանդակության համանունական հարաբերությունները ժամանակակից հայերենի քերականական համակարգում, ինչպես նաև այն հանգամանքը, որ բառակազմական երկրորդական ձևույթները ունեն նաև որոշակի քերականական արժեք, մենք նպատակահարմար ենք համարում հիշյալ համանունական խմբերը կոչել քերականական: Մեր մյուս փաստարկն այն է, որ մենք քննության ենք առնում հիմնականում քերականական ձևույթների համանունական շարքերը: Բառակազմական ձևույթները բերվում են միայն այն դեպքում, երբ նրանք համանունական շարք են կազմում քերականականների հետ (այստեղ չեն քննվում երկրորդական ձևույթների այն համանունական շարքերը, որոնց մեջ չեն մտնում քերականական ձևույթներ, ինչպես՝ վերլ—վերցկտնյա, վերշ—վերադառնալ):

Ծիշա այնպես, ինչպես բառական համանունները ըստ ծագման բաժանվում են երկու խմբի՝ նույնարմատ (հոմոգեն) և տարարմատ (հետերոգեն), նույն ձևով համանուն քերականական ձևույթները կարող են լինել ծագումով նույնը և կամ ծագումնաբանական կապ չունենալ: Այսպես՝ ում₁ և ում₂ համանունները ծագումով նույնն են (խոնարհման համակարգի ում-ը առաջացել է ներդոյական հոլովի ում վերջավորությունից): Ծագումով նույնն են նաև տրականի ու վերջավորությունը և ապառ-

նի ղերբայ ու վերջավորությունը: Այստեղ համանունությունը առաջացել է քերականական բաղմիմաստ ձևույթների իմաստային ճեղքման չեփանքով, երբ նույն ձևույթի աբսոլյուտաժ տարբեր իմաստների միջև հղած կապը միազնեղ է (հմմտ. որդու և զրեւո (եմ) կամ՝ բաղարում և զնում (եմ):

Տարբեր ծագում ունեն, օրինակ, ելլ-ելջ համանունները, որոնցից վաղակատար ղերբայի վերջավորությունը առաջացել է եալ > ել հնչյունափոխության հետևանքով: Ծագումով կապված չեն նաև խոնարհման և հոլովման համակարգերում գործառող իլ և իշ համանունները (գործիլ-գործի):

Եթե քերականական համանուն ձևույթները բոլոր ծագման կարելի է դասակարգել 2 խմբի, ապա նույնը չի կարելի անել բառաձևերի համանունության գեղարում: Այստեղ արդեն համանունությունը առաջանում է հիմնականում նույն հիմքին համանուն ձևույթների կցվելու հետևանքով, ինչպես՝ գրիլ-գրիշ, գործիլ-գործիշ, խաղումլ-խաղումշ, զրելուլ-զրելուշ և այլն:

Անհրաժեշտ է ընդգծել, որ համանունությունը, որպես լեզվի արտահայտության և բովանդակության պլանների փոխհարաբերությունները բացահայտող երևույթներից մեկը, որոշվում է լեզվի համաժամանակյա կտրվածքում, այսինքն՝ երևան է գալիս լեզվի զարգացման որոշակի շրջանում: Եթե բառը կամ բնդհանրապես լեզվական իմաստակիր միավորը պատմական զարգացման շրջանում ենթարկվել է որոշակի իմաստափոխության՝ կորցնելով հին իմաստը և ձևը բերելով նորը (իմաստի շրջում), ապա այդ միավորի հին իմաստը նորի հետ չենք համարում համանուն: Այսպես՝ համանուն չի կարելի համարել հին հայերենի պարապել-ը և ժամանակակից հայերենի պարապել-ը, հին հայերենի պարել-ը և ժամանակակից հայերենի պարել-ը կամ՝ հին հայերենի խոնարհման համակարգի եմ-ը (զրեմ) և ժամանակակից հայերենի եմ-ը (զրեմ) և այլն: Այս ձևերը համանուն կարելի էր համարել միայն այն դեպքում, երբ դրանց երկու իմաստներն էլ լեզվի զարգացման տվյալ շրջանում գոյություն ունենային: Իհարկե, համանունական շտրբերը (հատկապես շտրբի սահմանները) որոշելիս երբեմն անհրաժեշտ է լինում կատարել նաև պատմական քննություն, բայց դա արվում է միայն որպես օժանդակ միջոց, ինչպես նաև համանունների առաջացման ուղիները բացահայտելու համար:

Շարահյուսական մակարդակում համանունությունը կապված է մի կողմից կառուցվածքով, բառային կազմով և հնչերանգով լրիվ նույնա-

կան նախադասությունների տարբեր հաղորդակցալին դեր կատարելու, մյուս կողմից՝ շարահյուսական նվազագույն միավորների՝ բառաձևերի ու կապական կառույցների, տարբեր շարահյուսական հարաբերությունների ցույց տալու և նախադասության մեջ տարբեր պաշտոններ կատարելու երևույթի հետ: Հմմտ. օրինակ, «Ուր գնամ»₁ (բուն հարցում) և «Ուր գնամ»₂ (= Չեմ կարող գնալ), ինչպես նաև՝ «Կառուցվում է տուն», «Նկարեց տուն», «Գնում եմ տուն», «Սա տուն է»:

Շարահյուսական համանունների են ստեղծվում նաև այն դեպքում, երբ, շարահյուսությամբ պայմանավորված, ճիշտ չի բնկավում բառի շարահյուսական կապը, և հնարավոր է լինում ալոպիսի կապի երկաթի մեկ-նաբանություն. օրինակ՝ նայում եմ հուզված ջրերին: Սակայն այս բնույթի համանունություններ բանավոր խոսքում հիմնականում չեզոքանում է, բանի որ հնչերանդի միջոցով մեծ մասամբ հնարավոր է լինում ճշտել բառերի շարահյուսական կապը:

Երբեմն համանուն շարահյուսական կառուցվածքներ են ստեղծվում նաև համանուն բառաձևերի՝ նույն դիրքում հանդես գալու հետևանքով: Ալոպիսիք են, օրինակ, պարզ և բազադրյալ համանուն ստորոգյալները, երբ մի կողմից ունենք անկատար կամ ապառնի գերբայնեքով կազմված վերլուծական ժամանակներով արտահայտված պարզ ստորոգյալներ, մյուս կողմից՝ նրանց համանուն բայանուն զոյականների անորոշ առման նդակի ուղղական հոլովով կամ անորոշ գերբայի սեռական-տրական հոլովաձևով դրված ստորոգելիական վերադիր ունեցող բազադրյալ ստորոգյալներ: Օրինակ՝ խմելու է₁ (նա ջուրը խմելու է), խմելու է₂ (Այդ ջուրը խմելու է), կառուցում է₁ (Շենքը կառուցում է № 1 տրեստը) և կառուցում է₂ (Դա մեծ կառուցում է):

Սույն աշխատության մեջ մենք քննության ենք ենթարկում առաջին երկու տիպի համանունները, որոնք հնարավոր է որոշակի օրինաչափության ենթարկել (հանդամանորեն տե՛ս «Շարահյուսական համանուններ» գլխում):

ՉԵՎԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՆՈՒՆՆԵՐ

Ժամանակակից հայերենի ձևաբանական համանունները քննելիս տարբերակում ենք երկու կողմ՝ ձևույթների համանունություն և բառաձևերի համանունություն: Ձևույթներից աչտակ դնելով են առնվում բերականական ձևույթները: Բառակազմական երկրորդական ձևույթներից բերվում են միայն նրանք, որոնք համանունական շարք են կազմում քերականական ձևույթների հետ. դա արվում է ձևույթային մակարդակում գործառուղ համանունական շարքերը լրիվ ներկայացնելու համար:

Ա. ՀԱՄԱՆՈՒՆ ՉԵՎՈՒՅԹՆԵՐ

Քերականական ձևույթների համանունական շարքերը որոշելիս առաջնորդվել ենք հետևյալ սկզբունքով. վերցրել ենք համանակակից հայերենի հոլովման համակարգում գործառուղ բերականական ձևույթները առանձին-առանձին և համեմատությունների միջոցով պարզել, թե հայերենի ձևաբանական համակարգում նրանք ինչպիսի համանունական շարքեր են կազմում: Նույն ձևով քննության ենք առել նաև խոնարհման համակարգում գործառուղ բերականական ձևույթները. եթե տվյալ ձևույթը ունի համանուն նաև բառակազմության բնագավառում, բերել ենք նաև դրանք, ինչպես ասացինք, համանունական շարքերը ամբողջությամբ ներկայացնելու համար: Համանունական շարքերը բնենելիս՝ տվել ենք յուրաքանչյուր ձևույթի գործառույթյան ոլորտը, մերձավոր հակադրությունները և նույնանիշական կամ համանիշական շարքերը, եթե այդպիսիք կան:

1. ՀՈՒՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՉԵՎՈՒՅԹՆԵՐԸ ԵՎ ՆԻՆՆԵ ԿԱԶՄԱՆ ՀԱՄԱՆՈՒՆԱԿԱՆ ՇԱՐՔԵՐԸ

Ի

1. Ի ձևույթը, հանդես գալով հոլովման հարացույցում, արտահայտում է սեռական-տրական հոլովի իմաստ: Կազմելով հակադրություն

մյուս հոլովական վերջավորությունների հետ (օրինակ՝ բաղաբ+ի, բաղաբ+ից, բաղաբ+ով, բաղաբ+ում)՝ այն միաժամանակ նույնանիշական շարք է կազմում ու, ան, ա, ու, վա, ոչ, ց, լան ձևույթների հետ։ Այս ձևույթը հոլովման համակարգի ամենատարածված ձևույթն է, զուգորդվում է ժամանակակից հայերենի գոյականների մեծ մասին։ Ունի գործառական և զուգորդելիության հետևյալ առանձնահատկությունը. գոյականական բառակապակցություններում չի զուգորդվում որոշիչ հոգի հետ, իսկ բայական բառակապակցություններում մեծ մասամբ հանդես է գալիս և որոշիչ հոգի հետ. օրինակ՝ սեղան+ի ոտքը, զրբ+ի թերթը, փողոց+ի երթևեկությունը և մոտենալ սեղան+ի+ն, նայել սար+ի+ն, հանձնել աշակերտ+ի+ն և այլն։

2. Համանուն ի ձևույթը, գործառնելով խոնարհման համակարգում, մտնում է ըզձական եղանակի սպառնի ժամանակի հարացույցի մեջ և արտահայտելով եղակի երրորդ դեմքի խմատ՝ կազմում է մերձավորադույն հակադրություն եղակի I և II դեմքերի վերջավորությունների հետ (զր+եմ, զր—ես, զր+ի), ինչպես նաև հոգնակի III դեմքի վերջավորության հետ (զր+ի—զր+եմ)։ Այն գործառնում է և խոնարհման բայերի ոլորտում և նույնանիշական շարք է կազմում Ա խոնարհման բայերի ոլորտում գործառող նույնիմաստ ա ձևույթի հետ (զր+ի, կարգ+ա)։

3. Նույնաձև ի ձևույթը, կազմելով բայի ժխտման դերբայը, մըտնում է ենթադրական եղանակի ժխտական խոնարհման հարացույցի մեջ՝ չեմ գրի, չես գրի, չի գրի...։ Այս ի ձևույթը ևս գործառնում է և խոնարհման բայերի ոլորտում և նույնանիշական շարք է կազմում ա ձևույթի հետ։

4. Խոնարհման համակարգում գործառնում է մեկ համանուն ի ձևույթ ևս, որն արտահայտում է անցյալ ժամանակի եղակի I դեմքի խմատ։ Դրվելով բայերի անցյալի հիմքի վրա՝ կերտում է սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակի եղակի առաջին դեմքի բայաձևեր՝ գրեց+ի, կարդաց+ի, դրվելով ներկայի հիմքի վրա՝ ե և ս խոնարհիչների հետ կերտում է ըզձական եղանակի անցյալ ժամանակի բայաձևեր՝ զր+ե+ի, կարդա+յ+ի։ Սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակի բայաձևեր կազմելու համար այս ձևույթը դրվում է ե և Ա խոնարհման պարզ բայերի, պատճառական և կրավորական բայերի անցյալի հիմքի վրա և մերձավորադույն հակադրություն է կազմում եղակի II և III դեմք նշանակող ձևույթների հետ (զրեց+ի, գրեց+ի, գրեց—ո), ինչպես նաև հոգնակի I դեմք նշանակող ձևույթի հետ (զրեց+ի—գրեց+իևք)։ Միաժամանակ այն նույնանիշական շարք

է կազմում ան, են, ն, չ ածանց ունեցող բայերի ոլորտում գործառող նույնանիշ ա ձևույթի հետ (մտաեցա, հեռացա):

Այսպիսով՝ ժամանակակից հայերենի ձևաբանական համակարգում առկա են 4 համանուն ի ձևույթներ, որոնցից մեկը գործառում է հոլովման հարացուցում, երբը՝ խոնարհման հարացուցի տարրեր ենթահարացուցներում: Եթե գործածելու լինենք Ա. Աբրահամյանի տերմինները, ապա առաջին և հաջորդ երեք ի-երի միջև առկա է միջհարացուցային համանունության երևույթը, իսկ վերջին երեք ի-երի միջև՝ ներհարացուցային համանունություն:

5. Համանունական այս շարքը լրիվ ներկայացնելու համար անհրաժեշտ է նշել նաև բառակազմական ի ձևույթը, որը ծագումով նույնը լինելով սեռական-տրական հոլովի ի-ի հետ, անջատվել է նրանից, ստացել բոլորովին նոր՝ բառակազմական իմաստ և վերածվել վերջինիս համանուն ձևի: Գոյականներից այն կերտում է որևէ նյութից կազմված, բաղկացած լինելու հատկանշային իմաստ ունեցող ածականներ (երկաթի, պողպատի, արծաթի և այլն) և համանիշական շարք է կազմում և լա ածանցների հետ:

6. Ժամանակակից հայերենում գործառում է նաև առաջիններին համանուն ի նախադրությունը, որն ունի սահմանափակ կիրառություն. հատուկ է հիմնականում հոռոտրական ոճին (գործածվում է մեծ մասամբ զրաբարյան բարացած զաբձվածքներում). օրինակ՝ ի գիտություն. ի տնօրինություն, ի փառս:

Այսպիսով՝ համանունների այս շարքի պատկերը հետևյալն է.

Ի₁ — սեռական-տրական հոլովի իմաստ արտահայտող ձևույթ (գիր-գրի),

Ի₂ — բայի ըզձական եղանակի ներկա ժամանակի եզակի III դեմքի վերջավորություն (զրեմ-զրես-գրի...),

Ի₃ — ժխտման դերբայ կազմող ձևույթ (չեմ գրի, չես գրի),

Ի₄ — բայի անցյալ ժամանակի եզակի I դեմքի վերջավորություն (գրեցի, գրեի),

Ի₅ — ածականակերտ ածանց (արծաթի զգալ),

Ի₆ — նախադրություն (ի բարօրություն, ի փառս):

ՈՒ

1. Ու ձևույթը, գործառնելով հոլովման համակարգում, արտահայտում է սեռական-տրական հոլովի իմաստ և կազմում ու հոլովման խումբը. օրինակներ՝ գին-ու, որդ-ու, պատան-ու, խնամ-ու և այլն:

Հիշյալ ձևույթը, հանդես գալով ի-ով վերջացող գոյականների, անորոշ դերբայի, ինչպես նաև ամուսին, անկողին, մահ բառերի հոլովման հարացույցում և հակադրություն կազմելով մյուս հոլովների հետ (որդի-որդու-որդուց-որդով), միաժամանակ մտնում է ի, ու, ան, վա, ոչ, ո, ա, ց, յան նույնանիշական շարքի մեջ:

2. Համանուն ու ձևույթը գործառուում է ժամանակակից հայերենի խոնարհման համակարգում՝ մասնակցելով պատճառական բայերի հրամայական եղանակի եղակի երկրորդ դեմքի կազմությանը: Այն դրվում է նշված բայերի անցյալի հիմքի վրա. օրինակներ՝ մոտեցր-ու, հեռացր-ու, հիշեցր-ու, ավելացր-ու, սովորեցր-ու և այլն: Հանդես գալով պատճառական բայերի հրամայական եղանակի հարացույցում և հակադրվելով հոգնակի ձևերին (մոտեցր+ու — մոտեցր+եմ)՝ այն միաժամանակ կազմում է նույնանիշական շարք իր, ա ձևույթների հետ (մոտեցր+ու, կարգ+ա, գր+իր):

3. Խոնարհման համակարգում գործառուում է մեկ համանուն ու ձևույթ էս: Այն, դրվելով բայերի դերբայական հիմքի վրա, կերտում է ժամանակակից հայերենի ապառնի դերբայը. օրինակներ՝ գրել+ու, կարդալ+ու, վաղել+ու, կերցնել+ու, հիշել+ու, իմանալ+ու և այլն: Այս ձևույթը ծագումով կապված է հոլովակերտ ու ձևույթի հետ, սակայն գործառությամբ և իմաստով արդեն հեռացել է վերջինից՝ վերածվելով համանուն ձևույթի:

Հիշյալ քերականական ձևույթներից առաջինի և հաջորդ երկուսի միջև առկա է միջհարացուցային համանունություն, վերջին երկուսի միջև՝ ներհարացուցային համանունություն:

4. Ժամանակակից հայերենում կա նաև ու բառակազմական ձևույթը, որն ունի ածականակերտ արժեք (գոյականներից ու բայարմատներից կերտում է ածականներ). այսպես՝ հատ+ու, ազդ+ու, շինծ+ու, քս+ու: Այս ածանցը ժողովրդական—խոսակցական լեզվում հանդիպում է նաև մակբայակերտ արժեքով. ինչպես՝ ահ+ու, վախ+ու, ինադ+ու և այլն:

5. Համանունական այս շարքը լրիվ ներկայացնելու համար անհրաժեշտ է հիշատակել նաև ու համադասական շաղկապը, որը թեև քերականական ձևույթ է, սակայն, ի տարբերություն նախորդների, ունի անկախ կիրառություն, բառական առանձին միավոր է:

Այսպիսով, այս համանունական շարքի պատկերն է.

Ալ — սեռական-տրական հոլովի իմաստ արտահայտող ձևույթ (որդ+ու),

Ո₁₂ — պատճառական բայերի հրամայական եղանակի եզակի երկ-
րորդ դեմքի վերջավորություն (մոտեցր+ու),

Ո₁₃ — ապառնի դերբայի վերջավորություն (դեւլ+ու),

Ո₁₄ — ածականակերտ ածանց (հատ+ու),

Ո₁₅ — համադասական շաղկապ (տետրն ու մատիտը):

3

1. Յ ձևույթը, գործառնելով հոլովման համակարգում, կերտում է եւնֆ
անֆ, ոնֆ, ունֆ-ով վերջացող հավաքական-հոգնակի խմաստ ունեցող
գոյականների սեռական-տրական հոլովածք, ինչպես՝ Գրիգորեն+ց,
Աշոտեն+ց, Սուրենեն+ց, բավորեն+ց, Վարդանան+ց, մերոն+ց և
այլն: Հակադրվելով մյուս հոլովիչներին՝ այն մտնում է ի-ի նույնանի-
շական խմբի մեջ:

Այս հոլովական վերջավորությունն ունեն նաև նրանֆ, սրանֆ,
դրանֆ, որոնֆ, իրենֆ, ոմանֆ հոգնակի դերանունների սեռական-տրա-
կան հոլովածները (նրան+ց, սրան+ց, դրան+ց, իրեն+ց, որոն+ց,
ոման+ց):

2. Այդ ց-ին ներհարացուցային համանուն պիտի համարել ու հո-
լովման գոյականների եզակի բացառական հոլովի ց հոլովակերտ մաս-
նիկը: Հայ քերականագիտության մեջ ընդունված է հոլովակերտ վերջա-
վորություն համարել ուց-ը, սակայն այստեղ բացառականի բուն վեր-
ջավորությունը ց-ն է՝ որը դրվում է սեռական-տրական հոլովածի
վրա, այսինքն՝ ուց=ու+ց:

3. Համանուն ց ձևույթը գործառնում է խոնարհման համակարգում,
որպես պատճառական սեռածանց. չեղոք և ներգործական բայերից կեր-
տում է պատճառական սեռի բայեր: Այս ձևույթն ունի այն առանձնու-
հատկությունը, որ անորոշ դերբայում միշտ հանդես է գալիս և ներ-
կայի հիմքակազմիչի հետ (ցն), որ պահպանվում է ներկայի հիմքում և
նրանից կազմված բայածներում, իսկ ա և ե խոնարհման բայերի մեջ
(բացառությամբ և և չ ածանցավոր բայերի) համապատասխանաբար
ստանում է ա և ե լծորդները (ացն, եցն). օրինակներ՝ վաղեցնել, բարձ-
րացնել, փախցնել, խմեցնել, հիշեցնել, կարգացնել և այլն:

4. Խոնարհման համակարգում է գործառնում նաև շորրորդ համանուն
ց-ն, որը միանալով ա և ե լծորդներին՝ կերտում է բայերի անցյալի հիմքը
(ե խոնարհման պարզ և կրավորական բայերի, ա խոնարհման բայերի):
Օրինակներ՝ զր+ե+ց, խոս+ե+ց, աս+ա+ց, խաղ+ա+ց, մոտ+ա+ց

$\div$ ց (ավ), $\div$ եռ $\div$ ա $\div$ ց (ավ), կարդ $\div$ ա $\div$ ց, վաղ $\div$ ե $\div$ ց, գրվ $\div$ ե $\div$ ց
և այլն;

5. Ժամանակակից հայերենի գոյականական համակարգի առանձին կազմություններում պահպանվել է նաև զրաբարյան ց նախադրությունը (ցպահանջ, ցտեսություն, ցմահ), որն ունի հիմնականում զրբային կիրառություն և համանիշ է մինչև կային:

Այս համանունական շարքի պատկերն է.

Յ₁ — սեռական-տրական հոլովի իմաստ արտահայտող ձևույթ (Գրի-գորեն $\div$ ց),

Յ₂ — բացառական հոլովի իմաստ արտահայտող ձևույթ (որդու $\div$ ց),

Յ₃ — պատճառական սեռածանց (փախ $\div$ ց $\div$ նել),

Յ₄ — բայերի անցյալի հիմքակազմիչ (գր $\div$ ե $\div$ ց),

Յ₅ — նախադրություն (ց $\div$ պահանջ, ց $\div$ մահ):

Ա.

1. Ա ձևույթը ժամանակակից հայերենի հոլովման համակարգում ունի սահմանափակ կիրառություն: Նրանով է կազմվում աղջիկ բառի սեռական-տրական հոլովածը՝ աղջկա: Հակադրվելով մյուս հոլովածներին՝ այն նույնպես մտնում է ի-ի նույնանիշական խմբի մեջ: Այդ նույն ա-ն հանդես է գալիս նաև ու/ա հերթագայությունք՝ կերտելով ուրյուն-ով վերջացող, ինչպես նաև ուն և լուն վերջամաս ունեցող մի շարք գոյականների սեռական-տրական հոլովածը. օրինակներ՝ ուսանողույն, գրույն, շան, տան, անկյան, ձյան և այլն: Այս երկու ա-երը մենք համարում ենք նույնական, որովհետև երկուսն էլ արտահայտում են նույն իմաստը, հանդես են գալիս հարացուցային նույն տեղում և նույնանիշական նույն շարքում: Սրանց տարբերությունը միայն դիրքային է. առաջին դեպքում այն կցվում է բառի վերջին (արտաբերելիքում), երկրորդ դեպքում բառի վերջին վանկի ձայնավորի հետ կազմում է հերթագայություն (ներքին թեքում): Այս ա ձևույթը երևան է գալիս նաև մի շարք բարացած հոլովածներում. ինչպես Սևանա լիճ, Գեղամա լիճ, Վանա ծով, Սասնա ծռեր և այլն:

2. Խոնարհման համակարգում գործառուղ համանուն ա ձևույթը, գրվելով աճ, եճ, ն, չ ածանց ունեցող բայերի անցյալի հիմքի վրա, կերտում է հիշյալ բայերի անցյալ կատարյալ ժամանակի եզակի I դեմքի բայածևերը. օրինակ՝ մոտեց $\div$ ա, հեռաց $\div$ ա, փախ $\div$ ա, ընկ $\div$ ա: Անմիջականորեն հակադրվելով անցյալ կատարյալ ժամանակի եզակի II և III դեմքերին, ինչպես նաև հոգնակի I դեմքին (մոտեցա-մոտեցաւ, մոտե-

ցավ, մոտեցա-մոտեցանք)՝ այն նույնանիշական շարք է կազմում ի ձևույթի հետ: Այս ձևույթը (ինչպես և նույնանիշ ի-ն) ունի այն առանձնահատկությունը, որ պահպանվում է նաև մյուս դեմքերի բայաձևերում (տե՛ս վերևի օրինակները), այսինքն՝ եզակի II և III դեմքերի, ինչպես և հոգնակի ձևերի կազմության համար հիմք է հանդիսանում եզակի I դեմքի բայաձևը (մոտեցա-ւ-ր, մոտեցա-ւ-վ, մոտեցա-ւ-նք...):

3. խոնարհման համակարգում ա ձևույթի հենք հանդիպում նաև ըղ-ձտկանի ապառնի ժամանակի և հրամայականի ենթահարացույցներում: Առաջին դեպքում այն կազմում է ա խոնարհման բայերի ըղձտկան եղա-նակի ապառնի ժամանակի եզակի 3-րդ դեմքը, երկրորդ դեպքում՝ ա խո-նարհման պարզ բայերի հրամայականի եզակի 2-րդ դեմքը (կարդա-ւ-կարդա-ւ-կա-րդա և կա-րդա-ւ-կարդաց-ւ-ք): Նույն ա-ն երևան է գալիս ա խոնարհման բայերի ժխտման դերբայի կազմության մեջ (կարդա-ւ): Այս երեք ա-ն ծագումով նույնն են. երեք դեպքում էլ գործառու է ա լծոր-դը, որը ստանձնել է քերականական տարբեր իմաստներ արտահայտելու դեր, հանդես է գալիս տարբեր ենթահարացույցներում և ունի գործառու-թյան տարբեր ուժրտներ: Հետևաբար կարող ենք ասել, որ այս դեպքում մենք գործ ունենք ներհարացույցային համառոտության հետ:

Մանոր.— Ընդհանրապես ա լծորդը մենք չենք համարում համանուն վերը թվարկված ա ձևույթներին, որովհետև այն չունի որոշակի իմաստ. այլ կատարելով հիմնականում կապակցող դեր և միանալով խոնարհ-ման համակարգում գործառու ձևույթներին՝ կերտում է բաղադրյալ ձևույթախմբեր: Օրինակ՝ խաղ-ւ-ա-ւ-լ, խաղ-ւ-ա-ւ-ցի, խաղ-ւ-ա-ւ-մ, կարդ-ւ-ա-ւ-լ, կարդ-ւ-ա-ւ-ցի, բարձ-ւ-ա-ւ-ցն-ւ-ել և այլն:

Այսպիսով՝ համանունական այս խումբն ունի հինգ անդամ՝

Ա₁ — սեռական-տրական հոլովի իմաստ արտահայտող ձևույթ (աղջկա-ւ-ա, անկյան),

Ա₂ — բայերի սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանա-կի եզակի առաջին դեմքի վերջավորություն (մոտեց-ւ-ա),

Ա₃ — ա խոնարհման բայերի ըղձտկան եղանակի ապառնի ժա-մանակի եզակի III դեմքի վերջավորություն (կարդ-ւ-ա),

Ա₄ — ա խոնարհման բայերի ժխտման դերբայի վերջավորություն (կարդ-ւ-ա),

Ա₅ — ա խոնարհման պարզ բայերի հրամայական եղանակի եզակի երկրորդ դեմքի վերջավորություն (կարդ-ւ-ա):

1. Ժամանակակից հայերենի գոյականների հոլովման համակարգում գործառուծ է աճել ձևերը, որը գրվելով ում-ով վերջացող բայանունների, գրարարում և վերջնահնչյուն ունեցող և լեզվի զարգացման արդի փուլում այն կորցրած մի շարք գոյականների, ինչպես նաև տարվա եղանակներ նշանակող գոյականների վրա, կերտում է նրանց սեռական-տրական հոլովաձևերը (կառուցման, անկման, ձկան, մկան, դարնան, ձմռան և այլն): Այս ձևերը, հակադրվելով հոլովման համակարգի մյուս հոլովական վերջավորություններին (կառուցում + ահ-ից-ով), մտնում է ի-ի նույնանիշական շարքի մեջ:

2. Ժամանակակից հայերենի խոնարհման համակարգում գործառուծ է համանուն ա + և ձևերը, որը գրվելով ահ, եհ, ն, և ածանց ունեցող բայերի անցյալի հիմքի վրա՝ կազմում է վերջիններիս սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակի հոգնակի III դեմքի ձևերը. ինչպես՝ փախչել-փախ+աւ, թռչել-թռ+աւ, մոտենալ-մոտեց+աւ, հեռանալ-հեռաց+աւ, իմանալ-իմաց+աւ և այլն: Մեր ձափորագույն հակադրություն կազմելով մի կողմից եղակի III դեմքի մյուս կողմից հոգնակի I և II դեմքերի հետ (մոտեցաւ-մոտեցան, մոտեցանք-մոտեցաւ-մոտեցան), հիշյալ ձևերը նույնանիշական շարք է կազմում ին ձևերի հետ (մոտեցան, գրեցին, կարդացին):

Այս նույն ձևերը, գրվելով ա խոնարհման բայերի ներկայի հիմքի վրա, կերտում է նրանց ըղձական եղանակի հոգնակի III դեմքի ձևերը՝ կարդ+աւ, խաղ+աւ, մոտեն+աւ և այլն: Այս և նախորդ ձևերի իմաստային հակադրությունը և տարբերությունը իրարից չեն հիմքերի հակադրությամբ (համտ. մոտեն+աւ և մոտեց+աւ):

3. Բայականության մեջ գործառուծ է համանուն ահ բայածանցը, որը հատկապես խիստ կենսունակ է ածականներից ու գոյականներից բայեր կերտելում (լավ+աւ+ալ, վատ+աւ+ալ, ուժեղ+աւ+ալ, ածիւ+աւ+ալ, գոլորշի+աւ+ալ և այլն): Այս ածանցն ունի հիմքական ձևեր, մասնակցում է բայերի սրտակի խմբի ներկայի հիմքի կազմությանը, այդ իսկ պատճառով միաժամանակ ունի տեղական կերպի թույլ արտահայտված իմաստ: Որպես այդպիսին այն հակադրվում է անցյալի հիմքական ձևեր (ա, ե) ց և ք մասնակիներին (հեռ+աւ-հեռ+ալ ց) և նույնանիշական շարք է կազմում եհ, ն, և բայածանցների հետ:

4. Բառականության մեջ գործառուծ են առաջիններին համանուն շորս ահ ածանցներ: Դրանք են՝

ա) Ան ժխտական նախաձեռնեցր. սա, բացի բառակազմական արժեքից, ունի նաև բերականական արժեք, որովհետև գրվելով գոյականների վրա՝ փոխում է նրանց խոսքիմասային պատկանելությունը. վերջիններս վերածվում են ածականների (հմմտ. տուն-անտուն, օթևան-անօթևան, գով-անգով, օգնական-անօգնական և այլն): Ընդհանրապես այն հայտնի է որպես ածականակերտ ժխտական նախաձեռնեց (հմմտ. նաև՝ ան+թափանց, ան+խնամ, ան+լուծելի, ան+արժան և այլն): Որպես այդպիսին այն համանիշական շարք է կազմում ապ, տ, չ, դժ նախաձեռնեցի և առ վերջաձեռնեցի հետ:

բ) Մի բանին կից, մոտ լինելու իմաստ արտահայտող ան նախաձեռնեցր. այս ածանցը պահպանվել է միայն մի բանի գոյականների մեջ (անկողին, անձեռոցիկ, անթեղ) և ժամանակակից հայերենում նոր բառեր չի կերտում, հետևաբար համաեռնական այս շարքի մեջ տըրվում է վերապահության:

գ) Ան վերջաձեռնեցր. սա գործառնում է որպես մի բանով օժտված լինելու, մի որևէ բան որպես հատկություն ունենալու իմաստ ունեցող ածականակերտ ածանց. ածականներ է կերտում հիմնականում բայարմատներից և բայահիմքերից: Օրինակներ. կծ+ան, վազ+ան, նվնվ+ան, թով+ան, սուտաս+ան և այլն: Որպես այդպիսին այն համանիշ է ող ածանցին (հմմտ. ճոճան-ճոճապող):

դ) Որոշ կազմություններում ան վերջաձեռնեցն ունի գոյականակերտ արժեք: Ծագումով այն կապված է նախորդ վերջաձեռնեցի հետ, սակայն իմաստային և բերականական առումով այնքան է հեռացել նախորդ ածանցից, որ համարում ենք նրան համանուն: Ահա գոյականակերտ ան վերջաձեռնեցի կիրառության օրինակներ. խց+ան, ծոր+ան, կռ+ան, ոլոր+ան, կռվ+ան:

Համանունական այս խմբի պատկերը հետևյալն է.

Ան₁—սեռական-տրական հոլովի իմաստ արտահայտող վերջավորություն (ուսմ+ան).

Ան₂—ան, են, ն, չ ածանցավոր բայերի սահմանական էղանակի անցյալ կատարյալ ժամանակի հոգնակի III դեմքի վերջավորություն (փախ+ան), ինչպես նաև ա խոնարհման բայերի բղձական էղանակի ներկայի հոգնակի III դեմքի վերջավորություն (կարգ+ան).

Ան₃—բաղադրական-բերականական բայաձեռնեց (հեռ+ան+ալ).

Ան₄—ածականակերտ ժխտական նախաձեռնեց (ան+տուն).

Ան₅—մի բանի մոտ լինելու իմաստ ունեցող գոյականակերտ նախաձեռնեց (ան+կողին).

Ան₆ — ածականակերտ վերջածանց (կծ+ան):

Ան₇ — գոյականակերտ վերջածանց (ոլոր+ան):

ԻՑ

1. Ժամանակակից հայերենի հոլովման համակարգում գործառույթից ձևույթը կերտում է գոյականների, նաև դերանունների բացառական հոլովածերը. ինչպես՝ քաղաք+ից, վախ+ից, ուրախություն+ից, աղքատ+ից, բռն+ից, եղբոր+ից, ինձ+ն+ից, նրան+ից և այլն: Հոլովման հարացույցում հսկադրվելով մյուս հոլովական վերջավորությունների՝ այս ձևույթը միաժամանակ նույնանիշական շարք է կազմում ուց ձևույթի հետ (հմտ. քաղաքի-քաղաքից-քաղաքով-քաղաքում և քաղաքից-այդուց):

2. Ժամանակակից հայերենի բառակազմության մեջ առկա են առաջինին համանուն երկու ից ձևույթներ, որոնցից մեկն ունի ածականակերտ արժեք, մյուսը՝ մակբայակերտ:

ա) Ածականակերտ ից ածանցը ծագումով կապված է զրաբարի հոլովման համակարգի հետ. առաջացել է զրաբարյան հոգնակի սեռական հոլովածից և երևան է գալիս միայն մի քանի զրաբարյան քառացած հոլովածներում (Պարսից, Կասպից). նոր ածականներ այն չի կերտում:

բ) Համանուն ից ձևույթը անմիջականորեն կապված է ժամանակակից հայերենի հոլովման համակարգի բացառական հոլովականադմիշ ից ձևույթի հետ. սակայն հեռացել անջատվել է նրանից և վերածվել է մակբայակերտ ածանցի: Իհարկե, կապը հոլովման վերջավորության հետ դեռևս խիստ զգալի է: Այս ածանցը ևս ունի խիստ սահմանափակ կիրառություն. օրինակ՝ նոր-ից, մեկ-ից, միանգամ-ից:

Այսպիսով՝ համանունական այս շարքը բնի կրիտ անդամ.

Ից₁ — հոլովման համակարգի բացառական հոլովի վերջավորություն (քաղաքից),

Ից₂ — ածականակերտ ածանց (պարսից).

Ից₃ — մակբայակերտ ածանց (նորից):

ՈԻՑ

1. Ժամանակակից հայերենի բացառական հոլովի մյուս վերջավորությունը ուց-ն (ու+ց) է, որով կազմվում են ու հոլովման գոյականների (նաև դերանունների) բացառական հոլովածները, Հոլովման հա-

¹ Նախապես բացառական հոլովածին է վերածվել մակբայի, որի նետեանքով և հոլովական վերջավորությունը դիտվում է որպես մակբայակերտ ածանց:

բացույցում հակադրվելով մյուս հոլովաձևերին՝ այն նույնանիշական շարք է կազմում ից ձևույթի հետ (որդու-որդուց և որդուց-զավակից)։

2. Ժամանակակից հայերենի մի շարք բայերի կազմության մեջ հանդիպում է ուց ածանցը, որը հին հայերենի բայական համակարգի պատճառական ուց սեռածանցի հնչյունափոխված ձևն է (հմմտ. ուսուցանեմ, մօտեցուցանեմ և այլն), սակայն կորցրել է պատճառականության իմաստը։ Այդ բայերն են՝ կառուցել, ուսուցանել, մատուցել, ջեռուցել, սնուցել (հմմտ. նաև՝ ուսուցում, կառուցում, մատուցում, ջեռուցում, սնուցում)։

3. Ծագումով հոլովական համակարգում գործառուղ ուց վերջավորության հետ է կապված ուց մակբայակերտ ածանցը, որը հանդես է գալիս միայն մի քանի բառերի քարացած հոլովաձևերի մեջ, դրանք են՝ վաղուց, մանկուց, փոքրուց։

4. Ժամանակակից հայերենի բառակազմության մեջ գործառուղ է նաև մեկ այլ համանուն ուց ածանց, որն ունի զոյականակերտ արժեք և ծագումով կապված չէ նախորդների հետ։ Ահա օրինակներ՝ նեղուց, սպիտակուց, կաղուց, ողնուց և այլն։ Հաճախ այս ածանցը հանդես է գալիս Ի-ի հետ՝ կազմելով ուցԻ բաղադրյալ ածանցը, ինչպես՝ ալրուցք, ալսուցք։

Այսպիսով՝ համանունական այս շարքի պատկերը հետևյալն է.

Ուց₁ — ու հոլովման զոյականների բացառական հոլովի վերջավորություն (զին-ուց),

Ուց₂ — բաղադրական բայածանց (ջեռ+ուց+ել),

Ուց₃ — մակբայակերտ վերջածանց (մանկ+ուց),

Ուց₄ — զոյականակերտ վերջածանց (նեղ+ուց)։

ՈՎ

1. Ժամանակակից հայերենի հոլովման համակարգում գործառուղ ով ձևույթը կերտում է զոյականների (նաև դերանունների) գործիական հոլովաձևը. օրինակներ՝ քաղաք+ով, շրջան+ով, աղջկան+ով, ինձն+ով, մյուս+ով և այլն։ Հոլովման հարացույցում հակադրվելով մյուս հոլովական վերջավորություններին՝ այս ձևույթը նույնանիշական շարք է կազմում ք ձևույթի հետ (հմմտ. ուրախության (>մ)+ք և սիր+ով)։

2. Բառակազմության մեջ ևս հանդիպում ենք ով ձևույթի, որն ունի ածականակերտ, նաև՝ մակբայակերտ արժեք. զոյականներից կերտում

է ածականներ և մակբայներ, ինչպես՝ համ+ով, ուժ+ով, սիր+ով, լիան+ով, գին--ով և այլն:

Այս ձևույթը ևս ծագումով կապված է հոլովման համակարգի հետ. առաջացել է գործիականի հոլովաձևերից, սակայն արդեն անջատվել է նրանցից, ձևոր բերել բառակազմական արժեք՝ վերածվելով ով հոլովական վերջավորությանը համանուն ձևի:

Այսպիսով՝ համանունական այս շարքը երկանդամ է՝

Ով₁ — հոլովական վերջավորություն (փոզոց+ով),

Ով₂ — ածականակերտ և մակբայակերտ ածանց (համ+ով, սիր+ով):

ՈՒՄ

Այս հնչույթակազմով ևս ժամանակակից հայերենում գործառուծ են մի րանի համանուն ձևույթներ, որոնք ունեն գործառական և իմաստալին բոլորովին տարբեր ոլորտներ:

1. Հոլովման համակարգի ում ձևույթը ներդոյական հոլովի վերջավորությունն է. ցույց է տալիս գործողության տեղային և ժամանակային սահմանափակում գոյականի ցույց տված առարկայի սահմաններում: Ունի կերպական սահմանափակություն, քանի որ շատ գոյականներ, հատկապես վերացական և ընդհանրական նշանակություն ունեցողները և հատուկ անունները, չունեն այս հոլովը: Հիշյալ գոյականների հոլովական այս իմաստն արտահայտում են սեռական-տեղան հոլով+մեջ համանիշ կապակցությամբ:

2. Բայական համակարգում գործառուղ ում ձևույթը անկատար դերբայի վերջավորությունն է: Մագումով այն կապված է ներդոյական հոլովի վերջավորության հետ, սակայն գործառությամբ և իմաստով անջատվել է նրանից՝ վերածվելով համանուն ձևույթի: Դրվելով բայերի ներկայի հիմքի վրա՝ այդ ձևույթը կազմում է նրանց անկատար դերբայը. օրինակ՝ կարդ+ում, մոտեն+ում, գր+ում, փախչ+ում և այլն (բացառություն են կազմում Յ բայ՝ զալ, լալ, տալ, որոնք չունեն անկատարի այս ձևը):

3. Բառակազմության մեջ ևս հանդիպում ենք ում ձևույթի: Այստեղ արդեն այն վերջածանց է, որ գործառում է գոյականների համակարգում և բայարմատներից ու բայահիմքերից կերտում է գոյականներ՝ բայանուններ. օրինակներ՝ կառուց+ում, մոտեց+ում, ուսուց+ում, անդամազատ+ում, վճար+ում, վարակ+ում և այլն: Այս ածանցն առաջացել է հին ումն ածանցից՝ ն-ի անկումով:

Համանունական ալս շարքը եռանդամ է՝
Ում₁—ներդոյական հոլովի վերջավորություն (բաղադրում),
Ում₂—անկատար դերբայի վերջավորություն (կարգում),
Ում₃—գոյականակերտ վերջածանց (անջատում):

ՆԵՐ

1. Հոգնակերտ ներ մասնիկը, զրվելով բազմավանկ գոյականների մեծ մասի վրա, նրանց տալիս է հոգնակիության բերականական իմաստ. Այն հակադրվելով եզակի թիվ նշանակող գրո վերջավորությանը՝ նույնանիշական շարք է կազմում երեք մասնիկների հետ և համանիշական շարք՝ աճք, եճք, ուճք, ոճք ձևությների հետ:

2. Ժամանակակից հայերենում գործառույթ է մեկ ներևոյ. Դա ներևոյ իմաստն է, որը հիմնականում զրվում է բայերի վրա (սկզբից) և նրանց տալիս է զեպի ներս ուղղվածության բառաբերականական իմաստ. օրինակ՝ ներգրավել, ներգաղթել, ներխուժել, ներառել և այլն: Այսինքն՝

Ներ₁ — հոգնակերտ մասնիկ (մատիտ + ներ),

Ներ₂ — բայական իմաստանց (ներ + թափանցել):

ԵՐ

1. Ժամանակակից հայերենի գոյականների հոգնակի ձևեր է կազմվում եռանկ երեք ձևով, որը զրվում է հիմնականում միավանկ բառերի, ինչպես և միավանկ երկրորդ բաղադրիչ ունեցող բարդ բառերի մի մասի վրա (աներ, բարեր, ծառեր, ջրեր, ձկնաղբեր, մեծատաներ և այլն): Հակադրելով եզակի գրո վերջավորությանը՝ այն նույնանիշակիան շարք է կազմում ներ, երեք ձևությների հետ և համանիշական շարք՝ աճք, եճք, ուճք, ոճք ձևությների հետ:

2. Համանուն երեք ձևով գործառույթ է բայական ամսկարգում՝ կերտելով ե խոնարհման բայերի ըղծական եղանակի անցյալ ժամանակի եզակի III դեմքի ձևերը՝ գրեք, խմեք, խոսեք և այլն:

Այստեղ առկա է համանունական երկանդամ շարք. այն է՝

Եր₁ — գոյականների հոգնակերտ մասնիկ (քար + եր).

Եր₂ — ե խոնարհման բայերի ըղծական եղանակի անցյալ ժամանակի եզակի III դեմքի վերջավորություն (վաղ + եր):

Ք

1. Ժամանակակից ժողովրդական-խոսակցական լեզվում գործառույթ է նաև ե հոգնակերտ մասնիկը, որը զրվում է հիմնականում ի-ով

վերջացող գույագանների վրա (որդիք, գյուղացիք, երեսանցիք և այլն):
Ահի նույնանիլ է գրական հայերենի ներ և եր ձևույթներին:

2. Բայերի խոնարհման համակարգում գործառում է համանուն և
ձևույթը, որը միանալով ա և ե լծորդներին և զրվելով բայերի ներկա
իմբերի վրա կերտում է ըզձական եղանակի ներկա ժամանակի հոգ-
նակի II դեմքի ձևերը (գրեք, կարգաք): Նույն ձևույթը, միանալով ի-ին
դարձյալ լծորդների հետ, կազմում է նույն եղանակի անցյալ ժամա-
նակի հոգնակի II դեմքի ձևերը (գրեիր-կարգայիր): Նույն և-ին ենք
հանդիպում սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակի
հոգնակի II դեմքի վերջավորության մեջ՝ միացած ի-ի հետ (և և ա խո-
նարհման պարզ բայերի և պատճառական ու կրավորական բայերի դեպ-
քում) կամ ա-ն ետ (ան, են, և, չ ածանցավոր բայերի դեպքում): օրի-
նակ՝ գրեց—իւ, հետց—աք: Այս դեպքում ևս բայաձևերի հակադրու-
թյունն իրացվում է հիմքերի հակադրությամբ (գրեիր-գրեցիր): Այս ձև-
վույթով են կազմվում նաև հրամայական եղանակի հոգնակի II դեմքի
ձևերը: միայն այս դեպքում, ի տարբերություն նախորդների, այն միշտ
հանդես է գալիս և լծորդի հետ (գրեց—եք, մոտեց—եք, փախ—
եք):

3. Գրական հայերենում գործառում է համանուն բառակազմական
և ածանցը, որը զրվելով բայարմատների կամ բայահիմքերի վրա՝ նրան
ցից կերտում է գոյականներ (ընթացք, գնացք, միջանցք, միտք, խելք
և այլն):

Գոյականների հոգնակերտ և-ն և այս և-ն ունեն ծագումնաբանու-
կան նույնություն, այսինքն՝ առաջացել են գրաբարյան հոգնակերտ
մասնիկից: Առաջին դեպքում սյն պահպանել է իր նախնական իմաստը,
սակալն սահմանափակվել է նրա գործառության ոլորտը, իսկ երկրորդ
դեպքում, կորցնելով հոգնակիություն արտահայտելու իմաստը, ձևը է
բերել բառակազմական արժեք² և ժամանակակից գրական հայերենում
գործառում է որպես ածանց: Այսինքն՝

Ք₁ — գոյականների հոգնակերտ մասնիկ (որդիք),

Ք₂ — բայերի հոգնակի II դեմք նշանակող ձևույթ (գրեք, մոտե-
նաք),

Ք₃ — գոյականակերտ վերջածանց (գնացք):

2 Գրաբարում և-ով կերտվել է նաև անեղական գոյականների խումբը, որտեղ այն
հոգնակիության հետ միասին ուներ նաև բառակազմական արժեք (հմտտ, միտք, խելք,
առաջանք և այլն):

1. Ժամանակակից հայերենում հավաքականություն-հոգնակիություն արտահայտելու համար գործածվում են անք, ենք, ունք, ոնք ձևույթները, որոնք հիմնականում ունեն ժողովրդական-խոսակցական երանգավորում: Դրանցից առաջինը՝ անք-ը կցվում է հիմնականում ազգակցություն ցույց տվող սահմանափակ գոյականների և անձնանունների վրա՝ նշանց տալով հոգնակիության-հավաքականության իմաստ (աներանք, վարդանանք):

2. Անք-ը ունի իր համանունը բառակազմության մեջ, որից տարբերվում է և՛ դուգորդելիությամբ ու գործառության ոլորտով, և՛ իմաստով (չնայած ծագումնաբանական նույնությանը): Բառակազմության մեջ գործառող անք ածանցը, իսպառ կորցնելով իր հոգնակիության իմաստը, ժամանակակից հայերենում ձևոր է բերել գոյականակերտ արժեք. բայարմատներից կերտում է գոյականներ (աղաչանք, պաղատանք, խնդրանք, բնորանք, զրպարանք և այլն):

Համանունների այս շարքը հետևյալն է.

Անք₁ — հոգնակիության-հավաքականության բերականական իմաստ արտահայտող ձևույթ (հեր+անք):

Անք₂ — գոյականակերտ վերջածանց (խնդ+անք):

Ն

1. Գոյականական համակարգում առկայացման բերականական կարգը դոսեորելու համար, ք-ի հետ մեկտեղ, գործածվում է նրան նույնանիշ և ձևույթը: Վերջինս ունի գործառական այն առանձնահատկությունը, որ գրվում է ձայնավորով վերջացող գոյականների վրա և կամ այն դեպքում, երբ խոսքի շղթայում հաջորդ բառը սկսվում է ձայնավորով. օրինակ՝ օրդի+ն, պատանի+ն, Սոնա+ն, գիրք+ն ընկալ, Գուրգեն+ն ասաց և այլն:

Այս ձևույթը, ա, դ հոգերին հակադրվելով, արտահայտում է նաև ցուցաստացականության բերականական իմաստ (հմմտ. որդիս — իմ որդին, որդիդ — քո որդին, որդին — նրա որդին):

2. Դերանվանական հոլովման համակարգում գործառում է առաջինին համանուն և ձևույթը: Այն միանալով սա, դա, նա դերանունների սեռական հոլովաձևերին, կազմում է հիշյալ դերանունների Լզակի տբական հոլովաձևերը. այսպես՝ սա-սրա-սրան, դա-դրա-դրան, նա-նրա-նրան: Այս և-ն ծագումով և գործառությամբ բոլորովին կապ չունի նա-

խորդ և-ի հետ (չպետք է շփոթել գոյականների սեռական հոլովաձևին միացող և որոշիչ հոգի հետ՝ սեղանի + և)։

3. Փամանակակից հայերենի խոնարհման համակարգում ես հանդիպում ենք և ձևույթի։ Այլ ձևույթների հետ կամ լծորդով միանալով բայի ներկայի կամ անցյալի հիմքերին՝ այն կազմում է խոնարհման հարացույցի հոգնակի III դեմքի ձևերը. այսպես՝ գրում ես + և, գրում ես + ի + և, գրեց + ի + և, կարդաց + ի + և, գր + ե + և, կարդ + ա + և, գրե + ի + և, կարդաց + ի + և և այլն։

4. Բայական համակարգում, բայակազմության մեջ դործառում է չորրորդ համանուն և ձևույթը, որը միաժամանակ կատարում է որոշակի խմբի բայերի ներկայի հիմքակազմիչ դեր. օրինակ՝ մտ + և + ել, գտ + և + ել, բնկ + և + ել, առ + և + ել և այլն։ Այս ձևույթը անցյալի հիմքում ընկնում է, որով իրականանում է բայերի այդ խմբի ներկայի հիմքանցյալի հիմք հակադրությունը. ինչպես՝ ընկ + և (ևս) — ընկ (ա), առ + ի (ևս) — առ (ա) և այլն։

Այսպիսով՝ համանունական այս շարքի պատկերը հետևյալն է.

Ն₁ — որոշիչ, նաև ցուցաստացական հոգ (որդի + և),

Ն₂ — դերանվանական հոլովման տրական հոլովի վերջավորություն (նրա + և),

Ն₃ — խոնարհման համակարգի հոգնակի III դեմք նշանակող վերջավորություն (գրեցի + և),

Ն₄ — բաղադրական-բերականական բայածանց (ընկ + և + ել)։

Ս

1. Գոյականի համակարգում է դործառում առկայացման ընդհանուր բերականական կարգի ցուցիչներից մեկը՝ ցուցաստացական և հոգը, որն ունի համանունական արժեք, որովհետև դրսևորում է երեք տարբեր բերականական խմաստներ՝ ա) ստացականության (գիրքս — իմ գիրքը, մատիտս — իմ մատիտը, զավակս — իմ զավակը և այլն), բ) գիմորոշություն (ես ուսանողս, բանվորս, ծառայողս և այլն), գ) ցուցականություն (գիշերս — այս գիշեր, վերջերս, օրերս և այլն)։

Առաջին դեպքում և հոգը համանիշական շարք է կազմում անձնական գերանվան I դեմքի եղակի սեռականի հետ՝ ա = իմ, երկրորդ դեպքում այն համանիշ է ես գերանվանը՝ ա = ես, երրորդ դեպքում՝ այս ցուցական գերանվանը՝ ա = այս։ Իհարկե, համանունությունը այստեղ այնքան որոշակի չէ, ինչպես նախորդ դեպքում, որովհետև այս երեք և-երը ունեն ծագումնաբանական ընդհանրություն, հանդես են գալիս հիմնականում

նույն զիրքում (II և III դնպրերում ունեն որոշակի զիրքային սահմանափակություն. զիմորոշ հողը զրվում է միայն անձ ցույց տվող գոյականների վրա, իսկ ցուցական հողը՝ մի քանի՝ ժամանակի իմաստ ունեցող գոյականների վրա): Սրանք իմաստով առնչակցվում են միայն այն առումով, որ ցույց են տալիս առաջին դեմքի կամ առաջին դեմքին մաս լինելու իմաստային հարաբերություն:

2. Համանուն և ձևույթը գործառում է խոնարհման համակարգում: Միանալով և կամ ա լծորդներին՝ այն ցույց է տալիս բաշերի ըզձական եղանակի ներկա ժամանակի եզակի երկրորդ դեմք. օրինակ՝ զր+ե +ս. կարդ+ա+ս, մոտեն+ա+ս, հեռան+ա+ս և այլն: Այս ս-ն նախորդների հետ կազմում է միջհարացուցային համանունություն:

Համանունական այս շարքի պատկերն է.

Ս₁ — ստացական հող (զիրքս),

Ս₂ — զիմորոշ հող (ես՝ ուսանողս),

Ս₃ — ցուցական հող (զիշերս),

Ս₄ — բայի ըզձական եղանակի ներկա ժամանակի եզակի երկրորդ դեմքի վերջավորություն (զրե+ս):

Գ

Համանունական արժեք ունի նաև ցուցաստացական ՚՛ հողը, որը, ի տարբերություն ս-ի, արտահայտում է միայն երկու քերականական իմաստ՝

ա) ստացականություն (զիրքդ — քո զիրքը, տետրդ — քո տետրը, զավակդ — քո զավակը, զավակիդ — քո զավակին)՝ համանիշական շարք կազմելով անձնական զերանվան եզակի 2-րդ դեմքի սեռական հոլովաձևի հետ (դ-քո):

բ) զիմորոշություն (ուսանողդ—դու՝ ուսանողդ, ծառայողդ—դու՝ ծառայողդ)՝ համանիշական շարք կազմելով դու գերանվան հետ (դ—դու): Հմմտ. նաև՝ ծառայողիցդ — քեզնից՝ ծառայողից:

Միջհարացուցային համանուն այս ձևույթը չունի:

2. ԲԱՅԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՁԵՂՈՒՅԹՆԵՐԻ ԿԱԶՄԱՅ ՀԱՄԱՆՈՒՆԱԿԱՆ ՇԱՐՔՆԵՐԸ

Խոնարհման համակարգում գործառող քերականական ձևույթների զգալի մասը համանունական շարք է կազմում հոլովման համակարգի և գոյականների ոլորտում գործառող ձևույթների հետ, այդ պատճառով քննության է առնվել նախորդ ենթադրյալում: Դրանք են՝ ի, ու, ց, ահ,

ուց, ում, Է, ն, ա: Մնում է ալտեղ քննության առնել միայն այն ձևույթները, որոնք կազմում են ներհարացուցային համանունական շարքեր և կամ համանունական մի եզրում բառակազմական ձևույթ է:

ԵՆ

1. Բայական համակարգում է գործառում բաղադրական-բերական հական եճ ձևույթը, որը որոշակի թվով բայերի ներկայի հիմքակազմիչն է: Օրինակ՝ մոտ+են+ալ, գիտ+են+ալ, ուղ+են+ալ և այլն:

Հակադրվելով անցյալի հիմքակազմիչ (ա, ե) ց ձևույթին, այն նույնանիշական շարք է կազմում աճ, ն, չ բայածանցների հետ: Աճ ձևույթից տարբերվելով կիրառական սահմանափակությամբ (նոր բայերի կազմության մեջ հանդես չի գալիս)՝ եճ-ը ևս ունի տեղական կերպի թույլ արտահայտված իմաստ (հմտ. ուղեւ-ուղենալ, գիտեմ-գիտենալ):

2. Համանուն ե+ն ձևույթախմբին ենք հանդիպում դարձյալ բայական համակարգում՝ խոնարհման հարացուցում: Դրվելով Ե խոնարհման բայերի ներկայի հիմքի վրա՝ այն կազմում է ըղձական եղանակի ներկա ժամանակի հոգնակի III դեմքի ձևերը. ալսպես՝ գր+են, խմ+են, փախչ+են, ընկն+են, կոտրվ+են, մոտեցն+են և այլն: Մերձավորագույն հակադրություն կազմելով ըղձական եղանակի ներկայի եղակի III դեմքի Ի ցուցիչի և հոգնակի I և II դեմքերի ե+նԲ, ե+Բ վերջավորությունների հետ՝ այն նույնանիշական շարք է կազմում ա+ն ձևույթախմբի հետ³ (հմտ. գրի-գրեն, գրենԲ-գրեԲ-գրեն և գրեն-կարդան):

3. Ժողովրդական խոսակցական լեզվում և բարբառներում եճ ձևույթ է հանդիպում նաև դերբայական համակարգում: Այս եճ-ը, զբրվելով անորոշ դերբայի վրա, կերտում է ընթացակցական դերբայը⁴, որը համանիշ է գրական հայերենի անորոշ դերբայի գործիական հոլովին. օրինակ՝ վաղել+են (=վաղելով), խաղալ+են (=խաղալով), շորորալ+են (=շորորալով), նվնվալ+են (=նվնվալով) և այլն:

4. Բայական համակարգում կա մեկ եճ ևս՝ էական կամ օժանդակ բայի ներկա ժամանակի հոգնակի երրորդ դեմքի ձևը. (գրում եճ, գրել եճ, գրելու եճ և այլն), որը ևս մտնում է համանունական այս շարքի մեջ:

³ Երկու դեպքում էլ հոգնակի դեմքի ցուցիչը նույն ն-ն է. որը մի դեպքում միացել է ա լծորդին, մյուս դեպքում՝ Ե լծորդին:

⁴ Տե՛ս Ա. Աբրահամյան, Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Երևան, 1953:

5. Արեւմտահայ լեզվում և բարբառներում համանուն են ձևւոյլ է գործառւում նաև հոլովման համակարգում. նրանով կազմւում է գոյականների բացառական հոլովը (բաղարթե՛ն, սարթե՛ն):

6. Բառակազմութեան մեջ, իւր խիստ սահմանափակ, հանդիպում է նաև համանուն են վերջածանցը. օրինակ՝ նկարթե՛ն, ծվթե՛ն:

Այս ենթին համանուն պետք է համարել ժողովրդական-խոսակցական լեզվում հանդիպող են մակբայակերտ ածանցք նորեն, մեկե՛ն. նորմեկեն և այլ կազմութեաններում, որտեղ այն համանիշ է բացառական ից վերջավորութեանը (հմմտ. նորեն-նորից, մեկեն-մեկից)⁵: Այս ածանցքը ծագումով կապւած է բացառականի են վերջավորութեան հետ:

Ահա այս համանունական շարքի պատկերը.

են₁ — բաղադրական-քերականական բայածանց (մոտենալ),

են₂ — ե խոնարհման բայերի բղձական եղանակի ներկա ժամանակի հոգնակի 3-րդ դեմքի վերջավորութեան (գրեն),

են₃ — բնթացակցական գերբայի վերջավորութեան (շորորալեն),

են₄ — օժանդակ բայի ներկա ժամանակի հոգնակի երրորդ դեմքի ձև (գրում են),

են₅ — բացառական հոլովի վերջավորութեան (սարեն),

են₆ — վերջածանց (նկարեն, ծվեն),

են₇ — մակբայակերտ վերջածանց (նորեն):

2

Ժամանակակից հայերենի խոնարհման համակարգում գործառւում են երկու համանուն չ ձևւոյլներ:

1. Ժխտական մասնիկ չ-ն, գրվելով բայերի դրական ձևերի վրա, նրանցից կերտում է ժխտական իմաստով բայածներ, այսինքն՝ կազմում է բայերի ժխտական խոնարհումը. չեմ գրում, չե՛ի գրում, չե՛ գրեցի, չե՛ գրեմ, չե՛ գրեի, չե՛մ գրի, չե՛ պիտի գրեմ, չե՛ պիտի գրեի և այլն:

2. Համանուն չ-ն գործառւում է որպէս որոշակի խմբի բայերի ներկայի հիմքակազմիչ. ինչպես՝ փախե՛լ, թաքե՛լ, սառե՛լ, ուռե՛լ և այլն: Ի տարբերութեան նախորդ չ-ի, այս չ-ն ունի խիստ սահմանափակ կիրառութեան, հանդիպում է միայն մի փոքր խումբ բայերի մեջ և ժամանակակից հայերենում կենսունակ չէ: Հակադրվելով

⁵ Ս. Լեւոյանը իր «Ածանցները ժամանակակից հայերենում» աշխատութեան մեջ արանք ներկայացրել է որպէս մեկ ածանց (տե՛ս նշվ. աշխ. էջ 161):

անցյալի զրո հիմքակազմիչին (փախչ-փախ)՝ այն նույնանիշական շարք է կազմում ան, են, ն բայածանցների հետ:

3. Բառակազմության մեջ գործառուում է չ նախածանց-ձևույթը, որը ծագումով կապված է առաջին շ-ի հետ, արտահայտում է ժխտական իմաստ, սակայն նրանից հեռանալով՝ ձևը է բերել բառակազմական արժեք (առաջինն այդ արժեքը չունի) և կերտում է մի շարք ժխտական իմաստով ածականներ. օրինակ՝ չ-հաս, չ-տես, չ-հավան և այլն. Ահա համանունական այս շարքը.

Պ₁ — ժխտական մասնիկ (չեմ գրում, չգրել),

Պ₂ — բաղադրական-քերականական բայածանց (փախչել),

Պ₃ — ժխտական նախածանց (չհավան):

Տ

1. Բայերի խոնարհման համակարգում գործառուում է ա բազմապատկական բերականական բայածանցը, որը գրվելով սահմանափակ թվով բայերի վրա՝ կերտում է բազմապատկական կերպի բայեր: Ահա օրինակներ. ցատկել-ցատկալ, փնտրել-փնտրալ, ոլորել-ոլորալ, կոտրել-կոտրալ, բակել-քակալ և այլն: Այն հաճախ հանդես է գալիս սաստկական կ, ր կամ լ ածանցի հետ, ինչպես՝ ծեծել-ծեծկալ, քանդել-քանդալ, ջարդել-ջարդալ և այլն:

2. Ժամանակակից հայերենում գործառուում է նաև ա բառակազմական-ժխտական նախածանցը. օրինակ՝ ահաճ, ահաս, աղեղ և այլն. Այս ածանցը ևս ունի խիստ սահմանափակ կիրառություն:

Համանունական այս շարքը երկանդամ է.

Տ₁ — բազմապատկական կերպածանց (կոտրալ),

Տ₂ — ժխտական նախածանց (ահաս):

ՈՏ

1. Բազմապատկական կերպածանց է նաև ոտ-ը, որն ունի գործառության ավելի լայն ոլորտ և ավելի մեծ թվով բայերից է կերտում բազմապատկական կերպի բայեր. օրինակ՝ բռնել-բռնալ, կապել-կապալ, պոկել-պոկալ, ցատկել-ցատկալ, կրծել-կրծալ, նըստել-նստալ, ծակել-ծակալ, սրբել-սրբալ, գրել-գրալ, կծել-կծալ, խոցել-խոցալ և այլն:

2. Ժամանակակից հայերենում գործառուում է նաև համանուն բառակազմական ոտ ածանցը, որն ունի ածականակերտ արժեք և բառին տա-

լիս է մի բան ունենալու, մի բանով օժտված լինելու իմաստ (հմտ. ցե-
խոտ, հիվանդոտ, արշուճոտ, թանաքոտ, խմորոտ, կեղտոտ, ջրոտ,
մրոտ և այլն):

Ի տարբերություն նախորդ տ ածանցի, այս ածանցն ունի գործա-
ռական այն առանձնահատկությունը, որ հաճախ հանդես է գալիս նույն
դիրքում, ինչ բաղմապատկական ուտ ածանցը: Դա լինում է այն դեպքե-
րում, երբ հիշյալ ածանցով բաղադրված ածականներից կերտվում են
բայեր. ինչպես՝ թանաքոտ-թանաքոտել, խմորոտ-խմորոտել, արշու-
նոտ-արշունոտել, ջրոտ-ջրոտել, մրոտ-մրոտել և այլն: Այսպիսի կազ-
մության բայերի գոյությունը և նրանց տարբերությունը բաղմապատ-
կական բայերից նկատել է դեռևս Մ. Աբելյանը, որ գրել է. «Բաղմա-
պատկական ոտնչ վերջացած բայերը՝ մորթոտել, կծոտել և այլն, չպի-
տի շփոթել ու մասնիկ ունեցող ածականներից կազմված բայերի հետ,
ինչպես են՝ ժանգոտ-ժանգոտել, մրոտ-մրոտել, արոտ-արոտել և
այլն»⁶:

Համանունական այս շարքը ևս երկանդամ է.

Ուտ₁ — բաղմապատկական կերպածանց (նստոտել),

Ուտ₂ — ածականակերտ վերջածանց (մրոտ):

Ս.Տ

1. Ժամանակակից հայերենի բաղմապատկական կերպածանցնե-
րից է աւտ-ը, որը համանիշական շարք է կազմում ուտ, տ, կլտ, կրտ, ուտ
ածանցների հետ և գրվելով մի շարք բայերի արմատի կամ բացարձակ
բալահիմբի վրա՝ կազմում է նրանց բաղմապատկական կերպի ձևը՝
այդ բայերից են՝ կոտրել-կոտրատել, կտրել-կտրատել, փետրել-փե-
րատել, հուրհրալ-հուրհրատել և այլն:

2. Բառակազմության մեջ հանդիպում ենք առաջինին համանուն
աւտ ածականակերտ վերջածանցին, որը, գրվելով հիմնականում գոյա-
կանների վրա, կերտում է մի բան շունենալու, մի բանից զրկված լի-
նելու իմաստով ածականներ. օրինակներ՝ պոչ+աւտ, կոն+աւտ, քն+աւտ,
դուն+աւտ և այլն: Այն համանիշական շարք է կազմում աւն, շ, տ, դժ
ժխտական նախածանցների հետ (հմտ. գունատ-անգույն, պոչատ-ան-
պոչ, քնատ-անքուն և այլն):

Այս վերջածանցը կարող է հանդիպել նաև բայերի կազմության
մեջ որպես հիմբի բաղադրիչ և այս դեպքում այն հանդես է գալիս նույն

⁶ Մ. Աբելյան. Հայոց լեզվի տեսություն, 1965, էջ 291:

գիրքում, ինչ ատ կերպածանցը (արմատի և վերջավորության միջև) ինչպես՝ գլխատել, գունատվել, թղթատել և այլն: Սակայն գիրքային այս բնագիտությունը հիմք չի տալիս դեպք համարելու նույն ածանցը, ճիշտ աշխատել, ինչպես նույն ածանցը չեն ուտ-երը փոշոտել, ցիխտել, և կծոտել, մորթոտել կազմություններում: Չնայած ծագումնաբանական նույնությունը, որակապես տարբեր և համանուն պետք է համարել նաև ածականակերտ ատ վերջածանցն ու գոյականակերտ ատ վերջածանցը (վերջինս ժամանակակից հայերենում կենսունակ չէ): Հմմտ. գունատ, քնատ և ախանատ, բացատ, խորխորատ, հեղեղատ և այլն:

Այսպիսով, մեր կարծիքով, համանունական այս շարքը եռանդամ է.

Ատ₁ — բազմապատկական կերպածանց (կարատել),

Ատ₂ — ածականակերտ վերջածանց (սղջատ, գլխատել),

Ատ₃ — գոյականակերտ վերջածանց (բացատ):

ԵՎ

Ժամանակակից հայերենի խոնարհման համակարգում գործառուժ են երկու համանուն ել ձևություններ: Առաջինը անորոշ դերբայի ել վերջավորությունն է, որը զրվելով բայերի ներկա հիմքի վրա՝ կերտում է հ խոնարհման բայերի անորոշ դերբայը. օրինակ՝ գրել, խմել, տեսնել, կոտորատել, ջարդվել, կանգնեցնել: Այս վերջավորությունը ունի նաև բառակազմական արժեք, քանի որ, զրվելով ածականների և գոյականների վրա, նրանցից կերտում է բայեր. ինչպես՝ կարմր+ել, դեղն+ել, սղոց+ել, արդուկ+ել և այլն: Այս ձևությամբ նույնանիշական շարք է կազմում ալ-ի ձևը: Երկրորդը վաղակատար դերբայի ել վերջավորությունն է, որը, զրվելով բայերի ներկայի կամ անցյալի հիմքի վրա, կերտում է նրանց վաղակատար դերբայը. օրինակ՝ վաղ+ել, կարդաց+ել իջ+ել, մոտեց+ել, բարձրաց+ել, գրվ+ել և այլն: Այս ել-ը ծագումով կապված չէ նախորդ համանուն ել-ի հետ: Այն առաջացել է հին հայերենի անցյալ դերբայի եալ վերջավորության հնչյունափոխությունից (գրեալ > գրել): Ի տարբերություն առաջին ել-ի, այս ել-ը նույնանիշ ձև ժամանակակից գրական հայերենում չունի:

Այս երկու համանուն ել ձևությունները, ավելանալով սլարգ բայերի ներկայի հիմքի վրա՝ առաջացնում են համանուն բառաձևեր՝ գրել-գրել,

7 Ս. Էլոյանը հիմք ընդունելով ծագումնաբանական նույնությունը՝ դրանք համարում է նույն ածանցը, որն ընդունելի չէ. տե՛ս Ս. Էլոյան, Ածանցները ժամանակակից հայերենում, 1963, էջ 52 և 231:

խմել-խմել և այլն (այս մասին մանրամասն կիստվի «Համահուն բառաձևեր» գլխում):

Ծագումով վաղահատարի ել վերջավորություն հետ է կապված բառակազմության մեջ հանդիպող, սակայն ոչ կենսունակ ել ածանցը, որով ժամանակակից հայերենում հայտնի է մեռել գոյականը:

Համահունական այս շարքն է.

ե₁ — անորոշ դերբայի վերջավորություն (գր+ել),

ե₂ — վաղահատար դերբայի վերջավորություն (կարգաց+ել),

ե₃ — գոյականակերտ ածանց (մեռ+ել):

Ա.Ծ

1. Ժամանակակից հայերենի բայական համակարգում գործառում էր ած ձևովը, որը կերտում է բայերի հարակատար դերբայը (գր+ած, կարգաց+ած, շին+ած, կառուց+ած, մոտեց+ած, փախ+ած և այլն):

2. Ժամանակակից հայերենում գործառում է նաև ած վերջածանցը, որն ունի երկու արժեք: Մի կողմից այն կերտում է գոյականներ, ինչպես՝ խորոված, կոտորած, առած, սոխառած և այլն, մյուս կողմից նրանով կազմվում են ածականներ, ինչպես՝ սիրած, դարդացած, կարգացած և այլն: Վերջին դեպքում նրա իմաստային կապը ած դերբայական ձևովի հետ բավականաչափ ուժեղ է և դեռևս չի հասել համահունության (գոյականակերտ ած ածանցը, որը ծագումով կապված է նախորդ ած-երի հետ, ավելի հին է. դերբայական ած-ը առաջացել է նրանից)⁸:

Այսպիսով՝ շնայած ծագումնաբանական նույնությանը, ունենք երկու համահուն ած.

Ա_{ծ1} — հարակատար դերբայի վերջավորություն (գրած, ջարդած, հոգնած),

Ա_{ծ2} — գոյականակերտ (նաև ածականակերտ) վերջածանց (կոտորած, խորոված, սիրած, նշանած, խմած և այլն):

ՈՂ

Իր գործառությամբ և համահունական կապերով ած ձևովին նման է ող-ը: Այն ևս գործառում է բայական համակարգում՝ կերտելով բայ-

⁸ Ած ածանցի առաջացման մասին տե՛ս Ա. Աբրահամյան, Հայերենի դերբայները: Նրանց ձևաբանական նշանակությունը, էջ 198—199:

րի ենթակայական գերբայք, ինչպես՝ գրող, խմող, վաղող, իջնող, մոտեցող և այլն: Վերջին շրջանում այն ձևեր է բերել նաև ածանցային արժևր և կերտում է նաև գոյականներ. օրինակ՝ ծնող, գրող, ասմունքող, փորատող, զոդող և այլն: Այս ող-ը, ի տարբերություն նախորդ ձևույթների, դեռևս լրիվ չի հնաացել մայր ձևից, և այն կտրելի է համանուն համարել միայն վերապահությանմբ՝ նկատի ունենալով առանձին կազմություններում նրա ունեցած գոյականակերտ արժեքը: Այսինքն՝ վերապահությանմբ կտրելի է ընդունել՝

Ող1 — գերբայական վերջավորություն (վաղող).

Ող2 — գոյականակերտ վերջածանց (գրող, զոդող):

ԻՔ

Բայական համակարգում գործառուծ է իմ ձևույթը, որը զրվելով է և ա խոնարհման պարզ, կրավորական և պատճառական բայերի անցյալի հիմքի վրա՝ կերտում է սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակի հոգնակի II դեմքի ձևերը. օրինակ՝ գրեց + իմ, կարգաց + իմ, խմեց + իմ, բաժանորդագրվեց + իմ, մոտեցր + իմ և այլն: Այս իմ-ը նույնանիշական շարք է կազմում ալ ձևույթի հետ (հմմտ. գրեց + իմ, մոտեց-ալ): Նույն ձևույթը, համապատասխանաբար միանալով ու և է լծորդների հետ և զրվելով բայի ներկայի հիմքի վրա, կազմում է ըղձական եղանակի անցյալ ժամանակի հոգնակի երկրորդ դեմքի ձևերը՝ գր + ե + իմ, կարդ + ա + յ + իմ, մոտեն + ա + յ + իմ, ուտ + ե + իմ և այլն:

Համանուն ձևույթի ենթ հանդիպում գերբայական համակարգում: Հայտնի է, որ ժամանակակից հայերենում ապառնի գերբայի II ձևը կազմվում է անորոշ գերբայի վրա ալկեացնելով իմ վերջավորությունը. ինչպես՝ կառուցել + իմ, խմել + իմ, գրել + իմ և այլն: Այն համանիշական շարք է կազմում ու ձևույթի հետ (հմմտ. գրել + ու — գրել + իմ):

Բառակազմության մեջ առկա է երրորդ իմ ձևույթը, որն այստեղ գոյականակերտ վերջածանց է. օրինակներ՝ դալիմ, լսելիմ, ուտելիմ, վառելիմ, ընթրիմ, կարծիմ և այլն: Այս իմ-ը նախորդի հետ ունի ծագումնաբանական ընդհանրություն. երկուսն էլ առաջացել են գրաբարյան ապառնի գերբայի հոգնակի ձևից (ուտելի + մ), սակայն իմաստով հեռանալով նրանից, մի դեպքում այն պահպանել է գերբայական նշանակությունը (կորցնելով հոգնակիության իմաստը), մյուս դեպքում կորցնելով նաև գերբայական իմաստ արտահայտելու արժեքը՝ վերածվել է գոյականակերտ ածանցի (հմմտ. կառուցելիմ և ուտելիմ):

Այսպիսով՝ համանիշական այս շարքը եռանդամ է.

ԻԲ₁ — աղանձի դերբայի վերջավորություն (կառուցվել+իմ),

ԻԲ₂ — բայերի սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակի և ըղձական հղանակի անցյալ ժամանակի հոգնակի երրորդ զեմքի վերջավորություն (վերջին դեպքում ե և ա լծորդների հետ՝ գրեց+իմ, գր+ե+իմ; կարգ+ա+յ+իմ):

ԻԲ₃ — զոչականակերտ վերջածանց (ընթր+իմ):

ԻՆ

1. Խոնարհման համակարգում ե և ա խոնարհման պարզ բայերի, բազմապատկական, կրավորական և պատճառական բայերի սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակի հոգնակի երրորդ զեմքի բայաձևերը կազմվում են անցյալի հիմքին ավելացնելով ին ձևույթը, որը նույնանիշական շարք է կազմում ան ձևույթի հետ (հմտ. գրեց+ին, կարգաց+ին, կոտրատեց+ին, ջարդվեց+ին, մոտեցր+ին և փախ+ան, մոտեց+ան, իջ+ան և այլն): Այդ նույն ձևույթը համապատասխանաբար միանալով ե և ա լծորդներին և զրվելով բայերի ներկայի հիմքի վրա՝ կազմում է ըղձական եղանակի անցյալ ժամանակի հոգնակի երրորդ զեմքի ձևերը, ինչպես՝ գրե+ին, կարգ+այ+ին, ուտ+ե+ին, մոտեն+ա+յ+ին և այլն: Ինչպես նախորդ, այնպես էլ այս զեմքում ա լծորդի և ին վերջավորության միջև հանդես է գալիս չ ձայնակապը (ալիք, ալին):

2. Հոլովման համակարգում զործառում է ին ձևույթախումբը (սեռական հոլովական վերջավորություն ի+որոշիչ հոդ ն), որը առաջինի հետ կազմում է միջհարացուցային համանունական շարք: Ահա օրինակներ՝ գրե+ին, սեղան+ին, աշակերտ+ին, փողոց+ին և այլն: Այս ձևույթախումբը հանդիպում է միայն այն դեպքերում, երբ զոչականը հանդես է գալիս որպես բայի լրացում (մոտենալ սեղանին, տալ աշակերտին):

3. Բառակազմության մեջ ևս հանդիպում ենք համանուն ին ձևույթի, որն ածականակերտ վերջածանց է. մեծ մասամբ ածականներից կերտում է հատկանիշի սաստկացման իմաստով նոր ածականներ (գովար+ին, խոր+ին, մթ+ին, դյուր+ին և այլն): Մագումով ևս այս երեք ձևույթները կապված չեն իրար: Համանունական այս շարքի պատկերն է՝

Ին₁ — բայերի սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակի հոգնակի III զեմքի, ինչպես նաև ըղձական եղանակի անցյալ ժամանակի հոգնակի երրորդ զեմքի վերջավորություն (գրեց+ին, գր+ե+ին):

Ին₂ — հոլովման համակարգի սեռական-տրական հոլովական վերջավորություն — որոշիչ հոդ ձևով փախումբ (գրք + ի + ն),

Ին₃ — ածականակերտ վերջածանց (դժվար + ին):

ԵՄ

1. Ժամանակակից հայերենում և խոնարհման բայերի ըզձական եղանակի ներկա ժամանակի եղակի առաջին դեմքի ձևերը կազմվում են ներկայի հիմքին ավելացնելով եմ ձևով փախումբը, որը նույնանիշական շարք է կազմում ամ-ի հետ⁹ (հմտ. գրք + եմ, փախչ + եմ, ընկն + եմ, հեռացն + եմ և կարգ + ամ, մոտեն + ամ, հեռան + ամ և այլն):

2. Խոնարհման համակարգում դործառում է մեկ եմ ևս՝ օժանդակ բայի ներկա ժամանակի առաջին դեմքի ձևը, որը ևս բաղադրյալ կազմություն է (ե + մ): Այս և նախորդ կազմություններում մ-ն ընդհանուր է (նույն՝ եղակի առաջին դեմքի ցուցիչն է), սակայն ձևով փախմբերը համանուն են իրար, բանի որ տարբերվում են և՛ իմաստով, և՛ գործառությունով: Առաջին եմ-ը վերջավորություն է, կցվում է բայերի ներկայի հիմքին՝ կազմելով համադրական ժամանակային ձև (ըզձական ներկա) իսկ երկրորդ եմ-ը ունի բառական արժեք (էական բայ) և հարադրվելով համապատասխան դերբայներին՝ կազմում է սահմանական եղանակի ներկա, ապառնի, վաղակատար, մասամբ նաև հարակատար ժամանակների եղակի առաջին դեմքի ձևերը (գրում եմ, գրելու եմ, գրել եմ, կանդնած եմ): Գործառելով որպես էական բայ՝ այն հանդես է գալիս նաև որպես բաղադրյալ ստորոգյալի ստորոգելիական հանգույց (աշակերտ եմ, ուսանող եմ, ընկեր եմ և այլն):

Տարբեր են նաև այս երկու եմ-երի և բաղադրիչները. առաջինում այն, ինչպես ասացինք, լծորդ է, իսկ երկրորդում՝ արմատ:

3. Բառակազմության մեջ, իհարկե՝ սահմանափակ կիրառությամբ, հանդիպում է եմ վերջածանցը, որը իր հերթին երկարժեք է. կերտում է ածականներ (խոհեմ, վսեմ) և զոյականներ (համեմ): Այս ածանցը ժամանակակից հայերենում կենսունակ չէ:

Համանունական այս շարքը եռանդամ է.

Եմ₁ — և խոնարհման բայերի ըզձական եղանակի առաջին դեմքի վերջավորություն (գրեմ),

⁹ Զևով փախումբ անվանումը այստեղ պայմանական է, բանի որ բուն ձևով ըմ-ն է, իսկ ե-ն և ա-ն փաստորեն լծորդներ են, որոնք ձևով կարելի է անվանել միայն պայմանականորեն:

Եմ₂ — էական կամ օժանդակ բայի ներկա ժամանակի եղակի առաջին դեմքի ձև (գրում եմ),

Եմ₃ — ածականակերտ կամ գոյականակերտ վերջածանց (վսեմ, համեմ)։

ԵՍ

1. Ե խոնարհման բայերի ըղձական եղանակի ներկա ժամանակի եղակի երկրորդ դեմքի ձևերը կազմվում են ես հնչույթախմբով, որն ավելանում է ներկայի հիմքի վրա (գր-ես, փախչ-ես, բեկն-ես)։ Այստեղ ես դեմքի և թվի բուն ցուցիչը և ձևույթն է։ Իսկ ե-ն լծորդ է (գր+ե+ս)։ Այս ձևույթախմբը նույնանիշական շարք է կազմում աս-ի հետ, որտեղ ս-ն նույն ս-ն է, իսկ ա-ն լծորդ է (համատ. գր+ե+ս, կարգ+ա+ս)։

2. Առաջինին համանուն է օժանդակ կամ էական բայի ներկա ժամանակի եղակի երկրորդ դեմքի ձևը՝ ես։ Այս երկու ես-երի միջև դոյուբլյուն ունի համանունական նույն հարաբերակցությունը, ինչ եմ₁-ի և եմ₂-ի միջև (համատ. գրես, գրում ես)։ Ի տարբերություն նախորդի, համանունական այս շարքը երկանդամ է։

Ես₁ — Ե խոնարհման բայերի ըղձական ներկա ժամանակի եղակի երկրորդ դեմքի վերջավորություն (գր+ես),

Ես₂ — էական կամ օժանդակ բայի ներկա ժամանակի եղակի երկրորդ դեմքի ձև (գրում ես)։

ԵՆՔ

1. Ժամանակակից հայերենի խոնարհման հարացույցում գործառում է ենք (ե+նք) ձևույթախմբը, որով կազմվում են Ե խոնարհման բայերի ըղձական եղանակի ներկա ժամանակի հոգնակի առաջին դեմքի ձևերը (գր+ենք, խմ+ենք)։ Այն նույնանիշ է անք ձևույթախմբին (ա-ն և ե-ն ալյուտեղ ևս լծորդներ են)։

2. Խոնարհման հարացույցում հանդիպում ենք մեկ ենք ձևույթախմբի ևս, որը չնայած նք բաղադրիչի բնդհանրությունը, համանուն է առաջինին։ Սա օժանդակ կամ էական բայի ներկա ժամանակի հոգնակի առաջին դեմքի ձևն է (գրում ենք), որը իմաստով և գործառությամբ լրիվ տարբերվում է ըղձականի ենք-ից (համատ. գրենք-գրում ենք, նստենք-նստում ենք)։

3. Գոյականական համակարգում գործառուծ է համանուն ենթ-ը, որը գրվելով անձ ցույց տվող հատուկ անունների վրա՝ նրանց տալիս է հոգնակիություն-հավարականության նշանակություն (Գրիգոր+ենթ, Սուրեն+ենթ, Վաղգեն+ենթ և այլն): Այս ենթ-ը նույնափշական շարք է կազմում անթ, ոնթ, ունթ ձևերի հետ (Գրիգորենթ, աներանթ, սուպենթ, վեդունթ) և համանիշական շարք՝ եր, ներ, ք ձևերի հետ (վաղգենենթ, քնկերներ, խմբեր, սրղիթ):

Համանունական այս շարքը կոանդամ է.

ենթ₁ — ե խոնարհման բայերի ըզձական ներկայի հոգնակի I զեմ-րի վերջավորություն (գրենթ),

ենթ₂ — էական կամ օժանդակ բայի ներկա ժամանակի հոգնակի առաջին զեմբի ձև (գրում ենթ),

ենթ₃ — գոյականների համակարգում հոգնակիություն-հավարականություն ցույց տվող մասնիկ (Գրիգորենթ):

ԵՔ

1. Ե խոնարհման բայերի ըզձական եղանակի ներկա ժամանակի հոգնակի երկրորդ զեմբի վերջավորությունն է եթ ձևովթախումբը (ե+թ), որը նույնափշ է աթ-ին (հմմտ. գր+եթ, խմ+եթ, ուտ+եթ և կարգ+աթ, մոտեն+աթ): Այս նույն ձևովթը, գրվելով բայերի անցյալի հիմքի վրա, հատուկ հնչերանդի օգնությամբ, կերտում է հրամայական եղանակի հոգնակի երկրորդ զեմբի ձևերը. օրինակ՝ գրեց+եթ, մոտեց+եթ, հեռաց+եթ, փախ+եթ, վաղեց+եթ, իջեցր+եթ և այլն:

2. Նույն հնչյունակազմն ունի նաև օժանդակ կամ էական բայի ներկա ժամանակի հոգնակի երկրորդ զեմբի ձևը՝ եթ, որով, ի տարբերություն առաջինի, կազմվում են սահմանական եղանակի վերլուծական ժամանակաձևերը (հմմտ. գրեթ և գրում եթ, գրելու եթ, գրել եթ):

3. Համահունչ ձևովթի ենթ հանդիպում նաև բառակազմության մեջ՝ եթ, որը գործառուծ է հիմնականում որպես գոյականակերտ վերջածանց. օրինակ՝ նշանդր+եթ, ջրօրհն+եթ, տնօրհն+եթ, գոնբաց+եթ, նան՝ ամենուր+եթ¹⁰:

Համանունական այս շարքը կոանդամ է.

եթ₁ — ե խոնարհման բայերի ըզձական ներկա ժամանակի հոգնակի երկրորդ զեմբի վերջավորություն (գրեթ, նաև հրամայական եղանակի հոգնակիի վերջավորություն (գրեցեթ)),

¹⁰ Սա գրարարյան բարացած հոլովաձև է:

Եֆ₂ — օժանդակ բայի ներկա ժամանակի հոգնակի երկրորդ դեմքի ձև (գրում եֆ),

Եֆ₃ — գոյականակերտ վերջածանց (չրօրհնեֆ):

ԵԻ

1. Այս հնչյունախումբը խոնարհման համակարգում գործառում է որպես և խոնարհման բայերի ըղձական եղանակի անցյալ ժամանակի եղակի առաջին դեմքի ցուցիչ (ե+ի), և զրվելով ներկայի հիմքի վրա՝ կերտում է համապատասխան բայաձևեր (խմ+եի, վազ+եի, ուտ+եի և այլն): Այն նույնանիշ է այլ (ա+յ+ի) ձևույթախմբին (զն+այի):

2. Երկրորդ եի հնչյունախումբը նույնպես գործառում է խոնարհման համակարգում: Այն օժանդակ բայի անցյալ ժամանակի եղակի առաջին դեմքի ձևն է: Ինչպես նախորդ և հաջորդ դեպքերում, այնպես էլ այստեղ դեմքի և թվի ցուցիչը երկու դեպքում էլ նույնն է (այստեղ՝ ի-ն), սակայն ե-երը տարբեր են. առաջին դեպքում այն լծորդ է, երկրորդում՝ արմատ: Այս համանուն ձևերը տարբերվում են իմաստով և գործառությամբ, նաև՝ ուղղագրությամբ: ԵՐԼ առաջին դեպքում այն վերջավորություն է, կցվում է բայահիմքին և բնականաբար գրվում եի, ապա երկրորդ դեպքում գրվում է գերբայից անջատ, ունի հարաբերական ինքնուրույնություն և գրվում է էի: Այսպիսով՝

Եի₁ — ըղձական եղանակի անցյալ ժամանակի եղակի առաջին դեմքի վերջավորություն (զր+եի),

Եի₂ — օժանդակ բայի անցյալ ժամանակի եղակի առաջին դեմքի ձև (գրում, գրելու, գրել էի):

ԵԻԲ

1. Այս հնչյունախումբը ես գործառում է բայերի ըղձական եղանակի ենթահարացուցում: Նրանով են կազմվում և խոնարհման բայերի ըղձականի անցյալ ժամանակի եղակի երկրորդ դեմքի բայաձևերը (զր+եիբ, խմ+եիբ, վազ+եիբ, փախչ+եիբ և այլն): Այն նույնանիշ է այիբ (ա+յ+իբ) վերջավորությանը (կարդ+այիբ):

2. Այս վերջավորությանը նույնահունչ է օժանդակ բայի անցյալ ժամանակի եղակի երկրորդ դեմքի ձևը՝ էիբ: Այս երկու համանուն ձևերի հարաբերակցությունը նույնն է, ինչ որ նախորդ դեպքում: Այսինքն՝

Եիբ₁ — ըղձական եղանակի անցյալ ժամանակի եղակի երկրորդ դեմքի վերջավորություն (զր+եիբ).

էիր₂ — օժանդակ բալի անցյալ ժամանակի եզակի երկրորդ դեմքի ձև (գրում էիր):

ԱՐ

Խոնարհման համակարգում գործառուտ են երկու համանուն ար ձևույթներ:

1. Առաջին ար ձևույթը, գրվելով բաղադրական-քերականական ածանց ունեցող բայերի անցյալի հիմքի վրա, կազմում է նրանց սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակի եզակի երկրորդ դեմքի ձևերը. ալսպես՝ փախ⁺ար, ընկ⁺ար, մոտեց⁺ար, բարձրաց⁺ար:

2. Համանուն ար ձևույթը, գրվելով ա խոնարհման բայերի ներկայի հիմքի վրա, կազմում է նրանց ըղձական եղանակի անցյալ ժամանակի եզակի երրորդ դեմքի ձևերը. ինչպես՝ կարգ⁺ար, մոտեն⁺ար, հեռան⁺ար, ուշան⁺ար և այլն: Այստեղ կա բուն վերջավորությունը ր-ն է, իսկ ա-ն լծորդ է:

Այս երկու համանունները կարելի է համարել ներհարացուցային, որովհետև հանդես են գալիս խոնարհման ընդհանուր նարացուցյի սահմաններում:

3. Բառակազմության մեջ կա հանդիպում ենք համանուն ար ձևույթի, որը վերջածանց է և հանդես է գալիս մի շարք բայերի կազմության մեջ, ինչպես՝ զարգ-զարդարել, մեծ-մեծարել, հարդարել: Այս ածանցով են բաղադրված նաև կերպար, տիպար գոյականները: Իսկ դալար, երկար, գալար, արդար կազմություններում ալն ալլես չի դիտակցվում որպես ածանց:

Համանունական այս շարքը եռանդամ է.

Ար₁ — ան, են, ն, չ ածանց ունեցող բայերի սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակի եզակի երկրորդ դեմքի վերջավորություն (տես⁺ար),

Ար₂ — ա խոնարհման բայերի ըղձական եղանակի անցյալ ժամանակի եզակի երրորդ դեմքի վերջավորություն (կարգ⁺ար),

Ար₃ — վերջածանց (մեծ⁺ար⁺ել, կերպ⁺ար):

ԵԻՆՔ, ԵԻՔ, ԵԻՆ

Այս հնչյունախմբերով ժամանակակից հայերենի խոնարհման համակարգում գործառուտ են երեք երկանդամ համանուն ձևույթախմբեր.

1. Եինք₁ (ե⁺ինք)—ե խոնարհման բայերի ըղձական անցյալ ժամանակի հոգնակի առաջին դեմքի վերջավորություն (գր⁺եինք):

Երևմտ (էրմ) — օժանդակ բաշի անցյալ ժամանակի հոգնակի առաջին զեմքի բայածև (զրում էրմ) :

Շ. Երմ (ե + ր) — և խոնարհման բաշերի բղձական անցյալի ժամանակի հոգնակի երրորդ զեմքի վերջավորություն (զր + Երմ) :

Երմ (էր) — օժանդակ բաշի անցյալ ժամանակի հոգնակի երրորդ զեմքի բայածև (զրում էրմ) :

Յ. Երմ (ե + ին) — և խոնարհման բաշերի բղձական եղանակի անցյալ ժամանակի հոգնակի երրորդ զեմքի վերջավորություն (զր + Երմ) :

Երմ (էր) — օժանդակ կամ էական բաշի անցյալ ժամանակի հոգնակի երրորդ զեմքի բայածև (զրում էրմ) :

ԱՅԻՆ

Այս հնչյունախմբով ժամանակակից հայերենում դործառում են երկու համանուն ձևույթներ :

Առաջին աշին-ը (ա + յ + ին) դործառում է խոնարհման համակարգում : Նրանով են կազմվում ա խոնարհման բաշերի բղձական եղանակի անցյալ ժամանակի բայածևերը : Այս աշին-ը նույնանիշական շարք է կազմում երմ վերջավորության հետ :

Երրորդ աշին-ը դործառում է բառակազմության մեջ : Այն ածականակերտ վերջածանց է, համանիշական շարք է կազմում ալան, յան ածանցների, նաև սևուկանի ի վերջավորության հետ : Օրինակներ՝ աշնանաշին, ձմեռաշին, մարդկաշին, մշակութաշին, բաղաբաշին և այլն : Համանունական այս շարքի պատկերն է՝

Ային — ա խոնարհման բաշերի բղձական եղանակի անցյալ ժամանակի հոգնակի երրորդ զեմքի վերջավորություն (զն + աշին),

Ային — ածականակերտ վերջածանց (բաղաբաշին) :

* * *

Այսպիսով՝ ժամանակակից հայերենի հոլովման և խոնարհման համակարգերում դործառում են 36 համանունական խմբեր, որոնց մի մասի շարքերում առկա են նաև բառակազմական համանուն ձևույթներ : Առաջին հայացքից կարող է թվալ, թե քերականական ձևույթների համանունական խմբերի այսպիսի առատությունը կարող է խանգարել հաղորդակցման գործընթացին՝ առաջացնելով երկիմաստություն և տեղիք տալով հաղորդման ոչ ճիշտ ընկալման : Սակայն իրականում այդպես չէ : Չունենալով ինքնուրույն կիրառություն՝ համանուն քերականական ձևույթները մասնակցում են հաղորդակցման գործընթացին միայն

միանալով այլ ձեռնարկների կամ բառերի հետ: Նրանք հիմնականում ունեն գուգորդելիություն և դիրքային տարբեր ոլորտներ, այդ պատճառով նրանց համանունությունը հաջորդ՝ բառային մակարդակում հիմնականում չեզոքանում է, իսկ հաճախ նույնիսկ չի բնկավում: Այսպես՝ ինչպես ասացիներ, ժամանակակից հայերենի խոնարհման համակարգում կա երկու համանուն չ: Սկզբնական չ մասնիկն է, որը միշտ կցվում է բայերին սկզբից (չ+տեսնել, չ+գնալ, չ+եմ տեսի և այլն), մյուսը մի խումբ բայերի ներկայի հիմքակազմիչն է՝ բաղադրական-բերականական ածանց: Վերջինս իր դիրքով բաղադրական տարբերվում է առաջինից. գրվում է բացարձատի (բայի բացարձակ հիմքի) և վերջավորության միջև, ինչպես՝ փախ+չ+ել, սառ+չ+ել, ուռ+չ+ել, շիւղ+չ+ել և այլն: Տարբեր է նաև այս երկու չ-երի կիրառության ոլորտը: Եթե միտական չ մասնիկն ունի բնականական կիրառություն, զբղվում է անխոր բոլոր բայերի վրա՝ կազմելով նրանց միտական ձևերը և միտական խոնարհումը, ապա բաղադրական-բերականական չ ածանցը ունի խիստ սահմանափակ կիրառություն. հանդիպում է միայն մի փոքր խումբ բայերի ներկայի հիմքից կազմված ձևերում (փախում եմ, փախելու եմ, կփախեմ և այլն): Այն, որ չեմ գնում, չգնացի և փախում եմ, կփախեմ ձևերում առկա են համանուն բերականական ձեռնարկներ, մենք պարզում էնք միայն ձեռնարկական վերլուծության միջոցով (չ-գնաց-ի և կ-փախ-չ-եմ):

Այսպիսով՝ ճիշտ: այնպես, ինչպես նույնանիշ ձեռնարկների առկայությունը լեզվում բացատրվում է նրանց գուգորդելիության տարբեր ոլորտների ունենալով, նույն ձևով համանուն բերականական ձեռնարկների առատությունը լեզվում, մասնավորապես ժամանակակից հայերենում, բացատրվում է այն իրողությամբ, որ նրանք չունեն ինքնուրույն կիրառություն, հանդես են գալիս մեծ մասամբ տարբեր զիբբերում (զուգորդվում են տարբեր բառերի ու արմատների), որի հետևանքով համանունությունը հիմնականում չեզոքանում է:

Բ. ԲԱՌԱՋՆԵՐԻ ՀԱՄԱՆՈՒՆԱԿԱՆ ՇԱՐԲԵՐԸ

Ինչպես ասվեց ներածության մեջ, ի տարբերություն բառական համանունների, բառաձևերի համանունությունը մեծ մասամբ պատահական բնույթի չի կրում և կարելի է ենթադրել որոշակի օբիեկտիվության: Բառաձևերի համանունական շարքերը ևս կարող են լինել միջհարացային և ներհարացային: Միջհարացային ևս բառաձևերի այն համանունական շարքերը, որոնց անդամները մտնում են տարբեր հա-

րացույցների, տարբեր խոսքի մասերի համակարգերի մեջ: Ներհարուցուցային են այն համանունական շարքերը, որոնց անդամները դործուծում են միևնույն խոսքի մասի սահմաններում, սակայն տատկանում են նրա տարբեր ենթահարացույցներին:

Քննենք բառաձևերի՝ ժամանակակից հայերենում գոյծառող և որդշակի օրինաչափության ենթարկվող համանունական շարքերը:

1. ԲԱՌԱՋԵԿԵՐԻ ՆԵՐՀԱՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՀԱՄԱՆՈՒՆԱԿԱՆ ՇԱՐՔԵՐԸ
ԲԱՅԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

1. Ապառնի դերբայ — անորոշ դերբայի սեռական-տրական հոլովածն շարքը. — Հայտնի է, որ ժամանակակից հայերենի ապառնի դերբայը առաջացել է անորոշ դերբայի սեռական հոլովից¹¹: Առաջանալով անորոշի սեռականից՝ ապառնի դերբայը չի տարբերակվել նրանից ձևով. և, ահա, ժամանակակից հայերենում ստեղծվել է բայի անորոշ դերբայի սեռական-տրական հոլովածն-ապառնի դերբայ համանունական շարքը:

Քանի որ յուրաքանչյուր անորոշ դերբայ ժամանակակից հայերենում կարող է հոլովվել և հետևաբար ունենալ սեռական-տրական հոլովածն, միաժամանակ յուրաքանչյուր բայ ունի ապառնի դերբայ, հետևաբար համանունական այս շարքը ընդգրկում է ամբողջ բայական համակարգը, այսինքն՝ ինչքան բայ որ կա ժամանակակից հայերենում. այդքան էլ ապառնի դերբայ-անորոշի սեռական-տրական հոլովածն համանունական շարք կա: Բավարարվենք մի քանի օրինակ բերելով:

Ապառնի դերբայ

Անորոշի սեռական-տրական
հոլովածն

անվանելու

անվանելու

այցելելու

այցելելու

բերելու

բերելու

դուրս գալու

դուրս գալու

բնակվելու

բնակվելու

բարձրանալու

բարձրանալու

իջնելու

իջնելու

փախչելու

փախչելու

11 Տե՛ս Ա. Աբրահամյան, Հայերենի դերբայները և նրանց ձևարանական նշանակությունը, Ա. Ղափրյան, Հայ բարբառագիտություն, 1953, էջ 189, Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզվի ձևարանության հարցեր, հ. Բ, էջ 291.

դառնալու
մոտենալու
մոտեցնելու
գրվելու

դառնալու
մոտենալու
մոտեցնելու
գրվելու

Ինչպէս երևում է բերված օրինակներից, համանունական այս շարքը իր մեջ ընդգրկում է բայի դրսևորման բոլոր ձևերը (ներգործական, շեղոր, կոալտրական, պատճառական սեռեր, բաղմապատկական-սաստկական կերպ, պարզ և ածանցաձոր, համադրական և հարադրական կազմություններ):

Համանունական այս շարքը ներհարացուցային կաբելի է համարել միայն պայմանականորեն, քանի որ շնայած շարքի անդամները հանդէս են դալիս բայական ընդհանուր համակաբգում, սակայն ալտաեղ հակադրվում են խոնարհման և հոլովման հարացուցները: Ապառնի գերբայը մոնում է դերբայների հարացուցի մեջ. միաժամանակ օժոնդակ բայի հետ կաղմելով վերլուծական ժամանակաձևեր (ապառնի, անցյալի ապառնի — գրելու եմ, գրելու էի)՝ այն մոնում է սահմանակուն եղանակի ժամանակային հարացուցի մեջ: Իսկ անորոշ դերբայի սեռական-տրական հոլովաձևը, գուրս չգալով բայական ընդհանուր համակարգից, մոնում է անորոշի հոլովման հարացուցի մեջ:

Այս համանուններն ունեն իմաստային զուգորդելիության և գործառական որակական տարբերություններ:

ա) Անորոշ դերբայը պատկանում է ինքնուրույն կամ անկախ դերբայների թվին, հետևաբար նրա սեռական-տրական հոլովաձևն ունի ինքնուրույն շարահյուսական արժեք, այսինքն՝ հանդէս է դալիս որպէս բառակապակցության, ապա և նախադասության անդամ: Այն կարող է գուգորդել ինչպէս գոյականների, այնպէս էլ բայերի: Առաջին դեպքում հանդիսանում է գոյականական բառակապակցության ստորագուստեղամ՝ արտահայտելով հատկացական հարաբերություն (հմմտ. գրելու քույր, ուտելու հաց, կարդալու գիրք, խմելու ջուր և այլն), երկրորդ դեպքում՝ բայական բառակապակցության ստորագուստ անդամ՝ արտահայտելով նպատակային, հանգման հարաբերություն (հմմտ. գնալ աշխատելու, հատկացնել ջրելու, առանձնացնել վորելու և այլն): Իհարկէ, երկու դեպքում էլ, որպէս բայ, այն կարող է իր հերթին ծաղաղվել՝ կուղմելով բայական բառակապակցություն-ստորագուստ անդամ (նամակ գրելու թուղթ, գնալ հիմնարկում աշխատելու):

Նախադասության մեջ անորոշի սեռական-տրական հոլովաձևը կա-

բող է հանդես գալ որպէս նախադասութեան առանձին անդամ՝ կառու-
րելով երկու հիմնական դէք: ա) զուգականերէն անդամի լրացման, այն
է՝ հատկացուցչի և որոշչի և բ) բաշխական անդամի լրացման, այն է՝
պարագայի (հիմնականում նպատակի պարագայի): Բերենք օրինակներ:
կիրառութեան յորաքանչյուր դեպքի համար:

Գրելու րոպր օրակյալ շէր: Խմելու ջուր շատ սառն էր: Սպորեւելու
դասը բաժական հեշտ էր: Բեռված նախադասութեաններում անորոշի
սեռական-տրական հոլովածներ կատարում է հատկացուցչի (I օրինակ)
և որոշչի (II և III օրինակներ) շարահայտական պաշտոններ:

Նա դնացել է հանգստանալու: Ուսանողները մեկնել են աշխատե-
լու: Աշտըր գնացել է քննութիւն հանձնելու: Այս օրինակներում արդէն
նույն հոլովածներ կատարում է նպատակի պարագայի շարահայտական
պաշտոն:

Այս հոլովածներ կարող է զործածել նաև ստորոգելիական վերագրի
պաշտոնով. օրինակ՝ Այս ջուրը խմելու է: Այս բույսը ուտելու չէ: Այդ
լուրը ուրախանալու է և այլն:

Այս երեք կիրառութեաններում էլ մենք ունենք նույն հոլովածներ,
իւր տարբեր իմաստներով, այսինքն՝ այստեղ առկա է անորոշի սեռա-
կան-տրական հոլովածի բազմիմաստութեան երևույթը: Ինչպէս կախ-
նենք հաջորդ գլխում, սրանք շարահայտական հարաբերութեաններ ար-
տահայտելու տեսանկյունից համանուններ են, զործածական համա-
նուններ (արտահայտում են շարահայտական որակապես տարբեր հա-
րաբերութեաններ):

բ) Ապառնի գերբայը մտնում է կախյալ դերբայների խմբի մեջ և
ունի միայն ձևաբանական տրժեք. օժանդակ բայի ներկա կամ անցյալ
ժամանակների հետ միանալով՝ կազմում է սահմանական եղանակի
ապառնի և անցյալի ապառնի ժամանակները՝ հակադրվելով ներկա և
անցյալ ժամանակներին (գրում եմ (էի) — գրելու եմ (էի) — գրել եմ (էի)).
Միաժամանակ այն մասնակցում է երկրորդական վերլուծական ժամա-
նակների կազմութեանը՝ հակադրվելով գուղընթացական և հարակատար
դերբայներով կազմված երկրորդական վերլուծական ժամանակներին
(գրած եմ լինում — գրելիս եմ լինում — գրելու եմ լինում):

Հաճախ անբող դերբայ + օժանդակ բայ կապակցութեանը
ապառնի ժամանակ չի կազմում (տե՛ս վերևի օրինակները. Ջուրը
խմելու է: Գիրքը կարդալու է: Դասը սովորելու է և այլն), այլ բաղադր-
յալ ստորոգյալ է՝ կազմված անորոշի սեռական-տրական հոլովածից և
օժանդակ բաղից: Այս դեպքում մենք գործ ունենք երկու կարգի համա-

նունության հետ. մի կողմից համանուն են ապառնի գերբայի ու անորոշի սեռական հոլովածները (գրելու-գրելու), մյուս կողմից ապառնի դերբայ + օժանդակ բայ և անորոշի սեռական-տրական հոլոված և օժանդակ բայ կապակցությունները: Առաջին դեպքում մենք ունենք բայի խոնարհված ձև՝ սահմանական եղանակի ապառնի կամ անցյալի ապառնի ժամանակները, երկրորդ դեպքում՝ բաղադրյալ ստորոգյալ (Գիրքը կարդալու է, — նա կարդալու է): Այստեղ համանունության մի կերպով ձևաբանական միավոր է, մյուս կերպով՝ շարահյուսական: Հիշյալ կապակցությունները ձևով համընկնում են միայն այն դեպքում, երբ ապառնի ժամանակը զրված է լինում եղակի (երբեմն նաև հոգնակի) երրորդ դեմքով, բանի որ բաղադրյալ ստորոգյալը այս դեպքում ունենում է միայն երրորդ դեմքի հանգույց: Ահա օրինակներ համանունական այս շարքի համար:

Այս նամակը գրելու է — նա նամակը գրելու է:

Մթերքը պահելու է — նա մթերքը պահելու է:

Գիրքը կարդալու է — նա գիրքը կարդալու է:

Հագուստները լվանալու են — նրանք հագուստները լվանալու են:

Այս բույսը ուտելու է — նա այս բույսը ուտելու է:

Ինչպես երևում է բերված շարքից, ապառնի ժամանակը համանուն է լինում բաղադրյալ ստորոգյալին այն դեպքում, երբ զրվում է անձ ցույց տվող գոյականի եղակի կամ հոգնակի 3-րդ դեմքով. դա բացառությամբ է այն հանդամանքով, որ անորոշի սեռական-տրական հոլովածով վերադիր ունեցող բաղադրյալ ստորոգյալ է գործածվում միայն իր ցույց տվող գոյականների հետ՝ ցույց տալով տվյալ գոյականի հատկացումը որևէ բանի (գիրքը կարդալու է — կարդալու համար է, հագուստը լվանալու է — լվանալու ենթակա է և այլն):

2. Անորոշ դերբայ — վաղակատար դերբայ համանունական շարքը. — Ինչպես ասվեց նախորդ գլխում, բայական համակարգում գործառում են երկու ել համանուն ձևություներ, որոնք իրարից տարբերվում են և՛ տրոսահայտած քերականական իմաստային հարաբերություններով, և՛ ծագումով: Առաջին ել-ը ժամանակակից հայերենի ե խոնարհման բաղադրով անորոշ դերբայի վերջավորությունն է, որով ձևավորվում է ե խոնարհման բայերի խումբը, երկրորդ ել-ը (եալ > ել) վաղակատար դերբայի վերջավորությունն է, որը զրկելով բայերի տարբեր հիմքերի վրա՝ կերտում է ժամանակակից հայերենի վաղակատար դերբայը:

Հայտնի է, որ վաղակատար դերբայը ժամանակակից հայերենում է տարբեր խոնարհման և տարբեր կազմության բայերի մոտ կազմվում է

տարբեր հիմքերից: Ե խոնարհման պարզ բայերի և կրավորականների ու բաղմապատկանների վաղակատարը կազմվում է ներկայի հիմքի վրա ավելացնելով ել: Ս. խոնարհման բոլոր բայերի և Ե խոնարհման ածանցավոր բայերի վաղակատարը կազմվում է անցյալի հիմքից: Հայտնի է նաև, որ բայերի անորոշ դերբայը կազմվում է ներկայի հիմքի վրա ավելացնելով ե խոնարհման բայերի համար՝ ել, ա խոնարհման բայերի համար՝ ալ:

Եվ ահա, դերբայական համակարգում ստացվում է հետևյալ պատկերը. ե խոնարհման պարզ բայերի և կրավորական ու բաղմապատկան բայերի անորոշ դերբայը բնականաբար կազմվում է ներկայի հիմքի վրա ավելացնելով ել մասնիկը. այսպես՝ դր + ել, խմ + ել, վազ + ել, լվացվ + ել, հեռացվ + ել, անջատվ + ել, գլոր + ել, գլորվ + ել և այլն: Սակայն ներկայի հիմքից է կազմվում նաև հիշյալ բայերի վաղակատար դերբայը՝ համանուն ել մասնիկի կցումով. այսպես՝ դր + ել, խմ + ել, վազ + ել, լվացվ + ել, հեռացվ + ել, անջատվ + ել, գլոր + ել, գլորվ + ել և այլն: Այսպիսով ոտնդծվում է համանուն դերբայական ձևերի մի ամբողջ շարք: Ահա համանունական այդ շարքի պատկերը:

Ե խոնարհման պարզ, կրավորական վ սեռածանց և բաղմապատկական ածանց ունեցող բայեր

Անորոշ դերբայ

Վաղակատար դերբայ

աս + ել կոտրատ + ել

աս + ել կոտրատ + ել

գր + ել գրվ + ել

գր + ել գրվ + ել

խմ + ել խմվ + ել

խմ + ել խմվ + ել

ուտ + ել ուտվ + ել

ուտ + ել ուտվ + ել

վազ + ել կոտուցվ + ել

վազ + ել կոտուցվ + ել

նալ + ել ջարդոտ + ել

նալ + ել ջարդոտ + ել

հուզ + ել գլորվ + ել

հուզ + ել գլորվ + ել

հիշ + ել հուզվ + ել

հիշ + ել հուզվ + ել

Համանունական այս շարքը ընդգրկում է հիշյալ բայերի ամբողջ խումբը առանց բացառության: Սակայն բայական ամբողջ համակարգում այս երկու դերբայները ձևաբանորեն տարբերակված են, այսինքն՝ համանունությունը լիակատար չէ, բանի որ բացի վերոհիշյալ բայերից, մնացած դերբայներում անորոշ և վաղակատար դերբայները կազմվում են տարբեր հիմքերից (անորոշը՝ բոլոր դեպքերում ներկայի հիմքից, վա-

ղակատարը՝ անցյալի հիմքից), որով, չնայած դերբայական վերջավորությունների համանունությունը, ստեղծվում են ձևով տարբեր դերբայներ:

Ընականաբար անորոշ և վաղակառար դերբայները ձևով տարբերվում են նաև ա խոնարհման բոլոր բայերում, քանի որ եթե վաղակատար դերբայի վերջավորությունը բոլոր բայերի համար մեկն է՝ ել, ապա անորոշի վերջավորությունը ա խոնարհման բայերի համար ալ է, այսինքն՝ այս դեպքում անորոշ և վաղակատար դերբայները տարբերվում են հակադրվում են ոչ միայն հիմքերով (ներկա-անցյալ), այլ նաև վերջավորություններով՝ ել-ալ: Օրինակներ.

Անորոշ դերբայ		վաղակատար դերբայ	
աղ + ալ	փախչ + ել	աղաց + ել	փախ + ել
խաղ + ալ	թռչ + ել	խաղաց + ել	թռ + ել
գն + ալ	ընկն + ել	գնաց + ել	ընկ + ել
մն + ալ	գտն + ել	մնաց + ել	գտ + ել
մոտեն + ալ	բարձրացն + ել	մոտենց + ել	բարձրաց + ել
հեռան + ալ	մեծացն + ել	հեռաց + ել	մեծացր + ել

Հիշյալ դերբայներն ունեն իմաստային և կիրառական տրամադական տարբերություններ: Անորոշը բայի գործողության անվանումն է, կարող է հորովվել, նախադասության մեջ հանդես գալ գոյականական բուրր պաշտոններով, իսկ վաղակատարը կախյալ դերբայ է և ունի միայն ձևաբանական արժեք. կազմում է սահմանական եղանակի վաղակատար և անցյալի վաղակատար ժամանակները և գործառում է այդ ձևով՝ նախադասության մեջ կատարելով միայն ստորոցյալի պաշտոն:

Քանի որ այդ երկու ձևերը հանդես են գալիս միևնույն հարացույցում՝ խոնարհման համակարգի դերբայների հարացույցում (գրել—գրում—գրելու—գրել—գրած, գրող, գրի), հետևաբար, եթե այս ձևերի նույնացումը կրեր համընդհանուր, ամբողջ դերբայական համակարգը ընդգրկող բնույթ, մենք կարող էինք խոսել, հավանաբար, այն մասին, որ այստեղ տեղի է ունեցել քերականական ձևերի շեղոքացում ճիշտ աչյակա, ինչպես տեղի է ունեցել սեռական և տրական հոլովների ձևերի շեղոքացում գոյականների հոլովման համակարգում:

Սակայն, ինչպես տեսանք, անորոշի և վաղակատարի ձևերի նույնացումը մասնակի բնույթ է կրում, և նրանք հանդես են գալիս ձևաբանորեն տարբերակված շարքերում (գրել—կարդալ—խաղալ, մոտենալ և

Առաջին ձևերը՝ զրի, կարդա, խմի, բնկնի հարացուցային շարք կազմելով գրեմ, կարդամ, խմեմ, բնկնեմ և այլ ձևերի հետ և հակադրովելով զրանց՝ արտահայտում են եղանակի, ժամանակի, դեմքի, թվի քերականական կարգեր (ըզձական եղանակ, ապառնի ժամանակ, երրորդ դեմք, եզակի թիվ):

Բոլորովին տարբեր է պատկերը երկրորդ շարքում՝ ենթադրական եղանակի ենթահարացույցում: Այստեղ հանդես եկող համաձայն գրի, կարդա, խմի, բնկնի ձևերը լեզվի ձևաբանական մակարդակի միավոր են դառնում կամ, ավելի ճիշտ լեզվի ձևաբանական համակարգի մեջ են մտնում օժանդակ բայի ժխտական ձևերի հետ միասին՝ կազմելով ենթադրական եղանակի ժխտական խոնարհման ժամանակային ձևերը (ապառնի, անցյալ): Այս ենթահարացույցի գրի, կարդա... ձևերը առանձին վերցրած զուրկ են եղանակի, ժամանակի, դեմքի, թվի քերականական կարգերից, մտնում են կախյալ դերբայների խմբի մեջ՝ ցույց տալով ապագայում կատարվելիք պոթոնություն ընդհանուր-անորոշ ընթացքային վիճակ:

Ծագումով ևս այս ձևերը կապված չեն: Հայտնի է, որ առաջին բառաշարքի գրի, կարդա... ձևերը առաջացել են զրաբարյան ներկայի եզակի III դեմքից՝ գրէ > գրի, կարդայ > կարդա, իսկ երկրորդ շարքի գրի, կարդա ձևերը առաջացել են անորոշ դերբայից՝ I հնչյունի անկմամբ և ե > ի հնչյունափոխությամբ գրել—չեմ գրի > չեմ գրի, կարդալ—չեմ կարդալ > չեմ կարդա:

Էզձական եղանակի ապառնի ժամանակի եզակի III դեմքի բայա-ձևերը երբեմն մասնակի կամ պատահական համանունական շարք են կազմում խոնարհման համակարգի այլ բայաձևերի հետ: Թվեմք դրանք:

ա) Ա. խոնարհման պարզ բայերի ըզձականի ապառնու եզակի դեմքը ձևով համընկնում է նույն բայերի հրամայական եղանակի եզակի II դեմքի բայաձևերին: Այսպես՝

Անորոշ դերբայ Էզձական եղանակի
ապառնի, եզակի
III դեմք

Հրամայական եղանակի
կի եզակի II դեմք

կարդալ

կարդա

կարդա

խաղալ

խաղա

խաղա

աղալ

աղա

աղա

մհալ

մհա

մհա

զգալ

զգա

զգա և ալլես:

Այստեղ ևս առկա է համանունության երևույթը, որովհետև հիշյալ ձևերը մտնում են տարբեր ենթահարացույցների մէջ (ըղծական և հրամայական եղանակների), չեն կազմում մերձավորագույն հակադրություն, արտահայտում են քերականական տարբեր իմաստներ (մեկը՝ ըղծականի ապառնի ժամանակի եղակի III դեմք, մյուսը՝ հրամայական եղանակի եղակի II դեմք), ունեն զործառության տարբեր սլոգոններ:

Սակայն այս ձևերի համանունությունը լիակատար չէ, քանի որ բանավոր խոսքում նրանք ունեն հնչերանգային տարբերություն (հմմտ. կարդա—կարդա’):

Մանր.— Ժողովրդական-խոսակցական լեզվում նույնանում են նաև և խոնարհման պարզ բայերի ըղծականի ապառնի ժամանակի եղակի III դեմքի և հրամայականի եղակի II դեմքի ձևերը, որը արդյունք է բանավոր խոսքում եղակի հրամայականի Ի վերջնահնչունի անկման (գրի՛ր > գրի՛, խմի՛ր > խմի՛, խոսի՛ր > խոսի՛ և այլն):

բ) Ժողովրդական—խոսակցական լեզվում համընկնում են նաև և խոնարհման մի բանի պարզ բայերի ըղծականի ապառնի ժամանակի III դեմքի և սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակի եղակի I դեմքի ձևերը, ինչպես՝ ասել—ասի—ասի (= ասացի), բերել—բերի—բերի (= բերեցի), նաև՝ խմել—խմի—խմի (= խմեցի) և այլն, սակայն այսպիսի համանունությունը խիստ պատահական է, չի ենթարկվում որևէ օրինաչափության, իսկ համանունական շարքի երկրորդ անդամները (սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակի եղակի I դեմքի ձևերը) կանոնական չեն:

Այսպիսով՝ ներհարացուցային համանունական այս շարքի պատկերը հետևյալն է.

ա) Ըղծական եղանակի ապառնի ժամանակի եղակի III դեմք (գրի, կարդա):

բ) Ժխտական դերբայ (գրի, կարդա):

գ) Ա. խոնարհման պարզ բայերի հրամայական եղանակի եղակի II դեմք (կարդա’):

դ) Առանձին դերբերում՝ սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակի եղակի առաջին դեմք (ասի, բերի, գրի, խմի և այլն):

4. Կրկնասեռ բայերի համանունությունը.— Բայական համակարգի բառաձևերի համանունության մասին խոսելիս անհրաժեշտ է անդրադառնալ նաև կրկնասեռ բայերին: Հայտնի է, որ կրկնասեռ են կոչվում այն բայերը, որոնք առանց ձևաբանական փոփոխություն կրելու հանդես են գալիս տարբեր սեռերի հատկանիշներով՝ ներգործական—չնգործ,

կրավորական—չեզոք, պատճառական-ներգործական¹³։ Այստեղ առկա է քերականական համանունությունը երևույթը, քանի որ նույն բառաձևը արտահայտում է քերականական տարբեր իրար հակադրվող իմաստներ։

ա) Ներգործական և չեզոք սեռերի իմաստ արտահայտող համանուն բայաձևեր. Ժամանակակից հայերենում հաճախ միևնույն բայն իր տարբեր իմաստներով պատկանում է տարբեր սեռերի։ Այսպես օրինակ լույս բայը իր հիմնական իմաստներով ներգործական է (ձայն լսել, դա լսել, լուր լսել և այլն)։ Սակայն այն գործածվում է նաև «հնազանդվել, մեկի ասածներին հետևել, ենթարկվել» իմաստով և այս դեպքում հանդես է գալիս որպես չեզոք սեռի բայ՝ պահանջելով հանգման խնդիր (լսել մեծերի խոսքին, լսել բանականության ձայնին)։ Աշխատել բայը չեզոք սեռի է, սակայն իր մեկ իմաստով՝ «վաստակել» այն հանդես է գալիս որպես ներգործական սեռի բայ և ընդունում է ուղիղ խնդիր (փող աշխատել, հաց աշխատել և այլն)։ Ապրել բայը չեզոք սեռի է, սակայն իր՝ «կյանքի ընթացքում զգալ, կրել» իմաստով ներգործական է և պահանջում է ուղիղ խնդիր (վիշտ ապրել, ուրախություն ապրել, երջանիկ վայրկյաններ ապրել)։ Նայել-ը չեզոք սեռի բայ է և պահանջում է հանգման խնդիր (նայել սարերին, նայել իրերին, նայել մեկին և այլն), սակայն իր մի քանի իմաստներով՝ «բննել», «թերթել», «աչքի անցկացնել» և այլն, այն ներգործական է (զիրքը նայել, գործը նայել, համը նայել, աշխատանքը նայել և այլն)։ Սպասել բայը հիմնական իմաստներով չեզոք է և պահանջում է հանգման խնդիր (սպասել մեկի գալուն, սպասել ավտոբուսին և այլն), սակայն՝ «ակնկալել» «նախատեսել», «կարծել» և այլ իմաստներով ներգործական է (մեկից լսվ բան սպասել, բարձր բերք սպասել և այլն)։

Լեզուն զտնվում է անընդհատ զարգացման, փոփոխության մեջ։ Ժամանակի ընթացքում հատկապես մեծ փոփոխություն են կրում բառերի իմաստները։ Բայերը, ենթարկվելով այդպիսի փոփոխությունների, հաճախ փոխում են նաև իրենց որոշ քերականական հատկանիշները, տեղաշարժեր են կատարվում նաև բայերի սեռային պատկանելության մեջ։ Օրինակ՝ նահանջել, աշակերտել, սատկել, բարախել, կանգնել, գաղթել, բարգավաճել և այլ բայեր զրաբարում եղել են ներգործական

¹³ Կրկնաձև բայերի մասին տե՛ս Ա. Աբրահամյան, Բայր ժամանակակից հայերենում, 1962, էջ 702—722։ Ա. Աբրահամյան, Ն. Պառնապյան, Հ. Օհանյան, Ժամանակակից հայոց լեզու, հ. II, 1974, էջ 305—309, նաև՝ Ա. Մուրվալյան, Հայերենի բայաձանցները (Լեզվի ինստիտուտի աշխ. ժողովածու, 1, 1946)։

սեռի (երբեմն զուգահեռաբար նաև շեղոր սեռի): Այժմ հիշյալ բայերը հիմնականում շեղոր սեռի են: Սեռային տեղաշարժերի ժամանակ լեզվի զարգացման որոշ ժամանակահատվածում բայերը կարող են լինել կրկնասեռ, այսինքն՝ լինել քերականական համանուն: Այդպիսի բայերից ժամանակակից հայերենում կարելի է նշել հսկել (հսկել մուտքին, հսկել սահմանները), կարոտել (կարոտել ծովին, հայրենի ծովին և կարոտել երկիրը, հայրենիքը), սպասարկել, ծախահարել, դիմավորել, ունկնդրել և այլն:

Ժամանակակից հայերենում կան մի շարք բայեր, որոնք գրաբարում ուստիանել են ե-ի զուգահեռ լծորդություններին՝ բնականաբար ունենալով և՛ ներգործական, և՛ շեղոր սեռի նշանակություն (երկարել|| երկարիլ, մարել||մարիլ, խամրել||խամրիլ, խոռվել||խոռվիլ և այլն): Ի լծորդության վերացման հետևանքով այս բայերն այժմ հանդես են գալիս միայն մեկ ձևով՝ ե խոնարհմամբ, սակայն շարունակում են գործածվել և՛ որպես ներգործական սեռի, և՛ որպես շեղոր սեռի բայեր. այսինքն՝ սեռի գրսեորման առումով համանուն են՝ կրկնասեռ: Այս բայերի շեղոր սեռով կիրառությունը հատկապես տարածված է ժողովրդական խոսակցական լեզվում: Ահա օրինակներ. նա կրակը մաքեց և Կրակն աստիճանաբար մաքեց: Ես լույսը մաքեցի և լույսը հանկարծ մաքեց: Մեկի հանգիստը խոռվել և նա խոռվել է:

բ) Կրավորական և շեղբ-՝ սեռի իմաստ արտահայտող համանուն բայաձևեր. Ժամանակակից հայերենում կրավորական վ սեռածանցն ունեցող բայերի մեծ մասը հավասարապես կիրառվում է և՛ կրավորական, և՛ շեղոր սեռերի իմաստով, այսինքն՝ սեռի քերականական իմաստ արտահայտելու տեսակետից համանուն է: Բովենք դժանցից մի բանիսը. աղատվել, ղրորվել, աղղվել, զինվել, փաթաթվել, հավաքվել, լվացվել, տատանվել, շարժվել և այլն: Իհարկե, ինչպես նախորդ դեպքերում և ընդհանրապես համանուն բոլոր ձևերի դեպքում, այստեղ ևս կիրառություն ընթացքում, խոսքի մեջ, համանունությունը չեղարանում է, բանի որ ավյալ ձևը գործառու է կա՛մ որպես կրավորական, կա՛մ որպես շեղոր սեռի բայ. համառ. հետևյալ օրինակները.

Մանեն մտավ և գլխից թոցրեց անձրեկից քրջված շալը (ՆԴ, 3, 146): Այդ օրը մի լավ քրջվեցի՜ն՝ հանուն մեր բարեկամի պատկազրության (Շ, 8, 216):

...Բիհ հորիցս կանխավ խրատված էի (Բ, 10, 215): Նա պատրաստվում էր ինձ ձեծել, որ խրատվեի (Բ, 4, 288):

Նրա երեսակայության մեջ նախապես բնույթ կերպարանքը նկարվել էր չեքիաթյային չեքոսների տեսքով (ՀՔՄԳ, 138): Վարագույրի վրա ամբողջ հասակով նկարված էր մի վիթխարի սերմնացան (ԱԲ, 243):

Վասակը վայրկենաբար մտածեց՝ վերջին պահին բացահայտվել, փրկվել զրույթունը (ԳԳ, 3, 444): Պիեսի գաղափարական բովանդակությունը... կարող է բացահայտվել միայն... սկսելով գործողության միջոցով (Ս. Սր. 1963, № 10, էջ 28):

դ) Պատճառական և ներգործական, պատճառական և շեղման սեռերի իմաստ արտահայտող համանուն բառակերպ. երկնասեր, հեռուստատիվ, բնականական համանուն են նաև չեղոր սեռից կերտված այն պատճառականները, որոնք կարող են լինել և՛ ներգործական, և՛ պատճառական սեռի: Այսպես՝ «ես գիրքը վազեցրի տուն» նախադասության մեջ վազեցրի պատճառական բայը ներգործական սեռի է, որովհետև բայաճիմբի ցույց տված գործողությունը կատարվում է ենթակայի կողմից (= վազեցրել տարա), իսկ ուղիղ խնդիրը (զիբ) միայն գործողության կողմն է: «ես նրամին շատ վազեցրի» նախադասության մեջ նույն վազեցրի բայաճիմբ պատճառական սեռի է, բայց որ բայաճիմբի ցույց տված գործողությունը կատարվում է ուղիղ խնդրի ցույց տված առարկայի՝ անձի կողմից (= ես ստիպեցի, պատճառ եղա, որ նրամին շատ վազի): Նույն ձևով նաև կանգնեցնել բայը տարբեր խոսքային միջավայրերում կարող է լինել կա՛մ ներգործական, կա՛մ պատճառական սեռի (հմտ. «Հրապարակում արձան կանգնեցրին» և «Երևանյան անկյունում մեկ ժամ կանգնեցրին»):

Երբեմն պատճառական բայաճիմբ արտահայտում է պատճառական և չեղոր սեռերի իմաստ. օրինակ՝ երկնքում կայծկլտացող աստղերը զրծե գունացել էին, կարծես ցուրտը նրանց էլ զոլացնում էր իր ասոր շնչով (ՍևմԳԼ, 425): Սակայն օրվա ընթացքում Բաղամյանը նորից զոլացրեց և ջրմեկ (ԵԳ, 3, 169): Վախենում ես ալիքներից, թե՞ ցրտից ես զոլացնում (ՀԲ, 2, 201): Առաջին օրինակում զոլացնել բայը պատճառական սեռի է, երկրորդ և երրորդ օրինակներում՝ չեղոր:

դ) Ներգործական և կրավորական սեռերի իմաստ արտահայտող համանուն բառակերպ. 1. Հարակատար գերբայի՝ վիճակ ցույց տալու առանձնահատկությունից է բխում այն, որ հաճախ ներգործական սեռի հարակատար գերբայը, առանց կրավորական ածանցման ենթարկվելու, արտահայտում է նաև կրավորական սեռի իմաստ. օրինակ՝ գրած համակ, ուղարկած գիրք, ջարդած մատիտ և այլ բառակապակցություններում գրած, ուղարկած, ջարդած և այլ ձևերը ներգործական իմաստի հետ զուգահեռ հավասարապես ունեն կրավորական նշանակություն (համակ,

որ գրել են և նամակ, որ գրվել է, զիւրի, որ ուղարկել են և զիւրի, որ ուղարկվել է, մատիտ, որ ջարդել են և մատիտ, որ ջարդվել է և այլն):

2. Հայտնի է, որ ժամանակակից հայերենում կատարելի գործողության վիճակային իմաստ է արտահայտում ապառնի գերբայի 2-րդ ձևը (գրելիք, կարդալիք): Իմաստային այս առանձնահատկությունից է բխում այն երևույթը, որ, հարակատար գերբայի նման, առանձին ներգործական սեռի բայերի 2-րդ ապառնի գերբայի ձևերը առանց կրավորական սեռածանցի կարող են արտահայտել նաև կրավորական սեռի իմաստ. օրինակ՝

գրելիք նամակ — համակ, որ գրելու են
 համակ, որ պիտի գրվի (գրվելիք)
 ուղարկելիք զիւրք — չգիրք, որ ուղարկելու են:
 չգիրք, որ պիտի ուղարկվի (ուղարկվելիք)

Քանի որ ժամանակակից հայերենում գործառու էն նաև գրված, ուղարկված, գրվելիք, ուղարկվելիք ձևերը, մենք չենք խոսում սեռային տարբերությունների վերացման (չեղորացման) մասին, այլ գտնում ենք, որ գրած, գրելիք, ուղարկած, ուղարկելիք ձևերը սեռի քերականական իմաստ արտահայտելու իմաստով ունեն համաձայնական արժեք:

2. ԳՈՅԱԿԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՀԱՄԱՆՈՒՆ ԲԱՌԱՋԱՎԵՐ

Միայն գոյականի համակարգում գործառու համանուն բառաձևերը քիչ են, այն էլ կապված են հիմնականում առկայացման կարգի զրահորման հետ: Ահա դրանք.

ա) և ղ համանուն հոգերը, զրվելով որոշ գոյականների վրա՝ երբեմն նրանցից կերտում են համանուն բառաձևեր: Այսպես՝ անձ ցույց տվող գոյականների եզակի և հոգնակի ձևերը, ստանալով և կամ ղ հոգ, վերածվում են համանուն բառաձևերի՝ արտահայտելով և՛ ստացականություն, և՛ ղիմորոշության հարաբերություն, այսինքն՝

ուսանողս(դ) — իմ(քո) ուսանողը
 հս(դու)՝ ուսանողս(դ)

որդիս(դ) — իմ(քո) որդին
 հս(դու)՝ որդիս(դ)

աշակերտներս(դ) — իմ(քո) աշակերտները
 մենք(դուք)՝ աշակերտներս(դ)

բ) Երբ ստացական հոգը դրվում է իր ցույց տվող բաղձավանկ գոյականի հոգնակի ձևի վրա, ստացականության թիվ արտահայտելու տեսակետից առաջանում է քերականական համանունություն. հոգը կարող է նախադասվել և՛ եղակի, և՛ հոգնակի: Տեւորակները, մատիւները բառաձևերը նշանակում են և՛ ձեռ տեւորակները, մատիւները, և՛ Բո տեւորակները, մատիւները (հմմտ. «Տեւորակները դրէք սեղանին» և «Տեւորակները նավարիւ սեղանից»):

Նույն ձևով նաև՝

տեւորակներս —	•մեր տեւորակները
	•իմ տեւորակները
մատիւներս —	•մեր մատիւները
	•իմ մատիւները

Ունեւորություն.— Միավանկ բառերի դեպքում այդպիսի համանունություն ստեղծւում է, որովհետև ստացականության հոգնակիւթյունը արտահայտւում է ն մասնիկի միջոցով (հմմտ. սրտեւս-սրտեւս, տեւորեղ-տեւորեղ, ձեւեւեղ-ձեւեւեղ և այլն):

Յ ԽՈՆԱՐՀՄԱՆ ԵՎ ՀՈՒՈՎՄԱՆ ՀԱՄԱՅԱՐԳԵՐԻ ԲԱՌԱՉԵՎԵՐԻ ՄԻՋՀԱՐԱՅՈՒՅԱՅԻՆ ՀԱՄԱՆՈՒՆԱԿԱՆ ՇԱՐՔԵՐԸ

Մինչև այժմ խոսւում էր ներհարացուցային համանունության մասին, երբ համանունական շարք էին կազմում միեւնոյն խոսքի մասի՝ բալական և գոյականական համակարգերի բառաձևերը: Սակայն ժամանակակից հայերենում հանդիպում են նաև խոնարհման և հոլովման համակարգերում գործառող բառաձևերի խմբեր, որոնք ձևով համընկնում են՝ կազմելով միջհարացուցային համանունական խմբեր: Այս դեպքում ևս համանունական շարքերը առանձնանում են որոշակի օրինաչափությամբ և ընդգրկում են որոշակի հատկանիշներով բնորոշվող ամբողջական խմբեր: Թվերը համանունական այդ շարքերը:

1) Ըզմակն եղանակի ապառնի ժամանակի եզակի III դեմք-միտական ղերայ-գոյականի սեռական-տրական հոլոված և համանունական շարք. հայտնի է, որ ժամանակակից հայերենում գործառում է և խոնարհման պարզ բայերի մի ամբողջ խումբ, որ առաջացել է գոյականներից՝ ել ածանցի կցումով: Այսպիսի բայերի ըզմակն եղանակի ապառնի ժամանակի եզակի III դեմքը և նրան համանուն միտական գէրբայք ձևով նույնանում են բայահիմք հանդիսացող գոյականի սե-

ռական-տրական հոլովածնի հետ՝ կազմելով միջհարացուցային համա-
նունական հոանդամ շարք: Ահա այդ շարքի պատկերը.

Խոնարհման հասակաւորդ

Հոլովման համակարգ

անորոշ դերբայ	Ըղծականի եզ. III դեմք	ժխտական դերբայ	դուականի սեռա- կան-արական հոլովածն
ամբարել —	ամբարի	ամբարի	ամբար—ամբարի
արդուկել —	արդուկի	արդուկի	արդուկ—արդուկի
արծաթել —	արծաթի	արծաթի	արծաթ—արծաթի
բեռանել —	բեռունի	բեռունի	բեռան—բեռունի
բժշկել —	բժշկի	բժշկի	բժիշկ—բժշկի
բեկուել —	բեկուի	բեկուի	բեկու—բեկուի
գնել —	գնի	գնի	գին—գնի
գրպանել —	գրպանի	գրպանի	գրպան—գրպանի
դարբնել —	դարբնի	դարբնի	դարբին—դարբնի
ընծայել —	ընծայի	ընծայի	ընծա—ընծայի
թելել —	թելի	թելի	թել—թելի
ծառայել —	ծառայի	ծառայի	ծառա—ծառայի
հեռագրել —	հեռագրի	հեռագրի	հեռագիր—հեռագրի
թերթել —	թերթի	թերթի	թերթ—թերթի
ծրարել —	ծրարի	ծրարի	ծրար—ծրարի
սահմանել —	սահմանի	սահմանի	սահման—սահմանի
շղթայել —	շղթայի	շղթայի	շղթա—շղթայի

Համահունական այս շարքի մեջ են մտնում ածականներից, նաև
թվականներից, ել ածանցով կազմված բայածեկերը այն դեպքում, երբ
բայահիմք հանդիսացող ածականը կամ թվականը, դործածվելով փո-
խանվանաբար, հոլովվում են. այսպես՝

պղտորել—պղտորի,	պղտորի	պղտոր—պղտորի
մանրել—մանրի,	մանրի	մանր—մանրի
սպիտակել—սպիտակի,	սպիտակի	սպիտակ—սպիտակի
նվազել—նվազի,	նվազի	նվազ—նվազի
դատարկել—դատարկի,	դատարկի	դատարկել—դատարկի
նաև՝ երրորդել—երրորդի,	երրորդի	երրորդ—երրորդի
տասնապատկել—տասն-	տասնապատկի	տասնապատիկ—տասն-
նապատկի		նապատկի

Համաճեւեանական ալս շարքը կարելի է անընդհատ շարունակել, քանի որ այն բնորոշում է գոյական հիմք ունեցող և ել ածանցող կազմոված բայերի գրեթե ամբողջ խումբը:

Հիշյալ բայաձևերը բայահիմքի գոյականի սեռական-տրական հոլովածի հետ համանունական շարք չեն կազմում միայն հետևյալ դեպքերում.

ա) երբ բայահիմք հանդիսացող գոյականը չի պատկանում ի հոլովման: Այսպիսի գոյականների լիզը մի քանիսից չի անցնում. օրինակ՝ սեր—սիրել—սիրի, սակայն՝ սեր—սիրո, ձմեռ—ձմեռել—ձմեռի, բայց՝ ձմեռ—ձմռան—ձմեռվա, ձյուն—ձյունել—ձյունի, սակայն ձյուն—ձյան (նաև ձյունի), գիշեր—գիշերել—գիշերի, գիշեր—գիշերվա (նաև գիշերի), սյուն—սյունել—սյունի, սյուն—սյան (նաև սյունի), տիրել—տիրի, տեր—տիրոջ:

բ) երբ բայահիմքի գոյականը (կամ ածականը) բայականզմության ժամանակ ենթարկվում է հնչյունափոխության, իսկ հոլովման ժամանակ՝ ոչ: Այսպես՝

վարագայր—վարագուրել—վարագուրի
բայր—բարել—բուրի
գեղ—գիգել—գիգի
կնիք—կնքել—կնքի
նվեր—նվիրել—նվիրի
վեճ—վեճել—վեճի
օժիտ—օժտել—օժտի
կես—կիտել—կիտի
գեղին—գեղնել—գեղնի

վարագայր—վարագուրի
բայր—բուրի
գեղ—գեղի
կնիք—կնքի
նվեր—նվերի
վեճ—վեճի
օժիտ—օժիտի
կես—կեսի
գեղին—գեղինի և այլն:

Այստեղ, ինչպես ասվել է ներածության մեջ, հնչյունափոխություն— ոչ հնչյունափոխություն հակադրությունը կատարում է իմաստատար-բերակիչ դեր:

Համանունական այս շարքի պատկերը հետևյալն է.

1. Ե խոնարհման գոյականահիմք (մասամբ նաև ածականահիմք) բայերի ըղձական եղանակի ապառնի ժամանակի եղակի երրորդ դեմքի բայաձևերը (արդուկի).

2. Նույն բայերի ժխտական դերբայը (արդուկի).

3. Բայաճիմը հանդիսացող գոյականի սեռական-տրական հոլովածները (արդուկի)։

Ինչպես ասվեց նախորդ ենթագլխում, առաջին և երկրորդ համանունները ներհարացուցային են, իսկ երրորդը նրանց հետ միջհարացուցային համանունական կապի մեջ է, հետևաբար համանունական ամբողջ շարքը միջհարացուցային է։

Առաջին և երկրորդ ձևերի իմաստային և գործածական տարբերությունների մասին խոսվել է։ Երրորդ ձևը՝ գոյականի սեռական-տրական հոլովածներ, որը մոտում է հոլովման հարացուցի մեջ, կարող է զուգորդվել՝ ա) գոյականների՝ դատնալով գոյականական բառակապակցության ստորադաս անդամ (բժշկի օրագիրը, ծաղկի բույրը) և բ) բայերի՝ դառնալով բայական բառակապակցություն ստորադաս անդամ։ Երրորդը զեպրում այս հոլովածներ մեծ մասամբ ստանում է որոշիչ հեր (տեսնել բժշկին, նայել ծաղկին, մոտենալ սահմանին), որով բառաձևերի համանունությունը չեզոքանում է։

2. Բայի բղձական եղանակի անցյալ ժամանակի եզակի երբորդ դեմք-նույնանքի գոյականի հոգնակի ուղղական հոլով համանունական շարք.— Երբ Ե խոնարհման բայերը կազմվում են միավանկ գոյականներից, նրանց բղձական եղանակի անցյալ ժամանակի եզակի երրորդ դեմքի ձևը և հիմքում ընկած գոյականի հոգնակի ուղիղ ձևը համընկնում են՝ կազմելով միջհարացուցային համանունական շարք։ Ահա այդ շարքի պատկերը։

Խոնարհման համակարգ

բղձական անցյալի

կզ. III դեմք

դժել—զծեր

գործել—գործեր

թելել—քելեր

ջրել—ջրեր

գրել—գրեր

ամպել—ամպեր

հյուսել—հյուսեր

ճաշել—նաշեր

թերթել—քերքեր

նյութել—նյութեր

չափել—չափեր

Հոլովման համակարգ

գոյականի հոգնակի ուղղական

կան հոլով

գիծ—զծեր

գործ—գործեր

թել—քելեր

ջուր—ջրեր

գիր—գրեր

ամպ—ամպեր

հյուս—հյուսեր

ճաշ—նաշեր

թերթ—քերքեր

նյութ—նյութեր

չափ—չափեր

զանձել—զանձեր
աղել—աղեր
զանգել—զանգեր
զոհել—զոհեր
զարկել—զարկեր
լարել—լարեր

զանձ—զանձեր
աղ—աղեր
զանգ—զանգեր
զոհ—զոհեր
զարկ—զարկեր
լար—լարեր և այլն:

Այս ղեկըրում, երբ գոյականը բաղակազմության ժամանակ ենթարկվում է հնչյունափոխության, իսկ հոգնակիի կազմության ժամանակ՝ ոչ, չնայած վերջավորությունների համանունությանը, բառաձևերը համանուն չեն լինում. օրինակ՝ կես—կիսեր, կեսեր, վեճ—վիճեր, վեճեր, բույր—բուրեր, բույրեր, գեղ—ղիգեր, դեգեր, ծիլ—ծլեր, ծիլեր, հույզ—հուզեր, հույզեր և այլն:

Խոսքի մեջ համանունական շարքի առաջին անդամը՝ բայի ըղձականի անցյալի ձևը գործառում է միայն որպես ստորոգյալ և ունի ձևաբանական այն առանձնահատկությունը, որ հիմք է հանդիսանում ենթադրական ու արկադորական եղանակների անցյալ ժամանակի եզակի երկրորդ դեմքի կազմության համար (զրեր—կզրեր—պիտի զրեր):

Համանուն շարքի երկրորդ անդամը՝ գոյականի հոգնակի ուղղականի ձևը, խոսքի մեջ հանդես է գալիս երեք պաշտոնով՝ ենթակայի, խնդրի (ուղիղ) և ստորոգելիական վերադրի: Օրինակներ՝ Անելու շատ զործեր կան: Նա կատարում է զանազան զործեր: Դրանք անհետաձգելի զործեր են: Միաժամանակ այն հիմք է հանդիսանում հոլովման հարացույցի հոգնակի ձևերի կազմության համար (զործեր—գործերի—գործերից—գործերով—գործերում):

Ինչպես երևում է, այս համանուն ձևերը տարբերվում են և՛ ձևաբանական առանձնահատկություններով ու արտահայտած բերականական իմաստներով, և՛ գործառությամբ:

Համանունական այսպիսի շարք կարող է լինել նաև այն դեպքում, երբ բայահիմքի գոյականը բարդ է՝ երկրորդ միավանկ բաղադրիչով և երբ տվյալ գոյականը, չնայած բաղմավանկ լինելուն, հոգնակիում ստանում է եր: Այսպիսի՝ ներկար—ներկարեր, ներկարել—ներկարեր, նախաճաշ—նախաճաշեր, նախաճաշել—նախաճաշեր, գաղտնագիր—գաղտնագրեր, գաղտնագրել—գաղտնագրեր, մաքրագիր—մաքրագրեր, մաքրագրել—մաքրագրեր և այլն:

Երբեմն այսպիսի համանունություն առաջանում է հիմնական ձև-

վույթների կամ բառահիմքերի համանուն լինելու հետևանքով. օրինակ՝ բարձկ—բարձեր, բարձ—բարձեր, բանալ—բացեր, բաց—բացեր և այլն.

3. Բայի անկատար դերբայ-գոյականի ներգոյական հոլովածն—բայանուն համանունական շարք.— Միջհարացուցային համանունական շարք են կազմում նաև և խոնարհման գոյականահիմք բայերի անկատար դերբայն ու հիմքի գոյականի եղակի թվի ներգոյական հոլովածներ. Ահա օրինակներ.

Խոնարհման համակարգ

ճաշել	նաշում
ամբարել	ամբարում
անագել	անագում
արծաթել	արծաթում
գիշերել	գիշերում
խերխել	քերքում
խցանել	խցանում
պալքարել	պալքարում
հանգրվանել	հանգրվանում

Հոլովման համակարգ

ճաշ	նաշում
ամբար	ամբարում
անագ	անագում
արծաթ	արծաթում
գիշեր	գիշերում
խերխ	քերքում
խցան	խցանում
պալքար	պալքարում
հանգրվան	հանգրվանում

Համանունական այս շարքը ևս ընդգրկում է և խոնարհման գոյականահիմք բայերի ամբողջ խումբը, բացառյալ այն դեպքերը, երբ բառահիմքի գոյականը չունի ներգոյական հոլովածն (կախարդ+ել—կախարդում, բայց չկա կախարդում ներգոյական հոլովածներ), նաև այն դեպքերը, երբ բայականություն մեջ գոյական հիմքը ենթարկվում է հնչյունափոխության (օրինակ՝ կես—կիսում (եմ), բայց՝ կեսում):

Համանունական այս շարքը, որ, ինչպես տեսանք, ընդգրկում է բայերի որոշակի խումբ, առաջանում է նույն հիմքին համանուն քերականական ձևովներ կցվելու հետևանքով: Սակայն, ինչպես ասվել է ձևվույթների համանունական շարքերը բննիկիս, գործառում է նաև առաջիններին համանուն ում բառակազմական տծանցը, որը բայերի ներկայի կամ անցյալի հիմքից կազմում է բայանունների. երբ ում ածանցը բայանուն է կերտում ներկայի հիմքից, բայանունը ձևով նույնանում է ավյալ բայի անկատար դերբայի հետ, քանի որ անկատար դերբայը ևս կազմվում է ներկայի հիմքից՝ ում համանուն ձևովի կցումով. օրինակ՝

անուոշ դերբայ	անկատար դերբայ	բայանուն
մաքառել	մաքառում	մաքառում
մարտնչել	մարտնչում	մարտնչում
մաշել	մաշում	մաշում
մրցել	մրցում	մրցում
ղիմագրկիլ	ղիմագրկում	ղիմագրկում
քալքայիլ	քայքայում	քայքայում
կրանգավորիլ	կրանգավորում	կրանգավորում
տեղալ	տեղում	տեղում
փայլփլիլ	փայլփլում	փայլփլում
արտածիլ	արտածում	արտածում
րածանիլ	րածանում	րածանում
հեղաշրջիլ	հեղաշրջում	հեղաշրջում

Համանունական այս շարքը ևս ընդգրկումով մասնակի է, քանի որ կթիև ում ձևույթով անկատար դերբայ կազմվում են գրեթե բոլոր բայերից (բացի մի շարք անկանոն և պակասավոր բայերից), ապա բոլոր բայերից չէ, որ ում ածանցով կազմվում են բայանուններ (չկան, օրինակ, պարում, խղում, հագում, զբոսնում և այլ բայանուններ, թեև տեսականորեն դրանց կազմությանը հնարավոր է): Բացի այդ, կան բայեր, հատկապես ան, են ածանց ունեցող բայերը և պատճառական բայերը, որոնց բայանունը կազմվում է ոչ թե ներկայի հիմքից, այլ անցյալի հիմքից (մոտեցում, հեռացում, լավացում, մեծացում, իշեցում, թանկացում, զորեղացում, խստացում, մերձեցում, ուռուցում, կենտրոնացում, առողջացում և այլն): Բնականաբար այս դեպքում համանուն բայաձևերի մասին խոսք լինել չի կարող:

Երբ բայը գոյականահիմք է, համանունական այս շարքի մեջ կարող է մտնել նաև գոյականի ներգոյական հոլովաձևը, ինչպես՝ ներկիլ—ներկում1—ներկում2—ներկում3:

Այսպիսով, համանունական այս հոսանքում շարքում (անկատար դերբայ—բայանուն—գոյականի ներգոյական հոլով) հաճախ մեկ անգամը բացակայում է. ըստ որում քանի որ անկատար դերբայը միշտ կազմվում է ներկայի հիմքից, ապա շարքում անկատար դերբայը միշտ կա: Գոյականահիմք բայերն ունենում են նաև ներգոյական հոլովաձև համանունը, երբեմն նաև՝ բայանուն համանունը. իսկ երբ բայահիմքը գոյական չէ, համանունական շարքը միշտ երկանդամ է (բացակայում է գոյականի ներգոյական հոլովաձևը): Թերևեք օրինակներ:

անկատար դերբայ	բայանուն	գոյականի ներգոյական ուղղով
կառուցում (հմ)	կառուցում(ը)	—
արդուկում (հմ)	արդուկում(ը)	արդուկում
վարում (հմ)	վարում(ը)	վարում
մրցում (հմ)	մրցում(ը)	—
սպասում (հմ)	սպասում(ը)	—
զրում (հմ)	—	զրում
սառցակալում (է)	սառցակալում(ը)	—
ճաշում (հմ)	—	ճաշում
գործում (հմ)	—	գործում

Համանունական շարքի առաջին անդամը՝ անկատար դերբայը, ունի միայն ձևաբանական արժեք. միանալով օժանդակ բայի ձևերին՝ կազմում է սահմանական եղանակի ներկա և անցյալի անկատար ժամանակները, խոսքի մեջ կատարելով ստորոգյալի պաշտոն:

Երկրորդ անդամը՝ բայանունը, որպես գոյական, կարող է հոլովվել, ընդունել որոշիչ հոդ և խոսքի մեջ կատարել գոյականին հատուկ բոլոր պաշտոնները:

Երրորդ անդամը քանի որ գոյականի որոշակի հոլովածե է՝ ներգոյական հոլովածե, հետևաբար նախորդի համեմատությամբ ունի կիրառական սահմանափակություն. կարող է հանդես գալ՝ ա) որպես բայական բառակապակցության ստորադաս անդամ, այս դեպքում նախադասության մեջ կատարելով առանձին անդամի պաշտոն (գործը կատարվեց մեկ գիշերում: Նա իր գործում առաջադիմում է: Մեկամարտում հաղթեց և այլն), բ) որպես ածականական, երբեմն նաև գոյականական բառակապակցության ստորադաս անդամ: Այս դեպքում արդեն այն գերադաս բառի հետ կատարում է նախադասության մեկ անդամի պաշտոն (Իր գործում հմուտ մարդը միշտ օգուտ է տալիս հասարակությանը): Ինչպես ասվեց, երբեմն հիշյալ բառածեքի համանունություն առաջանում է ոչ միայն միեկուն հիմքը համանուն ձևությամբով բաղադրվելու հետևանքով, այլ նաև այն պատճառով, որ երբեմն բայարմատը համանուն է լինում մի գոյականի: Այդպիսին են, օրինակ, հետևյալ դեպքերը՝ կատար+ում եմ և կատար+ում (ծառի կատարում). այստեղ կատարել բայի կատար արմատը համանուն է կատար գոյականին. դրա հետևանքով էլ առաջինի անկատար դերբայը և վերջինի ներգոյական հոլովածը համընկել են: Նույն ձևով նաև այր+ում (այ-

բել) և ալր+ում₂(ալր), տեղ+ում₁(տեղալ) և տճղ+ում₂(տեղ), վա-
ր+ում₁(վարել) և վար+ում₂(վար) համանունները առաջացել են հա-
մանուն բայարմատի ու զոյականի՝ համանուն ձևույթներով բաղադրվե-
լու հետևանքով:

Այս դեպքում ճիշտ կլինի խոսել ոչ թե զուտ քերականական, այլ
բառա-քերականական համաճեղճությունից մասին, քանի որ համանուն են
ոչ միայն երկրորդական ձևույթները, այլ նաև հիմնական ձևույթները՝
բառարմատները:

4. ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՌԱՋԱՅԱՍ ՀԱՄԱՆՈՒՆ ԲԱՌԱՋԵՎԵՐ

Ժամանակակից հայերենում (և ոչ միայն ժամանակակից հայերե-
նում) նկատվում է բառերի խոսքիմասային փոխանցման երևույթ, երբ
որոշ բառեր և բառաձևեր ժամանակի ընթացքում, բառիմաստային և
գործառական չորահատկություններով պայմանավորված, փոխում են
իրենց խոսքիմասային քերականական արժեքը: Ինչպես ճիշտ կերպով
ընդգծված է լեզվաբանական գրականության մեջ, լեզվի զարգացման
որոշ շրջանում ալոպիսի բառերը, հավասարապես գործածվելով երկու
(կամ ավելի) խոսքի մասերի ոլորտում, ունենում են երկու, երբեմն նաև
երեք խոսքի մասի արժեք¹⁴:

Բառային մակարդակում ալոպիսի բառերը սովորաբար դիտվում
են բաղժիմաստ այն հիմնավորումով, որ նույնարմատ կամ նույնահիմք
են, և նրանց բառիմաստային կապը զգալի է: Սակայն քերականական
մակարդակում դրանք պետք է համարել համանուններ (քերականական
համանուններ), քանի որ գրեթե ունենում են որակապես տարբեր խոսքիմա-
սային քերականական իմաստներ (հմմտ. խավար—գ. ա., առաջ—մ. կ.,
հարվածային—գ. ա. և այլն):

Տեղին է բերել պրոֆ. է. Աղայանի կարծիքը այդ երևույթի վերա-
բերյալ. «Եթե, տվյալ բառը միևնույն ձևով հավասարապես հանդես է
գալիս երկու և ավելի խոսքի մասերի ոլորտում՝ համապատասխանո-
րեն արտահայտելով տարբեր խոսքիմասային իմաստներ այն բանի
հետևանքով, որ տարբեր խոսքի մասերի համար այդ բառը տարբեր ձե-
վեր չունի և չեն կարող կազմվել, ապա ունենք համաճեղճություն»¹⁵:
է. Աղայանը խոսում է այն դեպքերի մասին, երբ տարբեր խոսքի մա-

¹⁴ Խոսքի մասերի փոխանցման մասին հետաքրքիր դատողություններ ունի Ս. Դ. Աբրահամյանը «Ձվերվող խոսքի մասերը...» աշխատության մեջ (Երևան, 1965):

¹⁵ Է. Աղայան, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, 1967, էջ 143:

սերի արժեք ունեն բառերի ուղիղ ձևերը (խալար, առաջ, սուր և այլն): Սակայն այդպիսի երկարժեքություն կամ եռարժեքություն կարող են ունենալ նաև բառերի թեր ձևերը: Հայտնի իրողություն է, օրինակ, որ գոյականների և բայերի որոշ բերականական ձևեր, անշատովելով խոնարհման և հոլովման հարացույցներից, վերածվում են ալլ, հատկապես սպասարկու խոսքի մասի (խոսքի մասերի փոխանցում)¹⁶: Երբ այդ բառաձևերը շարունակում են գործածել նաև հոլովման և խոնարհման համակարգերում, առաջանում են բերականական համանուն բառաձևեր (օրինակ՝ ասես, չնայած, համով, պատճառով և այլն):

Երբ բառերի և բառաձևերի բերականական երկարժեքությունը կամ եռարժեքությունը գիտակցվում է նաև խոսքից դուրս, մենք խոսում ենք բերականական որակապես տարբեր իմաստների արտահայտող բառերի կամ բառաձևերի ձևաբանական համանունության մասին (հմմտ. հայերեն—գ.ա., հարվածալիկ—գ.ա., ասես—բ.շ.կ.): Իսկ երբ այդպիսի երկարժեքությունը երևան է գալիս միայն խոսքային համապատասխան միջավայրում, առկա է գործառական (շարահյուսական) համանունության երևույթը (հմմտ. գեղեցիկ աղջիկ, գեղեցիկ խոսել):

Ժամանակակից հայերենում հատկապես մեծ թիվ են կազմում գոյական-ածական ձևաբանական համանունական շարքերը: Կան նաև գոյական-կապ, գոյական-մակբայ, մակբայ-շաղկապ-կապ, ածական-մակբայ, ածական-կապ և այլ համանունական խմբեր: Քննենք դրանք առանձին-առանձին:

ա. Գոյական-ածական

Այս շարքը առաջուցել է հիմնականում ածականների փոխանունական կիրառության հիմքի վրա: Փորձենք տալ գոյական-ածական համանունական շարքի՝ որոշակի հատկանիշով առանձնացող խմբերը.

1. Գոյական-ածական համանունական շարք են կազմում մի շարք արմատական բառեր՝ կապված այն բանի հետ, որ դրանք չունեն և չեն կարող կազմել տարբեր ձևեր: Օրինակներ՝

խալար գոյական
 ածական

երիտասարդ գոյական
 ածական

կանաչ ածական
 գոյական

սխալ ածական
 գոյական

¹⁶ Տե՛ս Ս. Արաբադյան, *Իշված աշխ.*, էջ 119:

Նույն ձևով նաև՝ պառավ, աղբատ, սուրբ, ժլատ, ցամաք, սուր, մուր և այլն:

2. Ավելի հաճախ զոյակա՜ն-ածական համանունական շարք են կազմում բաղադրյալ (ածանցավոր և բարդ) բառերը. մի բան, որ բխում է բառակազմական կաղապարների, նաև ածանցների երկարժեքությունից: Այսպես՝

Հայտնի է, որ ավան ածանցը ժամանակակից հայերենում ունի հիմնականում ածականակերտ բերականական արժեք: Սակայն նրանով բաղադրված բառերի մի զգալի խումբ հայերենի արդի փուլում ունի նաև զոյականական արժեք, այսինքն՝ համանուն է. օրինակ՝

կոլտնտեսական	·ածական (կոլտնտեսական դաշտ)
	·զոյական (կոլտնտեսականներն աշխատում են):
կուսակցական	·ածական (կուսակցական տոմս)
	·զոյական (կուսակցականի կոչումը)
հավաքական	·ածական (հավաքական զոյական)
	·զոյական (Ֆրատրուլի հավաքականը)
ածական	·ածական (ածական անուն)
	·զոյական (որակական ածական)
առևտրական	·ածական (առևտրական կազմակերպություն)
	·զոյական (առևտրականի մտաչնություն)
գալրոցական	·ածական (գալրոցական միջոցառում)
	·զոյական (Դպրոցականները եկան):

Նույն ձևով նաև՝ ներածական, հեղափոխական, կոմերիտական, գվարդիական, հեղեղական, պայթական, ծծողական, կտտարողական, անբարոյական, օգնական, ազգայնական, կրոնական, հոգևորական, մահմեդական, կոչական, զրախոսական, հանրապետական, պարբերա-կուն և այլն:

բ) Այլև ածանցով բաղադրված բառերը ժամանակակից հայերենում հիմնականում ածականներ են (գիշերային, ցերեկային, գարնա-նային, սիրային և այլն): Սակայն այս ածանցով բաղադրված մի շարք բառեր ունեն նաև զոյականի խոսքիմասային արժեք. օրինակ՝

հարվածային -ածական (հարվածային գործիք)
 -գոյական (տարածել հարվածայինի փորձը)

հակատային -ածական (հակատային մաս)
 -գոյական (հակատայինները գրոհում են):

փողոցային -ածական (փողոցային երթևեկություն)
 -գոյական (փողոցայինի վարք)

շարքային -ածական (շարքային աշխատող)
 -գոյական (շարքայինի համազգեստ)

բանակային -ածական (բանակային միջոցառում)
 -գոյական (բանակայինների համար)

ծովային -ածական (ծովային կենդանի)
 -գոյական (ծովայինի խիզախությունը)

դ) ԵՐԵՆ-ԱՐԵՆ ածանցներով բաղադրված բառերը երկարժեք են, այսինքն՝ ունեն գոյականի և ածականի (մասամբ նաև մակբայի) քերականական հատկանիշներ (պարագայական կիրառությունը կարելի է համարել գործառական համանունություն, այսինքն՝ դիտել որպես ածականի կիրառություն):

Համանունական այս շարքը բնորոշվում է հիշյալ ածանցն ունեցող բառերի ամբողջ խումբը. օրինակներ՝

անդերին -գոյական (անդերինի գաս)
 -ածական (անդերինը գրականություն)

ոստերին -գոյական (ոստերինի հնչյունական համակարգը)
 -ածական (ոստերինը գիրք)

հաջերին -գոյական (հաջերինի բաղաձայնները)
 -ածական (հաջերինը գրականություն)

վրացերին -գոյական (վրացերինի լայնք)
 -ածական (վրացերին նամակ)

նույն ձևով՝ շինարեն, ճապոներեն, արաբերեն, եբրայերեն, թուրքերեն, ուղբեկերեն և այլն, և այլն:

Բնագրային օրինակներ. Երեւում է, որ ուսերենից արած մի թարգմանություն էր (ՀԹ, 4, 116): Շուշանը եթե ուշանալու է, մի ուսերեն:

նամակ շարադրեմ (ՀԹ, 5, 330): Հները խոսում էին վրացերէն, իսկ նորերը՝ ռուսերէն (Բ, 2, 234):

դ) Եղևն ածանցով կազմված բառերը ժամանակակից հայերէնում ունեն հիմնականում գոյականի արժէք: Սակայն կան մի քանիսր, որոնք գործառնում են նաև որպէս ածական, այսինքն՝ բերականակերն իմաստ արտահայտելու տեսակետից համանուն են: Ահա օրինակներ՝

հողեղեն ~ գոյական (հողից պատրաստված իր)

~ ածական (հողեղեն շինվածք)

ոսկեղեն ~ գոյական (նա շատ ոսկեղեն ունի:)

~ ածական (ոսկեղեն իրեր)

փայտեղեն ~ գոյական (Այնտեղ վաճառվում է փայտեղեն:)

~ ածական (փայտեղեն իրեր)

Գոյական-ածական համանունական շարք են կազմում նաև հետևյալ ածականակերտ ածանցներով բաղադրված մի շարք բառեր.

ալլոր(վոր) — չբավոր, ձիավոր, վիրավոր, հանցավոր, աշխատակոր, զինվոր, ուխտավոր, կապավոր, արհեստավոր, ճղնավոր, կեղծավոր,

սղավոր ~ գոյական

~ ածական

յան — լենինյան ~ ածական (լենինյան ուղիով)

~ գոյական (պատանի լենինյան)

ի — սիրելի, սիրամելի ~ ածական

~ գոյական

անի — զեղանի, լեզվանի ~ ածական

~ գոյական

եղ — ձախնեղ ~ ածական (ձախնեղ հնչյուններ)

~ գոյական (հայերենի ձախնեղները)

կոռ — վախոստ ~ գոյական

~ ածական

ակ — ալիքակ ~ գոյական (բերդի ալիքակ)

~ ածական (ալիքակ քաղաք)

իկ — կուզիկ, թսուցիկ ~ գոյական

~ ածական

Հիշյալ բարդությունները, նախորդներին նման, խոսքից դուրս, որպես բառարանային միավորներ, քերականական իմաստի առումով երկարժեք են, այսինքն՝ համանուն են: Սակայն խոսքի մեջ այդ համանունությունը չկորսանում է, և նրանք գործառույթ են կա՛մ որպես պոլականներ, կա՛մ որպես ածականներ: Օրինակ՝ բեռնատար ավտոները... այդ փողոցով էին անցնում (ԱԲ, 185): Նա... բարձրանալով բեռնատարի վազը՝ դնաց (ԱԽԲ): Բանաստեղծի շուրջն էին հավաքվել... երիտասարդ գրասերները (ՍԳ, 1964, N° 9, 108): Պատմության թանգարանին նվեր է բերել նշանավոր գրասեր Ս. Ծորտունսկին (ԵՆ, 1964, N° 62):

Քերականական իմաստի առումով համանուն պետք է համարել նաև մի շարք՝ բայաբաններից կամ բայահիմքերից ան նախածանցով կերտված ածականներ, որոնք արտահայտում են կա՛մ ենթակայական դերբայի, կա՛մ հարակատար դերբայի քերականական իմաստ՝ համանիշական շարք կազմելով նրանց հետ. օրինակ՝

անթառամ	- չթառամող	անամոք	- չամոքվող
	- չթառամած		- չամոքված
անմոսաց	- չմոսացվող	անմարս	- չմարսվող
	- չմոսացված		- չմարսված
անբաժան	- չբաժանվող	անավարտ	- չավարտվող
	- չբաժանված		- չավարտված

Նրբ հիշյալ ածականները ցույց են տալիս ավելի գործողությունը որպես առարկայի մշտական հատկանիշ, հանդես են գալիս որպես կրավորական և չկորսն սեռի ենթակայական դերբայի համանիշ և գործառույթ են միայն որպես որոշիչ (անթառամ → չթառամող ծաղիկ, անբաժան → չբաժանվող ընկերներ, անամոք → չամոքվող վիշտ և այլն):

Հիշյալ ածականները հարակատար դերբայի արժեքով հանդես են գալիս հիմնականում մակբայական կիրառության ժամանակ. օրինակ՝ անբաժան → չբաժանված մնալ, անթառամ → չթառամած (նաև՝ առանց թառամելու) տեղ հասցնել, անսասան → չսասանված (նաև՝ առանց սասանվելու) մնալ և այլն: Իհարկե, բացառված չեն նաև այն դեպքերը, երբ ածականը հարակատար դերբայի արժեքով ունենում է նաև որոշչային կիրառություններ. օրինակ՝ անխնամ → չխնամված ալգի (նաև՝ չխնամվող ալգի), անավարտ → չավարտված ստեղծագործություն, աննվաճ → չնվաճված երկիր (նաև՝ չնվաճվող երկիր) և այլն:

Իհարկե, վերոբերյալ դեպքում բերականական համանունությունը գրանցվում է նույն խոսքի մասին՝ ածականի սահմաններում:

Այստեղ կարելի է խոսել նաև ակա՛ն ածանցով բաղադրված աշն ածականների մասին, որոնց հիմքը ուրյուն ածանցով գոյական է, և — ուրյուն-ը ակա՛ն ածանցից առաջ ընկել է: Այսպիսի բաղադրությունների մի մասն ունի համանունական արժեք և մտնում է համանիշական տարբեր շարքերի մեջ, ինչպես՝

իրավաբանական իրավաբանի
 ՝ իրավաբանություն

ազգասիրական ազգասիրի
 ՝ ազգասիրություն

բանասիրական բանասիրի
 ՝ բանասիրություն

գրականագիտական գրականագետի
 ՝ գրականագիտություն

Համանունների այս խումբը ավելի ճիշտ կլինի համարել բառական, որովհետև այստեղ առկա է բառիմաստային որակական տարբերություն: Այն բերականական է միայն այն առումով, որ հիշյալ բառաձևերը համանիշական շարք են կազմում գոյականների թեք հոլովաձևերի հետ:

բ. Գոյականի բև՛ և ուղղվածն — ածական

Հայտնի է, որ մի շարք ածականներ սերել են գոյականների թեք հոլովաձևերից՝ վերջիններիս ածականական կիրառության համախոցման և կայունացման հետևանքով: Այդ հիման վրա էլ հենց առաջացել են ժամանակակից հայերենի մի շարք ածականակերտ ածանցներ (աջ, ույց, ուլ և այլն): Այդ հոլովաձևերից նրանք, որ հեացած և քարացած չեն և գործառում են նաև հոլովման համակարգում, կազմում են համանունական շարք: Հիմնականում սուկա է Եզդպիսի երկու համանունական շարք:

ա) Նյութի անվանում հանդիսացող մի շարք գոյականների սևա-կան-տրական հոլովաձևեր համանունական շարք են կազմում նույն գոյականներից ի ածականակերտ ածանցով կերտված ածականների հետ¹⁸. օրինակ՝

¹⁸ Այս համանունները ծագումով նույնն են, սակայն ի-ն որպես ածանց գործառում էր նաև զբաղարում:

արծաթի - գոյականի հոլոված (արծաթի պաշարներ)
- ածական (արծաթի ապարանջան)

պողպատի - գոյականի հոլոված (պողպատի մշակութուն)
- ածական (պողպատի դուռ)

փայտի - գոյականի հոլոված (փայտի կտոր)
- ածական (փայտի սեղան)

մարմարի - գոյականի հոլոված (մարմարի հանք)
- ածական (մարմարի արձան)

աղի - գոյականի հոլոված (աղի կտոր)
- ածական (աղի պոմիր)

բ) Հատկանիշի անուն հանդիսացող մի շարք գոյականների դործիական հոլովածները, անջատվելով հոլովման հարացուցից, գործառույթ են նաև որպես ածականներ. օրինակ՝

համալ - գոյականի հոլոված (Այդ պտուղը աչքի է ընկնում լարած հատակ համով)
- ածական (համով ճաշ)

հասակով - գոյականի հոլոված (Աչքի է ընկնում բարձր հասակով)
- ածական (հասակով մարդ)

տարիքով - գոյականի հոլոված. (Ամեն ինչ տարիքով չի որոշվում)
- ածական (տարիքով կին)

Հմտ. նաև՝ հոտով, մտով, ուժով, անունով, ուսումով, շնորհքով, թափով և այլն։ Սրանցից մի մասը ածականական արժեքով գործառույթ է միայն ժողովրդական-խոսակցական լեզվում (ուժով, անունով, ուսումով)։

գ. Գոյական - երակական գերբայ

Ժամանակակից հայերենում մի շարք ենթակայական գերբայներ վերածվել են գոյականների, սակայն ունեն նաև գերբայական արժեք և մտնում են բայական համակարգի մեջ։ Այդպիսի գերբայական ձևերը, նախորդների նման, կազմում են բերականական համանունական շարքեր. այսպես՝

գրող - գերբայ (շարադրություն զրոյ տառնոց)
- գոյական (զրոյների միություն)

ծնող - գերբայ (աղքատություն ծնող պայմաններ)
- գոյական (ծնողների հավաք)

ծառայող - գերբայ (հիմնարկում ծառայող մարդ)
- գոյական (նա սոցիալական ծաղումով ծառայող է)

Նույն ձևով նաև՝ առաջնորդող, մատուցող, գողող և այլն:

լ. Ածական - հաբակաաբ գերբայ և գոյական - հաբակաաբ գերբայ

Հայանի է, որ ժամանակակից հայերենում մի շարք հաբակաաբ գերբայներ վերածվել են ածականների կամ գոյականների, ինչպես՝ սիրած, նշանած, խորոված, սառած, տեսած, փորձված, քրված, հասած, խմած և այլն: Սրանք միաժամանակ խոնարհման համակարգում գործառում են նաև որպես գերբայներ՝ ստեղծելով ածական-գերբայ կամ գոյական-գերբայ համանունական շարքերը. օրինակ՝

տեսած - գերբայ (տեսած է լինում)
- ածական (տեսած մարդ)

սիրած - գերբայ (ներս սիրած զիրքը)
- գոյական (ներս սիրածը չառ գեղեցիկ է)

հասած - գերբայ (քաղաք հասած օրը)
- ածական (հասած աղջիկ)

թթված - գերբայ (մածոնր թթված է)
- ածական (թթված բնավորություն)

խորոված - գերբայ (խորոված միս)
- գոյական (խորովածը համեղ էր)

և. Գոյական - մակբայ

Թեև մակբայական համակարգում զգալի թիվ են կազմում գոյականի հոլովաձևերից առաջացածները (շուտով, մանկուց, օրըստօրե և այլն), սակայն լիզվի զարգացման արդի փուլում քիչ են այն մակբայները, որոնք պահպանել են նաև իրենց գոյականական արժեքը: Դրանք 96

հիմնականում ժամանակ ցույց տվող գոյականներից առաջացած մակ-
բայներն են: Ահա դրանք.

կեսօրին .մակբայ (Նա վերադարձավ կեսօրին:)

.գոյական (Օրը մտանում է կեսօրին:)

կեսգիշերին .մակբայ (Ներկայացումը վերջացավ կեսգիշերին:)

.գոյական (Կեսգիշերին մնում է մեկ ժամ:)

գիշերով .մակբայ (Գիշերով գնաց:)

.գոյական (Դա չի կարելի բացատրել միայն գիշերով:)

ցերեկով .մակբայ (Յերեկով վերադարձավ:)

.գոյական (Հենց ցերեկով էլ դա մեկնադրանում է:)

վերջում .մակբայ (Վերջում նա չատ հողովեց:)

.գոյական (Գրքի վերջում այդ մասին գրված է:)

սկզբում .մակբայ (Սկզբում նա լուռ էր:)

.գոյական (Ելույթի սկզբում խոսեց հաջորդվածների
մասին:)

զ. Գոյական – կապ .

Հայտնի է, որ կապերի առաջացման և հարստացման հիմնական
ուղին գոյականի (հատկապես տեղային, ժամանակային, պատճառ-
հետևանքային իմաստ ունեցող գոյականների) ուղիղ և թեք հոլովածների
փոխանցումն է. մի պրոցես, որ շարունակվում է նաև ներկայումս: Բնա-
կանաբար, մի շարք բառեր ու բառաձևեր այժմ գործառում են և՛ որպես
գոյականներ, և՛ որպես կապեր: Ահա դրանք

պատճառով .գոյականի հոլոված (Պատճառով չի կարելի արդարանալ:)

.կապ (Հիմա՛նչու՞թե՛ս պատճառով չկարողացավ գալ:)

նպատակով .գոյականի հոլոված (Նպատակով արդարանալ չի կարելի:)

.կապ (Հանգուստանալու նպատակով մեկնեց ծովափ:)

հետևանքով .գոյականի հոլոված (Միշտ չէ, որ հետևանքով են որո-

.կապ (Դրա հետևանքով չկարողացա գալ:)

ձևօքով .գոյականի հոլոված (ձևօքով գործել)

.կապ (Այդ բանը կատարեց ընկերների ձևօքով:)

- տղղտթյամբ -գոյականի հոլովածն (Գնաց քաղաքի ուղղուրյամբ:)
 -կապ (Այդ ուղղուրյամբ չի մտածեւել)
- զծով -գոյականի հոլովածն (զծով միացնել)
 -կապ (ասպիրանտ լեզվի զծով)
- օրով -գոյականի հոլովածն (հինգ օրով մեկնել)
 -կապ (Արշակ II-ի թագաւորության օրով)
- ձեռքից -գոյականի հոլովածն (ձեռքից վերցնել)
 -կապ (մեկի ձեռքից տալ)
- երեսից -գոյականի հոլովածն (երեսից քրտինք թափել)
 -կապ (մեկի երեսից չհասցնել)
- պատվին -գոյականի հոլովածն (մեկի պատվին գիպչել)
 -կապ (Ճաշկերտութ մեկի պատվին)
- մասին -գոյականի հոլովածն (Մեծ մասին ճանաչում եմ:)
 -կապ (Հաճաքի մասին ոչինչ չգիտեի:)
- հաշվին -գոյականի հոլովածն (փոխանցել ինտութտութի հաշվին)
 -կապ (մեկի հաշվին ապրել)
- անունով -գոյականի հոլովածն (Փողոցը կոչվում է Չարենցի անունով:)
 -կապ (ինտութտութի անունով հեռագիր ստանալ)
- ժամանակ -գոյական (Երկար ժամանակ չի տնցել:)
 -կապ (Այդ ժամանակ զանգը հնչեց:)
- միջոցին -գոյականի հոլովածն (Պետք չէր զիմեւ այդ միջոցին:)
 -կապ (Այդ միջոցին ներս մտաւ ընկերս:)

Հետաքրքրական է այն երևույթը, որ մի շարք հոլովածներ թեև շարունակում են պահպանվել գոյականների համապատասխան հարացույցներում, սակայն խոսքի մեջ դորձառում են հիմնականում որպես կապական բառեր. այդպիսին են, օրինակ՝ ընթացում (որպես գոյական դորձառում է ընթացքի մեջ ձևը), պահին, բացառությամբ, կապակցությամբ, հաշվին, նպատակով, պատճառով, դեպքում:

Համանունների ենթ հանդիպում նաև ածականների և կապերի ոլորտում, որը այս դեպքում ևս հետևանք է ածական→կապ խոսքիմասային փոխանցման: Դրանք հիմնականում համապատասխանության, հիմունքի իմաստ ունեցող բառեր են. օրինակ՝

- համաձայն .ածական (Համաձայն եմ արդ որոշմանը:)
 .կապ (համաձայն որոշման...)
- հակառակ .ածական (հակառակ կարծիք)
 .կապ (Հակառակ այդ որոշման նա գնաց:)
- համապատասխան .ածական (Ժամանակի ոլորտ համապատասխան ելույթ)
 .կապ (Այդ որոշման համապատասխան պետք է աշխարհ գնալ:)
- նման .ածական (Նման արարքի չէի սպասում:)
 .կապ (Հեղեղի նման եկան:)

բ. Բայ-կապ

Այս համանունական շարքը առաջացել է մի շարք հարակատար դերբայների կապական կիրառության հիմքի վրա: Ահա դրանք.

- նվիրված .հարակատար դերբայ (իր գործին նվիրված մարդ)
 .կապ (տոնին նվիրված հանդես)
- չհաշված .հարակատար դերբայ (Չհաշված եղբորեղբայրս պետք չէ:)
 .կապ (...չհաշված մեկ-երկու ելույթ)
- հաշված .հարակատար դերբայ (Քննություններին հաշված օրեր են մնացել:)
 .կապ (հաշված նաև այդ բոլորը...)
- չնայած .հարակատար դերբայ (Կենտն չնայած՝ կարծիք է հայտնում:)
 .կապ (Չնայած անձրևին՝ բոլորը եկել էին:)
- նայած .հարակատար դերբայ (Սնայածման նայած կլինի:)
 .կապ (նայած ինչ է տղամ ասել:)
- սկսած .հարակատար դերբայ (սկսած գործ)
 .կապ (սկսած այն օրից...)

Հայտնի է, որ ժամանակակից հայերենի որակական ածականների մեծ մասը առանց ձևաբանական փոփոխություն կրելու կարող է գործառել մակբայական պաշտոնով (կատարել ձևի պարագայի պաշտոն)։ Հմմտ. հիանալի ձայն—հիանալի պարել, գեղեցիկ աղջիկ—գեղեցիկ խոսել, անշարժ աթոռ—անշարժ կանգնել և այլն։ Իհարկե, սրանց հիմնական կիրառությունը ածականական է, որոշի պաշտոնով հանդես գալը։ Այսպիսի համանունությունը գործառական է և քննվում է «Շարահյուսական համանուններ» գլխում։ Սակայն ունենք հատկանիշ ցույց տվող բառերի մի խումբ, որ հավասարապես ցույց է տալիս և՛ առարկայի, և՛ գործողության ու հատկանիշի հատկանիշ և այդ պատճառով հայ բերականադիտության մեջ դասվում է և՛ ածականների, և՛ մակբայների խմբի մեջ։ Այստեղ արդեն մենք ունենք խոսքիմասային բերականական-դասային համանունություն, այսինքն՝ համանուն բառաձևեր՝ բառույթներ։ Այդպիսի համանուններից են՝ ականա, ամուր, առատ, զվարք, ժիր, լավ, լուռ, խաղաղ, խիստ, խոժոռ, կարճ, հանդարտ, հարք. հավասար, հեշտ, հաշտ, հիմար, ձախ, ճիշտ, մաքմաևոյ, մեղմ, մուսլ, ջիտակ, շոպլ, ուշ, ուրախ, պակաս, պարապ, պարկեշտ, սեղմ, սիսլ, սուռ, վատ, վհատ, տխուր և այլն¹⁹։

ժ. Բայ-շաղկապ-եղանակավորող բառ, բայ-եղանակավորող բառ, բայ-շաղկապ-կապ

Ժամանակակից հայերենում ասել և կարծել բայերի ըղձական հղանակի ներկա ժամանակի եղակի երկրորդ դեմքի ձևերը, անջատվելով խոնարհման հարացույցից և կորցնելով իրենց դիմային, թվային ու հղանակաժամանակային բերականական իմաստները, գործառում են նաև որպես շաղկապներ և եղանակավորող բառեր։ Իհարկե, այս բառաձևերը պահպանում են նաև իրենց բայական հատկանիշները՝ կազմելով համանունական եռանդամ շարք. այսպես՝

բայ (եթե ասես, անդաման կդառնա)

ասես—շաղկապ (Ձայնը դողում էր, ասես խեղդվում էր։)

² Եղանակավորող բառ (Աշխենը ասես հիվանդ լինելու։)

¹⁹ Ցանկը հանված է Գ. Զահուկյանի «Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները» գրքից, էջ 304։

-բայ (եթե այդպես կարծես, ռխալված կլինես):
 կարծես — շողկապ (Բոլորը այնպես տխուր էին, կարծես ինչ-որ վատ
 բան էր պատահել):
 եղանակավորող բառ (կարծես անձրև պիտի գա):

Ավելի հաճախեալ են բայի խոնարհման ձև—եղանակավորող
 բառ համանունները. այսպես՝

կարծեմ -բայ (եթե այդպես կարծեմ, ճիշտ չի լինի):
 -եղ. բառ (կարծեմ այսօր գալու է):

տեսնես -բայ (եթե Աշոտին տեսնես, տղարկիր ինձ մոտ):
 -եղ. բառ (Տեսնես վաղն ինչ եղանակ կլինի):

տեսնենք -բայ (եթե տեսնենք, կհաղորդենք):
 -եղ. բառ (Տեսնենք ինչով կլիրջանա):

Նայած և չնայած բայաձևերը գործառուժ են և՛ որպես բայ, և՛ որ-
 պես շաղկապ ու կապ. այսպես՝

-բայ (Իմ նայած կինոնկարը շատ հետաքրքիր էր):
 նայած — շողկապ (Նայած ինչպես կլուծվի հարցը, կորոշեմ անելիքս):
 -կապ (Նայած արամագրությանս՝ կորոշեմ...)

-բայ (Կինոնկարը չնայած դատողություն մի տնիր):
 չնայած — շողկապ (Չնայած ցուրտ էր, բայց դնացի):
 -կապ (Չնայած վատ եղանակին՝ դնացի):

Չնայելով, սկսած բայաձևերը բայական արժեքին զուգընթաց ձևոք
 են բերել նաև կապական արժեք. այսպես՝

չնայելով -բայ (Մինչև վերջ չնայելով կինոնկարը՝ դուրս եկա գահ-
 -կապ (Չնայելով վատ եղանակին՝ դնացի) լիճից):

սկսած -բայ (Սկսած գործը կիսատ չեն թողնի):
 -կապ (Այդ օրից սկսած հանգիստ չանի):

Ի. Մակբայ — կապ, կապ — շողկապ

ժամանակ և տեղ ցույց տվող մի շարք բառեր ժամանակակից հա-
 յերենում գործառուժ են և՛ որպես մակբայներ, և՛ որպես կապեր. Ահա
 դրանք.

առաջ՝ մակրալ (Առաջ նա աղպես չէր մտածում։)
կապ (Քննելուց առաջ զանգահարեց։)

հետո՝ մակրալ (Արդ մասին ևս հետո իմացա։)
կապ (Նրա զնալուց հետո բոլորը լռեցին։)

հետո՝ մակրալ (Շատ հեռու է գնացել։)
կապ (Դպրոցը տնից հեռու է գտնվում։)

դուրս՝ մակրալ (դուրս նայել)
կապ (հերքից դուրս ընդունել)

վերև, ներքև՝ մակրալ (վերև (հերքի) գնալ)
կապ (Գլուղից վերև (հերքի) գտնվում է անասունը։)

Ավելի քիչ են այն բառերը, որոնք կատարում են կապի և շաղկապի դեր։ Ահա դրանք՝

մինչև՝ կապ (Մինչև առավոտ չեմ քնել։)
շաղկապ (Մինչև մութը չընկալ, չգնաց։)

մինչ՝ կապ (Առավոտից մինչ գիշեր աշխատում եմ։)
շաղկապ (Մինչ նա կգնար, մութն ընկավ։)

Համանուն շենք համարում այն շաղկապները, որոնք կապակցում են համանիշ երկրորդական նախադասությունները և դերբայական դարձվածները, ինչպես՝ նախքան դու կասեիր, ևս արդեն գիտեիր—նախքան և ասելը ևս գիտեիր։ Փոխանակ շտապեմ, կանգնած խոսում եր—Փոխանակ շտապելու կանգնած խոսում եր։ Այս դեպքում հավանաբար պետք է խոսել շաղկապների զործառական համանունություն մասին։

ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԿԱՆ ՀԱՄԱՆՈՒՆՆԵՐ

Շարահյուսությունը լեզվական այն մակարդակն է, որտեղ բառա-
ձևերի ձևաբանական համանունությունը հիմնականում վերանում է,
լեզվական յուրաքանչյուր միավոր, քերականական ձև ստանում է մեկ-
նշանակություն, և դրանով էլ հենց հնարավոր է դառնում իրացնել հա-
ղորդակցման գործընթացը: Հենց այդ նկատի ունի Գ. Զահուկյանը,
երբ գրում է. «...Լեզվի մեջ չկա բացարձակ համանունություն: Այն դեպ-
քում, երբ նշանները արտաքին բոլոր հատկանիշներով համընկնում են,
հանդես են գալիս լրացուցիչ տարբերակիչները՝ կապակցելիությունը
(իրադրային և կոնտեքստային) և հաճախականությունը. առաջինը գծա-
յին բնույթի, երկրորդը՝ ոչ գծային: Եթե տվյալ միավորները նույնա-
կան են նաև կապակցելիությամբ (բառախաղեր), ապա նրանց տար-
բերակումը հենվում է հաճախադիպության (հաճախադեպի կամ սովոր-
ականի և ավելի քիչ հաճախադեպի կամ քիչ սովորականի) վրա»¹:

Բայց և այնպես շարահյուսական մակարդակում ևս առկա է հա-
մանունության երևույթը: Վերջինս այստեղ կապված է մի կողմից նա-
խադասության կառուցվածքի, մյուս կողմից՝ նույն բառաձևերի և բա-
ռակապակցությունների գործառական տարբերությունների հետ:

Ինչպես ձևաբանական համանունները բաժանեցինք երկու խմբի՝
ձևույթների համանունություն և բառաձևերի համանունություն, նույն
ձևով շարահյուսական համանունները մենք բաժանում ենք երկու խմբի՝
1) նախադասությունների համանունություն և 2) բառաձևերի (նաև բա-
ռակապակցությունների) գործառական համանունություն:

Համանուն ենք համարում այն նախադասությունները, որոնք խոս-
քային միջավայրից կտրված կարող են ստանալ մեկից ավելի մեկնա-
բանություն, քնկալվել որպես տարբեր մտքեր արտահայտող միավոր-
ներ (օրինակ՝ «Ինչու՞ չգնացիր»₁ = բուն հարցում, «Ինչու՞ չգնացիր»₂ =
ափսոսանք):

¹ Գ. Բ. Զահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, էջ 55—56:

Բառաձևերի զործառական համանուն ենք համարում այն երևույթը, երբ միևնույն բառաձևը, նախադասության մեջ հանդես գալով տարբեր դիրքերում և կապակցվելով տարբեր բառերի հետ, արտահայտում է որակապես տարբեր շարահյուսական հարաբերություններ:

Այս երկու դեպքում էլ համանունությունը երևան է բերում որոշակի օրինաչափություններ, հետևաբար կարելի է ենթարկել դասակարգված նկարագրություն:

Իհարկե, այստեղ ևս երբեմն կարող են լինել պատահական համանունության դեպքեր՝ կապված նախադասության բաղադրիչների կապակցության երկսկի բմբռնման հետ. օրինակ՝ Ուղենա-չուղենա ինձ մոտ պիտի թողնի (նՁՀ): Սակայն այսպիսի համանունությունը մենք չենք քննում:

Շարահյուսական համանունության հետ կարելի է կապել այն երևույթը, որ շատ հաճախ նույն կառուցվածքը ունեցող, նույն կաղապարով կազմված նախադասություններն ու բառակապակցությունները արտահայտում են տարբեր շարահյուսական հարաբերություններ: Այսպես, օրինակ՝ գոյականի ուղղական հոլով + բայի խոնարհված ձև + գոյականի ուղղական հոլով կառուցվածքի նախադասությունը կարող է արտահայտել երեք՝ իրարից բոլորովին տարբեր իմաստային հարաբերություններ՝ 1) գործողություն կատարողի և գործողության հարաբերությունը որևէ ժամանակահատվածի հետ, 2) գործողություն կատարողի և գործողության հարաբերությունը որևէ տեղի հետ, 3) գործողության հարաբերությունը գործողություն կատարողի և կրողի հետ: Այս տարբեր հարաբերությունների արտահայտությունը նույն կաղապարի միջոցով հնարավոր է միայն այն դեպքում, երբ տվյալ կաղապարը լրացնող բառերն ունեն որոշակիորեն իրարից տարբերվող իմաստներ, այսպես՝

Արամը եկավ գիշերը:

Արամը եկավ տուն:

Արամը նկարեց տուն:

Այն, որ այստեղ նույն կառուցվածքն ունեցող նախադասության միջոցով արտահայտվել են բոլորովին տարբեր իմաստային հարաբերություններ՝ ժամանակային, տեղային, օբյեկտային, մեղ կարծես թե հիմք է տալիս ասելու, որ գործ ունենք երեք համանուն կաղապարների հետ՝ կամ՝ երեք համանուն շարահյուսական կառուցվածքների հետ, սակայն այսպիսի անվանումը խիստ պայմանական է, որովհետև այն կապված է նախադասությունների միայն քերականական, ձևական կառուց-


վածքի նկատ և, աչսպես կոչված, մակերեսային կառուցցներում հիմնականում վերանում է:

Նույն երևույթը նկատում ենք նաև բառակապակցությունների մեջ: Այստեղ ևս առանձնանում են այնպիսիները, որոնք ունեն լրիվ նույն կառուցվածքը, կազմվում են նույն կաղապարով, սակայն արտահայտում են բոլորովին տարբեր իմաստային հարաբերություններ. մի բան, որ կախված է տվյալ բառակապակցությունները կազմող բառերի իմաստներից, երանց կապակցելիության առանձնահատկություններից: Այդպիսին է վերևում բերված նախադասության մեջ գործառող բայ + գոյականի ուղղական հոլով կառուցվածքով բառակապակցությունը, որն արտահայտում է երեք տիպի իմաստային հարաբերություն. 1) օբյեկտային, 2) ժամանակային, 3) տեղային: Այս կաղապարով կազմված բառակապակցությունները խոսքային մակարդակում արտահայտում են տարբեր հարաբերություններ այն դեպքում, երբ ունենում են իրարից տարբեր բառական կազմ: Այսպես՝ օբյեկտային հարաբերություն տվյալ կաղապարը արտահայտում է այն դեպքում, երբ գերադաս անդամը ներգործական սեռի բայ է, իսկ ստորադաս անդամը իր ցույց տվող դոյական (զենել մատիտ, գրել նամակ, խմել ջուր և այլն): Ժամանակային հարաբերություն ցույց է տալիս հիմնականում այն դեպքում, երբ ստորադաս անդամը ժամանակ ցույց տվող բառ է (զալ գիշերը), իսկ տարածական հարաբերություն՝ այն դեպքում, երբ գերադաս անդամը շարժում, ուղեորություն ցույց տվող բայ է, իսկ ստորադաս անդամը ցույց է տալիս որևէ տեղ (զնալ տուն, մեկնել Մոսկվա, ժամանել Երևան և այլն): Մեկ այլ օրինակ էս. գոյական + գոյականի բացառական հոլով կաղապարով կազմված բառակապակցությունները կարող են արտահայտել՝ 1) նյութի, բաղկացության հարաբերություն (աղյուսից տուն, փայտից սեղան, ոսկուց մատանի և այլն), 2) անջատման հարաբերություն (դժգոհություն վիճակից, փախուստ բախտից, օտարացում իշարից), 3) պատճառային հարաբերություն (տանջանք ցավից, հուզում ուրախությունից, մահ կարվածից և այլն), 4) ներգործող խնդրային հարաբերություն (հարված թշնամուց, հարգանք մեկից), 5) տեղային հարաբերություն (վերադարձ գյուղից, լուրեր Մոսկվայից), 6) ժամանակային հարաբերություն (մտերմություն մանկությունից, խնջույք կեսօրից), 7) վերաբերության հարաբերություն (զրույց փառափառությունից, տեղեկություն ընկերոջից, զեկուցում փառափառությունից և այլն): Այստեղ ևս, ինչպես երևում է բերված օրինակներից, նույն կաղապարի ամենատարբեր իմաստային հարաբերություններ արտահայ-


տելը պայմանավորված է բառերի իմաստներով և կապակցելիության առանձնահատկություններով:

Նրբ նույն կառուցվածքն ունեցող կամ նույն կաղապարով կազմված նախադասությունները կամ բառակապակցությունները նույնական են նաև իրենց բառային կազմով, սակայն կարող են ունենալ երկակի մեկնաբանություն, այս դեպքում արդեն առկա է բառակապակցությունների կամ նախադասությունների բուն համանունությունը. օրինակ՝

գոյականի սեռական-արական հոլովածն + գոյական (բայանուն)



հարցական դերանուն + բայի ներկա ժամանակի 2-րդ դեմք



Սույն աշխատանքի մեջ մենք քննության ենք առնում բուն շարահյուսական համանունները. որոշակի օրինաչափությամբ կազմվող համանուն նախադասությունները՝ «նախադասության կառուցվածքի և բնույթի հետ կապված համանունական շարքեր» գլխում, իսկ համանուն բառակապակցությունները՝ «Բառաձևերի և կապական կառուցների գործառական համանունությունը» գլխում (բուն համանուն բառակապակցությունները համեմատաբար քիչ թիվ են կազմում և ամենասերտ կերպով առնչվում են բառերի գործառական առանձնահատկությունների հետ):

ԵԱԵԱՒԱՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԻ ԵՎ ԲՆՈՒՅԹԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ՀԱՄԱՆՈՒՆՆԵՐ

Հայտնի է, որ նախադասությունը լեզվական այն միավորն է, որի միջոցով իրականանում է հաղորդակցումը: Նախադասության մեջ են ի վերջո երևան գալիս լեզվական բոլոր միավորները: Այստեղ է, որ հիմնականում շեղոքանում է համանունական երեւոյթը և լեզվական յուրաքանչյուր միավոր գործածվում է մեկ որոշակի իմաստով: Նախադասությունը խոսքի մեջ հանդես էլի գալիս առանձին, այլ հաղորդակցման գործընթացին մասնակցում է միանալով այլ նախադասությունների հետ. Այդ կապակցության մեջ էլ հենց այն ունենում է իր կոնկրետ, որոշակի իմաստը: Խոսքային իրադրությունից դուրս, առանձին վերցրած, նույն կառուցվածքն ու բառային կազմն ունեցող նախադասությունը կսկսվում է արտահայտել տարբեր իմաստներ և ունենալ համանունական արժեք: Համանուն կարող են լինել հատկապես մի շարք միակազմ, հարցական, հրամայական նախադասություններ և թերի նախադասությունները: Հաճախ համանունական արժեք են ունենում նաև տարբեր բարդ նախադասություններում հանդես եկող նույն ստորադասական նախադասությունները: Քոնկրետ դրանք առանձին-առանձին:

ՀԱՄԱՆՈՒՆ ՄԻԱԿԱԶՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Միակազմ դիմավոր նախադասությունները ժամանակակից հայերենում հաճախ ունենում են ընդհանուր-անորոշ նշանակություն, այսինքն՝ նրանցով հաղորդվում է այնպիսի եղելությունների կամ գործողությունների մասին, որոնց կատարողը խոսողին հայտնի չէ, անորոշ է, և կա՛մ հաղորդման համար կարևոր է համարվում ոչ թե գործողություն կատարողը, այլ հենց բուն գործողությունը: Այս դեպքում նախադասության ստորոգյալը ունենում է տարբեր դրսևորումներ, որի հետ կապված՝ այն ստանում է համանունական տարբեր արժեքներ:

ա) Ընդհանուր-անորոշ նշանակություն ունեցող դիմավոր միակազմ նախադասություններում շատ տարածված է բայի հոգնակի երրորդ դեմքի գործածությունը: Օրինակ՝ էնպես պատահեց, որ մեք գլուղում ուսումնաբան բաց արին (ՀԹ, 1, 409): Երկուսին էլ բնից հանել, վանդակում էին մեծացրել (ՎՓ Ե, 2, 485): Անուր մոռացել են, բայց գործը հիշում են:

Բերված նախադասությունները խոսքային տարբեր միջավայրերում,

տարբեր իրադրության մեջ կարող են դիտվել քերականական տարբեր կառուցվածքներ և արտահայտել տարբեր մտքեր, այսինքն՝ չանմանուններ: Առաջին դեպքում նրանք կարող են դիտվել, ինչպես սասցինք, ընդհանուր-անորոշ նշանակովյաժբ միակազմ նախադասություններ, որոնք ենթակա շունեն և հնարավոր չէ այն վերականգնել (ձեականորեն վերականգնված «նրանք» ենթակա իմաստային փոփոխություն չի մտցնում նախադասության մեջ): Բայի հոգնակի թիվը այստեղ ցույց է տալիս ոչ թե այն, որ գործողությունը կատարվում է (կամ կատարվել է) շատերի կողմից, այլ այն, որ գործողություն կատարողը խոսողի համար կամ անհայտ է և կամ տվյալ հաղորդման ժամանակ կարևոր չի համարվում նրա մասին տեղեկություններ հաղորդելը:

Երկրորդ դեպքում, համապատասխան խոսքային միջավայրում, հիշյալ նախադասությունները կարող են դիտվել զեղչված ենթակայով նախադասություններ, երբ գործողություն կատարողը հայտնի է տեքստից և այն կարելի է վերականգնել: Այս դեպքում նախադասությունն ունի ոչ թե ընդհանուր-անորոշ, այլ կոնկրետ նշանակություն: Հմմտ., օրինակ, (Երեխաները) երկուսին էլ բնից հանել, վանդակում էին մեծացրել: (Գյուղացիները) անունը մոռացել, բայց գործը հիշում են:

Ինչպես երևում է բերված համանուն նախադասությունների համեմատությունից, խոսքի մեջ դրանք կատարում են հաղորդակցային տարբեր դեր և գործառում են տարբեր մտքեր հաղորդելու համար:

բ) Ընդհանրական մտքեր, դատողություններ արտահայտելիս՝ միակազմ գիմավոր նախադասության մեջ հաճախ գործածվում է բայի եզակի երկրորդ զեմքը, որը այս կիրառություններում կորցրել է կոնկրետ զեմք մատնանշելու իր արժեքը և ունի ընդհանուր-անորոշ նշանակություն:

Երբ բայը գրվում է ենթադրական եղանակի եզակի երկրորդ զեմքով, արտահայտում է ընդհանուր դատողություն, եղրակեցություն որևէ գործողության կամ եղելության իրադրոժման հնարավորության վերաբերյալ (եթե բայը գրական ձևով է գործածված)՝ կամ անհնարինության վերաբերյալ (եթե այն ժխտական ձևով է գործածված): Այսպիսի միակազմ նախադասությունները գործառում են հիմնականում բարդ նախադասության կազմում: Ահա օրինակներ.

Մեր հարևան Միքայելն այդ ժողովներում հաճախ պատմում է այնպիսի բաներ, որ ոչ մի գրում չես գտնի (ՍՁԵԺ, 3,431) (= ոչ մի գրքում հնարավոր չէ գտնել): Չեմ հիշում, մտածում եմ ու չեմ հիշում: Տասը հազարից ավելի մարտիկներ կան ղորամասում, բոլորին չես հիշի

(=բոլորին նաբավոր չէ հիշել) (ՀՔՄՏԶ, 2, 61): Ինչ ասես, որ բույլ չես տա ու չես ների: մահու չափ վախեցած մորը (ՀՔԾԱ, 207)=(Ամեն ինչ կարելի է, Նաբավոր է ներել ու թույլ տալ մահու չափ վախեցած մորը):

Խոսքային այլ միջավայրում, այլ բարդ նախադասությունների կազմում, ինչպես նաև անկախ կիրառություններ, ընդգծված միակազմ նախադասությունները կարող են գործառել որպես երկկազմ, զեղչված ենթակայով նախադասություններ. ինչպես՝ Իզուր մի փնտրիր, ոչ մի գրքում չես գտնի (=դու ոչ մի գրքում չես գտնի):

Այնքան ծանոթներ ես ունեցել, պարզ է, բոլորին չես հիշի (=դու բոլորին չես հիշի): Գուցե և այդ բանը բույլ չես տա ու չես ների... (=դու թույլ չես տա ու չես ների...):

Այն, որ հիշյալ նախադասությունները համանուն են, երևում է նաև այն բանից, որ նրանք համանիշ են և՛ իմաստով, և՛ կառուցվածքով տարբեր նախադասությունների՝ առաջին դեպքում միակազմ նախադասությամբ, երկրորդ դեպքում՝ երկկազմ (տե՛ս փակագծերի օրինակները):

Երբեմն միակազմ նախադասություններում բայի հզակի երկրորդ դեմք է գործածվում ընդհանրական նշանակությամբ՝ որևէ երևույթի մասին ընդհանուր դատողություն անելիս: Այս դեպքում ես բայի երկրորդ դեմքը կորցնում է իր կոնկրետ դիմացին նշանակությունը: Օրինակ՝ Արևն արդեն միջօրեում էր և ալրում էր ամբողջ ուժով, թվում է, որ երբ հետևես, կարող ես տեսնել (=եթե մարդ հետևի, կտեսնի), թե ինչպես աչքիդ առջև փոխվում է մաշկիդ գույնը (Ա. Սեկ., 265): Երբ գիտակցում ես (=երբ մարդ գիտակցում է), որ մահը մոտիկ է, շորս բայի վրա, զգաստ ես լինում, որպեսզի նրան ֆեզանից հեռացնես (ՀՔՄՏԶ, 2, 39)=Զգաստ է լինում, որպեսզի նրան իրենից հեռացնի):

Հիշյալ կառուցվածքի նախադասությունները ևս համանուն են և համապատասխան խոսքային միջավայրում կարող են գործառել նաև որպես երկկազմ՝ զեղչված ենթակայով նախադասություններ՝ ցույց տալով երկրորդ դեմքի գործողություն, ինչպես՝ Կարծում եմ, որ երբ հետևե՜լիս, կարող ես տեսնել (=եթե դու հետևես, կարող ես տեսնել): Լավ է, երբ գիտակցում ես (=երբ դու գիտակցում ես):

Նույն ձևով նաև՝

↗ Նաբավոր չէ տիրել:

Եվ իրոք սրա հետ չես տիրի → Մարդ չի տիրի:

↘ Դու չես տիրի:

Ինչ որ ցանկես, աչն կհնձես Մարդ ինչ ցանի, աչն կհնձի:

Դու ինչ ցանկես, աչն կհնձես:

Հիմա պիտի գնաս, հետո աչ կլինի Պետք է հիմա գնալ:

Դու պիտի հիմա գնաս:

Երբ միակազմ նախադասությունում արվում է խորհուրդ՝ ընդհանրական նշանակությամբ, այսինքն, երբ խորհուրդը ուղղված է ոչ թե որևէ անձնավորության, այլ շատերին, հաճախ ստորոգյալը դրվում է բայի հրամայական եղանակի եզակի երկրորդ դեմքով, որը կա այս կիրառություններում կորցրել է իր կոնկրետ դիմային նշանակությունը: Այս կառուցվածքի նախադասությունները հաճախ ունենում են առածական արժեք և շատ են տարածված ժողովրդական-խոսակցական լեզվում. օրինակ՝ Տասը չափիր, մեկ կտրիր: Եան հետ ընկերացիր, փայտը ձևքիցդ մի գցիր: Այս կառուցվածքի նախադասությունները համապատասխան խոսքային միջավայրում կարող են արտահայտել նաև կոնկրետ հրաման և հանդես գալ որպես առաջինների համանուն: Այսպես՝

Տասը չափիր, մեկ կտրիր Պետք է տասը չափել, մեկ կտրել:

Դու տասը չափիր, մեկ կտրիր:

Ամառվա անձրեին, ձմեռվա արևին
արևին մի հավատա

Ամառվա անձրեին, ձմեռվա արևին
Հպետք է հավատալ:
Դու ամառվա անձրեին, ձմեռվա
արևին մի հավատա:

2. Միակազմ անդամ նախադասություններից համանունական արժեք կարող են ունենալ հետևյալները.

ա) Անորոշ զերբայով կազմված հրամայական նախադասությունները: Սրանք հիմնականում արտահայտում են հրաման, կարգադրություն, կոչ՝ ուղղված շատերին: Այսպես՝ պահպանե՛լ լոուրյուն → Պահպանեցե՛ք լուսթյուն: Բարձրացնե՛լ մեռ հայրենիքի սուրբ դրոշը → Բարձրացրե՛ք մեր հայրենիքի սուրբ դրոշը: Չարձակել ոչ մի նետ → Չարձակել ոչ մի նետ (ԱԶ): Չաղմկե՛լ → Չաղմկե՛ք:

Սակայն բացառված չէ, որ խոսքային համապատասխան միջավայրում հիշյալ նախադասությունները արտահայտեն նաև հրաման՝ ուղղված մեկին, այսինքն ունենան եղակի թվի արժեք և լինեն համանուն նույն նախադասության հոգնակի թվի արժեքով կիրառություններին. այսպես՝

Հաղնովել Հաղնովեցեք:

Հաղնովիր:

Չաղմկել Չաղմկեք, Մի աղմկեք:

Չաղմկե՛ս, Մի աղմկիր:

Կրկնել Կրկնեցեք:

Կրկնիր:

բ) Բայական անդամ նախադասություններից նրանք, որոնք ունեն հարցական հնչերանդ և արտահայտում են ներքին հարցում, խոսողի երկմտանքը որևէ գործողություն կատարելու վերաբերյալ, ըստ կոնտեքստի կարող են վերաբերել և՛ առաջին, և՛ երրորդ դեմքերին. այսպես՝

Չգիտեմ ինչ անել: Հեռանա՛լ այստեղից, բե հաշովել ամեն ինչի հետ—Հեռանա՛մ այստեղից, բե հաշովեմ ամեն ինչի հետ:

Նա չգիտեր ինչ անել, մտածում էր. Հեռանալ այստեղից, բե հաշովել ամեն ինչի հետ—Հեռանա՞ր այստեղից, բե հաշովե՞ր ամեն ինչի հետ:

գ) Երբ հարցական հնչերանդ ունեցող բայական անդամ նախադասության մեջ գործածվում է որևէ հարցական դերանուն (մեծ մասամբ ինչո՞ւ և ինչպե՞ս), փոխվում է նախադասության բնույթը. այն արտահայտում է կա՛մ խոսողի ժխտական, բացասական վերաբերմունքը գործողության կատարման վերաբերյալ (ինչո՞ւ հարցական դերանվան զեպում), կա՛մ խոսողի կարծիքը տվյալ գործողության կատարման անհնարինության վերաբերյալ (ինչպե՞ս հարցական դերանվան դեպում):

Այս դեպքում ևս գործողությունը տեքստի թելադրանքով կարող է վերաբերել կա՛մ խոսողին (առաջին դեմքին), կա՛մ խոսակցին և կա՛մ լինել ընդհանուր-անորոշ: Այսինքն՝ նախադասություն ունի համանունական արժեք. օրինակ՝

Պետք է՛ երկար մտածել:

Ինչո՞ւ երկար մտածել. Ինչո՞ւ և՛ երկար մտածում:

մի՞թե ամենքի միջոց ալդ է՛ Ինչո՞ւ երկար մտածեմ:

(Շ, 3, 294:)

Պետք է՛, որ երկար մտածեմ:

Պետք է՛ ստել և կեղծել:

Ինչո՞ւ կեղծել և ստել—Ինչո՞ւ և՛ ստում և կեղծում:

Ինչո՞ւ ստեմ և կեղծեմ: Պետք է՛,

որ ստեմ և կեղծեմ:

Անհնար է նրան մոռանալ:

Ինչպէս մոռանալ նրան -- Ձեռ կարող նրան մոռանալ:

~ Ձեռ կարող նրան մոռանալ:

Բացականչական հնչերանգ ունեցող բայական անդեմ նախադասութ-
յունները, ըստ կոտեքստի, կարող են համապատասխանել ըղձական
եղանակի կա՛մ ապառնի, կա՛մ անցյալ ժամանակին: Երբ անդեմ նա-
խադասությամբ խոսողը արտահայտում է իղձ, ցանկություն ապաղախում
կատարվելիք զործողության վերաբերյալ, ապա նրան համապատաս-
խանում է ըղձական եղանակի ապառնի ժամանակը: Իսկ երբ ընդգրծ-
վում է ցանկալի գործողության կատարման անհնարին համարվելը
(խոսողի կողմից), այս դեպքում արդեն նրան համապատասխանում է
ըղձականի անցյալ ժամանակը: Օրինակ՝

Գնա՛լ, ահա՛նի՛լ ~ (Երանի) զնամ, տեսնեմ:

~ (Երանի) գնալի տեսնելի:

Այս դեպքում համանունությունը մասնակի է, որովհետև հիշյալ կա-
ռուցվածքի նախադասությունները տարբեր իմաստներ արտահայտում
են ոչ միայն խոսքային միջավայրի թեւադրանքով, այլ նաև հնչերան-
գային տարբերությամբ:

Յ. Անվանական անդեմ նախադասությունները ևս, նախորդների
նման, կարող են հանդես գալ որպէս համանուններ՝ հաստատել խոսե-
լու պահին երևան եկող երևույթները և կամ նկարագրությունների ժամա-
նակ մատնանշել անցյալում երևան եկած երևույթները: Այսինքն՝ նրանք
կարող են արտահայտել ժամանակային տարբեր հարաբերություններ և
ըստ այդմ համանիշական շարք կազմել տարբեր կառուցվածք և ժամա-
նակային վերաբերություն ունեցող նախադասությունների հետ: Օրինակ՝

Ամառ: Կեսօրվա կիզիչ արև է: ~ Ամառ է: Կեսօրվա կիզիչ արև է:

~ Ամառ էր: Կեսօրվա կիզիչ արև էր:

Ծանր ու անձրևոտ օր: ~ Ծանր ու անձրևոտ օր է:

~ Ծանր ու անձրևոտ օր էր:

Ոչ մի ծառ: Ոչ մի ստվեր: ~ Ոչ մի ծառ չկա: Ոչ մի ստվեր չկա:

~ Ոչ մի ծառ չկար: Ոչ մի ստվեր չկար:

Շարահյուսական համանունների անսպառ շարք կարող են ունենալ թերի նախադասությունները: Հայտնի է, որ թերի նախադասությունները խիստ տարածված են ժողովրդական-խոսակցական լիզվի, ինչպես նաև գեղարվեստական դրականության երկխոսությունների մեջ: Թերի նախադասություններ հատկապես շատ են հանդիպում հարց ու պատասխան պարունակող խոսքի մեջ, երբ նախորդ նախադասությունը (հարցը) հնարավորություն է ընձևոտում նախադասության մի մասով, երբեմն նույնիսկ մեկ անդամով, հասկանալի դարձնել միտքը: Ահա, հենց այդ մեկ անդամով արտահայտված թերի նախադասությունները տարբեր խոսքային միջավայրերում կարող են համապատասխանել բոլորովին տարբեր նախադասությունների և այդ առումով լինել համանուն: Օրինակ՝

Ո՞ր ես գնում:— Տուն:

Ի՞նչ ես նկարում:— Տուն:

Ի՞նչ է կառուցվում:— Տուն:

Այստեղ ունենք երեք համանուն թերի նախադասություն, որոնցից առաջինը նշանակում է «Գնում եմ տուն» (առկա անդամը տեղի պարագա է), երկրորդը՝ «Նկարում եմ տուն» (առկա անդամը ուղիղ խնդիր է), երրորդը՝ «Կառուցվում է տուն» (առկա անդամը ենթակա է):

Համանունների այս շարքը կարելի է անընդհատ շարունակել: Բավարարվենք մի քանի օրինակ բերելով:

1. Ինչի՞ կաթիլներ են:— Ջրի (=Ջրի կաթիլներ են):

Ու՞ր ես գնում:— Ջրի (=Գնում եմ ջրի):

2. Ու՞մ հանձնեցիր:— Աշոտին (=Հանձնեցի Աշոտին):

Ո՞ւմ տեսար:— Աշոտին (=Տեսա Աշոտին):

3. Նա ինչպիսի՞ն է:— Գեղեցիկ (=Նա գեղեցիկ է):

Ինչպիսի՞ աղջիկ է:— Գեղեցիկ (=Նա գեղեցիկ աղջիկ է):

Նա ինչպե՞ս է խոսում:— Գեղեցիկ (=Նա գեղեցիկ է խոսում):

Բերված համանուն թերի նախադասությունների առկա անդամները կատարում են նախադասության տարբեր անդամների պաշտոն, արտահայտում են քերականական տարբեր հարաբերություններ (հմտ. փակագծերի համանիշ լրիվ նախադասությունները):

Հարց ու պատասխան պարունակող խոսքում հաճախ հարցումը արտահայտվում է միայն հարցական դերանվամբ (հատկապես, երբ

հարցման նպատակն է լինում ճշտել նախորդ հաղորդման հետ կապված որևէ հանգամանք, երևույթ)։ Այսպիսի հարցական թերի նախադասությունները կարող են վերաբերել նախադասության բոլոր անդամներին և հաճախ ունենալ համանունական արժեք։ Օրինակ՝ «Ո՞ւմ» հարցական թերի նախադասությունը կարող է հարաբերակցել ուղիղ խնդրի, հանգման խնդրի, հատկացուցչի և համապատասխանաբար նշանակել «Ո՞ւմ գիրքը (մատիտը, աշխատանքը), ո՞ւմ մոտեցա (հանձնեցի, նվիրեցի...), ո՞ւմ տեսա (սիրեցի, պատմեցի...)»։ Նույն ձևով՝ երկխոսության մեջ հանդիպող «Ո՞վ» հարցական թերի նախադասությունը կարող է նշանակել «Ո՞վ եկավ (զնայ, սոսաց...)», «Նկողը (կաշիկա՞ծ, խոսողը)»... «Ո՞վ էր» և այլն։ Իհարկե, այստեղ ևս ինչպես նախորդ դեպքում, թերի նախադասությունը խոսքի մեջ ունենում է միայն մեկ կոնկրետ նշանակություն, այսինքն համանունությունը չեղոքանում է (այլապես հնարավոր չէր լինի իրագործել հաղորդակցումը)։

ՀԱՄԱՆՈՒՆ ՀԱՐՑԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայտնի է, որ հարցական նախադասությունները լեզվում ունեն տարբեր կիրառություններ։ Նրանք կարող են արտահայտել բուն հարցում, այսինքն գործածվել խոսողին անհայտ երևույթ, գործողություն, հանգամանք և այլն պարզելու համար, կարող են գործածվել ժխտում արտահայտելու համար, զրոհորել հրաման, ճարտասանական հարց և այլն։ Նրբեմն այս տարբեր խմաստային հարաբերությունները արտահայտվում են նույն կաղապարով կաղմված, նույն կառուցվածքն ու բառական կազմն ունեցող հարցական նախադասության միջոցով, այսինքն հարցական նախադասությունների մեջ ևս երևան է դալիս համանունության երևույթը։

Հատկապես տարածված են բուն հարցում և ժխտում արտահայտող համանուն հարցական նախադասությունները։ Օրինակ՝ «Ո՞ւր ես գնում» հարցական նախադասությունը կարող է նշանակել բուն հարցում, որը տրվում է գործողության կատարման տեղի մասին տեղեկություն ստանալու համար և պահանջում է որոշակի պատասխան (Գնում եմ տուն, քաղաք, աշխատանքի և այլն)։ Մեկ այլ խոսքային իրադրության մեջ այդ նույն հարցական նախադասությունը կարող է գործածվել խոսողի ժխտական վերաբերմունքը կատարված (կատարվող) գործողության նկատմամբ արտահայտելու համար և համանիշ լինել ժխտական կառուցվածքի պատմողական կամ հրամայական նախադասու-

թխան: Այսպես՝ Ուր Էս գնում: Շուտով համերգը կսկսվի $\rightarrow$ Պետք չէ
դնալ... (հաև՝ Մի՛ գնա):

Այլ օրինակներ՝

Իհնչեւ անամ՝ շատն հարցում (Նամակ եմ գրում):
 ժխտում (Պետք չէ անել: Մի՛ անել):

Ինչու՞ է կկիկ Դան հարցում (եկիկ է աշխատելու)՝
 ժխտական վերաբերմունք (Իզոպ է կկիկ)՝

Ինչպե՞ս է խոսում լատին հարցում (Գեղեցիկ է խոսում):
 Վստահան ղերարեմանք (Աղպան չի կարելի
 խոսել):

Երբ հարցական նախադասությունն ունի ժխտական կառուցվածք, բուն հարցումից բացի կարող է ունենալ հաստատական նշանակություն, այսինքն՝ ժխտական կառուցվածքի և հարցական հնչերանդի միջոցով հաստատվում, արձանագրվում է նաև տվյալ գործողության կատարումը: Այսպիսի նշանակությամբ հարցական նախադասությունները գործածվում են հիմնականում պատճառահետևանքային հարաբերություններ չույց տվող բառը նախադասություններում: Ահա օրինակներ՝

Ո՞ր չի տեսել արմ հարցում (Նա չի տեսել):
 Կատարում (Բոլոր տեսել են):

Ո՞ր չի ճանաչում նրան - րոն հարցում (Կո չիմ ճանաչում:) - հաստատում (Բոլորը ճանաչում են:)

Ո՞վ էլ լսել է ո՞վ էլ - բան հարցում (Սարկենը էլ լսել...)
 Խոսում արդ մտտին ² հաստատում (Բոլորը լսել են...)

Ի՞նչ գիրք չկա անունը
 Կրոն հարցում (Թումանյան չկա):
 Հասարակարգ (Ամեն գիրք կա):

Ո՞ր աշակերտը չգիտի՝ բռն հարցում (Անահիտը չգիտի):
 արդ՝ մասին հաստատում (Բոլոր աշակերտները գիտեն):

Ե՞րբ չի հարցրել Վրոն հարցում (Երկի չի հարցրել):
Հաստատում (Միշտ հարցրել է:)

Նրբ ժխտական հարցական նախադասության մեջ առկա է ինչպե՞ս հարցական գերանունը, բուն հարցից բացի կարող է արտահայտել խոսողի կարծիքը, դատողությունը գործողության կատարման անհրաժեշտության մասին կամ ավստոսանքը գործողության չկատարման վերաբերյալ. օրինակ՝

Դրան հարցում (= Ի՞նչու՞ չգնացիր?)

Ինչպե՞ս չգնացիր: → Պետք էր գնալ:

→ Ափսոս չգնացիր:

Դրան հարցում (= Ի՞նչու՞ չտեսար?)

Ինչպե՞ս չտեսար: → Պետք է տեսնեիր:

→ Ափսոս չտեսար:

Նույն տիպի համանունական արժեք ունեն ինչո՞ւ հարցական դերանունը պարունակող ժխտական կառուցվածքի նախադասությունները. օրինակ՝

Դրան հարցում (Որովհետեւ հիվանդ էի:)

Ինչու՞ երեկ չեկար: → Երեկ պիտի եկած լինեիր:

→ Ափսոս երեկ չէիր եկել:

Դրան հարցում (Որովհետեւ խղճաց:)

Ի՞նչու՞ չհարվածեց: → Պիտի հարվածեր:

→ Ափսոս չհարվածեց:

Իհարկե, խոսքային համապատասխան միջավայրում այս համոռունությունը ևս չեզոքանում է. հարցական նախադասությունը համապատասխանաբար ունենում է կա՛մ բուն հարցման նշանակություն ու պահանջում է պատասխան, կա՛մ գործածվում է խոսողի ժխտական (եթե հարցումը դրական է) ու հաստատական (եթե հարցումը ժխտական է) վերաբերմունքը, ավստոսանքը գործողության չկատարման, կամ կատարման վերաբերյալ դրսևորելու համար. օրինակ՝

Ինչո՞ւ երեկ չեկար:— Որովհետեւ հիվանդ էի:

Ինչո՞ւ երեկ չեկար, շատ լավ համերգ էր:

Ո՞վ է նրան այդ մասին ասել:— Չգիտեմ:

Ո՞վ է նրան այդ մասին ասել, որ իմանար:

Ի՞նչ ևս կարծում — ինչպե՞ս գնամ, ինքնաթիռո՞վ, թե գնացքով:— Իհարկե, ինքնաթիռով:

Ինչպես գնամ, երբ հիվանդ եմ²:

Հարցական նախադասությունները համանունական արժեք ունենում են հիմնականում այն ժամանակ, երբ նրանցում առկա չեն խոսողի վերաբերմունքը դրսևորող եղանակավորող բառեր: Վերջիններիս առկայության դեպքում այն սովորաբար բուն հարցում չի արտահայտում: Օրինակ՝ ելի «Ինչո՞ւ գնացիր» նախադասությունը կարող է նշանակել և՛ բուն հարցում, և՛ ժխտում, ապա «Ախր ինչո՞ւ գնացիր» կամ «Հենց դո՞ւ պիտի գնայիր» նախադասությունները արտահայտում են միայն խոսողի ժխտական վերաբերմունքը գործողության՝ տվյալ անձի կողմից կատարվելու վերաբերյալ (Պետք չէր, որ գնայիր: Պետք չէր, որ հենց դու գնայիր):

Հարցական նախադասության նույնպիսի իմաստային սահմանափակում է առաջանում նաև նախադասության վերջում ու լրամատարի գործածությամբ (հմմտ. «Ի՞նչ կարող է անել» և «Ի՞նչ կարող է անել որ» նախադասությունները):

ՀԱՄԱՆՈՒՆ ՀՐԱՄԱՋԱՍՈՒՅԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հրամայական նախադասությունները համանունական արժեքով հանդես են գալիս հազվագեղ: Այդպիսի արժեք ունեն միայն այն հրամայական նախադասությունները, որոնք գործածվում են որպես անշաղկապ բարդ ստորադասական նախադասության բաղադրիչ, ունեն ընդհանուր-անորոշ նշանակություն և համանիշ են երե շաղկապով կապակցված պայմանի երկրորդական նախադասություններին. օրինակ՝ «Ամռանը շրջի՛ր գյուղերը, ոչ ոքի չես հանդիպի» = Երբ ամռանը շրջես գյուղերը, ոչ ոքի չես հանդիպի»: Մեկ այլ խոսքային իրադրության մեջ ընդգծված հրամայական նախադասությունը կարող է արտահայտել բուն հրաման, հորդոր՝ տվյալ գործողությունը կատարելու. օրինակ՝ Ամռանը շրջի՛ր գյուղերը, զրուցիր գյուղացիների հետ և նյութիր հավաքիր բարբառագիտական ատլասի համար:

Ինչպես ասվել է, լվային առումով համանունական արժեք կարող են ունենալ նաև անդամ հրամայական նախադասությունները («Չծխե՛լ» «Չաղմկե՛լ» և այլն):

² Այս կառուցվածքի հարցական նախադասությունների կազմած համանիշական շարքերի մասին տե՛ս Ն. Պառնասյան, Շարահյուսական համանիշները ժամանակակից հայերենում, 1970, լջ 84—105:

Նախադասությունների համանունության մասին խոսելիս անհրաժեշտ է անդրադառնալ նաև բարդ նախադասություններին: Հաճախ նույն կաղապարով կազմված նույն կառուցվածքն ու բառային կազմն ունեցող և նույն ստորադասական շաղկապով միացած երկրորդական նախադասությունը, լրացնելով տարբեր գլխավոր նախադասությունների և հարաբերակցելով նրանց տարբեր անդամներին, զրոհորում է տարբեր իմաստային նախադասություններ և կատարում տարբեր շարահյուսական պաշտոններ. այսպես՝

Նա գիտեմ, որ այսօր դաս չի լինի:

Հայտնի է, որ այսօր դաս չի լինի:

Պարզվեց, քե ինչու չէր եկել:

Գիտեմ, քե ինչու չէր եկել:

Նա սիրում է, երբ իրեն գովում են:

Նա ուրախանում է, երբ իրեն գովում են:

Բերված օրինակներից առաջին երկու դույզում ընդգծված նույն երկրորդական նախադասությունները կատարում են ենթակայի և ուղիղ խնդրի պաշտոններ, իսկ երրորդ դույզում՝ ուղիղ խնդրի և պատճառի պարագայի պաշտոններ: Նկատելի է, որ երկրորդական նախադասությունը համանունական արժեք ունենում է հիմնականում այն դեպքերում, երբ կապակցվում է ընդհանրական ուր և քե շաղկապներով:

Երկրորդական նախադասության պաշտոնն ու բնույթը այս դեպքերում որոշվում է նրանով, թե գլխավոր նախադասության որ անդամին է լրացնում, ինչ բառի հետ է շարահյուսորեն և իմաստով կապակցվում. ճիշտ այնպես, ինչպես բառաձևերի և բառակապակցությունների շարահյուսական արժեքը որոշվում է նախադասության մեջ նրանց ունեցած դիրքով և շարահյուսական կապերով (հմմտ. վերևի օրինակները):

1. Փամանակակից հայերենում հատկապես շատ է տարածված և օրինաչափական բնույթ ունի ենթակա և ուղիղ խնդիր երկրորդական նախադասությունների համանունությունը: Նույն երկրորդական նախադասությունը գլխավորի կրավորական սեռի կամ վիճակ, զրոյություն ցույց տվող շեղոր սեռի բայերի մոտ կատարում է ենթակայի, իսկ ներդրական սեռի բայերի մոտ՝ ուղիղ խնդրի պաշտոն: Բերենք մի քանի օրինակ ևս.

Պարզվեց, որ եկողներից մեկը Ավագյանն էր (ՆՁ2):

Ասացին, որ եկողներից մեկը Ավագյանն էր:

Չէր երևում, քե նա բաժանում է ընկերների խանդավառությունը (ՀՔՄՏՁ):

Կարծում էի, քե նա բաժանում է ընկերների խանդավառությունը:

Այս կառուցվածքի՝ ենթակայի կամ ուղիղ խնդրի պաշտոն կատարող երկրորդական նախադասությամբ նկարագրվում է ոչ թե անձ, այլ որևէ երևույթ, իրողություն, գործողություն, այդ պատճառով երկու բարդ նախադասությունների համար ընդհանուր կարող է լինել ոչ միայն երկրորդական նախադասությունը, այլ նաև զլխավոր նախադասության մեջ ձևական ենթակայի կամ ուղիղ խնդրի պաշտոն կատարող այն հարաբերյալը: Քանի որ երկրորդական նախադասությունը հաջորդում է հարաբերյալին, այս դեպքում այն կարող է լինել միջադաս կամ վերջադաս (հարաբերյալի բացակայության դեպքում սովորաբար լինում է վերջադաս): Օրինակ՝

Այն, որ նա ծանոթ չէ իրադրությանը, զգացվում է հենց առաջին հայացքից (ԳՄ, Չարենցի մոտ):

Այն, որ նա ծանոթ չէ իրադրությանը, մենք նկատեցինք հենց սկզբից:

Բերված երկրորդական նախադասությունները կարող են գործառնել նաև որպես ստորոգելիական վերադիր և որոշել: Այս դեպքերում զլխավոր նախադասության մեջ հարաբերյալի առկայությունը պարտադիր է: Օրինակ՝

Կարևորն այն է, որ նա ծանոթ չէ իրադրությանը:

Այն փաստը, որ նա ծանոթ չէ իրադրությանը, մտահոգեց մեզ:

Տարբեր հարաբերյալների հարաբերակցությամբ՝ ընդգծված նույն երկրորդական նախադասությունները կարող են կատարել նաև նախադասության այլ անդամների պաշտոններ. օրինակ՝ Մենք անհանգստացանք այն բանից, որ նա ծանոթ չէ իրադրությանը (պատճառի պարագա): Արդարացիվ այն բանով, որ նա ծանոթ չէ իրադրությանը (միջոցի խնդիր): Դա հետևանք է այն բանի, որ նա ծանոթ չէ իրադրությանը (հատկացուցիչ):

2. Ով, որ հարաբերականներով միացող երկրորդական նախադասությունը ցույց է տալիս անձ. տարբեր կառուցվածքի զլխավոր նախադասությունների առկայությամբ, տարբեր ստորոգյալների պահանջով ու տարբեր հարաբերյալների հարաբերակցությամբ այն կարող է կա-

տարել ենթակայի և զանազան խնդիրների պաշտոններ (ինչ պաշտոն որ կարող է կատարել անձ ցույց տվող գոյականը): Օրինակ՝

Ով մոտ էր նրան, արդեն զիտեր — էլ չկա կարմիր ղեկավարը (ԵՁ) (ենթակա):

Տեսա նրան, ով մոտ էր նրան (ուղիղ խնդիր):

Տվեցի նրան, ով մոտ էր նրան (հանգման խնդիր):

Իմացա նրանից, որ մոտ էր նրան (անջատման խնդիր):

Ուղարկեցի նրա միջոցով, ով մոտ էր նրան (միջոցի խնդիր):

Կամ՝

Եկան նրանք, որոնց սպասում էինք (ենթակա):

Դիմավորեցինք նրանց, որոնց սպասում էինք (ուղիղ խնդիր):

Հանձնեցի նրանց, որոնց սպասում էինք (հանգման խնդիր):

Իմացանք նրանցից, որոնց սպասում էինք (անջատման խնդիր):

Խոսում էինք նրանց մասին, որոնց սպասում էինք (վերաբերության խնդիր):

3. Երբ շաղկապով միանում են սովորաբար ժամանակի պարագա երկրորդական նախադասությունները: Սակայն զրվելով ժամանակ ցույց տվող բառերի մոտ և հարաբերակցելով այն հարաբերյալին՝ այս նախադասությունները կարող են կատարել որոշչի շարահյուսական պաշտոն, առանձին դեպքերում՝ նաև ուղիղ խնդրի և ենթակայի պաշտոններ. օրինակ՝

Անիծված լինին այն օրն ու տարին, երբ գերի դառա ես քու քնարին (ՀԹ) (որոշիչ):

Երբ գերի դառա ես քո քնարին, կորցրի հանգիստս (ժամանակի պարագա):

Երբ հարավի արևը զենիթից կրակ է քափում երկրի վրա, բոլորը թաքնվում են սովերններում (ժամանակի պարագա):

Կեսօրին, երբ հարավի արևը զենիթից կրակ է քափում երկրի վրա..., գոռում-գոչումով հեղեղ է թափվում ցած (ՎԱՀԳ) (մասնավորող բացահայտիչ):

Ձեմ սիրում, երբ հարավի արևը զենիթից կրակ է քափում երկրի վրա (ուղիղ խնդիր):

Հաճեիլ չէ, երբ հարավի արևը զենիթից կրակ է քափում երկրի վրա (ենթակա):

Ժամանակի պարագայի պաշտոնում հիշյալ երկրորդական նախա-
դասույթները ունեն համեմատաբար ազատ շարադասություն. կարող
են լինել առաջագաս և վերջագաս: Իսկ մյուս պաշտոններում կարող են
լինել վերջագաս կամ միջագաս (դրվում են լրացվող բառից հետո):

4. Համանունական արժեք կարող են ունենալ նաև ուր և որտեղ
հարաբերականներով կապակցված երկրորդական նախադասություն-
ները: Հարաբերակցելով ալևտեղ հարաբերյալին կամ անմիջապես լրաց-
նելով ստորոգյալին՝ նրանք կատարում են տեղի պարագայի պաշտոն,
լրացնելով գլխավոր նախադասության մակբայով կամ գոյականով ար-
տահայտված պարագային՝ մասնավորող բացահայտչի, իսկ տեղ ջույց
տվող գոյականով արտահայտված ալև անգամի՝ որոշչի շարահյուսական
պաշտոն: Օրինակ՝

Եվ այնտեղ, որտեղ անտառները կալին..., մնացին քարեր (ԱՌ)—
(տեղի պարագա):

Մենք հանդիպեցինք վերևում, որտեղ անտառներ կալին (մասնա-
վորող բացահայտիչ):

Իր գեղեցկությամբ աչքի էր ընկնում հատկապես սարալանջը, որ-
տեղ անտառներ կալին (որոշիչ):
կամ՝

Ուր չի հասել ջուրը, երկիրը շորացել է կիզիչ արևից (ՎԱՀԳ) (տեղի
պարագա):

Վերևում, ուր չի հասել ջուրը, արևը խանձել է բուսականությունը
(մասնավորող բացահայտիչ):

Դաշտի այն մասը, ուր չի հասել ջուրը, աղքատ բուսականություն
ունի (որոշիչ):

Մնացած դեպքերում շաղկապները (որովհետև, որպեսզի, երբ, այսպե-
քե՛ս և այլն) սովորաբար մատնանշում են բարդ ստորագասական նա-
խադասությունների բաղադրիչների շարահյուսական բնույթը, և համա-
նունության երևույթ չի նկատվում:

ԲԱՌԱՋԵՎԵՐԻ ԵՎ ԿԱՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ
ՀԱՄԱՆՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ

«Ձևաբանական համանունություն» գլխում քննարկվեցին այն դեպ-
քերը, երբ ձևով համընկնում էին քերականական-ձևաբանական տարբեր-
արժեք ունեցող, տարբեր հարացույցների մեջ մտնող բառաձևերը և տար-
բեր խոսքի մասերի ոլորտում գործառող բառերն ու բառաձևերը: Սա-

կայն բառաձևերի համանունությունը դրանով չի սահմանափակվում: Շարահյուսական մակարդակում գործառնելով տարբեր բառական միջավայրում և բառակապակցություններում ու նախադասության մեջ գրավելով տարբեր շարահյուսական դիրք՝ նույն բերականական ձևավորումն ունեցող բառը, միևնույն բառաձևը կարող է արտահայտել որակապես տարբեր շարահյուսական հարաբերություններ, այսինքն շարահյուսական հարաբերություններ արտահայտելու տեսանկյունից լինել համանուն:

Պրոֆ. Գ. Զահուկյանը «Ժամանակակից հայերենի տեսության հիմունքներ» աշխատության մեջ, խոսելով գոյականական բառակապակցություններում բառերի գործառնության մասին, գրում է. «Գործառնապես հատուկ տարբերակված բառերի կողքին նշանակալից թիվ են կազմում այն բառերը, որոնք միևնույն ձևով կարող են հանդես գալ՝ ա) որպես գոյական, որոշիչ ու մակորոշիչ, զ) որպես գոյական ու որոշիչ և Յ) որպես որոշիչ ու մակորոշիչ: Այս երեւոյթը կարելի է կոչել գործառնական համանունություն»³: Գ. Զահուկյանն այստեղ նկատի ունի այն դեպքերը, երբ միևնույն բառը, առանց ձևաբանական փոփոխության, կարող է գործառնել որպես գոյական-ածական-մակբայ (հայերեն խոսք, հայերեն ճիշտ, հայերեն կարգաց), գոյական-ածական (աղքատ, այրի. ապստամբ) և ածական-մակբայ (լավ, խիստ, հաճախակի և այլն):

Անվան շարահյուսական ձևերի համանունության վերաբերյալ ուշադրավ դիտողություններ կան Գ. Ա. Զոլոտովայի «Очерк функционального анализа русского языка»⁴ աշխատության մեջ: Նա գտնում է, որ անվան շարահյուսական ձևերի մեջ շատ են համանունական համընկնումները: «Բառական նույնության և գործառնական հատկանիշների տարբերության առկայության դեպքում նախդրա-հոլովական ձևավորման ընդհանրությունը առաջացնում է անվան շարահյուսական ձևերի համանունություն»⁵: Նա օրինակ է բերում лесом, полем, лугом, селом, морем, որոնք մի դեպքում հանդես են գալիս որպես կապված ձևեր, любоваться, восторгаться բայերի ստորադաս «օբյեկտային ծավալիչներ», մյուս դեպքում ազատ ձևեր՝ շարժման ուղղության նշանակությամբ: Նույն ձևով նա համանուն է համարում над деревней, над роман-

³ Գ. Զահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974, էջ 525:

⁴ Г. А. Золотова, Очерк функционального анализа русского языка, 1973, стр. 105.

⁵ Նույն տեղում, էջ 105—106:

кой, на праздник, на прогулку и այլն: Զոլոտովան համանունությունը որոշում է և փորձում այն տարբերակել բազմիմաստությունից՝ ելնելով իր՝ բառերի շարահյուսական ձևերի դասակարգումից ըստ դորժառական երևի արիթմի (աղատ, պայմանավորված և կապված)⁶: Նա համանուն է համարում այն շարահյուսական ձևերը, որոնք ունեն դորժառական այս երևի արիթմի:

Հետևելով Զոլոտովային և ընդարձակելով Գ. Զահուկյանի կողմից նշած դորժառական համանունության սահմանները՝ մենք գտնում ենք, որ շարահյուսական-դորժառական համանուն կարող են լինել ոչ միայն բառի ուղիղ ձևերը, այլ նաև գոյականների ու դերանունների լիք հոլովածները, երբ նրանք հանդես են գալիս տարբեր բառակապակցություններում և նախադասության մեջ կատարում են տարբեր պաշտոններ՝ արտահայտելով որակապես տարբեր շարահյուսական հարաբերություններ: Նույնպիսի համանուններ կարող են լինել նաև կապական մի շարք կառույցներ:

Հայտնի իրողություն է, որ ժամանակակից հայերենում գոյականի (նաև դերանվան) յուրաքանչյուր հոլովածն ինքնադասության մեջ հանդես է գալիս մի շարք պաշտոններով և ըստ այն բանի, թե ինչ բառի հետ է շարահյուսական կապի մեջ, ինչպիսի շարահյուսական դիրք է զբաղում, դրսևորում է շարահյուսական-իմաստային տարբեր հարաբերություններ: Երբ իմաստային այդպիսի տարբերակումը կատարվում է շարահյուսական նույն պաշտոնի սահմաններում, պետք է խոսել շարահյուսական բազմիմաստության մասին, իսկ երբ նույն բառածևի արտահայտած շարահյուսական-բերականական իմաստների տարբերությունը առաջացնում է տվյալ բառի պաշտոնի փոփոխություն, պետք է խոսել համանունության երևույթի մասին: Այսպես՝ Գիշերը գեղեցիկ է և նա եկավ գիշերը նախադասություններում ունենք նույն գիշերը բառածևը, որը, սակայն, արտահայտում է որակապես տարբեր հարաբերություններ և կատարում է շարահյուսական տարբեր պաշտոններ: Առաջին նախադասության մեջ այն ենթակա է և մատնանշում է այն առարկան, որին որոշակի հատկանիշ է վերագրվում: Երկրորդ նախադասության մեջ նույն բառածևը կատարում է ժամանակի պարագայի շարահյուսական պաշտոն և ցույց է տալիս այն ժամանակամիջոցը, որի ընթացքում կատարվել է ենթակայի գործողությունը. մի հարաբերություն, որ որակապես տարբերվում է նախորդ նախադասության մեջ նույն բառածևի արտահայտած հարաբերությունից: Հետևաբար, գիշերը բառածևը շարա-

⁶ Նույն տեղում, էջ 105—106:

հյուսական տեսանկյունից հիշյալ նախադասություններում համանուն է, շարահյուսական կամ գործառական համանուն: Նույն ձևով շարահյուսական համանուն է Աշոտին բառաձևը Նվերը հանձնեցի Աշոտին և Տեսա Աշոտին նախադասություններում (առաջին նախադասության մեջ հանգման խնդիր է, երկրորդ նախադասության մեջ՝ ուղիղ խնդիր):

Իսկ հետևյալ նախադասություններում՝ Մատիտը կաքմիր է: և Մատիտը ջարդվեց, մատիտը բառաձևը թեև արտահայտած իմաստային հարաբերությունների առումով նրբիմաստային տարբերություն ունի (մի դեպքում առարկային վերագրվում է որոշակի հատկանիշ, մյուս դեպքում առարկան հնթարկվում է որոշակի փոփոխության), սակայն ալդ տարբերությունը երևան է գալիս նույն՝ ենթակա-ստորոգյալի շարահյուսական հարաբերության սահմաններում, հետևաբար այստեղ համանունություն չկա: Նույն ձևով Ես տեսա սեղանին դրված մատիտը, Ես վերցրի մատիտը և Ես սրեցի մատիտը նախադասություններում ստորոգյալների և մատիտը բառաձևի միջև առկա են տարբեր նրբիմաստային հարաբերություններ: Առաջին նախադասության մեջ ենթակայի կատարած գործողության հետևանքով մատիտը բառաձևով արտահայտված առարկան որևէ փոփոխություն չի կրում, երկրորդ նախադասության մեջ այն տեղաշարժվում է տարածության մեջ, երրորդում այն կրում է որոշակի փոփոխություն: Գործողության և առարկայի միջև եղած այս բոլոր հարաբերությունները վերացարկվում և դիտվում են որպես ուղիղ խնդրային հարաբերություններ, այսինքն երեք դեպքում էլ մատիտը բառաձևը կատարում է ուղիղ խնդրի պաշտոն: Հետևաբար, այստեղ ևս բառաձևի գործառական համանունություն չկա:

Այսպիսով, ինչպես ասացինք, մենք շարահյուսական-գործառական համանուն ենք համարում նույն բառույթի այն բառաձևերը կամ կապական կառույցները, որոնք նախադասության մեջ կատարում են շարահյուսական տարբեր պաշտոններ:

Քննենք բառաձևերի և կապական կառույցների գործառական համանունական շարքերը առանձին-առանձին⁷:

7 Ժամանակակից հայերենի հոլովների կիրառական առանձնահատկությունները հայ բերականագիտության մեջ րավականաչափ ուսումնասիրված են: Այդ իսկ պատճառով մենք այստեղ կանգ կառնենք միայն գործառական—շարահյուսական համանունական շարքերի վրա՝ հնարավորության սահմաններում ցույց տալով նրանց կիրառության շրջանակները:

ԳՈՅԱԿԱՆԻ ՀՈՒՈՎԱԶԵՎԵՐԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ-ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱՆՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ

1. Ուղղական հոլովով դրված գոյականների գործառական համանունությունը

Հայտնի է, որ գոյականների ուղղական հոլովածը նախադասության մեջ կարող է կատարել մի շարք շարահյուսական պաշտոններ՝ ենթակայի, ստորոգելիական վերադրի, որոշչի, բացահայտչի, ուղիղ խնդրի, ժամանակի, տեղի, չափի պարագաների։ Սակայն միշտ չէ, որ նույն բառի ուղղական հոլովածը կատարում է այս բոլոր պաշտոնները։ Գոյականի բառային խմաստը հաճախ սահմանափակում է տվյալ հոլովի գործառության շրջանակները։ Գործառական սահմանափակություն են մտցնում նաև գոյականի առկայացման կարգը (ներա որոշյալ կամ անորոշ ձևով հանդես գալը) և թվի կարգը։ Այդ իսկ պատճառով, տարբեր բառերի տարբեր առկայացման կարգ և թվի կարգ ունեցող ուղղական հոլովածները հաճախ ունենում են գործառական համանունության տարբեր շրջանակներ։ Համանունական շարքերը կրեմն նույնն են լինում միայն իմաստային նույն դաշտի մեջ մտնող գոյականների համար։

Տեսնենք, թե տարբեր գոյականների ուղղական հոլովածները ինչպիսի համանունական արժեք կարող են ունենալ։

Գոյականի ուղղական հոլովի անորոշ առման գործառական առանձնահատկությունները և համանունությունը.— 1. ա) իբ ցույց տվող գոյականների անորոշ առման ամենատարածված գործառությունը բայական բառակապակցություններում է։ Ներգործական և պատճառական սեռի բայերի պահանջով նրանք կատարում են ուղիղ խնդրի շարահյուսական պաշտոն. օրինակ՝ Տեսա սեղան, արոս, գիրք, ներկայացում, կիևոնկաւ, ծաղիկ և այլն։ Հաճախադեպ է հատկապես գոյականի անորոշ առման կիրառությունը հետևանքի ուղիղ խնդրի պաշտոնում. օրինակ՝ կառուցել ֆաղաֆ, հյուսել պսակ, երգ հորինել, նաշ ելիել, հետաքրքրություն առաջացնել, դրամ շահել, ջրանցք փորել, միտք հղանալ և այլն։

բ) Այս նույն ձևերը կրավորական կառուցվածքի նախադասություններում կատարում են ենթակայի պաշտոն։ Այս դեպքում թեև գործողության և նրա անմիջական ուղիղ մեջ մտնող առարկաների հարաբերությունները մնում են նույնը (հմտ. ներկայացում բեմադրեցին, ներկայացում բեմադրվեց), սակայն դրանք վերացարկվում են որպես շարահյուսական տարբեր հարաբերություններ՝ ուղիղ խնդրային և ենթակաստորոգյալային. օրինակ՝ «Այդ հայտարարությունը հետաքրքրություն առաջացրեց» և «Այդ հայտարարության հետևանքով հետաքրքրություն

առաջացավ»: Այստեղ մենք ունենք, մի կողմից, ամբողջ նախադասութ-
յունների համանիշություն, մյուս կողմից՝ զոյականի եզակի անորոշ
առման գործառական համանունություն: Առաջին նախադասության մեջ
այն կատարում է ուղիղ խնդրի, հրկրորդ նախադասության մեջ՝ ենթա-
կայի պաշտոն: Իհարկե, կրավորական կամ պասիվ կառուցվածքի նա-
խադասություններում ավելի սովորական է որոշյալ առման կիրառու-
թյունը՝ պայմանավորված նրանց հաղորդակցային դերի առանձնահատ-
կությամբ:

Երբ ենթակայի պաշտոնով հանդես է գալիս զոյականի անորոշ
առումը, այն սովորաբար ստանում է մի անորոշ գերանունը կամ որևէ
որոշիչ լրացում (մեծ մասամբ արտահայտված ածականով կամ թվա-
կանով): Անորոշ գերանունը և որոշիչը կարող են առկա լինել նաև անո-
րոշ զոյականի ուղիղ խնդրային կիրառության դեպքում. օրինակ՝ ես
տեսա մի մեկավոր ծառ — Հեռվում երևաց մի մեկավոր ծառ: Նա նկա-
րեց մի գեղեցիկ ծաղիկ — Թղթի վրա նկարված էր մի գեղեցիկ ծաղիկ:
Նա գնեց հիմեզ մատիտ — Սեղանի վրա դրված էր հիմեզ մատիտ:

զ) Իր ցույց տվող զոյականների անորոշ առման ուղղական հոլ-
վածքը կարող է գործառել նաև որպես ստորոգելիական վերադիր, օրի-
նակ՝ Հեռվում երևացողը ծառ է: Նույնպիսի համանունական արժեք կա-
րող են ունենալ հիշյալ իր ցույց տվող զոյականների ուղղականի անո-
րոշ առման հոգնակի հոլովածները: Այս բառածների համանուն կիրա-
ռությունների պատկերը կլինի՝

Նա նկարեց ծաղիկ(ներ):

Թղթի վրա նկարված է (են) ծաղիկ(ներ):

Նրա նկարած(ներ)ը ծաղիկ(ներ) է (են):

Բերված օրինակներում զոյականի նույն բերականական ձևը երեք
նախադասություններում արտահայտել է երեք տարբեր շարահյուսական
հարաբերություններ և կատարել է երեք տարբեր պաշտոններ՝ ենթա-
կայի, ուղիղ խնդրի և ստորոգելիական վերադրի:

զ) Առանձին՝ հատկապես որևէ որակային հատկանիշով աչքի ընկ-
նող իր ցույց տվող թանձրացական զոյականների անորոշի եզակի ուղ-
ղական հոլովածը, բացի վերը նշված կիրառություններից, կարող է
գործառել նաև որպես որոշիչ. օրինակ՝ Նա ծաղիկ հասկում հեռացավ
կյանքից: Անահիտը ոսկի սիրտ ունի: Դոհար աստղեր, քառ սիրտ, հրաշ-
աղջիկ, ծով աչքեր և այլն: Այս բառերի գործառական համանունական
շարքը քառանգամ է:

և) ժամանակ ցույց տվող գոյականների եղանի անորոշ առման ուղղականի ձևերը նախադասության անգամ կարող են լինել միայն որևէ լրացման (հատկապես թվականով արտահայտված լրացման) հետ, ժամանակ ցույց տվող բառը և իր լրացումը այստեղ հանդես են գալիս որպես կաշուն բառակապակցություն և նախադասության մեջ կատարում են մեկ անդամի պաշտոն, այնպես որ այս դեպքում կարելի է խոսել ժամանակ ցույց տվող գոյական գերադաս անգամ ունեցող բառակապակցությունների համանունական կիրառության մասին: Այսպիսի բառակապակցությունները, նախադասության մեջ ունենալով գործառական համանունական արժեք, կարող են կատարել հետևյալ պաշտոնները.

1) ժամանակային չափի պարագայի՝ ժամանակային սահմանափակման իմաստով, օրինակ՝ Ցրտերը շարունակվեցին եփնգ օր: Մեկ ամիս նա գտնվում էր Մոսկվայում: Երկու տարի աշխատում էր գործարանում: Նա երկար ժամանակ չէր ուզում գնալ:

2) Ստորոգելիական վերադրի: Այս պաշտոնով հիշյալ կապակցությունները գործառում են հատկապես ենթակա երկրորդական նախադասություն ունեցող զրխավոր նախադասության մեջ. օրինակ՝ Երկու տարի է, որ արձակուրդ չի զնացել: Օրվա աշխատածամանակը չոր ժամ է: Հինգ օր է, որ նրան չեմ տեսել:

Ուղիղ խնդրի պաշտոնով այս կապակցությունները չեն գործառում, իսկ ենթակա կարող են լինել շատ հազվադեպ, ինչպես՝ Այդ օրից անցել է հինգ տարի: Հինգ օր ևս զրորվեց:

Ժամանակ ցույց տվող գոյականների անորոշի հոգնակի ձևերը, ի տարբերություն եղանի ձևերի, թվական լրացում սովորաբար չեն ունենում, իսկ եթե ունենում են, ապա գոյականի մոտ դրվում է ածականով արտահայտված մեկ այլ լրացում ևս: Օրինակ՝ Հինգ երկար ու ձիգ տարիներ նա սովորում էր: Դրանք հինգ երկար ու ձիգ տարիներ էին:

Անորոշի հոգնակի ձևերը ժամանակային չափի պարագայի պաշտոն կարող են կատարել նաև առանց լրացման: Օրինակ՝ Հարցի լուծումը տարիներ ձգձգվեց (իհարկե այս դեպքում ավելի տարածված է հոգնակի ձևի հետ շարունակ բառի գործածությունը՝ տարիներ շարունակ, օրեր, ամիսներ շարունակ): Նույն ձևով նաև՝ Օրեր է, որ զրորվում են: Այդ օրից դրեր են անցել:

Երբեմն ժամանակ ցույց տվող գոյականի անորոշ առումը նախադասության անգամ է դառնում որևէ որակական ածական լրացման հետ: Այդպիսի բառակապակցությունը կատարում է ստորոգելիական վե-

բաղրի (Տխոր օր(եր) ևր (էին), ուղիղ խնդրի (Շատ տխուր օրեր է անց կացրել), հազվադեպ՝ նաև ենթակայի (Շատ տխուր օրեր են անցել: պաշտոններ: Բնականաբար, չափի պարագայի պաշտոնով հիշյալ կապակցությունը չի գործառում, այսինքն համատեղական շարքն այս դեպքում հիմնականում երկանդամ է, երբեմն նաև՝ եռանդամ:

դ) Ժամանակ ցույց տվող մի շարք գոյականների՝ ամիս, տարի, օր, զիշեր, ցերեկ, շաբաթ, կիրակի և այլն, անորոշ առման եղակի ուղղական ձևով նախադասության մեջ ունենում են երկու համանուն կիրառություն՝ ժամանակի պարագայի և ստորոգելիական վերադրի: Ժամանակ ցույց տվող գոյականը ժամանակի պարագայի պաշտոն է կատարում՝ դերանվանական կամ ժամանակային իմաստ ունեցող այլ լրացման հետ: Որպես վերադրի այն կարող է գործառնել և՛ առանձին, և՛ որևէ դերանվանական կամ ածականական լրացման հետ: Օրինակ, Անցյալ ամիս շատ շոգ էր: Դա անցյալ ամիս էր: Այս տարի բերքը շատ առատ է: Շատ բերառատ տարի է: Այս զիշեր կգա: Աստղադարձ զիշեր է: Ամեն երեկո գրում է: Աբդեն ուշ երեկո է: Ստորոգելիական վերադրի պաշտոնով ժամանակ ցույց տվող գոյականի անորոշի ուղղականի ձևը գործառում է հիմնականում միակազմ նախադասություններում: Համառ. Ամառ է: Գարուն է: Ուշ երեկո է: Այսօր շաբաթ է:

է) Տեղ ցույց տվող հասարակ գոյականների անորոշ առման եղակի ուղղականի ձևերը կարող են ունենալ չորս համանուն կիրառություն՝ ուղիղ խնդրի, ենթակայի, ստորոգելիական վերադրի և տեղի պարագայի: Առաջին երկու պաշտոնում հիշյալ գոյականները հանդես են գալիս հիմնականում մի դերանվանական կամ որևէ լրացման հետ: Օրինակ՝ Հեռվում երևաց մի (գեղեցիկ) տուն: Գեղեցիկ տուն են կառուցել: Հեռվում երկվացողը տուն է: Նա վերադարձավ տուն: Տեղի պարագայի պաշտոնը հիշյալ գոյականները կատարում են շարժում ցույց տվող բայերի պահանջով, ինչպես՝ տուն գնալ, փախալ մտնել, երկինք պանալ և այլն:

Մանր.— Հիշյալ գոյականների հոգնակի անորոշի ձևերը տեղի պարագայի պաշտոն չեն կարող կատարել:

ը) Տեղի հատուկ անունների անորոշ առման ուղղականի ձևերը կարող են ունենալ երեք համանուն կիրառություն՝ տեղի պարագայի, ստորոգելիական վերադրի և որոշչի (վերջին երկու դեպքում սահմանափակ կիրառությամբ): Օրինակ՝ Նա մեկնեց Երևան: Հայաստանի մայրաքաղաքի անունը Երևան է: Երևան քաղաքում սկսվել է մետրոյի շինարարությունը:

թ) Չափ և կշիռ ցույց տվող գոյականները՝ մետր, կիլոմետր, հեկ-

տար, Բառակուսի մետր, կիլոգրամ, գրամ, տոննա, ռուբլի, կոպեկ և այլն, անորոշ առման եզակի ուղղականի ձևով նախադասության անդամ են դառնում թվականով և դերանվամբ արտահայտված որևէ լրացման հետ՝ վերջինիս հետ կազմելով կայուն բառակապակցություն: Նրանք ունենում են երեք համանուն կիրառություն՝ որոշչի, ստորոգելիական վերագրի և չափի պարագայի. օրինակներ՝

Հինգ կիլոմետր տարածություն կտրեց: Մեր անցած ճանապարհը հինգ կիլոմետր էր: Անցանք հինգ կիլոմետր:

Գնեցի երկու կիլոգրամ խնձոր: Իմ դնած խնձորը երկու կիլոգրամ էր: Խնձորը կշռեց երկու կիլոգրամ:

Ամանի մեջ կար հինգ լիտր կաթ: Ամանի տարողությունը հինգ լիտր էր: Գնեցի միայն հինգ լիտր:

Նույնպիսի համանունական շարք կարող են կազմել նաև մի շարք՝ որոշակի ծավալ ունեցող առարկա ցույց տվող գոյականներ: (բաժակ, աման, գավաթ, դուլ, մեքենա, վագոն և այլն): Սակայն, ի տարբերություն նախորդների, սրանք կարող են գործառել նաև որպես ենթակա և ուղիղ խնդիր. այսպես՝

Երկու բաժակ չուր խմեց: Զուրը ուղիղ երկու բաժակ էր: Զրից երկու բաժակ խմեցի: Սեղանին դրված էր երկու բաժակ: Գնեցի երկու բաժակ:

Ստացան մեկ վագոն ածուխ: Ածուխը ընդամենը մեկ վագոն էր: Ուտացված ածուխից մեկ վագոն տվեցին գործարանին: Մեկ վագոն անջատվեց գնացքից: Թրվա ընթացքում վերանորոգեցին ընդամենը մեկ վագոն:

Ինչպես երևում է բերված օրինակներից, հիշյալ կապակցությունները ենթակալի և ուղիղ խնդրի պաշտոններում ևս ունեն չափի իմաստային երանդ:

2. Անձ ցույց տվող գոյականների անորոշ առման ուղղականի ձևվերի համար, ի տարբերություն նախորդների, ընդհանրական են հիմնականում երկու կիրառությունը՝ ենթակալի և ստորոգելիական վերագրի: Ըստ որում ենթակալի պաշտոնում նրանք սովորաբար ունենում են որևէ լրացում կամ մի անորոշ հոգը, օրինակ՝ Հեռվում կանգնած էր մի աղջիկ: Հեռվում կանգնածը (մի) աղջիկ էր: Այդպիսի մասնագետ միշտ չի հանգիպում: Նա (հենց այդպիսի) մասնագետ էր: Ուղիղ խնդրի պաշտոն այս ձևերը կատարում են սակավ, երբ գործածվում են իրի առումով, ինչպես՝ հրավիրեցին մասնագետ: Բժիշկ կանչեցին: Մի մարդ տեսա:

Անձնաւորներին անորոշ ուղղականի ձևը կարող է հանդես դալ եր-

կու համանուն կիրառությամբ՝ ա) որպէս կոշում, զբաղմունք, ազգակցական կապ ցույց տվող գոյականների որոշիչ լրացում և բ) որպէս ստորոգելիական վերագիր. այսպէս՝ Սիրաւնուշ մորաբույրը աշխատում է դործարանում: Նրա մորաբորոջ անունը Սիրաւնուշ է: Սարոյան եղբայրները տարբեր համոզմունքներ ունեն: Նրանց ազգանունը Սարոյան է:

Նուշնպիսի կիրառություն կարող են ունենալ նաև զբաղմունք, պաշտոն, մասնագիտություն ցույց տվող գոյականների անորոշ ուղղականի եղակի, նաև հոգնակի ձևերը. օրինակ՝ Խմեմէն Վաբդանյանը լավ մասնագետ է: Վարդանյանը ինժեներ է: Գեներալ Մարտիրոսյանի գլխավորությամբ...: Նա գեներալ դարձավ: Բժիշկներ Դավիթը և Սուբէնը կատարեցին ծանր վիրահատություն: Նրանք բժիշկներ են: Որոշչային կիրառությամբ սրանք լրացում են սովորաբար հատուկ անունների, երբեմն նաև՝ անձ ցույց տվող գոյականների: Վերջին դեպքում լրացւոր ունենում է անձնական դերանվամբ կամ հատուկ անվամբ (անձանվամբ) արտահայտված հատկացուցիչ լրացում ևս, որը, ըստ ժամանակակից հայերենի շարահաստության կանոնների, զրվում է բրոշչից առաջ. օրինակ՝ Նրա ինժեներ եղբայրը, Սուրենի տնային տնտեսուհի մայրը, հաշվապահ հայրը և այլն:

Անձնանունների, ինչպէս նաև անձնավորված իր ցույց տվող գոյականների անորոշ ուղղականի ձևը ունի մեկ համանուն կիրառություն ևս. դա որպէս կոշական հանդես գալն է: Սակայն այս դեպքում համանունությունը մասնակի է, որովհետև կոշականը տարբերվում է ուղղականի մյուս կիրառություններից ուժեղ շեշտվածությամբ (հմտ. «Սուրեն, շուտ արի» և «Նրա անունը Սուրեն է»):

Գրեթե բոլոր իր և անձ ցույց տվող գոյականների անորոշի ուղղական հոլովածները լրացման հետ կամ առանձին կարող են հանդես գալ որպէս անվանական միակազմ նախադասություններ՝ ավելացնելով համանունական շարքերը մեկ անդամով ևս. օրինակ՝ «Նրան: Աստաֆյան փողոց»: «Ամառ: Շոգ օր»: «Իրարանցում»:

Նվ, վերջապէս, վերը թվարկված բոլոր շարքերին համանուն պիտի համարել վերնագրային ուղղականը, երբ գոյականների անորոշի ուղղականը, առանձին կամ որպէս բառակապակցության գերադաս անդամ, հանդես է գալիս որպէս ստեղծագործության վերնագիր. օրինակ՝ «Մի կյանքի պատմություն», «Հանդիպում էլբալի վրա», «Կրակ», «Զման գիշեր», «Պայքար» և այլն:

Դոյականի ուղղական հոլովի որոշյալ առման գործառական առանձնահատկություններ և համանունություններ.— ա. Իր ցույց տվող գոյա-

կանների ուղղականի եղակի և հոգնակի որոշյալ առման ձևերը նախա-
դասության մեջ ունեն հիմնականում երեք կիրառություն՝ ենթակայի,
ուղիղ խնդրի և ստորոգելիական վերադրի: Օրինակ՝ Մատիարը գրված էր
սեղանին: Ես վերցրի մատիար: Դա ընկերոջս մատիարն էր: Գրեք շքեղ
կազմ ունեին: Այդ գրեքը ևս գնել էի գրախանութից: Դրանք որդուս
համար գնված գրեքն էին:

Ստորոգելիական վերադրի պաշտոնում, է հանգույցից առաջ, ինչ-
պես նաև այն դեպքերում, երբ գոյականին հաջորդում է ձայնավորով
սկսվող բառ, գործածվում է և որոշիչ հոգը, որի հետևանքով բառաձևե-
րը ունենում են որոշակի ձևային տարբերություններ, այսինքն՝ համա-
նունությունը չեղոթանում է (հմմտ. Գիրքը գրված է սեղանին: Դա իմ
գիրքն է): Քանի որ ձայնավորով վերջացող բոլոր գոյականները ստա-
նում են և հոգ, ոչ մի դիրքում դրանք ձևային տարբերություն չեն
ունենում:

բ. Ժամանակ ցույց տվող գոյականներից առավուտ, գիշեր, ցերեկ,
ամառ, ձմեռ (խոսակցական լեզվում՝ նաև աշուն, գարուն) բառերի
եղակի և հոգնակի որոշյալ առման ձևերը գործառու են նաև որպես ժա-
մանակի պարադաներ (հոգնակի ձևերը արտահայտում են պարբերա-
բար տվյալ ժամանակամիջոցում կատարվող գործողություն). օրինակ՝
Յերեկ(ներ)ը բնում է, իսկ գիշեր(ներ)ը աշխատում: Առավուտները միշտ
մարդանք է անում: Չմեռը զնալու է Մոսկվա: Ամառը լավ հանգստա-
ցանք և այլն: Օր, ամիս և շաբաթ բառերը որոշյալ առմամբ ժամանակի
պարադայի պաշտոն կարող են կատարել միայն որևէ լրացման հետ
կամ ժամանակ ու չափ ցույց տվող այլ բառերի հարադրությամբ. օրի-
նակ՝ Հաջորդ օրը գնաց: Օրը հինգ ժամ աշխատում է: Ամիսը հինգ օր
բացակայում է: Շաբաթը երկու անգամ է գալիս աշխատանքի: Ամբողջ
շաբաթը աշխատում էի: Ամբողջ օրը բնում է և այլն:

Ժամանակ ցույց տվող վերորերյալ գոյականների որոշյալ առման
ձևերը կարող են գործառու նաև որպես ենթակա և ուղիղ խնդիր՝ կազ-
մելով համանունական եռանդամ շարք (ստորոգելիական վերադրի պաշ-
տոնով այս ձևերը սովորաբար հանդես չեն գալիս): Ահա մեկ օրինակ.

Գեղեցիկ է ձմեռը (ենթակա):

Սիրում եմ ձմեռը (ուղիղ խնդիր):

Մոսկվա զնալու եմ ձմեռը (ժամանակի պարադա):

դ. Տեղ ցույց տվող գոյականների ուղիղ ձևերը տեղի պարադայի
պաշտոն են կատարում սովորաբար անորոշ առմամբ և եզակի ձևով

(տե՛ս նախորդ ենթագլուխը): Սակայն առանձին դեպքերում տեղի պարագայի պաշտոն կարող են կատարել նաև որոշյալ առման եղանակի կամ հոգնակի ձևերը (առանձին կամ որևէ լրացման հետ), օրինակ՝ Ծուխը լցվեց սենյակը: Այցեկեցին բաղաբի բոլոր տեսարժան վայրերը: Վերադարձան իրենց տները: Ծրջեց ամբողջ երկիրը և այլն:

Այս ձևերը ևս կազմում են համանունությունների համակարգը, քանի որ գործառում են նաև որպես ենթակա և ուղիղ խնդիր: Այսպես՝ Սենյակը կահավորված է գեղեցիկ (ենթակա):

Նրանք կահավորեցին սենյակը (ուղիղ խնդիր):

Ծուխը լցվեց սենյակը (տեղի պարագա):

Ծանոթ. Քանի որ ե՛ր ուղիղ խնդիրը, ե՛ր տեղի պարագան դրվում են բալի պահանջով, լրացնում են բալին, երբեմն ներգործական սեռի բալի մոտ դրված որոշյալ առումով գոյականի ուղղականը կարող է ստանալ կրկնակի մեկնաբանություն՝ ուղիղ խնդրի և տեղի պարագայի՝, այսպես՝

լցնել բաժակը . . . տեղի պարագա (ջուրը լցնել բաժակը)

. . . ուղիղ խնդիր (ջրով լցնել բաժակը)

դնել պալյուսակը . . . տեղի պարագա (մատիտը դնել պալյուսակը)

. . . ուղիղ խնդիր (պալյուսակը դնել սեղանին)

Իհարկե, խոսքի մեջ այսպիսի երկվությունը սովորաբար վերանում է: Հիշյալ բառերը տեղի պարագայի պաշտոն կատարում են այն դեպքում, երբ ներգործական սեռի բալերը ունեն այլ ուղիղ խնդիր (Համառ. ջուրը լցնել բաժակը, մատիտը դնել պալյուսակը), բայց որում ուղիղ խնդիրը որպես կանոն դրվում է բալից առաջ, իսկ տեղի պարագան՝ բալից կամ ուղիղ խնդրից հետո: Երբ ներգործական սեռի բալը չունի այլ ուղիղ խնդիր, նրա մոտ դրված գոյականի ուղիղ ձևը ընկալվում է որպես այդպիսին (Համառ. ջրով լցնել բաժակը, պալյուսակը դնել սեղանին):

Գ. Անձ ցույց տվող հատուկ և հասարակ գոյականների ուղղականի որոշյալ առման ձևերը անորոշների համեմատությամբ ունեն կիրառական սահմանափակություն: Նրանց ամենատարածված գործառությունը ենթակայի պաշտոնն է, ապա՝ ստորոգելիական վերադրի. լրացումների հետ միասին կարող են հանդես գալ նաև որպես ծավալուն բացահայտիչներ: Համառ. Ուսանողը եկավ: Աշտուր մեր լավագույն ուսանողն է:

8 Համառ. Վ. Քոսյան, Ժամանակակից հայերենի բառակապակցությունները, 1975, էջ 275:

Աշոտը՝ մեր լավագույն: ուսանողը, գնաց Մոսկվա զեկուցում կարգալու: Որոշչի և ուղիղ խնդրի պաշտոն սրանք, որպես կանոն, չեն կատարում:

Այս բառաձևերը ձևով լրիվ նույնական են միայն ենթակայի և բացահայտչի պաշտոնում: Ստորոգելիական վերադրի պաշտոնում սրանք ևս մեծ մասամբ ստանում են ն, այդ պատճառով ձևով տարբերվում են նախորդներից: Լիակատար համանունություն այս երեք պաշտոններում լինում է միայն այն անունների համար, որոնք վերջանում են ձայնավորով և բնականաբար ստանում են ն որոշիչ հոգ (հմմտ. Ուրդին եկավ: Նա իմ ուրդին է: Աշոտը՝ իմ ուրդին, լավ է սովորում): Ըստ այդմ համանունական շարքը այս դեպքում կարող է լինել երկանդամ (մեծ մասամբ) և եռանդամ (ձայնավորով վերջացող գոյականների համար):

2. Սեռական-տրական հոլովաձևով գրված գոյականների գործառական համանունությունը

Գոյականների սեռական-տրական հոլովաձևը ժամանակակից հայերենում կարող է հանդես գալ երկու դիրքով՝ 1) զուգորդվել գոյականի և 2) զուգորդվել բայի: Այս հոլովաձևն ունի այն առանձնահատկությունը, որ գոյականի լրացման դիրքում որոշիչ հոգ չի ընդունում, իսկ բային լրացնելիս կարող է ընդունել որոշիչ հոգ (մեծ մասամբ հենց որոշիչ հոգով է գործառում, ունենում է որոշյալ առում)⁹: Բնականաբար այս հոլովաձևը ևս անորոշ ու որոշյալ առումների դեպքերում ունի գործառական տարբեր առանձնահատկություններ և համանունական տարբեր շարքեր:

Ա) Սեռական-տրական հոլովաձևի անորոշ առման գործառական առանձնահատկությունները և համանունությունը.— Սեռական-տրական անորոշ հոլովաձևի հիմնական կիրառությունը գոյականական անդամի լրացում լինելն է (ժամանակակից հայերենում երկու առարկաների միջև եղած կապին հարաբերությունները վերացարկվում և արտահայտվում են հիմնականում այս հոլովաձևի միջոցով): Այն արտահայտում է ամենաբազմազան իմաստային հարաբերություններ՝ վերաբերության, սերման, մասի—ամբողջի, տեղային, ժամանակային, չափի, հատկացման և այլն¹⁰: Այդ հարաբերությունների մեծ մասը խմբավորվում է որպես պատկանելության ընդհանուր իմաստային հարաբերություն և դիտվում հատկացուցչի իմաստային տարբերակներ, իսկ մի մասը՝ որպես

⁹ Այս առանձնահատկության հիման վրա էլ հենց է. Աղայանը տարբերակում է սեռական և տրական հոլովաձևերը. տե՛ս է. Աղայան, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, 1967, էջ 219:

¹⁰ Տե՛ս Վ. Առաքելյան, նշված աշխ. և Վ. Քոսյան, նշված աշխ.:

Հատկանշային-որակային հարաբերություն և դիտվում որոշչի իմաստային տարբերակներ: Երբ այդ հարաբերությունները դուրս չեն գալիս նախադասության նույն անդամի՝ հատկացուցչի կամ որոշչի սահմաններից, մենք չենք խոսում համանունության մասին, քանի որ դրանց միջև որակական տարբերություններ չեն դիտվում: Սակայն երբեմն նույն գոյականի սեռական-տրական ածորոշ հոլովաձևը գոյականի լրացման դիրքում, բայց խոսքային տարբեր իրադրության մեջ, կարող է ունենալ գործառական համանունական արժեք, այսինքն լինել և՛ հատկացուցիչ, և՛ որոշիչ: Այդ նույն բառաձևը կարող է լրացնել նաև բայի՝ կատարելով խնդրի կամ պարագայի պաշտոն:

Տարբեր իմաստային խմբերի պատկանող գոյականների հիշյալ ձևերը կարող են ունենալ համանունական տարբեր արժեքներ: Այսպես՝

ա) երբ գերադաս անդամը՝ լրացյալը իր ցույց տվող գոյական է, իսկ նրան լրացնող սեռական-տրականով դրված անդամը՝ անձ ցույց տվող գոյական, վերջինս սովորաբար արտահայտում է պատկանելության ընդհանուր հարաբերություն և կատարում հատկացուցչի պաշտոն (Անգլիի գիրքը, աշակերտի գրիչը, երեխայի խաղալիքը, աղջկա անունը և այլն): Սակայն երբեմն այս տիպի կապակցություններում սեռական-տրական հոլովաձևը արտահայտում է հատկացական-որակային հատկանշային հարաբերություն, որը որակապես տարբեր է պատկանելության հարաբերությունից և տվյալ բառաձևի գործառական համանունության դրսևվորում է. օրինակ՝ Այդ երիտասարդի հոռնոցը անսպառ է (հատկացուցիչ): Նա հանձնարարությունը կատարեց շատ արագ, երիտասարդի հոռնոցով (որոշիչ): Այն, որ այստեղ ունենք գործառական համանունություն, երևում է նաև նրանից, որ այս տիպի բառաձևերը մտնում են տարբեր համանշանական շարքերի մեջ: Այսպես՝

աշակերտի տետր տետր, որ պատկանում է տվյալ աշակերտին

աշակերտական տետր

երիտասարդի ավյան տվյալ երիտասարդի ավյանը

երիտասարդին հատուկ, երիտասարդական
ավյան

աղջկա քնքշություն տվյալ աղջկա քնքշությունը

աղջկան հատուկ, աղջկական քնքշություն

Այս բառաձևերը ունենում են նաև հետևյալ կիրառությունները.

1) Դրվելով ներգործական սեռի բայերի պահանջով՝ կատարում են

ուղիղ խնդրի պաշտոն՝ սովորաբար ստանալով մի անորոշ հոգը կամ թվական ու դերանուն լրացում (գոյականի լրացնելիս այս բառաձևերը մի անորոշ հոգ և լրացումների ստանում են միայն հատկացուցչի պաշտոնում). օրինակներ՝ Տեսա մի երիտասարդի: Մուրենը համակրում է մի գեղեցիկ աղջկա: Պարզևատրեցին հինգ աշակերտի:

2) Բայերի առանձին խմբերի բայիմաստի պահանջով, դարձյալ հիմնականում մի անորոշ հոգի կամ թվական ու անորոշ դերանուն լրացման հետ, կարող են կատարել հանգման խնդրի պաշտոն. օրինակ՝ Դիրքը հանձնեցի մի աղջկա: Մոտեցավ մի երիտասարդի:

3) Դերբայական դարձվածներում կարող է կատարել կեղմնակի ենթակայի պաշտոն. օրինակ՝ Տղայի երևալը վարձացրեց բոլորին:

Այսպիսով՝ համանունական այս շարքը կարող է լինել հինգանգամ՝ հատկացուցիչ, որոշիչ, ուղիղ խնդիր, հանգման խնդիր, կողմնակի ենթակա: Օրինակ՝

Երիտասարդի անունը չգիտեի (հատկացուցիչ):

Աշխատում էր երիտասարդի ավյունով (որոշիչ):

Տեսա մի երիտասարդի (ուղիղ խնդիր):

Դիրքը տվեցի մի անձանոթ երիտասարդի (հանգման խնդիր):

Երիտասարդի հայտնվելը ուրախացրեց բոլորին (կողմնակի ենթակա):

բ) Տեղ ցույց տվող հատուկ և հասարակ գոյականների սեռական-տրական անորոշ հոլովաձևերն ունեն կիրառական հետևյալ առանձնահատկությունները.

1) Ցույց են տալիս պատկանելության: Ընդհանուր հարաբերություն՝ կատարելով հատկացուցչի պաշտոն. օրինակ՝ Քաղաքի փողոցները մաքուր էին, Երևանի բնակչությունը շուտով կհասնի մեկ միլիոնի:

2) Կարող են ցույց տալ տեղային-տարածային՝ տվյալ տեղին հատուկ լինելու, տվյալ տեղում գտնվելու, տվյալ տեղի համար հատկացված լինելու որակալիճ հարաբերություններ և կատարել որոշչի պաշտոն, օրինակ՝ ծովի (= ծովային) կենդանի, հյուսիսի (= հյուսիսային) քամի, դաշտի (= դաշտային) ծաղիկ, գյուղի (= դեպի գյուղ տանող, գյուղական) ճանապարհ, Մոսկվայի (= դեպի Մոսկվա գնացող, Մոսկվայից եկող) գնացք և այլն: Որոշչային այս կիրառության հիման վրա առաջացել են առարկաների, երևույթների մի շարք բաղադրյալ անվանումներ, ինչպես՝ սեղանի գիրք, պատի ժամացույց, քնի ժամացույց, պատի բերք և այլն:

3) Բայտկան գերադաս անդամի պահանջով այս բառերի սեռական-տրական անորոշ հոլովածներ կարող է կատարել միայն հանգման խնդրի պաշտոն՝ տեղի պարագայի իմաստային երանգով: Օրինակ՝ Նրանք հասան մի քանգված պատի: Տեղ ցույց տվող հատուկ անունների հիշյալ ձևերը այդպիսի կիրառություն չունեն: Հասարակ անունների այս կիրառությունը ևս սահմանափակ է:

Այսպիսով՝ վերոբերյալ բառաձևերի գործառական համանունական շարքը կարող է լինել երկանգամ (հատուկ անունների համար) և եռանգամ (հասարակ անունների համար). Այսպես՝

Երևանի կանաչապտման հարցը հուզում է բոլորին (հատկացուցիչ):
Երևանի գիշերները կապուտակ... (որոշիչ):

Սարի լանջին կար մի գյուղ (հատկացուցիչ):
Նա քաղել էր գույնզգույն սարի ծաղիկներ (որոշիչ):

Տուրիստները հասան մի սարի (հանգման խնդիր՝ տեղի իմաստային երանգով):

գ) Ժամանակ ցույց տվող գոյականների սեռական-տրական անորոշ հոլովածները, լրացնելով գոյականական անդամի, կատարում են՝

1) հատկացուցչի պաշտոն՝ ցույց տալով հիմնականում մասի-ամբողջի հարաբերություն. օրինակ՝ Չմռան մի գիշեր կար մի հարսանիք: Տարվա բոլոր ամիսներին դբաղված է, աշխատում է: Օրվա կեսը պարպ-սարպպ թրև է գալիս: 2) որոշչի պաշտոն՝ ցույց տալով այն ժամանակամիջոցը, որի ընթացքում երևան է գալիս գոյական գերադաս անգամով արտահայտված առարկան կամ երեույթը: Այսպիսի կապակցությունները կարող են ունենալ նաև ընդհանրական նշանակություն՝ ցույց տալով ընդհանրապես տվյալ ժամանակին հատուկ՝ բնորոշ առարկա՝ երեւոյթ. այսպես՝

գիշերվա խավարը . . . տվյալ գիշերը եղած խավարը
գիշերվան հատուկ խավարը

ձմռան ցրտերը . . . տվյալ ձմռանը եղած ցրտերը
ձմռանը հատուկ ցրտերը

ամռան չոգը . . . տվյալ ամռանը եղած չոգը
ամռանը հատուկ չոգը

գարնան կանաչություն . . . տվյալ գարնանը երևան եկած կանաչությունը
գարնանը հատուկ կանաչությունը

Ժամանակակից հարաբերություններ ավելի որոշակի է դառնում, երբ ժամանակ ցույց տվող բառը իր հերթին ունենում է լրացում (հմմտ. անցյալ գիշերվա բամին, այս ձմռան ցուրտը և այլն):

Նույնպիսի երկիմաստություն են ունենում ժամանակային-հատկացական հարաբերությունն արտահայտող բառակապակցությունները, երբ ժամանակ ցույց տվող գոյականը գերազաս անդամ է. այսպես՝

հանգստի ժամ՝ ժամ, երբ հանգիստ է
ժամ, որ հատկացված է հանգստի

ճաշի ժամ՝ ժամ, երբ ճաշում են
ժամ, որ հատկացված է ճաշելու

լսողության բույս՝ բույս, երբ լսում են
բույս, որ հատկացվել է լսելուն

աշխատանքի օր՝ օր, երբ աշխատում են
օր, որ հատկացված է աշխատանքի

Բերված բոլոր դեպքերում առկա է որոշիչ-որոշյալի շարահյուսական հարաբերություն:

Ժամանակ ցույց տվող բառերի այս հոլովածներ բացի լրացում սովորաբար չի լինում, միայն առանձին դեպքերում կարող է լինել դերբայական դարձվածի կողմնակի ենթական. օրինակ՝ Գիշերվա վրա հասնելուն պես (=երբ գիշերը վրա հասավ) ամեն ինչ լռեց: Համանունական այս շարքը հիմնականում լինում է երկանդամ, երբեմն նաև եռանդամ: Այսպես՝

Ամառվա երկրորդ կեսին սկսեցին ուժեղ շոգերը (հատկացույիչ):

Ամառվա արձակուրդներին զնաց Մոսկվա (որոշիչ):

Այնքան զբաղված էինք, որ չզգացինք ամառվա վերջանալը (կոդմ-նակի ենթական):

դ) Իր ցույց տվող մի շարք գոյականների սեռական-տրական անորոշ հոլովածներ շարժում ցույց տվող բացերի պահանջով կարող է դործառել նաև որպես նպատակի պարագա. օրինակ՝ զնալ ջրի, հացի, մրգի, կարագի, հաճախի, աշխատանքի, հրավիրել նաշի և այլն:

Այս գոյականները կարող են ունենալ գործառական համանունության երկանդամ, եռանդամ, առանձին դեպքերում նաև բառանդամ շարք. այսպես՝

Նա վաստակել է հանգստի իրավունք (հատկացուցիչ):

Վաղը հանգստի օր է (որոշիչ):

Նա գնաց պատվավոր հանգստի (նսպատակի պարագա):

Ջրի դույնը պղտորվել էր (հատկացուցիչ):

Ջրի բաժակը ջարդվեց (որոշիչ):

Անահիտը գնաց ջրի (նսպատակի պարագա):

Ջրի սակավանալը բացասաբար ազդեց բուսականության վրա (կողմնակի ենթակա):

Ե) Նյութի անվանում հանդիսացող մի շարք գոյականների հիշյալ հոլովաձևերը վերածման-փոխարկման իմաստ ունեցող բայերի պահանջով կարող են կատարել նաև հանգման խնդրի պաշտոն. օրինակ՝ Հացը բաժանեց երկու մասի: Ջուրը վերածվեց սառույցի: Ջուրը փոխարկվեց գոլորշու: Երազը փոխվեց իրականության և այլն: Ընդգծված բառաձևերը սովորաբար ունենում են համանունական երկու, երբեմն նաև երեք արժեք, կատարում են հատկացուցչի, հանգման խնդրի, նաև կողմնակի ենթակայի պաշտոններ: Հմմտ.

Սառույցի կտորը հալվեց (հատկացուցիչ):

Ջուրը փոխվեց սառույցի (հանգման խնդիր):

Սառույցի փոխարկվելը ջրի տեղեց մեկ ժամ (կողմնակի ենթակա):

Պատկերված էր իրականության մի հատված (հատկացուցիչ):

Երազը փոխվեց իրականության (հանգման խնդիր):

դ) Չափի, կշռի միավոր հանդիսացող մի շարք գոյականների ածորոշ հոլովաձևերը լրացման հետ (մեծ մասամբ թվական լրացման) կարող են կատարել հատկացուցչի, որոշչի և չափի պարագայի պաշտոններ՝ կազմելով համանունական երկանդամ կամ եռանդամ շարքեր. այսպես՝

Հինգ ուրբու արժեքը չդիտի (հատկացուցիչ):

Գնեց հինգ ուրբու խնձոր (որոշիչ):

Այդ խնձորից գնեց ընդամենը հինգ ուրբու (չափի պարագա):

Ետևո կիլոգրամի արժեքը վճարեց (հատկացուցիչ):

Նրա կշիռը հասավ յոթանասուն կիլոգրամի (չափի պարագա):

Լ) Հատուկ անձնանունների սեռական-տրական անորոշ հոլովաձևը կարող է ունենալ երեք համանուն գործառություն՝ հատկացուցչի, որոշչի և կողմնակի ենթակայի: Որոշչի պաշտոն սրանք ունենում են հիմնականում այն դեպքում, երբ տեղի անվանում են: Ահա օրինակներ՝

Լեւինի երկերի հայերեն հրատարակութիւնը (հատկացուցիչ)։

Լեւինի հրապարակ (որոշիչ)։

Լեւինի ժամանելը Պետերբուրգ (կողմնակի ենթակա)։

Հատուկ անձնանունների հիշյալ բառաձևերը բայական լրացում են լինում սովորաբար որոշյալ առմամբ։ Միայն առանձին դեպքերում նրանք անորոշ հոգի կամ անորոշ դերանվան հետ կարող են կատարել նաև ուղիղ խնդրի և հանգման խնդրի պաշտոններ. օրինակ՝ նա համակրում է ինչ-որ Գրիգորի (ուղիղ խնդիր)։ Նրա հանձնարարութեամբ գիրքը տվեցի ինչ-որ Գրիգորի (հանգման խնդիր)։

Անձնանունների այս ձևերը որոշչի պաշտոն սովորաբար չեն կատարում։

բ) Մի շարք հասարակ գոյականների այս հոլովաձևը, բացի հատկացուցչի պաշտոնից, կարող է կատարել նաև որոշչի պաշտոն՝ ցույց տալով նպատակի իմաստային երանդով հատկացական-որակային հարաբերութիւն, ինչպես՝ քատրոնի շենք, կարի աման, գինու քաւ, քէլի բաժակ, լվացփի տաշտ, ծիծաղի երեկո, շախմատի տուն և այլն։ Այսպիսի կապակցութիւնների մեծ մասը ալթմ բնկալվում է իբրև առարկայի բարդ անվանում։ Սրանք կազմում են համանունական հիմնականում երկանդամ, երբեմն նաև եռանդամ շարք. հմմտ.

Նրա ծիծաղի ձայնը լսվում է հեռվից (հատկացուցիչ)։

Զբոսաշրջում կա ծիծաղի սենյակ (որոշիչ)։

Նրա ծիծաղի վերածվելը լացի զարմացրեց բոլորին (կողմնակի ենթակա)։

թ) Տեսակ, որակ, չափ, աստիճան, տարիք, հասակ, ինչպես նաև հատկանիշի անվանում հանդիսացող գոյականների սեռական-տրական անորոշ հոլովաձևերը որևէ լրացման հետ կարող են կատարել որոշչի, ստորոգելիական վերադրի, երբեմն նաև հանգման խնդրի պաշտոններ՝ կազմելով համանունական երկանդամ կամ եռանդամ շարքեր։ Այսպես՝

Դա միջին մեծուքան գիրք էր (որոշիչ)։

Գիրքը միջին մեծուքան էր (ստորոգելիական վերադիր)։

Ծավալը հասալ միջին մեծուքան (հանգման խնդիր)։

Գործարանը թողարկում է բարձր որակի արտադրանք (որոշիչ)։

Գործարանի արտադրանքը բարձր որակի է (ստորոգելիական վերադիր)։

Արտադրանքը հասցրին բարձր որակի (հանգման խնդիր)։

ոսկայն կարող է լրացնել նաև ածականի, ինչպես և գոյականի, երբ վերջինս հարաբերակցում է բայի կամ ածականի (հմմտ. մասնակցել պատե-
րագմին—մասնակցություն պատերագմին—պատերագմին մասնակից.
նման բնկերոջը—նմանվել բնկերոջը—նմանություն բնկերոջը): Այս հո-
լովածներ, ըստ գոյականի և լրացվող բայի իմաստային առանձնահատկու-
թյունների, կարող է կատարել տարբեր պաշտոններ և կազմել տարբեր
ամանունական շարքեր:

ա. Անձ ցույց տվող գոյականների այս հոլովածներ կատարում է հիմ-
նականում երկու պաշտոն՝ ուղիղ խնդրի և հանգման խնդրի՝ կազմելով
ամանունական երկանդամ շարք: Ուղիղ խնդրի պաշտոն կատարում է
ներկործական և պատճառական բայերի սեռի պահանջով. օրինակ՝
տեսնել բնկերոջը, սիրել մորը, ատել թշնամուն, կերակրել երեխային,
սովորեցնել աշակերտին և այլն:

Հանգման խնդրի պաշտոն կատարում է ասացական, հանձնման, մա-
տուցման, ուղղվածության իմաստ ունեցող և մի շարք այլ բայերի իմաս-
տային ծավալման հետևանքով. օրինակ՝ գիրքը հանձնել տիրոջը, մոտե-
նալ Անահիտին, լուրը հաղորդել բնկերոջը, պատմել բնկերներին, սիրա-
հարվել Աստղիկին, հարցնել Գրիգորին, բողոքել դրեկապտին և այլն:

Անձ ցույց տվող առանձին գոյականների այս հոլովածներ կատա-
րում է նաև տեղի պարագայի պաշտոն. օրինակ՝ Արի գնա՞նք կապույտ
բերդի թաղավորի աղջկան (= աղջկա մոտ) (ՀԹ): էջմիածնում հյուր
էի Կոմիտասին (= Կոմիտասի մոտ) (Իս.):

բ. Իր ցույց տվող գոյականների սեռական-տրական հոլովի որոշյալ
առումը ուղիղ խնդրի պաշտոն չի կատարում: Բացառություն են կազ-
մում առանձին դեպքեր, երբ գոյականը գործածվում է անձի առումով
(հմմտ. հավատաց բամին, կարծես,— ու շարացավ պոկեց ծաղկին
(ՀՇ): Գու սպանեցիր իմ նժուլգին (ՐՄ): Իր ցույց տվող գոյականների
այս ձևերը նախորդների համեմատությամբ ունեն կիրառական սահմա-
նափակություն: Սրանք կատարում են հիմնականում հանգման խնդրի
պաշտոն: Սակայն, ըստ իրենց իմաստային առանձնահատկություննե-
րի, ինչպես նաև խնդրառու բայի իմաստի, մի մասը կարող է կատարել
նաև այլ պաշտոններ և կազմել համանունական տարբեր շարքեր: Այս-
պես՝ ժամանակ ցույց տվող գոյականները կարող են լինել հանգման
խնդրի և ժամանակի պարագա՝ կազմելով համանունական երկանդամ
շարք. օրինակ՝

Ամռանը մնացել է մեկ ամիս (հանգման խնդիր):

Ամռանը գնալու եմ ծովափ (ժամանակի պարագա):

Եղանակը մոտենում է ձմռանը (հանգման խնդիր):

Չմռանը օրերը խիստ կարճ են (ժամանակի պարագա):

Տարածային որոշակի ծավալ ունեցող, ինչպես նաև տեղ ցույց տվող գոյականների այս հոլովածի որոշյալ առման ձևը կարող է կատարել հանգման խնդրի և տեղի պարագայի պաշտոններ՝ կազմելով գործառական համանունության երկանդամ շարք: Այսպես՝

Հայացքը հասել է սեղանին (հանգման խնդիր):

Գիրքը դրված է սեղանին (տեղի պարագա):

Նայում են ծառին (հանգման խնդիր):

Խիտը ծառին ծվլում է (տեղի պարագա):

Մեր բաղաբը իշ գեղեցկությամբ չի գիշում Մոսկվային (հանգման խնդիր):

Գնացքը մոտենում է Մոսկվային (հանգման տեղի պարագա):

Հազվադեպ իր ցույց տվող առանձին գոյականների սեռական-տրական որոշյալ հոլովածը կատարում է ներգործող խնդրի պաշտոն. օրինակ՝ Թռվված, կախարդված, տարված են երգին... (ՀԹ): Ինչպես իզուր խաբվել ես դու Սուտ խոսքերին չար աղվեսի (ՀԹ): Իհարկե, ընդգծված բառաձևերը կարող են կատարել նաև հանգման խնդրի պաշտոն. օրինակ՝ Այդ խոսքերին մենք վաղուց էինք սպասում: Լավ երգին ոչինչ չի հասնի:

2. Ի տարբերություն որոշիչ հոդով ձևերի, և և դ ստացական հոդ ունեցող սեռական-տրական հոլովածները ունեն գործառական այն առանձնահատկությունը, որ կարող են լրացնել նաև գոյականի: Ա և Կ հոդերը, զրվելով այս հոլովածի վրա, մասնավորում են տվյալ ձևի ցույց տված հարաբերությունները առաջին կամ երկրորդ դեմքի անձերի նկատմամբ, և այդ պատճառով սահմանափակվում է նրանց կիրառության շրջանակը (բնականաբար ավելի քիչ են հանդիպում, քան որոշիչ հոդով ձևերը):

Անձ ցույց տվող գոյականների այս ձևերը կարող են կազմել համանունական եռանդամ շարք. այսպես՝

Որդու (դ) անունը Աշոտ է (հատկացուցիչ):

Տեսա որդու (դ) (ուղիղ խնդիր):

Գիրքը տվեցի որդու (դ) (հանգման խնդիր):

Իր ցույց տվող գոյականների այս հոդերով ձևերի ամենատարածված կիրառությունը հատկացուցչի պաշտոնն է (գրքի տպագրությունը,

պաշտոնակիր գույներ, սպասումիս (դ) պահերը, մատիտիս (դ) ծայրը և այլն), ապա հանգման խնդրինը: Սրանք կարող են կատարել նաև տեղի պարագայի և ներգործող խնդրի (հանգման) պաշտոն՝ կազմելով համանունական երկանգամ կամ եռանգամ շարքեր: Այսպես՝

Դրֆիս (դ) էջերը պոկվել են (հատկացուցիչ):

Խնչ ևս ալդպես նայում գրֆիս (դ) (հանգման խնդիր):

Նլխիս (դ) մազերը սպիտակել են (հատկացուցիչ):

Այդ գլխաբեր հարմար չէ գլխիս (դ) (հանգման խնդիր):

Ջևուրը դրեց գլխիս (դ) (տեղի պարագա):

կամ՝ Խոսքերիս (դ) կեսը անկեղծ էր (հատկացուցիչ):

Խարվեց խոսքերիս (դ) (ներգործող խնդիր):

Հավատաց խոսքերիս (դ) (հանգման խնդիր):

Ժամանակի պարագայի պաշտոն այս ձևերը չեն կատարում: Խոսակցական լեզվում երբեմն հանդիպում են ավանա, ծմնանա ժամանակի պարագայի ձևերը, որոնց մեջ ա-ն ոչ թի ստացական հոդ է, ալլ ցուցական (= այս ամռանը, այս ձմռանը):

3. Բացառական ելույթով դրված գոյականների գործառական համաձայնությունը

Հայտնի է, որ բացառական հոլովի ընդհանուր անփոփոխական իմաստը անջատման հարաբերությունն արտահայտելն է. մի իմաստ, որ հիմնականում պահպանվում է նրա բոլոր կիրառություններում¹¹: Ասկայն նախադասության մեջ բացառական հոլովը կարող է ցույց տալ ամենատարբեր հարաբերություններ՝ կատարելով ամենաբազմազան պաշտոններ: Իհարկե, այն հիմնականում լրացնում է բայի և կատարում խնդրային ու պարագայական պաշտոններ: Խնդիրներից բացառական հոլովով կարող են դրվել անջատման, վերաբերության, ներգործող, սահմանափակման, մասամբ հանգման խնդիրները. մասնական ուղիղ խնդիրը: Պարագաներից բացառական հոլովով կարող են դրվել տեղի, ժամանակի, ձևի, պատճառի, հիմունքի պարագաները: Բացառական հոլովով դրված գոյականը կարող է լրացնել նաև գոյականի, լինել գոյականական բառակապակցության ստորադաս անդամ: Այս դեպքում

¹¹ Բացառական, ինչպես նաև մյուս հոլովների իմաստային և կիրառական առանձնահատկությունների բաժին մանրամասն տե՛ս Մ. Աբելյան, Հայոց լեզվի տեսություն, 1956, Վ. Առաքելյան, Ժամանակակից հայերենի հոլովների և հոլովական կապակցությունների իմաստային առումները, 1957, Վ. Քոսյան, Ժամանակակից հայերենի բառակապակցությունները, 1975:

այն կատարում է կա՛մ որոշի պաշտոն (նյութի բացառականը), կա՛մ գերադաս գոյական-բայանվան հետ կատարում է նախադասության մեկ անդամի պաշտոն. ավելի հաճախ ալոպիսի բառակապակցությունները ունենում են վերնադրային-անվանողական արժեք: Բացառական հոլովով է դրվում նաև մասնական ենթական, ինչպես նաև պատճառի իմաստային երանգ ունեցող ստորոգելիական վերադիրը: Համաձայնելով բացահայտյալին՝ բացառական հոլովով կարող է դրվել նաև բացահայտիչը: Ինչպես ցույց է տալիս սոսկ թվարկումը, այս հոլովն ունի գործառության շատ մեծ ոլորտ: Սակայն ոչ բոլոր գոյականների բացառական հոլովաձևերը կարող են կատարել թվարկված բոլոր պաշտոնները: Այստեղ գործառության սահմանափակություն են մտցնում մի կողմից գոյականների իմաստները, մյուս կողմից այն բառերի՝ բայերի և մասամբ գոյականների իմաստները, որոնց ստորագասվում է բացառականով դրված գոյականը (հայտնի է, որ գոյականը դրվում է բացառական հոլովով խնդրառու բառի իմաստի պահանջով): Ըամանակակից հայերենում հաճախ նույն գոյականի բացառական հոլովաձևը տարբեր բայերի պահանջով, տարբեր շարահյուսական դիրքերում կատարում է տարբեր պաշտոններ և ունենում է գործառական համանունական արժեք: Այս դեպքում ևս ալոպիսի համառոտությունը և դրականի՝ տարբեր պաշտոններ կատարելը պայմանավորված է տվյալ գոյականի և գերադաս բառի իմաստային առանձնահատկություններով:

Բացառական հոլովի ամենաբնորոշ և տարածված կիրառությունը անջատման խնդրի պաշտոնն է: Այս պաշտոնը կարող են կատարել զրեթե բոլոր գոյականները: Անջատման խնդրային հարաբերությունը կարող է կապված լինել ինչպես ֆիզիկական (պոկել, խլել, վերցնել), այնպես էլ վերացական (խուսափել, զգուշանալ, փրկել) գործողությունների հետ: Բոլոր դեպքերում ստորադաս՝ բացառական հոլովով դրված անդամը՝ անջատման խնդիրը ցույց է տալիս այն առարկան, որից անջատվում, հեռանում է գործողությունը: Եթե բայը ներգործական սեռի է, ապա բացառականով ստորադաս անդամը ցույց է տալիս այն առարկան, որից անջատվում, պոկվում, հեռանում է մեկ այլ առարկա կա՛մ տվյալ առարկայի մի մասը (վերջինս արտահայտվում է ուղիշ խնդրով). օրինակ՝¹² մանուկներին փրկել սովից, ժողովրդին ազատել սաբկությունից, էրեխային կտրել խաղից, լարը անջատել գծից, ծա-

¹² Տեղի խնայողության համար օրինակները բերվում են բառակապակցությունների ձևով. ընդգծված բառաձևերը նախադասության մեջ կատարում են անջատման խնդրի պաշտոն՝ անկախ գերադաս անդամի պաշտոնից:

դիկը պոկել Բվից, գառը չոկել հոտից: Երբ բացառական շուտով զըր-
վում է իր ցույց տվող թանձրացական գոյական, որը կարող է ունենալ
տեղային իմաստ, իսկ բայը ունենում է ֆիզիկական անջատման, հե-
ռացման իմաստ, անջատման խնդիրը ունենում է տեղի իմաստային
ներանդ և հաճախ կարող է ընկալվել թե՛ որպես անջատման խնդիր, թե՛
որպես տեղի պարագա, օրինակ՝ ծաղիկը պոկել Բվից, հողից հաց կու-
գել, փուշը հանել մատից և այլն: Հմմտ. նաև՝ գիրքը վերցնել սեղանից
և գիրքը վերցնել Անահիտից:

Խուսափել, խոսք տալ, փախչել, հեռանալ, դարձնել, զգուշանալ,
խոռովել, երես դարձնել, հրաժարվել, պաշապանել, վրկել, վրկալել և այլ
բայերի պահանջով անջատման խնդիր կարող են լինել թանձրացական
և վերացական գոյականները, իր և անձ ցույց տվող գոյականները. օրի-
նակ՝ փրկել վտանգից, ընամուց, հեռանալ ընկերոջից, շրջապատից,
խուսափել հանդիպումից, Գրիգորից, թաքցնել ընկերներից, կազմակեր-
պությունից, խորշել ստից, այդ մարդուց և այլն:

Անջատման խնդրային հարաբերությունը կարող է լինել ելակետա-
յին, այսինքն՝ բացառական շուտվածք կարող է ցույց տալ այն առար-
կան (իրը կամ անձը), որից, որպես ելակետից, սկսվում է զործողու-
թյունը. օրինակ՝ մեկից ժառանգություն ստանալ, ուշքի գալ բմրույու-
նից, արթնանալ քնից, իմանալ հարեանություն, լսել ուրիշներից և այլն:

Պահանջել, խնդրել, ակնկալել, բողոքել, սպասել, հուսալ և այլ
բայերի պահանջով այս իմաստով անջատման խնդիր կարող են լինել
հիմնականում անձ ցույց տվող կամ անձի առումով գործածված գոյա-
կանները. օրինակ՝ պահանջել ընկերոջից, աշխատողից, խնդրել հարե-
վանից, ակնկալել ընկերներից, սպասել եղբորից, բողոքել հարեանից,
սակայն նաև՝ ցրտից:

Առնել, վերցնել, ժառանգել, բերել, ստանալ, հասնել և այլ բայերի
պահանջով անջատման խնդիր կարող են լինել անձ ցույց տվող գոյա-
կանները. օրինակ՝ վերցնել Անահիտից, առնել բռնից, ժառանգել հո-
րից, լուր բերել մորից, պարգև ստանալ կառավարությունից, համակ
ստանալ բարեկամից և այլն: Երբ այս բայերի մոտ բացառական շուտ-
վածք զրվում է տեղ ցույց տվող գոյական, այն կատարում է ոչ թե ան-
ջատման խնդրի, այլ տեղի պարագայի պաշտոն: Հմմտ. նամակ ստա-
նալ Մոսկվայից, վերցնել սեղանից, բերել Թբիլիսիից, առնել խառու-
րից և այլն:

Մագման, սերման իմաստ ունեցող բայերի պահանջով անջատման
խնդիր կարող են լինել թե՛ անձ, թե՛ իր ցույց տվող գոյականները. օրի-

նակ՝ առաջանալ կապկից, գոյանալ Բաբերից, սերել նախնիներից, ծրնվել երկար մտորումներից, շտեղծվել խաչավորումից և այլն:

Հաճախ անջատման խնդիրը ցույց է տալիս այն առարկան կամ առարկաները, որից, իբրև նյութից, առաջանում, ստեղծվում է մի բան, կամ որից բաղադրված, բաղկացած է մի բան (նյութի, բաղկացույթյան բացառական)։ Օրինակ՝ կավից ժաման շինել, ալյուրից խմոր հունցել, ոսկուց մատանի պատրաստել, ջրից լիճ գոյանալ: Այսպիսի անջատման խնդիր լինում են սովորաբար իր ցույց տվող թանձրացական դոյականները:

Բացի ընդհանրական անջատման խնդրի պաշտոնից, տարբեր իմաստային խմբերի պատկանող զոյականների բացառական հոլովածները կարող են կատարել նաև նախադասության այլ անդամների պաշտոններ՝ կազմելով գործառական համանունական տարբեր շարքեր:

1. Նյութի անվանում հանդիսացող զոյականների բացառական հոլովածները կարող են կատարել հետևյալ պաշտոնները՝ կազմելով գործառական համանունական հինգանդամ կամ վեցանդամ շարքեր.

ա) անջատման խնդրի. ցույց են տալիս այն առարկան, որից որպես նյութից ստեղծվում, կերավում, բաղկանում է որևէ բան. օրինակ՝ նա ոսկուց զեղեցիկ մատանի պատրաստեց: Այդ արձանը մարմարից է շինված:

բ) որոշչի. ցույց է տալիս առարկայի ինչից պատրաստված՝ բաղկացած լինելը որպես որակային հատկանիշ. օրինակ՝ նա ոսկուց մատանի: ունի մարմարից արձան:

գ) ստորոգելիական վերադրի. ենթակային է վերադրում ինչ նյութից բաղկացած լինելը որպես հատկանիշ. օրինակ՝ Մատանին ոսկուց է: Արձանը մարմարից է:

դ) մասնական ուղիղ խնդրի. ցույց է տալիս գործողությունն անմիջական առարկայի մասնակի ընդգրկում. օրինակ՝ Այդ ոսկուց հարեցի: Մարմարից, փայտից ևս էլ ստացա, վերցրի:

ե) վերաբերության խնդրի. օրինակ՝ Ամբողջ օրը ոսկուց (մարմարից) են խոսում:

Հազվադեպ սրանք կարող են կատարել նաև մասնական ենթակայի և պատճառի պարագայի պաշտոններ. օրինակ՝ Այդ մարմարից չի ճարվում: Ինչ որ ղլխիդ գա, ոսկուց կգա: Այս զոյականների բացառական հոլովածները տեղի և ժամանակի պարագայի պաշտոն չեն կատարում:

2. Անձ ցույց տվող զոյականների բացառական հոլովածները կարող են հանդես գալ հետևյալ համանուն կիրառություններով.

ա) անջատման խնդրի. ցույց են տալիս այն անձը, որից հեռանում, անջատվում է որևէ բան, որից սկզբնավորվում, սկսվում, սորվում է որևէ բան. օրինակ՝ նա զոհ է աշակերտներից: Սերում է իշխաններից: Այդ բանը լսել եմ Աշոտից և այլն:

բ) ներգործող խնդրի. դրվելով կրավորական սեռի բայերի պաճանջով՝ ցույց են տալիս գործողություն կատարող առարկան. օրինակ՝ նա սիրված է աշակերտներից: Թագավորը սպանվեց իշխաններից:

գ) հանգման խնդրի. կառչել, կաշել բայերի պաճանջով հանգման խնդիրը ևրբեմն դրվում է ոչ թե տրական, այլ բացառական հոլովով. օրինակ՝ նա կպիլ է, կառչել է Աշոտից, պոկ չի գալիս: Կոխել է աշակերտներից, չգիտես ինչ է ուզում:

դ) վերաբերության խնդրի. օրինակ՝ Անընդհատ աշակերտներից (=աշակերտների մասին) է խոսում: Տեղեկություն տվեց Աշոտից (=Աշոտի մասին): Այլ պաշտոններ այս գոյականների բացառական հոլովածիք սովորաբար չի կատարում:

3. Տեղը ցույց տվող կամ տեղային իմաստ ունեցող գոյականների բացառական հոլովածիքը կարող են կատարել հետևյալ պաշտոնները՝ կազմելով համանունական հիմնականում հոանդամ շարք.

ա) անջատման խնդրի. օրինակ՝ Գյուղից չձանձրացա՛ր:

բ) տեղի պարագայի. ցույց են տալիս այն տեղը, որտեղից սկսվում է գործողությունը. օրինակ՝ Գյուղից արդեն վերադարձել է: Այսօր մեկնեց Երևանից:

գ) վերաբերության խնդրի. օրինակ՝ Հիշողություններ է պատմում գյուղից (=գյուղի մասին): Երևանից (=Երևանի մասին) ոչինչ չգիտեմ:

դ) ժամանակի պարագայի (հարվադեպ). ցույց է տալիս տվյալ տեղի հետ կապված ժամանակամիջոցը, որպես գործողության ժամանակ. օրինակ՝ Այդ սովորությունը մնացել է գյուղից (=գյուղում ապրած ժամանակից):

4. Հոգեկան զգացմունք, հոգեվիճակ ցույց տվող գոյականների (վախ, ամոք, կարոտ, վիշտ, սեր, ուրախություն, նախանձ, սով, ձանձրույթ և այլն) բացառական հոլովածիքը կազմում են համանունական քառանդամ շարք և կատարում են հետևյալ պաշտոնները:

ա) անջատման խնդրի. օրինակ՝ Նրա սիրույց (վախից, հուզմունքից) ոչինչ չմնաց:

բ) պատճառի պարագայի. օրինակ՝ Նա սիրույց (վախից, հուզմունքից) է այդպես խոսում:

գ) վերաբերության խնդրի. օրինակ՝ Անընդհատ սիրույց (վախից, հուզմունքից) է խոսում:

դ) ստորոգելիական վերադրի. օրինակ՝ նրա հուզմունքը սիրույց (վախից) է:

5. Մասի և ամբողջի հարաբերություն ենթադրող գոյականների հիմնականում հոգնակի բացառական հոլովածները կարող են կատարել հետևյալ պաշտոնները.

ա) անշատման խնդրի. օրինակ՝ նրա ստեղծագործություններից բոլորը մեծ բավականություն են ստանում: Ուսուցիչը զո՞ւ է աշակերտներից:

բ) ստորոգելիական վերադրի. օրինակ՝ Դա նրա լավագույն ստեղծագործություններից է: Աշուտը լավագույն աշակերտներից է:

գ) մասնական ենթակայի. օրինակ՝ Կատարվեցին նաև Բախի ստեղծագործություններից: Ներկա էին նաև նրա նախկին աշակերտներից:

դ) մասնական ուղիղ խնդրի. օրինակ՝ Նվագախումբը կատարեց Բախի ստեղծագործություններից:

ե) վերաբերության խնդրի. օրինակ՝ Խոսում էին նրա ստեղծագործություններից, աշակերտներից:

Այս դեպքում համանունական շարքը հիմնականում հինգանդամ է:

6. Ժամանակ ցույց տվող կամ ժամանակային իմաստ ունեցող գոյականների բացառական հոլովածները կարող են կատարել հիմնականում հետևյալ պաշտոնները.

ա) ժամանակի պարագայի՝ ժամանակային սկզբնավորման իմաստով. օրինակ՝ Գիշերվանից անձրև է գալիս: Անցյալ տարվանից նրան չեմ տեսել:

բ) չափի պարագայի՝ ժամանակային սահմանափակման իմաստով (երբ ժամանակ ցույց տվող գոյականը ունի թվական որոշիչ). օրինակ՝ Հինգ օրից աշխատանքը կավարտեմ: Նրկու ամսից կվերադառնա: Սրանք կարելի է համարել նաև ժամանակի պարագաներ՝ ժամանակային սահմանափակման, չափի իմաստային երանդով:

գ) անշատման խնդրի. Ես այս տարվանից (տարույց) գոհ եմ: Գիշերից (գիշերվանից) ոչինչ չմնաց:

դ) երբեմն նաև՝ վերաբերության խնդրի. օրինակ՝ Պատմում է անցած օրերից, մանկության օրերից:

Հետաքրքրական է այն երևույթը, որ ժամանակի պարագայի պաշտոնում այս բառերը սովորաբար ենթարկվում են վա հոլովման, որով

ընդգծվում է նրանց՝ ժամանակ ցույց տալու իմաստը (տարվափից, օրվանից, զիշերվանից, ամառվանից և այլն): Իսկ այլ պաշտոններում այս բառերը ենթարկվում են սովորաբար ի, ու կամ ան հոլովման: Այդ միջոցով բացառական հոլովածները ձևով տարբերակվում են, և նրանց համանունությունը չեզոքանում է (հմմտ. «Գիշերվանից անձրև է գալիս» և «Գիշերից բան չմնաց», «Այդ տարվանից նրան չեմ տեսնոյ» և «Երկու տարուց աշխատանքս կավարտեմ»):

Ժամանակային իմաստով զործածվող մի շարք գոյականներ՝ մանկություն, պատանեկություն, երիտասարդություն, արձակուրդ, բերականավ և այլն, կարող են հանդես գալ հետևյալ համանուն պաշտոններով.

ա) անջատման խնդրի. օրինակ՝ Ոչինչ չեմ հիշում իմ մանկությունից (պատանեկությունից...):

բ) ժամանակի պարադալի՝ Մանկությունից սիրել է կարգալը:

գ) վերաբերության խնդրի՝ Պատմում էր իր մանկությունից, երիտասարդությունից:

Այս համանունական շարքը սովորաբար եռանդամ է:

7. Մի շարք՝ հատկապես մասնագիտություն, զբաղմունք ցույց տվող գոյականների, ինչպես նաև ուտ, ձեռք բառերի բացառական հոլովածները կարող են կատարել նաև սահմանափակման խնդրի պաշտոն՝ կազմելով համանունական եռանդամ կամ երկանդամ շարք: Այսպես՝

ա) նա ուժեղ է մարեմատիկայից (սահմանափակման խնդիր):

բ) Գրիգորը սիրում է անվերջ խոսել մարեմատիկայից (վերաբերության խնդիր):

գ) նա վախենում է մարեմատիկայից (պատճառի պարագա):

ա) նա վիրավորվել է ոտից (զլխից) (սահմանափակման խնդիր):

բ) Ոտից (զլխից) արյուն է հոսում (տեղի պարագա):

Սահմանափակման նշանակությամբ բացառական հոլովածներ ավելի հաճախ զործառում է որպես ածականի լրացում, որի հետ միասին կատարում է բաղադրյալ որոշչի պաշտոն, օրինակ՝ Մարեմատիկայից ուժեղ աշակերտը հաջողությամբ հանձնեց քննությունը: Նույն ձևով նաև՝ ոտից թևի, ձեռքից ծանր և այլն:

Բացառական հոլովով զրված գոյականները կարող են լրացնել նաև գոյականի, լինել գոյականական բառակապակցության ստորադաս անդամ: Ըստ իրենց արտահայտած հարաբերությունների բնույթի և ըստ

գերադաս բառի բառակազմական առանձնահատկությունները՝ սրանք ունեն կիրառության տարբեր ոլորտներ:

Նյութի, բազկացության հարաբերությունն արտահայտող գոյականական բառակապակցությունները հիմնականում հանդես են գալիս որպես նախադասության առանձին անդամներ: Գերադաս անդամը, ենթարկվելով հարացուցային փոփոխության, կարող է կատարել տարբեր անդամների պաշտոններ, իսկ նրան լրացնող բացառականով ստորադաս անդամը, ինչպես ասվեց, բոլոր դեպքերում կատարում է որոշչի պաշտոն՝ պահպանելով իր առաջադաս շարադասությունը. օրինակ՝ փայտից գդալը գրված էր սեղանին:

Մասնական հարաբերությունն արտահայտելիս բառակապակցությունը նախադասության մեջ հանդես է գալիս միասնական ձևով, որպես մեկ անդամ, ըստ որում այն ունենում է գործառության համեմատաբար սահմանափակ ոլորտ: Գերադաս անդամը սովորաբար ձևափոխության չի ենթարկվում, հետևաբար բառակապակցությունը կատարում է հիմնականում ենթակայի, ուղիղ խնդրի, ստորոգելիական վերադրի պաշտոններ: Օրինակներ. Աշակերտներից հինգ հոգի լավ ստասիանեցին: Հացից մի կտոր ընկած էր գետին: Նրբ մասնական հարաբերությունն ունենում է համեմատության: Խմսոտային երանդ, բառակապակցությունն ունենում է ավելի լայն գործառություն: Օրինակ, ծաղիկներից ամենագեղեցիկի ցողունը ջարդվեց: Եվ կանչեց նա իր ֆաջերից ֆաջին (Շ): Նա առավել զոհ էր աշակերտներից ամենախելոքից:

Հաճախ բացառականով գրված գոյականը լրացնում է բայանուն գոյականի՝ արտահայտելով անջատման, պատճառի, ներգործող խնդրի, վերաբերության, տեղի, ժամանակային հարաբերություններ: Այս բոլոր դեպքերում բացառականով ստորադաս անդամը գրվում է գերադաս բառից՝ բայանունից հետո: Այս կառուցվածքի բառակապակցությունները հիմնականում գործածվում են վերնագրային-անվանողական արժեքով. օրինակ՝ «Հիշողություններ հայրենիքից», «Պատվիրակության վերադարձը Ֆրանսիայից», «Լուրեր Վոլոգդայից», «Արտասովոր բեռ կիտվայից» և այլն:

Որպես նախադասության բաղադրիչ այս բառակապակցությունները համեմատաբար քիչ են գործածվում, այն էլ հանդես են գալիս որպես նախադասության մեկ անդամ: Գերադաս անդամը սովորաբար ձևափոխության չի ենթարկվում (ընդունում է միայն հոգնակերտ մասնիկ և որոշիչ հոդ), այդ իսկ պատճառով, նախորդների նման, նախադասության մեջ կատարում է ենթակայի կամ ուղիղ խնդրի պաշտոն. օրինակ՝ Նրա

վերադարձը հեռավոր նախապահորդությունից ուրախացրեց բոլորին: Գուրգենը պատմում էր հիշողություններ մանկությունից: Բնորին կաշկանդել էր սառսափր ցրտահարությունից:

Ձնայած բայանմանը լրացնելիս զոյականի բացառական հոլովաձևվերը կարող են արտահայտել այն բոլոր իմաստային հարաբերությունները, ինչ բայական անդամին լրացնելիս (զա բացարձակում է բայական և տվյալ զոյականական բառակապակցությունների սերողական հարաբերակցությամբ), սակայն այս երկու կիրառությունները մեր կարծիքով, պետք է դիտել զործառական համանունություն, որովհետև դրանք նախադասության կառուցվածքում տարբեր դեր են կատարում: Հմմտ. Նրա վերադարձը հեռավոր նախապահորդությունից ուրախացրեց բոլորին և նա վերադարձավ հեռավոր նախապահորդությունից:

4. Գործիական հոլովով գրված գոյականների զործառական համանունությունը

Գործիական հոլովի ընդհանուր-անփոփոխակալին իմաստը համարվում է զործողության միջոցի, զործիքի հարաբերությունն արտահայտելու: Սակայն այս հոլովը ևս նախադասության մեջ կարող է զրսեւորել ամենատարբեր հարաբերություններ՝ բուն միջոցի, բաղկացության, սահմանափակման, ներգործող խնդրի, միասնության, տեղային, ժամանակային, պատճառ-հիմունքի, ձևի, վիճակի, համադասարանության և ալլել¹³ կատարելով տարբեր պաշտոններ: Գործիական հոլովի հիմնական շարահյուսական կիրառությունը բայ կամ բայ-ստորոգյալի լրացում լինելն է: Նրանով են զրվում իմաստային որոշակի առանձնահատկություններ ունեցող խնդիրները և պարագաները՝ միջոցի, սահմանափակման, ներգործող, միասնության խնդիրները, տեղի, ժամանակի, չափի, ձևի ու վիճակի, պատճառի, հիմունքի, նպատակի պարագաները, որոնցից յուրաքանչյուրն ունի նաև իր զործառական առանձնահատկությունները:

Գործիական հոլովով գրված գոյականները կարող են լրացնել նաև գոյականի՝ ցույց տալով մի բան ունենալու, մի բանով օժտված լինելու, մասնավորման հատկանշային հարաբերություններ՝ լինելով կա՞մ որտեղ (սև աչհերով աղջիկը եկավ), կա՞մ գերազառ գոյականի հետ կատարելով նախադասության մեկ անդամի պաշտոն (հոգով երեխա): Այս հոլովաձևով գրված գոյականը կարող է լրացնել նաև ժողովանի՝ ցույց տալով նյութի, միջոցի, սահմանափակման հարաբերություններ և նրա

13 Տե՛ս Մ. Արեղյանի, Վ. Առաքելյանի և Վ. Քոսյանի նշված աշխատությունները:

(ածականի) հետ միասին կատարելով նախադասության մեկ անդամի՝ որոշչի պաշտոն (օր.՝ Մեկնեց ինձ ջրով լի բաժակը: Գեմնով գեղեցիկ աղջիկ էր նա): Ավելի հաճախ ածականը այս դեպքում հանդես է գալիս որպես ստորոգելիական վերադիր, և գոյականի գործիական հոլովաձևը կատարում է ստորոգյալի լրացման պաշտոններ (հիմնականում միջոցի, սահմանափակման, խնդիրների և պատճառի, ձևի պարագաների):

Եթե անջատման խնդիրը բացառական հոլովով գրված գոյականների համար համեմատաբար բնդհանրական կիրառություն է, ապա գործիական հոլովաձևի համար այդպիսի պաշտոն դժվար է նշել: Ծիշտ է, միջոցի խնդիրը բնորոշ է այս հոլովաձևին, սակայն գոյականների իմաստները խիստ սահմանափակում են այդ պաշտոնով կիրառվելու սահմանները, այսպես, օրինակ, անձ ցույց տվող գոյականների գործիական հոլովաձևերը բուն միջոցի խնդրի պաշտոնով սովորաբար հանդես չեն գալիս: Նրանք այդ պաշտոնը կատարում են միջոցով, ձեռքով կապերի օգնությամբ. օրինակ՝ Նա այդ հարցը լուծեց Գրիգորի միջոցով (ոչ՝ Գրիգորով), նամակը ուղարկեց ընկերոջ ձեռքով (ոչ՝ ընկերով): Միջոցի խնդիր սովորաբար չեն լինում նաև ժամանակ ցույց տվող գոյականները:

Իհարկե, այս դեպքում ևս նույն գոյականի գործիական հոլովաձևը տարբեր խոսքային իրադրության մեջ և շարահյուսական տարբեր դիրքերում կարող է կատարել որակապես տարբեր պաշտոններ՝ կազմելով համանունական շարքեր, սակայն գործիական հոլովաձևերի համար ավելի բնորոշ է միջոցի իմաստային երանգի պահպանումը տարբեր պաշտոններում, ինչպես նաև մեկ կիրառությունում մի քանի իմաստների համատեղումը: Օրինակ՝ գործիք, միջոց կամ որպես այդպիսին գործածվելու ունակ առարկա ցույց տվող թանձրացական գոյականները աշխատել, բերել, գալ, գնալ, խմել, կատարել, կտրել, կտրել, ջարդել, շրջապատել և այլ կոնկրետ գործողություն ցույց տվող բայերի պահանջով կարող են դրվել գործիական հոլովով՝ կատարելով միջոցի խնդրի պաշտոն. աշխատել բրիչով, փորել բահով, կտրել դանակով, ուտել պատառափով, ջարդել ատամով, բացել բանալիով և այլն: Նախադասության այլ անդամի պաշտոն այս գոյականների գործիական հոլովաձևերը սովորաբար չեն կատարում: Սակայն հիշյալ կիրառություններում նրանք կարող են համատեղել նաև գործողության ձևի իմաստային երանգ (օր.՝ կտրել ինչի՞ միջոցով կամ ինչպե՞ս—դանակով, ուտել ինչի՞ միջոցով կամ ինչպե՞ս—պտտառաքողով և այլն):

Միջոցի և ձևի իմաստները համատեղում են հատկապես այն դեպ-

քում, երբ միջոցի խնդրի պաշտոն կատարում են վերացական գոյականները. օրինակ՝ նա այդ բանին հասավ իր աշխատասիրությամբ, տաղանդով (ի՞նչ միջոցով, ինչպե՞ս): Նա հաղթեց սիրով (ի՞նչ միջոցով, ինչպե՞ս): Միայն պարծենկոտությամբ շատ հեռու չես գնա (ի՞նչ միջոցով, ինչպե՞ս):

Երբեմն համատեղել կարող են միջոցի և սահմանափակման իմաստները. օրինակ՝ նա աչքի է ընկնում իր բարձր հասակով, սև մազերով, տարբերվում է բնավորությամբ: Ընդգծված բառաձևերը համատեղում են միջոցի և սահմանափակման խնդիրների իմաստները:

Կրավորական սեռի թայերի պահանջով զրված մի շարք գոյականների գործիական հոլովաձևերը կարող են ընկալվել և՛ որպես միջոցի խնդիր, և՛ որպես ներգործող խնդիր. օրինակ՝ «Այգին բաժանված էր փողոցից բարձր պարիսպով» նախադասության մեջ ընդգծված բառաձևը կարելի է մեկնաբանել և՛ որպես միջոցի խնդիր (հմտ. Այգին բաժանել էին փողոցից բարձր պարիսպով), և որպես ներգործող խնդիր (հմտ. Բարձր պարիսպը բաժանել էր այգին փողոցից):

Լցնել, զարգարել, լվանալ, ներկել, ցողել, ծածկել, կերակրել, քրչել և այլ բայերին լրացնող թանձրացական գոյականները միջոցի իմաստի հետ միաժամանակ արտահայտում են նյութի իմաստային հարաբերություն. օրինակ՝ Բաժակը լցրեց գինով: Սեղանը ծածկեց սվառցով: Ջեռքերը լվաց ջրով: Երեխային կերակրեց կարով և այլն:

Այս կիրառություններում կարող են համատեղել նաև սահմանափակման կամ ձևի իմաստային երանդները (հմտ. Ուրախությամբ ցնծում էր հոգիս: Նրան իր տեսքով, հասակով, ասին, չի հասնի չքնաղ հուրին Իրանի (ՀԹ):

Բուն համանունական կիրառություն գոյականների գործիական հոլովաձևերը համեմատաբար սակավ են ունենում: Կարելի է նշել հետևյալ դեպքերը:

ա) Մի շարք՝ հոգեկան զգացմունք ցույց տվող կրավորական սեռի բայերի պահանջով (զրավվել, դուլթվել, հմայվել, տարվել և այլն) իր ցույց տվող գոյականների գործիական հոլովաձևերը կարող են կատարել ներգործող կամ պատիվ ներգործության խնդիրների պաշտոն. օրինակ՝ դուլթվել ձայնով, գրավվել աչքերով, հմայվել գեղեցիկ դեմքով:

Այդ նույն գոյականները այլ բայերի մոտ, հատկապես ածականահիմք բայերի մոտ, կարող են կատարել սահմանափակման խնդրի պաշտոն. օրինակ՝ աչքի ընկնել ձայնով, աչքերով, գեղեցիկ դեմքով, հպարտանալ ձայնով, աչքերով, գեղեցիկ դեմքով: Հմտ. նաև՝ ուրախանալ ֆաշոյով:

քլամբ (սրասիվ ներգործության խնդիր), պարծենալ հաջողությամբ (միջոցի, սահմանափակման խնդիր), վերջանալ հաջողությամբ (ձևի պարագա):

բ) Ածականներից կամ գոյականներից ուրլումն ածանցով կերտված գոյականների գործիական հոլովաձևերը կատարում են հիմնականում ձևի պարագայի պաշտոն. օրինակ՝ Ուրախությամբ լսեցինք այդ մասին: Գործն ավարտվեց հաջողությամբ: Տխրությամբ պետք է նշել և այլն:

Այս հոլովաձևերի մի մասը կարող է կատարել նաև միջոցի խնդրի պաշտոն. օրինակ՝ ուրախությամբ, տխրությամբ լցվեցին մեր սրտերը: Դա բացատրվում է նրա հաջողությամբ: Օուլությամբ ոչնչի չես հասնի և այլն:

գ) Անձ ցույց տվող մի շարք հասարակ գոյականներ (հատկապես հոգնակի թվով) կատարում են միասնության խնդրի պաշտոն: Դրանք կարող են գործառել նաև սրպես ներգործող խնդիրներ՝ կազմելով համանունական երկանդամ շարք. այսպես՝

Քաղաքը շրջապատվեց զորհերով (ներգործող խնդիր):

Թագավորը իր զորհերով հեռացավ (միասնության խնդիր):

Բեռը դրավվեց զինվորներով (ներգործող խնդիր):

Զորավարը իր զինվորներով մեծ հաղթանակ տարավ (միասնության խնդիր):

...Հինգ ու վեց հոգով որսի գնացինք (ենթակայական միասնության խնդիր):

Այդ գործը կատարվեց վեց հոգով (ներգործող խնդիր):

դ) Իր ցույց տվող մի շարք գոյականների հզակի կամ հոգնակի գործիական հոլովաձևերը կարող են կատարել առարկայական միասնության խնդրի պաշտոն՝ ձևի իմաստային երանգով: Այդ նույն գոյականները խոսքային այլ միջավայրում, պայմանավորված բայ-ստորոգյալի իմաստով, կարող են կատարել նաև միջոցի խնդրի պաշտոն՝ կազմելով համանունական երկանդամ շարք. օրինակ՝

...Վերադառնում են զանձերով ու բեհերով (առարկայական միասնության խնդիր):

Նա իր զանձերով ու բեհերով կարողացավ գրավել աղջկա սիրտը (միջոցի խնդիր):

Եկավ դռնապանը՝ ավելով ու դուլով (առարկայական միասնության խնդիր):

Նա ղուլլով ջուր էր կրում, իսկ ընկերը ավելով ավելում էր (միջոցի խնդիրները):

Ե) Վերացական մի շարք գոյակահներ՝ հաղթանակ, փառք, աշխատանք, տաղանդ, ձիւրք, կարոտ, սեր, ամուր և այլն, զրգելով գործիական հոլովով և լրացնելով բայի, ըստ վերջինիս իմաստային առանձնահատկության կարող են կատարել միջոցի խնդրի կամ ձևի պարագայի պաշտոններ՝ կազմելով համանունական երկանդամ շարքեր. օրինակ՝

Նա հաղթեց իր սիրով: Սիրտս լի է կարոտով: Փառքով պսակեց իր ճակատը: Այդ բանին հասավ իր տաղանդով (միջոցի խնդիրներ):

Նա սիրով համաձայնեց իմ առաջարկին: Նա փառքով ապրեց մինչև խոր ծերություն: Այդ գործը կատարված է տաղանդով: Կարոտով նայում էր սարերին (ձևի պարագաներ):

Իհարկե, միջոցի խնդրի պաշտոնում ևս այս բառաձևերի մի մասը լուրջ ձևի իմաստային երանդ (համատ. Նա հաղթեց իր սիրով):

զ) Տեղ ցույց տվող գոյակահների գործիական հոլովաձևերը սովորաբար լրացնում են շարժում ցույց տվող բառերի և կատարում են տեղի պարագայի պաշտոն՝ ցույց տալով այն տեղը, որի միջով, վրայով կատարվում է գործողությունը. օրինակ՝ Փողոցով անցավ-գնաց: Սարերով ու լայն դաշտերով սլանում է դիվիզիան: Քաղաքով մի լուր է շրջում: Մա այս բառաձևերի հիմնական կիրառությունն է: Սակայն սուսանձին գեղաբերում սրանք կարող են կատարել նաև հետևյալ պաշտոնները.

1) միջոցի խնդրի՝ լրացնելով հիմնականում հոգեկան գոյացմունք արտահայտող բայերի (հպարտանալ, պարծենալ, գոհանալ, ուրախանալ և այլն): Օրինակ՝ նա շատ է հպարտանում (պարծենում, ուրախանում) իրենց սարերով (դաշտերով, քաղաքով, փողոցով): Առանձին կիրառություններում տեղի և միջոցի իմաստները համատեղում են. օրինակ՝ «Փայտը տեղափոխեցին գետով» նախադասության մեջ գետով բառաձևը կարելի է մեկնաբանել և՛ որպես միջոցի խնդիր (ինչով, ի՞նչ միջոցով, նաև՝ ինչպե՞ս տեղափոխեցին), և՛ որպես տեղի պարագա (որտեղով տեղափոխեցին):

2) պասիվ ներդործության խնդրի՝ լրացնելով մի շարք ներդործական կամ վիճակ ցույց տվող չեղոք սեռի բայերի. օրինակ՝ Երկիրը ծածկված էր սարերով ու դաշտերով: Այդ բանը չի որոշվում միայն փառքով:

3) միասնության խնդրի. օրինակ՝ Վասպուրականի նահանգը յուր Վան քաղաքով ունի 180 հազարի չափ բնակիչ (Բ, Գ): Գլուղը իր սարերով, դաշտերով մի գեղեցիկ բնաշխարհ էր:

է) Ժամանակ ցույց տվող, ինչպես նաև օրվա տեղումնայն և ժամանակի հետ առնչվող երևույթներ, առարկաներ նշանակող մի շարք գոյականների (գիշեր, ցերեկ, ամիս, արև, լույս, մութ, խավար և այլն) գործիական հոլովածները կարող են կատարել հետևյալ պաշտոնները.

1) Ժամանակի պարագայի (ցույց է տալիս այն ժամանակամիջոցը, որի ընթացքում կատարվում է գործողությունը). օրինակ՝ Արևով (մութով) տեղ հասանք: Քաղաքից մեկնեցինք զիշերով¹⁴: Այդ գործը պետք է կատարել լույսով (=լույս ժամանակ):

2) միջոցի խնդրի (երբեմն պատճառի իմաստային երանգով). օրինակ՝ Նա իր չգալը բացատրեց զիշերով, մութով: Զուրկ կարելի է տաքացնել նաև արևով:

3) ձևի պարագայի (ցույց է տալիս այն իրավիճակը, որի պայմաններում կատարվում է գործողությունը). օրինակ՝ Այդ մութով, աղուտ լույսով, զիշերով ինչպե՞ս ևս աշխատում (=մութի մեջ, աղետ լույսի տակ, գիշերվա մեջ): Մութով, աղուտ լույսով ձևերը կարելի է մեկնաբանել նաև որպես ժամանակի պարագաներ՝ (=մութ ժամանակ, աղուտ լույս եղած ժամանակ: «Խավարով զժվար է քայլել» նախադասության մեջ խավարով ձևը կարելի է դիտել և՛ որպես ժամանակի պարագա (=խավար ժամանակ), և՛ որպես տեղի պարագա (=խավարի միջով), և՛ որպես ձևի պարագա (=խավարի մեջ):

Մանր.— Նրբ ժամանակ ցույց տվող բառը ունենում է թվական լրացում, կատարում է ժամանակային չափի պարագայի պաշտոն և այլ կիրառություն սովորաբար չի ունենում (հմմտ. Նա հինգ օրով գնացել է գյուղ, այնուհետև երկու ամսով մեկնելու է Մոսկվա):

բ) Չափի, քանակի միավոր: Հանդիսացող գոյականների գործիական հոլովածները թվական լրացման հետ կատարում են չափի ու քանակի պարագայի պաշտոն՝ միջոցի իմաստային երանգով. օրինակ՝ Կտորը հինգ սանտիմետրով երկար է: Այդ կայանը քաղաքից հեռու է ընդամենը երկու կիլոմետրով: Հինգ ռուբլով խնձոր գնեցի: Կաթը երկու լիտրով ավելացավ: Նախադասության այլ անդամի պաշտոն այս կապակցությունները սովորաբար չեն կատարում: Միայն սահմանափակ կառուցվածքներում նշված բառածեղերը առանց լրացման կարող են կատարել միջոցի խնդրի պաշտոն. ինչպես՝ Տարածությունը կարելի է չափել սանտիմետրով (մետրով, կիլոմետրով): Կաթը չափում են լիտրով, խնձորը՝ կիլոգրամով: Ընդգծված բառածեղերը ցույց են տալիս տա-

¹⁴ Այս կիրառության հիման վրա զիշերով բառակը վերածվել է մակրայի:

բաժութիւնը, ծավալը, կշիռը չափելու միջոցները և կատարում են միջոցի խնդրի պաշտոն:

Բ) Մարդու հարգարանքի հետ կապված առարկաներ, ինչպես նաև մարդուն բնորոշող երևույթներ ու առարկաներ ցույց տվող մի շարք գոյականների գործիական հոլովաձևերը (եղակի կամ հոգնակի թվով) կարող են կատարել ձևի պարագայի պաշտոն՝ ցույց տալով գործողութիւն կատարողի կամ գործողութեան հետ կապված առարկայի որևէ վիճակը. օրինակ՝ նստել էր զլխարկով, վերարկուով: Կանգնած էր կորացած մեջքով: Քնել էր հագուստով: Նրան պատկերացնում էր երկար մազերով, բարձր հասակով: Այդ նույն բառաձևերը կարող են կատարել նաև հետևյալ պաշտոնները.

1) սահմանափակման խնդրի. օրինակ՝ Աչքի է ընկնում իր երկառ մազերով (հասակով, հագուստով, զլխարկով):

2) միջոցի խնդրի, օրինակ՝ Փաթաթվել էր վերարկուով: Ուսերը ծածկված էին երկար մազերով: Գլուխը ծածկել էր զլխարկով:

Ճ) Որեւէ, հրաման, որոշում, կարծիք, առաջարկ, վկայություն և այլ բաների գործիական հոլովաձևերի տարածված կիրառութիւնը հիմունքի պարագայի պաշտոնն է. օրինակ՝ Իմ կարծիքով դա ճիշտ չէ: Այդ բանը կատարված է նրա հրամանով (առաջարկով, որոշմամբ, խոսքով): Այս բառաձևերը կարող են կատարել նաև հետևյալ պաշտոնները.

1) պասիվ ներգործութեան խնդրի. օրինակ՝ Միայն առաջարկով, որոշմամբ, հրամանով, խոսքով հարցերը չեն լուծվի (= Միայն առաջարկը, որոշումը, հրամանը հարցերը չեն լուծի):

2) միջոցի խնդրի (ձևի իմաստային երանգով). օրինակ՝ Միայն առաջարկով, հրամանով, որոշմամբ ոչինչ չես փոխի: Խոսքով գոյժն ուզում է առաջ տանել:

3) միասնութեան խնդրի. օրինակ՝ Առաջարկով (առաջարկութեամբ) հանդես եկավ մամուլում: Ժողովի որոշմամբ և հրամանով ներկայացավ զիրեկաւորին:

Ի) Մի բանի գոյականների (գործ, նպատակ, միտք, խնդիրք և այլն) գործիական հոլովաձևերը շարժում ցույց տվող բայերի մոտ կատարում են նպատակի պարագայի պաշտոն. օրինակ՝ Նա զնացել է գործով: Եկել է բարի նպատակով¹⁵, նրան հենց այդ մտքով էլ ուղարկել էին:

¹⁵ Նպատակով բառաձևը այս պաշտոնում միշտ հանդես է գալիս որևէ լրացմամբ. այդ հիմքի վրա էլ նա կորցրել է իր նշութական իմաստը և արդեն վերածվել է կապական բառի:

Բերված բառաձևերից յուրաքանչյուրը կարող է կատարել նաև այլ պաշտոններ՝ կազմելով համանունական տարբեր շարքեր: Այսպես՝ գործով և նպատակով բառաձևերը կարող են լինել նաև միջոցի և պատիվ ներգործության խնդիրներ. օրինակ՝ Աշխատանքը պետք է գնահատել արված գործով և ոչ թե նպատակով (միջոցի խնդիր): Գործով, նաև նպատակով է գնահատվում ամեն ինչ (պատիվ ներգործության խնդիր):

Մտնով բառաձևը կարող է կատարել նաև ձևի և տեղի պարագաների պաշտոններ, օրինակ՝ Նա խնդիրը մտնով լուծեց (ձևի պարագա): Նրա մտնով շատ բան է անցնում (տեղի պարագա):

Մի շարք գոյականների գործիական հոլովաձևեր կարող են կատարել պատճառի պարագայի պաշտոն, սակայն այսպիսի կիրառությունները սակավադեպ են և համատեղում են միջոցի խնդրի իմաստային երանգ. հմմտ. Նա տուծեց ընկերոջ մեղքով: Այդ բանը կատարել է գինու ազդեցությամբ: Կնոջ մատնությամբ ամբողջ չէր առել (ՀԹ)¹⁶:

Վերոբերյալ կիրառություններին համանուն է գործիական հոլովաձևի գործառությունը որոշի պաշտոնում: Այսպիսի պաշտոն կատարում են իր ցույց տվող գոյականները՝ սովորաբար որևէ որոշիչ լրացման հետ. օրինակ՝ Երկար մոռնով մարդ, սև աչքերով աղջիկ, փառքե ուրբերով սեղան, նաև՝ հասակով մարդ, տաբիֆով¹⁷ կին և այլն:

Բայանուններին լրացնող գոյականի գործիական հոլովաձևերը, ինչպես ասվեց, արտահայտում են հիմնականում այն հարաբերությունները, ինչ հարաբերակից բայերին լրացնողները: Սակայն բանի որ նրանք դերադաս բառի հետ կատարում են վերնադրային-անվանողական դեր կամ նախադասության մեջ գիտվում են որոշիչներ, պետք է համարել վերոբերյալ ձևերի գործառական համանունները Հմմտ.

Շրջագայություն ավտոմեքենայով (վերնագիր). Ավտոմեքենայով շրջագայությունը շատ հետաքրքիր էր (որոշիչ՝ միջոցի հարաբերությամբ): Մենք շրջագայեցինք ավտոմեքենայով (միջոցի խնդիր):

Կառուցում նոր մեքոդներով (վերնագիր): Նոր մեքոդներով կառուցումը տվեց իր դրական արդյունքները (որոշիչ՝ ձևի հարաբերությամբ): Շենքերը կառուցեցին նոր մեքոդներով (ձևի պարագա):

Գործիական հոլովով գրված լրացում են ունենում նաև սակավաթիվ ածականներ (լի, լեցուն, հզի, գեղեցիկ, հպարտ, հզոր, գրավիչ և այլն):

¹⁶ Այսպիսի կիրառության հիման վրա է առաջացել պատմաբանական բառը:

¹⁷ Հասակով. տաբիֆով ձևերը, առանց լրացման, որոշիչ պաշտոնում գիտվում են որպես ածականներ:

ինչպես ասվեց, սրանք կարող են արտահայտել սահմանափակման, նյութի, միջոցի հարաբերություններ և կարող են գործառական համա-
նուն լինել բաշխական լրացումներին միայն այն դեպքում, եբ ածա-
կանի հետ միասին կատարում են որոշչի կամ ձևի պարագայի պաշտոն:
Այսպես՝

Նա վերցրեց ջրով լի բաժակը (որոշչի բաղադրիչ):

Բաժակը լցված էր ջրով (միջոցի խնդիր):

Առաջ եկավ բնավորությամբ խիզախ տղան (որոշչի բաղադրիչ):

Նա աչքի էր ընկնում իր խիզախ բնավորությամբ (սահմանափակ-
ման կամ միջոցի խնդիր):

Մանր.— Երբ գերադաս ածականը ստորոգելիական վերագիր է,
նրան լրացնող գործիական հոլովածեով գոյականը դիտվում է նախա-
դասության անկախ անդամ և կատարում է միջոցի կամ սահմանափակ-
ման խնդրի պաշտոն. օրինակ՝

Բաժակը լի է ջրով (միջոցի խնդիր):

Տղան բնավորությամբ խիզախ է (սահմանափակման կամ միջոցի
խնդիր):

5. Ներգոյական հոլովով դրված գոյականների գործառական համաճեղքությունը

Գոյականների հոլովման համակարգում ներգոյականը առանձնա-
նում է իր գործառական սահմանափակությամբ. այսինքն, ի տարբերու-
թյուն մյուս հոլովների, այս հոլովածը կարող են ունենալ ոչ բոլոր գո-
յականները. օրինակ՝ անձ ցույց տվող գոյականները, վերացական գո-
յականների մեծ մասը չունեն այս հոլովածը¹⁸, մի բան, որ բացատրե-
վում է մի կողմից այս հոլովի ավելի ուշ շրջանում ձևավորվելով (հին
հայերենը չունի այս հոլովածը, արեմտահայերենը ևս), մյուս կողմից
իմաստային սահմանափակությամբ (ցույց է տալիս գործողության տա-
րածային և ժամանակային սահմանափակում տվյալ գոյականի ցույց
տված առարկայի կամ ժամանակի սահմաններում (հմմտ. Աշխատան-
քը կատարվեց երկու օրում: Ուսանողները նստած են լսաբանոց): Մյուս
հոլովների համեմատությամբ սահմանափակ է նաև այս հոլովածեով
դրված գոյականների կիրառության շրջանակները: Նրանք լրացնում են
սովորաբար բայի և կատարում են տեղի, ժամանակի, չափի պարագա-

¹⁸ Ներգոյական հոլովի իմաստը այս գոյականները անհրաժեշտության դեպքում
արտահայտում են սեռական-տրական հոլովի և մեջ կապի միջոցով:

ների, մասամբ նաև ձեռի (վիրճակի) պարագայի և սահմանափակման խնդրի պաշտոններ՝ յուրաքանչյուր դեպքում ունենալով ներգոյական հոլովին հատուկ իմաստային երանգը և այդ առումով տարբերվելով այլ հոլովներով դրված, սակայն նույն պաշտոնը կատարող ձևերից (հմմտ. ես եկա երկու ժամում, երկու ժամով, երկու ժամից, կամ՝ Գնացքը մոտեցավ Մոսկվային: Նա մեկնեց Մոսկվա, մեկնեց Մոսկվայից, գտնվում է Մոսկվայում):

Ներգոյական հոլովը կարող է լրացնել գոյականի միայն այն դեպքում, երբ վերջինս բայանուն է կամ իմաստով հարաբերակցում է գործողության (հանդիպում, խորհրդակցություն, ապստամբություն, ելույթ, մրցում և այլն): Այս դեպքում ներգոյական հոլովածեք արտահայտում է տեղային և ժամանակային հարաբերություն և լրացյալի հետ հանդես է գալիս հիմնականում վերնադրային-անվանողական արժեքով. օրինակ՝ երկրաշարժ թուրքիայում, Հանդիպում Մոսկվայում, Խորհրդակցություն Երևանում և այլն: Գոյական + գոյականի ներգոյական հոլով կառուցվածքի մի շարք կապակցություններ արտահայտում են դրույթուն, իրավիճակ, հոգեվիճակ և նախադասության մեջ կատարում են ձեռի պարագայի պաշտոն. օրինակ՝ Մոլորված բայով և մահն աչքերում ահաբեկ ու ողբ փախչում են հեռուն (վՏ): Նա հեռացավ կսկիծը սրտում:

Ավելի սահմանափակ է ներգոյականի կիրառությունը ածականի լրացման պաշտոնում: Այն կարող է լրացնել միայն մի բանի՝ հատկապես ծագումով բայերի հետ կապված ածականների (հպարտ, ժլատ, սիրելի, հմուտ, ընդունակ, նկատելի, չափավոր և այլն)՝ ցույց տալով սահմանափակման հարաբերություն (գործում հմուտ, նրա աչքում սիրելի, սովորական պայմաններում ոչ նկատելի և այլն)¹⁹:

Բնականաբար շատ սահմանափակ են նաև այս հոլովածեք բանեցող գոյականների համանունական արժեքով կիրառությունները: Քանի որ տեղի պարագայի պաշտոն կատարում են տեղ ցույց տվող կամ տարածական նշանակություն ունեցող թանձրացական գոյականների ներգոյական հոլովածեքը, իսկ ժամանակի պարագայի պաշտոն՝ ժամանակ ցույց տվող կամ ժամանակի հետ հարաբերակցող գոյականները (վերջ, սկիզբ, տարիք, հասակ, ապագա, գալիք և այլն), համանունական կապեր այստեղ հնարավոր չէ գտնել:

Չափի պարագայի պաշտոն կատարում են ժամանակ ցույց տվող մի շարք գոյականների ներգոյական հոլովածեքը թվական լրացման

¹⁹ Տե՛ս Վ. Քոսյան, *Եղված աշխ.*:

հետ (էիմէ աստու, երկու օրում, վեց ժամում և այլն) և ցույց են տալիս գործողության ժամանակային սահմանափակում: Այս կապակցությունները ևս այլ կիրառություն չունեն, այսինքն համանունական արժեք չունեն:

Համանունական արժեք կարող են ունենալ միայն մի քանի լիանձնացական գոյականներ (սիրտ, ձեռք, հոգի), որոնց ներդրականը կարող է գործառել որպես տեղի և ձևի (վիճակի) պարագաներ (վերջին կիրառությունը առաջացել է առաջինի հիմքի վրա). օրինակ՝

Նա հեռացավ կասկածի սրտում (ինչպէ՞ս-վիճակային ձևի պարագա):

Երբեք մի վիշտ է պահում (որտե՞ղ—տեղի պարագա):

Կանգնած է փայլը ձեռքում (վիճակային ձևի պարագա):

Ձեռքում ինչ-որ բան է փայլում (տեղի պարագա):

Ինչպէս ասվեց, սահմանափակման խնդրի պաշտոն կարող են կատարել միայն մի քանի գոյականների ներդրական հոլովները (գործ, աշխ, կոնվ, արտադրություն և այլն)²⁰: Այս գոյականները առանձին չկարելի է կարող են կատարել նաև տեղի պարագայի պաշտոն՝ կազմելով համանունական երկանդամ շարքեր. օրինակ՝

Գրիգորը գործում (= գործի մեջ) միշտ առաջավոր է եղել, կոչում՝ խիզախ (սահմանափակման խնդիր):

Նա կոչում զոհվեց (տեղի պարագա)²¹:

Նրա աշխում ևս շատ բարձր էմ (սահմանափակման խնդիր):

Նրա աշխում ուրախության կայծեր երևացին (տեղի պարագա):

6. Կապական կառույցների հորձառական նամանակությունը

Հայտնի է, որ գոյականները որպէս նախադասության անդամներ ձևավորվում են ոչ միայն հոլովների միջոցով, այլ նաև կատարում ու կապական բառերով, որոնք հարաբերակցում են հոլովական վերջավորություններին և ցույց են տալիս լրացյալի և լրացման միջև եղած իմաստային հարաբերությունները: Ժիշտ այնպէս, ինչպէս գոյականների հոլովաձևերը, պայմանավորված նախադասության մեջ գրաված

²⁰ Այս խնդրի արտահայտման տարածված ձևը սեռական-տրական հոլովաձևն է՝ մեջ կապի հետ (կովի մեջ, ուսման մեջ, արտադրության մեջ, գործի մեջ և այլն):

²¹ Այսուհեղ կոչում ձեռք կարելի է շեղանաբանել նաև որպէս շահանակի պարագա (= կովի ժամանակ):

իրենց գիրքով, խնդրառու բառի՝ լրացյալի և հենց իբեցնց իմաստով. կարող են կատարել տարբեր պաշտոններ, նույն ձեռով կապական կառույցները (գոյականը կապի հետ), նախադասության մեջ կատարած իրենց դերով նույնանալով գոյականների հոլովածներին, հանդես են գալիս որպես շարահյուսական հարաբերություն արտահայտող նվազագույն միավորներ և կատարում են ամենատարբեր պաշտոններ: Սակայն քանի որ կապերը արտահայտում են ավելի կոնկրետ քերականական իմաստներ, քան հոլովական վերջավորությունները, դրանով կապական կառույցների գործառնության սահմանները համեմատաբար նեղանում են (նրանք արտահայտում են ավելի սահմանափակ շարահյուսական հարաբերություններ):

Նկատելի է մի նրկույթ ևս. որքան կապը կամ կապական բառը հեռացած է լինում նյութական իմաստից, որքան վերացարկման բարձր աստիճանի է լինում, այնքան շատ հարաբերություններ կարող է արտահայտել այն և, ընդհակառակը, որքան կապը կապված է նյութական կոնկրետ իմաստի, այնքան քիչ շարահյուսական հարաբերություններ կարող է արտահայտել, հետևաբար այնքան սահմանափակ է լինում նրա գործառնության ոլորտը, և ավելի քիչ շարահյուսական պաշտոն կարող է կատարել նրանով ձևավորված նախադասության անդամը: Քանի որ նյութական խոսքի մասերի հետ առավել կապված են կապական բառերը, նրանց վերացարկումը նյութական իմաստից ավելի ցածր աստիճանի է, հետևաբար ավելի որոշակի և կոնկրետ են նրանց ցուցատված հարաբերությունները, և նրանցով ձևավորված կապական կառույցները նախադասության կառուցվածքում համանուն կիրառությունը սովորաբար չեն ունենում: Օրինակ՝ գծով, ուղղորչաւր. վերաբերյալ կապերը ձևավորում են միայն վերաբերության խնդիրներ, միջոցով, ձեռքով կապերը՝ ներգործող և միջոցի խնդիրներ, պատկառով. երեսից շնորհիվ կապերը՝ պատճառի պարագա, ժամանակ կապը՝ ժամանակի պարագա և այլն: Սակայն կապերի մի ղղալի մասը արտահայտում է մեկից ավելի իմաստային հարաբերություններ, հետևաբար նույն կապերով ձևավորված կառույցները կարող են կատարել նախադասության տարբեր անդամների պաշտոններ (հմմտ. նա գնաց ղեպի առին: նա անտարբեր չէ ղեպի Աստղիկը: Ես նայում եմ ղեպի անտառը): Երբ տարբեր պաշտոն կատարում է նույն գոյականով և կապով ձևավորված կառույցը, հրեան է գալիս գործառական համանունության երկույթը (հմմտ. Ես գնացի ղեպի Աստղիկը, Անտարբեր չեմ ղեպի Աստղիկը): Սակայն, ինչպես ասվեց, գործառական համանունությունը կապական

կառուցներում համեմատաբար քիչ է հանդիպում: Տեսնենք, թե ինչպիսի համանունական շարքեր կարող են կազմել տարբեր իմաստային խմբերի պատկանող կապերով ձևավորված կապական կառույցները²²:

1. Տարածական հարաբերություն ցույց տվող կապերը՝ մեջ, վրա, տակ, ներքո, հանդեպ, դիմաց, դեպի, ի վեր և այլն, ձևավորում են հիմնականում նախադասության տեղի պարագան՝ վերջինիս հաղորդելով իրենց հատուկ տարածական իմաստային երանգը (հմմտ. սեղանի վրա, սեղանի տակ, սեղանի մոտ, սեղանի դիմաց, դեպի սեղանը):

Մեջ, վրա, մոտ, ի վեր կապերը կարող են արտահայտել նաև ժամանակային հարաբերություններ և ձևավորել ժամանակի պարագան: Սակայն այս դեպքում գործառական համանունություն սովորաբար չի դիտվում, որովհետև տարածային հարաբերություն այս կապերը արտահայտում են միանալով տարածական կամ տեղային իմաստ ունեցող գոյականների, իսկ ժամանակային հարաբերություն՝ ժամանակ ցույց տվող գոյականների: Հմմտ. Գիրքը գրված է սեղանի վրա: Այդ խոսքերի վրա նա ոտքի կանգնեց: Աթոռը գրված է սեղանի մոտ: Նա եկավ ժամը 2-ին մոտ: Պայուսակի մեջ երկու գիրք կար: Երկու ժամվա մեջ գրեց շարադրությունը: Բարձրանում են սառն ի վեր: Այդ օրվանից ի վեր նրան չեմ տեսել:

Վրա կապը, գրվելով մարմնի մասերի անվանում հանդիսացող գոյականների վրա, բացի հիմնական տարածային հարաբերությունից, կարող է արտահայտել նաև ձևի իմաստային հարաբերություն՝ ձևավորելով համանուն տեղի և ձևի պարագաներ. օրինակներ՝

1. Նրա մեջքի վրա սպի կա (տեղի պարագա):

Նա պառկել էր մեջքի վրա (ձևի պարագա):

2. Ոտքի վրա խալ կա (տեղի պարագա):

Երկար մնացինք ոտքի վրա (ձևի պարագա):

3. Գլխի վրա մազ չի մնացել (տեղի պարագա):

Կես ժամ կանգնեց գլխի վրա (ձևի պարագա):

Ռուսերենի ազդեցությամբ, երաժշտական գործիքների անվանումների հետ այս կապը կարող է կատարել միջոցի խնդրի պաշտոն՝ կազմելով համանունական երկանդամ շարք. օրինակ՝

Դաշնամուրի վրա գրված էր գեղեցիկ ծաղկաման (տեղի պարագա):

²² Կապերի արտահայտած իմաստային հարաբերությունների մասին տե՛ս Վ. Առաքելյան, նշված աշխ., Ա. Մարգարյան, Արդի հայերենի կապերը, 1955, Ս. Աբրահամյան, Չիբրվող խոսքի մասերը..., 1965:

Նա դաշնամուրի վրա լավ է նվագում (միջոցի խնդիր):

Վերջին կառուցվածքի փոխարեն ժամանակակից հայերենում օրինաչափական է ուղիղ խնդրի գործածությունը (Հմմտ. Նա դաշնամուր լավ է նվագում):

Տակ կապը խոսել, ժպտալ, փնրփնրալ, շնչալ և այլ տաքական բայերի մոտ էիք, բեղ կապվող բառերի հետ կատարում է ձևի պարագայի պաշտոն: Այդ կապակցությունները կարող են կառարել նաև տեղի պարագայի պաշտոն՝ կազմելով համանունական շարք. այսպես՝

1. Նա խոսում է (երգում է) Բրի տակ (ձևի պարագա):

Քրի տակ մեծ խալ կա (տեղի պարագա):

2. Բեղի տակ ժպտաց (ձևի պարագա):

Բեղի տակ մաշկը սպիտակ էր մնացել (տեղի պարագա):

Տակ կապը ձևի իմաստային հարաբերություն է արտահայտում և ձևավորում է ձևի պարագաներ նաև մի շարք վերացական գոյականների հետ, սակայն այդ դեպքում այլ կիրառություն տվյալ կառույցները չեն ունենում (երբևի՜ միայն ունենում են պատճառի իմաստային երանդ). օրինակ՝ Այդ բանը նա կատարեց բոլերի ազդեցությամբ տակ: Նրանք բայում էին բայլերգի հնչյունների տակ:

Մոտ, դիմաց, առաջ, մեջ կապերը կարող են արտահայտել նաև համեմատության իմաստային հարաբերություններ՝ ձևավորելով տեղի և համեմատության պարագաների պաշտոն կատարող համանուն շարահյուսական կառույցներ: Հմմտ.

1. Սեանի մոտ կառուցվեց հանգստյան տուն (տեղի պարագա):

Սեանի մոտ (= Սեանի համեմատությամբ) այդ լինի ի՞նչ է ուր (համեմատության պարագա):

2. Նա կանգնել էր ընկերոջ դիմաց (տեղի պարագա):

Ընկերոջ դիմաց (= Ընկերոջ համեմատությամբ) նա շատ է նստմանում (համեմատության պարագա):

3. Գրիգորի առաջ գրված էր մի գիրք (տեղի պարագա):

Գրիգորի առաջ (= Գրիգորի համեմատությամբ) նա ոչինչ է (համեմատության պարագա):

4. Այդ լների մեջ (= լներում) աճեցնում են իշխան ձուկ (տեղի պարագա):

Այդ լների մեջ (= այդ լների համեմատությամբ) Սեանը աչքի է ընկնում իր ղեղեցկությամբ (համեմատության պարագա):

Դեպի կապը, լրացնելով շարժում ցույց տվող բայերի (դնալ, մեկնել, շարժվել, ուղևորվել, բայլել և այլն), ձևավորում է ուղևորման տե-

ղի պարագան: Առանձին դեպքերում, հատկապես անձ ցույց տվող գոյականների հետ, այս կապը կարող է ձևավորել նաև հանգման և վերաբերության խնդիրներ՝ կազմելով համանունական եռանդամ շարքեր. օրինակ՝

Գրիգորը *գնաց* դեպի Անանիտը (տեղի պարագա):

Գրիգորը հայացքը հառել է (նայում է) դեպի Անանիտը (հանգման խնդիր):

Նա անտարբեր չէ դեպի Անանիտը (վերաբերության խնդիր):

Վերաբերության խնդրի պաշտոն այս կառույցները կատարում են հոգեկան, պոպուլյար գործողություն ցույց տվող բայերի մոտ (վերաբերել, անաչառ լինել, սեր տածել, զիջող լինել և այլն), իսկ հանգման խնդրի պաշտոն՝ նայել, հառել, շրջվել, հայացքն ուղղել և իմաստով սրանց մոտ բայերի պահանջով (այս դեպքում ունենում են տեղի իմաստային երանդ):

Շուրջը կապը մի շարք թանձրացական գոյականների հետ երբեմն կարող է կատարել և՛ տեղի պարագայի, և՛ վերաբերության խնդրի պաշտոններ. օրինակ՝

Նրանք *նստած էին* այդ սեղանի շուրջը (տեղի պարագա):

Այդ սեղանի շուրջը (= սեղանի վերաբերյալ, մասին) երկար խոսակցություն *գնաց* (վերաբերության խնդիր):

Գրքի շուրջը տետրեր էին շարված (տեղի պարագա):

Գրքի շուրջը (= գրքի վերաբերյալ) մտքերի փոխանակություն եղավ (վերաբերության խնդիր):

2. Վերաբերության կապերն ու կապական բառերը՝ մասին, վերաբերյալ, նկատմամբ, առթիվ, շուրջը, կապակցությամբ, գծով, ուղղությամբ, նվիրված և այլն, ձևավորում են նախադասության վերաբերության խնդիրը և ունեն միայն ոճական, մասամբ նաև նրբիմաստային տարբերություններ (հմմտ. Ելույթի շուրջը ծավալվեց մտքերի փոխանակություն: Նրա մասին (վերաբերյալ) վատ բան չեմ լսել: Այդ ուղղությամբ երկար եմ մտածել և այլն): Այլ կիրառություն չարահուսական այս կառույցները չունեն, հետևաբար չունեն նաև համանունական արժեք: Միայն շուրջը կապը, ինչպես ասվեց, թանձրացական գոյականների հետ կարող է կերտել տեղի պարագայի պաշտոն կատարող կառույցներ (անտառի շուրջը, տան շուրջը, կղզու շուրջը և այլն), որոնք, գործառնելով նաև որպես վերաբերության խնդիրներ, ստանում են համանունական արժեք: Հմմտ. նաև՝

Անտառի շուրջը գեղեցիկ մարգագետին էր (տեղի պարագա):

երկար ժամանակ խոսում էին անտառի շուրջը (վերաբերության խնդիր):

Կղզու շուրջը ծովը շատ ծանծաղ էր (տեղի պարագա):

Կղզու շուրջը երկար վիճաբանություններ եղան (վերաբերության խնդիր):

Վերջին կառուցվածքները թեև հանդիպում են լեզվում, սակայն ավելի տարածված է թանձրացական գոյականների վերաբերության խնդրի ձևավորումը մասին և վերաբերյալ կապերով:

3. Բացառման և զիջման կապերը՝ բացի, առանց, զատ, վոխարեն, փոխանակ, հանդերձ, հակառակ, չնայած, շնաչված և այլն, ձևավորում են նախադասության բացառման խնդիրը և զիջման պարագան: Այս կապերից համանուն կիրառություն ունի միայն հանդերձ-ը, որը բացի զիջման հարաբերությունից, ժամանակակից հայերենում կարող է արտահայտել նաև միասնության հարաբերություն՝ մի կողմից ձևավորելով զիջման պարագա, մյուս կողմից՝ միասնության պարագա (վերջին խմաստով ժամանակակից հայերենում ունի սահմանափակ կիրառություն): Սակայն այս դեպքում ևս բուն համանուն կապական կառույցներ չեն հանդիպում, որովհետև զիջման խմաստով կապը գործածվում է սովորաբար դերբայի, բայանունների կամ վերացական գոյականների, իսկ միասնության խմաստով՝ թանձրացական գոյականների հետ: Հմմտ.

Այդ մասին իմանալով հանդերձ, չեկավ: Նա իր խստությամբ հանդերձ բարի սիրտ ունի:

Ընկերներով հանդերձ գնացինք: Եկել էր քնտանիքով հանդերձ:

4. Ժամանակի կապերը և կապական բառերը՝ մինչև, հետո, անց, առաջ, նախքան, պահին, սու, ժամանակ, օրով, օրոք և այլն, ձևավորում են ժամանակի պարագան և վերջինիս հաղորդելով իրենց հատուկ երանգը՝ ցույց են տալիս համաժամանակություն կամ տարաժամանակություն: Հմմտ. Նա եկավ երկու օր հետո, երկու օր առաջ, երկու ժամ անց, նախ ժամանակ, մինչև նաչ և այլն: Քանի որ այս կապերն ու կապական բառերն ունեն ընդգծված ժամանակային իմաստ, նախադասության այլ անդամ սովորաբար չեն ձևավորում: Միայն ի վեր և առաջ կապով կառույցները կարող են կատարել նաև տեղի պարագայի պաշտոն, սակայն այդ դեպքում ևս համանունություն չի դիտվում, որովհետև ի վեր կապը ժամանակային հարաբերություն արտահայտում է ժամանակի ցույց տվող գոյականների հետ, որոնք զբաղում են բացառական հոլովով (այդ օրից ի վեր), իսկ տեղի հարաբերություն՝ տեղ ցույց տվող գոյականների հետ (սառն ի վեր): Նույն ձևով՝ առաջ կապը ժամանակի

Հարաբերությունն է արտահայտում հիմնականում ժամանակի ցույց տվող և ժամանակի հետ առնչվող բառերի ու դերբայների հետ, որոնք գրվում են բացառական հոլովով (գրելուց առաջ, ելույթից առաջ, այդ օրից առաջ), իսկ տեղային հարաբերություն՝ տեղ ցույց տվող գոյականների հետ, որոնք գրվում են սեռական-տրական հոլովով (սեղանի առաջ, տան առաջ և այլն): Այսինքն՝ կապական այս կառույցները, շնայած կապերի բնդհանրությանը, տարբերվում են և՛ կառուցվածքով, և՛ նյութական խոսքի մաս բաղադրիչով:

Մինչև կապը արտահայտում է ժամանակային և տարածային սահմանափակության, ինչպես նաև մոտավոր քանակի հարաբերություն, սակայն այս դեպքում ևս համանուն կառույցներ սովորաբար չեն լինում, քանի որ ժամանակային հարաբերությունն այն արտահայտում է ժամանակ ցույց տվող կամ ժամանակի հետ առնչվող բառերի հետ (մինչև գիշեր, մինչև առավոտ, մինչև նրա գալը և այլն), տարածային հարաբերություն՝ տեղ ցույց տվող գոյականների հետ (մինչև Մոսկվա, մինչև տուն, մինչև փողոցի ծայրը և այլն), իսկ մոտավոր քանակի հարաբերություն՝ թվականների հետ (օրինակ՝ Այդ գործը կարող են կատարել հինգից մինչև տասը բանվոր):

Միայն հազվադեպ, երբ տեղ ցույց տվող բառը չնոխանունաբար ստանում է ժամանակի իմաստ, կապական կառույցը կարող է ունենալ համանունական արժեք: Օրինակ՝

Մինչև Մոսկվա (=մինչև Մոսկվա հասնելը) մնացել է երկու ժամ և Մինչև Մոսկվա հաղար կիրոմետր է: Կամ՝ Մինչև տուն (=մինչև տուն հասնելը) լուռ էր և Դպրոցից մինչև տուն երկու կիրոմետր է:

Իհարկե, այս դեպքում գործառական համանունության մասին հավանաբար չպետք է խոսել, որովհետև երկու դեպքում էլ կապական կառույցը կառաբում է չափի պարագայի պաշտոն, առաջին դեպքում տարածական չափի, երկրորդ դեպքում՝ ժամանակային չափի: Պարզապես այստեղ, փոխանունաբար գործածվելով, համանունական արժեք են ձևորեն կապվող գոյականները (Մոսկվա, տուն):

5. Հիմունքի և պատճառի կապերը՝ ըստ, համաձայն, նայած, համեմատ, համապատասխան, հիման վրա, շնորհիվ, պատճառով, երեսից և այլն, ձևավորում են պատճառի և հիմունքի պարագաներու Սյս կապերով կառույցները գործառական համանունություն չունեն: Սրանցից միայն համեմատ-ը բացի հիմունքային հարաբերությունից կարող է արտահայտել համեմատության հարաբերություն և ձևավորել համեմատության պարագա, սակայն այս դեպքում ևս սովորաբար տարբեր են

լինում կապակցվող բառերը. հիմունքի իմաստով կապակցվում են մեծ մասամբ վերացական գոյականները (սովորության համեմատ, կանոնի համեմատ, որոշման համեմատ և այլն), իսկ համեմատության իմաստով՝ թանձրացական գոյականները (Գրիգորի համեմատ նա երիտասարդ է): Գործառական համանուն կառույցներ կարող են հանդիպել հազվադեպ: Հմմտ.

Իր սովորության համեմատ նա ուշացավ (հիմունքի պարագա):

Իր սովորության համեմատ (= համեմատած իր սովորության հետ) այդ նոր արարքը զարմանալի չէր (համեմատության պարագա):

6. նպատակի հարաբերություն արտահայտող կապերը՝ համար, հոգուտ, հանուն, ի, ձևավորում են նպատակի պարագան: Այս կապերից համար-ը կարող է ձևավորել նաև պատճառի պարագա և հանդման ու սահմանափակման խնդիրներ՝ առանձին ղեկավարում ստեղծելով գործառական համանուն կառույցներ. այսպես՝

Այդ բանն է և ևս չարեցի Անահիտի համար (նպատակի պարագա):

Անահիտի համար դա շատ դժվար կլինի (հանդման խնդիր):

Տեսա՞ր ինչ կատարվեց Անահիտի համար (պատճառի պարագա = Անահիտի պատճառով):

Նյութերը պահել և՛ հողվածի համար (նպատակի պարագա):

Հողվածի համար նրա հետ վիճեցի (պատճառի պարագա):

Հողվածի համար դա բավականին մեծ ծավալ ունի (սահմանափակման խնդիր):

Վերջին կառույցվածքի նախադասությունները ժամանակակից հայերենում գործածվում են սուսերենի ազդեցությամբ: Իսկ հանդման խնդրի պաշտոն այս կառույցները կատարում են բանավոր խոսքում և այն դեպքերում, երբ կապվող բառը անձ ցույց տվող գոյական է (անձ վերևի օրինակները):

Մանր.— Հնացած պետք է համարել այս կապի կիրառությունը լերաբերության իմաստով (հմմտ. մտածել մեկի հանգստության համար (= հանգստության մասին):

7. Բացահայտման կապերը՝ իրեւ, որպես, նաեւ՝ ինչպես մասնակցում են մասնական բացահայտիչ ձևավորելուն (օր.՝ նրան, որպես (իրեւ) լավ ուսանողի, ուղեգիր տվեցին): Սրանցից ինչպես-ը և որպես-ը արտահայտում են նաև համեմատության իմաստ ու կապվող գոյականի հետ կատարում են ձևի պարագայի պաշտոն (օր.՝ որպես (ինչպես) մրբիկ շաչե, շառաչե (Իս.): Այստեղ համանուն կառույցներ կարող են հանդիպել միայն այն ղեկավարում, երբ մասնավորող բացահայտիչը

լրացնում է ենթակայի կամ ուղիղ խնդրի, քանի որ հիշյալ կապերը ձևի, համեմատության իմաստ արտահայտում են գոյականի ուղիղ ձևի հետ: Օրինակ՝

Նա, որպես (ինչպես) աշակերտ, իրեն լավ է դրսևորում (բացահայտվել):

Քեզ որպես (ինչպես) աշակերտ պահիր (ձեի պարագա = աշակերտի նման):

Տ. Ձեր կապերը՝ պես, նման, ինչպես, նաև որպես (հնացած), կազմավորում են համեմատության երանգով ձևի պարագա: Սրանցից պես-ը ցույց է տալիս նաև ժամանակային անմիջական հաջորդականություն, սակայն այս դեպքում սովորաբար գրվում է անորոշ դերբայի տրական հոլովաձևի վրա (չրեյուն պես, բեռնեյուն պես), և այդ պատճառով նրանով կազմված կառույցները համանունական արժեք չեն ունենում: Ինչպես և որպես կապերը կարող են ձևավորել նաև մասնավորող բացահայտիչ, և, եթե վերջինս լրացնում է ուղղականով գրված բացահայտյալի, ինչպես սովից, սակավ դեպքերում կարող է ունենալ համանունական արժեք:

9. Չափի կապերը՝ չափի, ավելի, ավելի քան, մինչև հիմնականում մենիմաստ են և ձևավորում են միայն չափի պարագա՝ ցույց տալով գործողության գրասերման չափը, տարածային և ժամանակային սահմանափակումը, ինչպես նաև քանակը՝ համեմատության միջոցով (սաւրի չափի, ամպի չափի, գրքի չափի և այլն):

Ինչպես ասվեց, այս կապերով կառույցներից միայն մինչև-ով կազմվածները կարող են ունենալ համանունական արժեք, այն էլ սակավադեպ. հմտ. Մինչև ինստիտուտ քիչ է մնացել (= մինչև ինստիտուտ հասնելը և = մինչև ինստիտուտ ընկած տարածությունը):

10. Ընդդիմության կապերից ընդդեմ-ը մենիմաստ է և ձևավորում է միայն հանգման խնդիր (օր.՝ Նրանք դուրս եկան ընդդեմ քշնամինների), իսկ դեմ-ը գործառում է նաև որպես շեղի պարագա ձևավորող միջոց՝ երբեմն կազմելով համանուն կառույցներ (հատկապես անձնանունների հետ). Այսպես՝

Նա ելույթ ունեցավ Սուրենի դեմ (հանգման խնդիր):

Սուրենի դեմ գրված էր մի ծաղկաման (տեղի պարագա):

Նրանք պայքարում էին քշնամու դեմ (հանգման խնդիր):

Թշնամու դեմ ընկած էր մի ընդարձակ դաշտ (տեղի պարագա):

Ղեմ կապը գործառում է նաև ժամանակային հարաբերություն ար-

տահայտելու համար, սակայն այս դեպքում համահունկ կիրառության չենք հանդիպում, բանի բոլոր պարագայի կառույցները կազմվում են ժամանակ ցույց տվող գոյականներով (երեկոյան դեմ, առավոտյան դեմ, լույսի դեմ = լուսադեմին և այլն):

11. Միասնության կապերն են հանդերձ-ը և հետ-ը: Հանդերձը, ինչպես ասվեց, ժամանակակից հայերենում ավելի հաճախ գործառուժ է որպես զիջման պարագայի ցուցիչ և երբեմն կերտում է գործառական համահունկ կառույցներ: Հետ կապը, բացի միասնության խնդրից, կարող է ձևավորել հանգման, վերաբերության կամ միջոցի խնդիրներ և անձ ցույց տվող գոյականների հետ առանձին դեպքերում կերտել համահունկ կառույցներ: Օրինակներ՝

Նա դնաց ընկերոջ հետ (միասնության խնդիր):

Նա կովեց ընկերոջ հետ, ծանոթացավ ընկերոջ հետ (հանգման խնդիր):

Գիրքը ուղարկել էր ընկերոջ հետ (միջոցի խնդիր):

Ժամանակակից հայերենում կապական կառույցները կարող են գործառուժ նաև որպես գոյականական և ածականական բառակապակցությունների ստորագաս բաղադրիչներ²³:

Ածականական, նաև գոյականական ծագում ունեցող մի շարք կապերով (նման, համապատասխան, հակառակ, համաձայն, չափ, պես, մոտ և այլն) կառույցները, լրացնելով գոյականների, նախադասության մեջ կատարում են որոշիչ պաշտոն և հաճախ համահունկական շարք են կազմում նույն կառույցների պարագայական կիրառության հետ: Օր.

1. Արամի նման (պես) ընկեր ունես (որոշիչ):

Նա քայլում է Արամի նման (պես) (ձևի պարագա):

2. Կայացվեց ժամանակի ոգուն համապատասխան (հակառակ) որոշում (որոշիչ):

Նա գործում է ժամանակի ոգուն համապատասխան (հակառակ) (ձևի պարագա):

3. Շենքին կից կառույցում եռուղև է (որոշիչ):

Շենքին կից կառուցվեց նոր մասնաշենք (տեղի պարագա):

4. Սարի չափ դեղեր կային (որոշիչ):

Սարի չափ կուտակեցին (չափի պարագա):

Բայերին հարաբերակցող գոյականները կարող են ունենալ այնպիսի

²³ Տե՛ս վ. Քոչյան, նշված աշխ.:

կապական կառույցներով լրացումներ, ինչպիսին ունեն բայերը: Դրանք արտահայտում են նույն հարաբերությունները, ինչ համապատասխան խնդիրները և պարագաները, սակայն նախադասության մեջ դիտվում են կա՛մ որոշիչներ, կա՛մ լրացյալի հետ նախադասության մեկ անդամ: Ավելի հաճախ այս կառույցները հանդես են գալիս վերնագրերում և ղե-
րագաս գոյականի հետ ունեն վերնագրային-անվանողական արժեք («Հանդիպում էլբալի վրա», «Թռիչք դեպի լուսին», «Ճակատամարտ Մոսկվայի մոտ», «Պայքար կրակի համար», «Մրցույթ թափուր տեղի հա-
մար և ալյն): Բոլոր դեպքերում կապական կառույցների այս կիրառու-
թյունը որակապես տարբերվում է պարագայական և խնդրային կիրառու-
թյուններից և կարելի է դիտել որպես զործառական-շտաբհայտ-
սական համանուն կիրառություններ: Բավարարվենք միայն մի քանի
օրինակ բերելով:

1. Արձակուրդ մինչև օգոստոս (վերնագրային անվանողական արժեք):
Արձակուրդս տևեց մինչև օգոստոս (ժամանակային շափի պա-
րագա):
Ստացա արձակուրդ մինչև օգոստոս (որոշիչ):
2. Ճակատամարտ Մոսկվայի համար (վերնագրային-անվանողական
արժեք):
Տրվեց ճակատամարտ Մոսկվայի համար (որոշիչ):
Մոսկվայի համար մղված ճակատամարտը ավարտվեց հաղթանա-
կով (նպատակի պարագա):
3. Սեր դեպի գիտությունը (վերնագրային-անվանողական արժեք):
Սերը դեպի գիտությունը նրան տարավ Մոսկվա (որոշիչ):
Նա հատուկ սեր է տածում դեպի գիտությունը (հանգման խնդիր):
4. Վիճաբանություն հարցի շուրջը (անվանողական արժեք):
Ծավալվեց վիճաբանություն հարցի շուրջը (որոշիչ):
Վիճաբանեցին հարցի շուրջը (վերաբերության խնդիր):
5. Զինադադար հակառակորդ բանակների միջև (վերնագրային-անվա-
նողական արժեք):
Զինադադարը հակառակորդ բանակների միջև տևեց երկու ամիս
(որոշիչ):
Հակառակորդ բանակների միջև ընկած էր մի բնդարձակ դաշտա-
վայր (տեղի պարագա):
6. Պայքար բարձր առաջադիմության համար (վերնագիր):
Բարձր առաջադիմության համար պայքարը գովելի է (որոշիչ):

նրանք պայքարում են բարձր առաջադիմության համար (նւյառակի պարագա):

Երբ կապական կառուցի զոյական լրացյալը նախադասության մեջ ստորոգելիական վերադիր է, այն ձևը է բերում բայական արժեք, և կապական կառույցը կատարում է խնդրի կամ պարագայի պաշտոն (Հմմտ. Դա պայքար էր առաջադիմության համար: Ընդմիջում է մինչև ժամը երեքը: Հաշտություն է երկու երկրների միջև և այլն):

Եթե ածականը նախադասության մեջ ստորոգելիական վերադիր չէ, նրան լրացնող կապական կառույցները նախադասության մեջ առանձին անդամի պաշտոն չեն կատարում, այլ նրա (ածականի) հետ հանդիսանում են ծավալուն որոշիչներ, երբեմն նաև ձևի պարագաներ: Այդ իսկ պատճառով գործառական համանուն են նույն կառույցների պարագայական և խնդրային կիրառություններին: Հմմտ.

Գնացքը կանգ առավ ուղևորների համար անհայտ կայարանում (ծավալուն որոշիչ բաղադրիչ):

Ուղևորների համար թեյ բերեցին (հանգման խնդիր):

Մովի պես կապույտ աչքեր ունի (ծավալուն որոշիչ բաղադրիչ):

Նրա հոգին ալեկոծվեց ծովի պես (ձևի պարագա):

ԱԾԱԿԱՆԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ-ՇԱՐՄԱՆՈՒՄԱԿԱՆ ՀԱՄԱՆՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ

Ձևաբանական համաձայնությունը նվիրված գլխում խոսվեց այն մասին, որ ժամանակակից հայերենի խոսքի մասերի համակարգում կան մի խումբ բառեր, որոնք ունեն հավասարապես և՛ ածականի, և՛ մականի արժեք (շատ, քիչ, խիստ, սաստիկ և այլն):

Շարահյուսական մակարդակում երկարժեքություն՝ գործառական համաձայնություն կարող է ունենալ նաև բուն ածականների զգալի մասը: Քանի որ ածականը ցույց է տալիս առարկայի հատկանիշ, նրա հիմնական կիրառությունը զոյականի լրացում լինելն է, որոշիչ պաշտոնը՝ հնականաբար ածականը կարող է լինել նաև ստորոգելիական վերադիր՝ նշանակելով առարկային վերագրվող հատկանիշը. այսինքն՝ գրեթե բոլոր ածականները կազմում են գործառական համաձայնության երկանդամ շարք. օրինակ՝ սիրուն աղջիկ—Աղջիկը սիրուն է, վայալա սեղան—Սեղանը վայալա է, բարձրահարկ շենք—Շենքը բարձրահարկ է, մարդաշատ փողոց—Փողոցը մարդաշատ է և այլն:

Խոսքի մեջ ածականը կարող է ցույց տալ նաև գործողության հատկանիշ և կատարել պարագայի, հատկապես ձևի պարագայի պաշտոն:

Ածականները պարագայի պաշտոն կատարում են սովորաբար կապերի հետ, կամ մակբայակերտ ածանցներով մակբայի վերածվելուց հետո. օրինակ՝ աշխույժ կերպով—աշխուժորեն խոսել, լուրջ կերպով—լրջորեն մտածել, կտրուկ կերպով—կտրականապես մերժել, անվիպր կերպով—անփութորեն զցել, բնկերական ձևով խորհուրդ տալ, հիանալի ձևով ներկայացնել և այլն։ Սակայն շատ հաճախ ածականը առանց ձևաբանական կամ շարահյուսական փոփոխություն կրելու ևս կատարում է ձևի (երբեմն նաև շարի) պարագայի պաշտոն։ Պարագայական կիրառությամբ զործածվում են հատկապես որակական ածականները։ Այդ նույն ածականները. ինչպես ասվեց, կարող են լինել նաև ստորոգելիական վերադիր՝ կազմելով զործառական համանունական եռանդամ շարք։

Տեսներ, թե ածականների տարբեր խմբեր, զործառելով այս երեք պաշտոնում, ինչպիսի իմաստային հարաբերություններ կարող են ցույց տալ.

ա) Որակական ածականները, զրվելով գոյականների վրա, ցույց են տալիս վերջինիս որակային հատկանիշը և կատարում են որոշչի պաշտոն. օր.՝ պարզ եղանակ, աշխույժ երեխա, վալլուն աստղ, հպարտ կեցվածք, ժլատ մարդ, Բաղբը հայացք և այլն։ Այդ նույն ածականները, զործառելով որպես ստորոգելիական վերադիրներ, ցույց են տալիս այս հատկանիշները, որ վերադրվում է ենթակային (ենթակայի ցույց տված առարկային). օրինակ՝ եղանակը պարզ է։ Երեխան աշխույժ է։ Աստղը փայլուն է։ Կեցվածքը հպարտ է։ Մարդը ժլատ է։ Հայացքը Բաղբ է և այլն։ Այս նախադասությունները փաստորեն առաջին կառուցվածքների փոխակերպությունն են (պարզ եղանակ → եղանակը պարզ է → եղանակ, որը պարզ է։ Աշխույժ երեխա → երեխա, որը աշխույժ է → երեխան աշխույժ է)։

Դրվելով տարբեր իմաստային խմբերի պատկանող բայերի վրա՝ այդ ածականները ցույց են տալիս գործողության կատարման ձևը և կատարում են ձևի պարագայի պաշտոն. օրինակ՝ Նա պարզ խոսեց։ Երեխան աշխույժ վազում է, խոսում է։ Նա փայլուն պաշտպանեց, հպարտ է նայում, Բաղբը է խոսում և այլն։ Հաճախ ածականները ցույց են տալիս ոչ թե գործողության կատարման ձևը, այլ ենթակայի կամ խնդրի ցույց տված առարկաների (գործողության հետ անմիջապես առնչվող առարկաների) վիճակը, դրությունը, գործողության կատարման ժամանակը. օրինակ՝ Նա տխուր նստած էր (=տխուր վիճակում)։ Արամը անհամբեր (=անհամբեր վիճակով) սպասում էր բնկերոջը։ Նստեա նրան տխուր (տխուր վիճակում), կանգնած էր գունատ։ Եթե

ներկայացնենք համանունական այս շարքը, կատացվի հետևյալ պատկերը.

Հպարտ աղջիկը թեթևակի ժպտաց (որոշիչ):
Աղջիկը հպարտ է (ստորոգելիական վերադիր):
Աղջիկը հպարտ նայեց (ձևի պարագա):

Ճիշտ այնպես, ինչպես կրավորական¹ և ներգործական դուզահեռ կառուցվածքներում կարող ենք ունենալ մի կողմից ամբողջ նախադասությունների համանիշություն, մյուս կողմից՝ նախադասության անդամների գործառական համանունություն (հմմտ. Կատարեցին Բախի ստեղծագործություններից—Կատարվեցին Բախի ստեղծագործություններից), ճիշտ նույն ձևով այստեղ ևս երբեմն որոշիչ — ստորոգելիական վերադիր գործառական համանունությունը կարող է երևան գալ համանիշ նախադասություններում (հմմտ. Նա աշխույժ էրևիսա է — Երևիսան աշխույժ է: Նա հպարտ կեցվածք ունի — Նրա կեցվածքը հպարտ է: Անահիտը խելոք աղջիկ է — Անահիտը խելո՛ւ է:

բ) Ծավալային և տարածական հատկանիշ ցույց տվող մի շարք ածականներ (երկար, կարճ, անսահման, կիսատ և այլն) մակերայական դիրքում կատարում են չափի պարագայի պաշտոն: Այս դեպքում ևս համանունությունը եռանդամ է, սակայն երրորդ անդամը ոչ թե ձևի, այլ չափի պարագա է. օրինակներ՝

1. Ճանապարհին ընկած էր մի երկար պարան (որոշիչ):

Պարանը երկար էր (ստորոգելիական վերադիր):

Նա երկար նայեց ընկերոջ հոտից (չափի պարագա):

2. Նրա առաջ փռված էր մի անսահման տարածություն (որոշիչ):

Նրա ուրախությունը անսահման էր (ստորոգելիական վերադիր):

Նա անսահման ուրախացավ (չափի պարագա):

3. Վերցրի փայտի մի կարճ կտոր (որոշիչ):

Փայտի կտորը կարճ էր (ստորոգելիական վերադիր):

Այս անգամ նա կարճ խոսեց (չափի պարագա):

Նախադասության մեջ ածականը կարող է կատարել այս երեք պաշտոններից մեկը²⁴, թե ինչ պաշտոն և արժեք ունի ածականը տվյալ նախադասության մեջ, պարզ երևում և հեշտությամբ որոշվում է, քանի

²⁴ Այստեղ հարկ է նշել, որ առնվում ածականների փոխանունական կիրառությունները, էրբ այն գործառում է բիրեն գոյական և կատարում նրան բնորոշ գրեթե բոլոր պաշտոնները:

որ ածականը յուրաքանչյուր պաշտոնի դեպքում ունի իր որոշակի դիր-
րը. որոշչի պաշտոնում գրվում է գոյականից առաջ կամ երբեմն հետո
(շրջուն շարադասություն), ստորոգելիական վերագրի պաշտոնում գու-
գորգվում է հանգույցին և գրվում նրանից առաջ, պարագայի պաշտո-
նում գրվում է բայի մոտ (առաջ կամ հետո): Սակայն երբեմն ածակա-
նը գրավում է միջին դիրք գոյականի և բայի միջև, և դժվար է լինում
որոշել՝ ետագա սորոշիչ է, թե՞ ձևի կամ շափի պարագա: Այս դեպքում
շարահյուսական հարաբերությունների առումով երկակի մեկնաբանու-
թյուն է ստանում և համանունական արժեք է ունենում նաև ամբողջ նա-
խադասությունը. օրինակ՝ Աղջիկը հարտ կանգնել էր:

Ձինվորները հաղթական վերադարձան:

ՄԱԿԲԱՅՆԵՐԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ-ՇԱՐԱՀՅՈՒՄԱԿԱՆ ՀԱՄԱՆՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ

Նախադասության մեջ մակբայների հիմնական կիրառությունը բա-
յական անդամի լրացում լինելն է՝ պարագայական պաշտոնը: Լրացնե-
լով նաև ածականներին՝ մի շարք մակբայներ վերջիններիս հետ կազմում
են կայուն կապակցություններ և նախադասության մեջ կատարում մեկ
անդամի պաշտոն: Ածականի լրացում կարող են լինել հատկապես ձևի,
շափի, մասամբ նաև ժամանակի մակբայները (վերին աստիճանի, շա-
փազանց գեղեցիկ, բոլորովին առողջ, փոքր ի շատե գիտակ, չափազանց
հին, կրկնապատիկ հարտ, միշտ արթուն, տակավին գեղեցիկ, դեռ
երիտասարդ, ֆիզիկապես առողջ, հոգեպես հանգիստ և այլն):

Մակբայները երբեմն լրացնում են նաև գոյականի, հատկապես բա-
յական կամ ածականական ծագում ունեցող գոյականների²⁵, այս դեպ-
քում արդեն կատարելով նախադասության անկախ անդամի՝ որոշչի պաշ-
տոն: Գոյականի լրացում դառնում են հիմնականում ձևի և ժամանակի
մակբայները. օրինակ՝ Գնում էր դանդաղ ընթացքով: Անակնկալ հան-
դիպումից հուզվեց: Կայացրին հալվեալ, շուտափույթ որոշում: Ջարմա-
ցավ նրա վաղ ալյեղությունից, կրկին հանդիպումից: Ավելի հաճախ
ժամանակի մակբայները լրացնում են ժամանակ ցույց տվող գոյական-
ների և նրանց հետ կատարում նախադասության մեկ անդամի պաշտոն.
օրինակ՝ Ի՞նչ ես անում այս ուշ ժամին: Միծեռնակները վերսդառնում
են վաղ գարնանը: Արթնացա վաղ առավոտյան և այլն:

25 Մանրամասն տե՛ս Վ. Քոստան, նշված աշխ., էջ 161:

Երբ այս երեք կիրառության մեջ հանդես է գալիս նույն մակրայը, դարձյալ առկա է գործառական համանունության երևույթը: Համանուն արժեքով կարող են հանդես գալ հատկապես հետևյալ մակրայները.

ա) չափի մակրայները: Այս մակրայները չափի պարագայի պաշտոնում ցույց են տալիս գործողության գրեթե ման չափը (օրինակ՝ Նա վերին աստիճանի հուզված էր): Դրվելով տծակունների վրա՝ սրանք աշտահայտում են ածականի ցույց տված հատկանիշի գրեթե ման աստիճանը և նրա հետ միասին կատարում են նախագաստության մեկ անդամի՝ որոշչի կամ ձևի պարագայի պաշտոն (օրինակ՝ վերին աստիճանի հետաքրքիր գիրք է: վերին աստիճանի հետաքրքիր խոսեց): Ես ածականը կատարում է ստորոգելիական վերագրի պաշտոն, նրա մակրայ լրացումը դիտվում է չափի պարագա (հմտ. նա չափազանց գեղեցիկ է): Այս մակրայները գոյականի լրացում ստվորարար չեն լինում (հանդիպում են միայն այդպիսի կիրառության առանձին դեպքեր. օրինակ՝ բազմակի չեմպիոն, չափազանց գեղեցկություն, կրկնակի հանգստություն և այլն): Հետևաբար այս մակրայները գործառական հիմնականում երկարժեք են: Բերենք օրինակներ՝

1. Այդ լուրը ծայրաստիճան ուրախացրեց մեզ (չափի պարագա):

Դա ծայրաստիճան հետաքրքիր նորույթ էր (ծավալուն որոշչի բաղադրիչ):

2. Նա բավական խոսեց (չափի պարագա):

Նա բավական երկար խոսեց (ծավալուն չափի պարագայի բաղադրիչ):

3. Չափից դուրս հոգնած եմ (չափի պարագա):

Նա չափից դուրս հանդիստ բնավորություն ունի (ծավալուն որոշչի բաղադրիչ):

Նաև՝

Չափից դուրս հանգստությունն էլ մի բան չէ (որոշիչ):

Նույն ձևով նաև՝ բոլորովին մոռանալ — բոլորովին հանդիստ, չափազանց հոգնել — չափազանց գեղեցիկ — չափազանց գեղեցկություն, պակաս հետաքրքիր — պակաս հետաքրքիր, կիսով չափ փորել — կիսով չափ հին և այլն:

Բ) ձևի մակրայները: Այս մակրայները ձևի պարագայի պաշտոնում ցույց են տալիս գործողության կատարման ձևը. օր.՝ դանդաղ, մեկ-մեկով գնալ, գիտակցորեն մոռենալ, ակամա հուզվել և այլն): Սրանց մի մասը (սեփորաբար, անհունորեն, ֆիզիկապես, ի բնե և այլն) կարող

են լրացնել ածականի և նրա հետ միասին կատարել որոշչի, նաև ձևի պարագայի պաշտոն (օրինակ՝ ֆիզիկապես առողջ մարդը հոգեպես ևս առողջ կլինի)։ Ձևի պարագաները երբեմն կարող են լրացնել նաև գոյականի և կատարել որոշչի պաշտոն (օր.՝ ղեպրերի դանդաղ ընթացքը անհանգստացրեց մեզ)։ Ձևի մակբայների մի մասը, հանդես գալով այս կիրառություններով, կարող է կազմել համանունական երկանդամ կամ եռանդամ շարքեր (ալելիի հաճախ՝ երկանդամ)։ Ահա օրինակներ՝

1. Անակնկալ հանդիպեցի ընկերոջս (ձևի պարագա)։

Անակնկալ հանդիպումից մի պահ կանգ առա (որոշիչ)։

2. Ակամա կանգ առա (ձևի պարագա)։

Ակամա հետաքրքրությամբ նայեցի նրան (որոշիչ)։

3. Հանդարտ գրում է (ձևի պարագա)։

Գևորգ հոսում է հանդարտ ընթացքով (որոշիչ)։

4. Ֆիզիկապես շատ եմ հոգնել (ձևի պարագա)։

Ֆիզիկապես առողջ մարդու համար դա դժվար չէ (ծավալուն որոշչի բաղադրիչ)։

5. Հապենայ հեռացավ (ձևի պարագա)։

Հապենայ բայելքով դնաց (որոշիչ)։

6. Նա ի բնե հանդիստ բնավորություն ունի (ձևի պարագա)։

Նա ի բնե խելոք աղջիկ է (ծավալուն որոշչի բաղադրիչ)։

Ի բնե գեղեցկությունն էլ երջանկություն է (որոշիչ)։

դ) Ժամանակի մակբայները։ Այս մակբայները ժամանակի պարագայի պաշտոնում ցույց են տալիս գործողության կատարման ժամանակը (օրինակ՝ Նա միշտ լավ է պատասխանում դասը)։ Նրանք ածականի լրացում լինում են սովորաբար այն ժամանակ, երբ վերջինս ստորոգելիական վերադիր է. այս ղեպրում նրանք դիտվում են ժամանակի պարագա և բնականաբար համանունական կապի մեջ չեն նախորդ կիրառության հետ (հմտ. Նա միշտ քնած է, ինչպես արթուն է)։ Առանձին ղեպրերում սրանք կարող են լրացնել ածականի նաև այլ կիրառություններում՝ նրա հետ միասին կատարելով ծավալուն որոշչի կամ պարագայի պաշտոն. օրինակ՝ երբեմն տխուր, երբեմն ուրախ դեմք ունի։ Հեռվից լսվեց նրա միշտ հանելի ձայնը։ Ժամանակի մակբայները լրացնում են հիմնականում ժամանակ ցույց տվող գոյականների և նրանց հետ կատարում են մեկ անդամի, սովորաբար ժամանակի պարագայի պաշտոն. օրինակ՝ եկավ ուղ գիշերին, վաղ առավոտյան։ Այս կապակցությունները կարծես կաշունացել են և ձեռք բերել մակբայական ար-

ժեք: Այլ գոյականի լրացնելիս ժամանակի մակբայները նախադասութեան մեջ կատարում են որոշչի պաշտոն. օրինակ՝ Գոյությունն համար հավերժ պայքարին մասնակցում է ամբողջ կենդանական աշխարհը:

Ուրեմն՝ այստեղ ես գործառական համանունությունը լինում է սոսկորաբար երկանդամ, երբեմն նաև եռանդամ: Ահա օրինակներ.

1. Նա միշտ ուշանում է (ժամանակի պարագա):

Հսկեց նրա միշտ աշխույժ, միշտ հաճելի ձայնը (ծավալուն որոշչի բաղադրիչ):

2. Այսօր ուշ արթնացա (ժամանակի պարագա):

Ի՞նչ ես անում այս ուշ ժամին (որոշիչ):

3. Երբեմն կարդում եմ (ժամանակի պարագա):

Ինձ միշտ ղարմացնում է նրա երբեմն զեղեցիկ, երբեմն տգեղ դեմքը (ծավալուն որոշչի բաղադրիչ):

4. Նա հավերժ կսպրի մեր սրտերում (ժամանակի պարագա):

Նրա հավերժ կենդանի հիշատակը միշտ վառ կմնա մեր սրտերում (ծավալուն որոշչի բաղադրիչ):

Մաղթեցինք նրան հավերժ առողջություն (որոշիչ):

դ) Բնականաբար գործառական համանունություն ունեն նաև այն բոլոր բառերը, որոնք լեզվում գործառում են հավասարապես և՛ որպես ածականներ, և՛ որպես մակբայներ: Օրինակ՝ խիստ խոսել — խիսաբնություն, լավ գրել — լավ երեխա, ուրախ բնավորություն — ուրախ խոսել և այլն:

Սրանք են մակբայների գործառական համանունության ղեկավարներ:

- ԱԲ — Ակսել Բալունց, Երկեր, 1955:
- ԱՍԵԿ — Անահիտ Սեկոյան, Ոսկե վաղերի մեջ, 1958:
- ԲԶՍԶ — Բաղիշ Հովսեփյան, Սերմնացանները չվերադարձան, 1962:
- ԴՄԵՍ — Դուրդեն Մահարի, Երիտասարդության սեփին, 1956:
- ԴՍԹ — Դաբեգին Սետնց, Թեհրան, 1953:
- ԴԳ — Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, 1956:
- ԵԶԸԵ — Եղիշե Չարենց, Ընտիր Երկեր, 1955:
- ԵԵ — Երեկոյան Երևան, օրաթերթ:
- Իս. — Ավետիք Իսահայան, Երկերի ժողովածու, 1950—1951:
- ՀԹ — Հովանենես Թումանյան, Երկեր, 1940, 1945, 1951:
- ՀՔՄՏԶ — Հրաչյա Քոչար, Մեծ տան զավակները, 1959:
- ՀՔՍԳ — Հրաչյա Քոչար, Սպիտակ գիրքը, 1965:
- ՀՍ — Համո Սահյան:
- ՀԾ — Հովանենես Շիրազ, Քնար Հայաստանի, 1958:
- Մ — Մուրացան, Երկերի ժողովածու, 1952—1961:
- ՆԴ — Նար-Դոս, Երկերի ժողովածու, 1955:
- ՆԶՀ — Նաիրի Ջարյան, Հացավան, 1960:
- Շ — Շիրվանզադե, Երկերի ժողովածու, 1950, 1951:
- ՊՍ — Պարույր Սեակ, Երկերի ժողովածու, 1970:
- ՍԶԵԺ — Ստեփան Ջորյան, Երկերի ժողովածու, 1960—1962:
- Ս. Արվ. — Սովետական արվեստ, ամսագիր:
- ՍԳ — Սովետական զրահանություն, ամսագիր:
- ՍԳ — Սովետական զրահանություն, ամսագիր:
- ՍԿ — Սիվա Կառուսկյան:
- ՍՀ — Սովետական Հայաստան, օրաթերթ:
- ՍԽՄԳՄ — Սերո Խանդադյան, Մեր գնդի մարդիկ:
- ՍԽՔ — Սերո Խանդադյան, Քաջարան, 1965:
- ՎՓԵԺ — Վրթանես Փափադյան, Երկերի ժողովածու, 1958:
- ՎՏ — Վահան Տերյան:
- ՎՓՀՀ — Վահրամ Փափադյան, Հետադարձ հայացք, 1956:
- Բ — Բաֆֆի, Երկերի ժողովածու, 1955—1959:
- ՎԱՀԳ — Վախթանգ Անանյան, Հովազաձորի դերիններ:

ՕՒՏԱԿՈՐԾԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՀԱՆԿ

- Աբելյան Մ., *Հայոց լեզվի տեսություն*, Երևան, 1965:
- Աբրահամյան Ա. Ա., *Հայերենի զերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը*, Երևան, 1953:
- Աբրահամյան Ա. Ա., *Բայր ժամանակակից հայերենում*, Երևան, 1962:
- Աբրահամյան Ա. Ա., *Հայերենի բերականական համանունության շուրջը*, ՊԲՀ, 1974, № 1:
- Աբրահամյան Ա. Գ., *Ժամանակակից հայերենի շարահյուսության մի բանի հարցեր*, Երևան, 1962:
- Աբրահամյան Ս. Գ., *Զերբովոլ խոսքի մասերը և նրանց բառական ու բերականական առկանիչների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում*, Երևան, 1965:
- Աբրահամյան Ս. Գ., *Ժամանակակից հայերենի բերականություն*, Երևան, 1969:
- Աբրահամյան Ս. Գ., Պառնոսյան Ն. Ա., Սևանյան Հ. Ա., *Ժամանակակից հայոց լեզու*, հ. II, III, 1974, 1976:
- Աղայան Է. Բ., *Լեզվաբանության ներածություն*, Երևան, 1963:
- Աղայան Է. Բ., *Բայի ձևաբանական կառուցվածքը ժամանակակից հայերենում*, ՊԲՀ, 1963, № 3:
- Աղայան Է. Բ., *Բայակադմությունը ժամանակակից հայերենում*, Երևան, 1963, ԳԱՏ № 5:
- Աղայան Է. Բ., *Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը*, Երևան, 1967:
- Անադյան Հ., *Լիակատար բերականություն հայոց լեզվի՝ համեմատությամբ 562 լեզուներին*, հ. 1—5, Երևան, 1952—1967:
- Ասրունյան Ա., *Քննական բերականություն աշխարհարար կամ արդի հայերեն լեզվի*, Վիեննա, 1866:
- Առաֆևյան Վ., *Ժամանակակից հայերենի հոլովների և հոլովական կապակցությունների մաստալին առումները*, Երևան, 1957:
- Առաֆևյան Վ., *Հայերենի շարահյուսություն*, հ. 1—2, Երևան, 1958—1964:
- Ասատուրյան Ա., *Հին և նոր բանավեճեր ժամանակակից հայերենի հոլովական համալարելի շուրջը*, ԲԵՀ, 1968, № 2:
- Ասատուրյան Մ., *Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր*, հ. Ա—Բ, Երևան, 1970—1973:
- Բարսեղյան Հ. Խ., *Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն*, Երևան, 1953:
- Գուրբույաղյան Ա. Վ., *Միակազմ նախադասությունները ժամանակակից հայերենում*, Երևան, 1967:
- Էդյան Ա., *Ածանցները ժամանակակից հայերենում*, Երևան, 1963:
- Իսխանյան Ռ., *Արդի հայերենի հոլովումը և խոնարհումը*, Երևան, 1971:

- Հարությունյան Հ. Ա., Անդամ նախադասությունները ժամանակակից հայերենում, Երևան, 1970:
- Կարգարյան Ա. Ա., Արդի հայերենի կապերը, 1955:
- Մուրվաթյան Ա., Հայերենի բալադանցները, ԼիՍժ, 1, 1946:
- Շալունց Թ., Համառոտ բառերը ժամանակակից հայերենում, 1972, ձևագիր:
- Պապուրյան Ա., Տեղաշարժեր հայերենի հոլովման հարացույցում, ՊԲՀ, 1964, № 4:
- Պառնասյան Ե. Ա., Շարահյուսական համանիշները ժամանակակից հայերենում, Երևան, 1970:
- Պառնասյան Ե. Ա., Ձևաբանական և բառաբերականական համանիշները ժամանակակից հայերենում, «Հայոց լեզվի կառուցվածք», 1975:
- Պետրոսյան Հ., Գոյականի թվի կարգը հայերենում, Երևան, 1972:
- Ջաևունյան Գ. Թ., Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Երևան, 1969:
- Ջաևունյան Գ. Թ., Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974:
- Սեակ Գ., Ժամանակակից հայոց լեզվի զարբերաց, Երևան, 1955:
- Քոսյան Վ. Ա., Ժամանակակից հայերենի բառակապակցությունները, Երևան, 1975:
- Օհանյան Հ. Ա., Ածականը ժամանակակից հայերենում, Երևան, 1962:
- Абасс В. И., О подаче омонимов в словаре. ВЯ. 1957, № 3.
- Адмони В. Г., Партиктурное строение речевой цепи и система грам. значений в предложении. «Научные доклады высшей школы, фил. науки», 1961, 3 (15).
- Апресян Ю. Д., Опыт описания значений глаголов по их синтаксическим признакам (типам управления). ВЯ. 1965, № 5.
- Апресян Ю. Д., Иден и методы совр. структурной лингвистики, М., 1966.
- Арсенева М. Г., Строева Т. В., Хазанович А. Л., Многозначность и омонимия, Л., 1950.
- Арекин В. Д., Омонимы в английском языке, «Иностранные языки в школе», 1953, № 4
- Ахманова О. С., Очерки по общей и русской лексикологии, М., 1957.
- Ахманова, Мельчук и др., О точных методах исследования языка, М., 1967.
- Балли М., Общая лингвистика и вопросы французского языка, М., 1955.
- Белжкриницкая С. С. и др., Различные типы омонимии и способы их различия при машинном переводе, ВЯ, № 2.
- Будагов Р. А., Введение в науку о языке, М., 1958.
- Будагов Р. А., Литературные языки и языковые стили, М., 1967.
- Благовещенская О. В., Заметки об омонимах и их подаче в словаре, ВЯ. 1973, № 6.
- Булаховский Л. А., Из жизни омонимов, «Русская речь» под ред. Щербы, Новая серия, III, Л., 1928.
- Булаховский Л. А., Введение в языкознание, ч. II, М., 1954.
- Виноградов В. В., О грамматической омонимии в современном русском языке, «Русский язык в школе», 1940, № 1.
- Виноградов В. В., Об омонимии и смежных явлениях, ВЯ, 1960, № 5.
- Виноградов В. В., Основные типы лексических значений слова, ВЯ, 1953, № 5.
- Галкина-Федорук Е. М., К вопросу об омонимах в русском языке, «Русс. яз. в школе», 1954, № 3.

- Галкина-Федорук Е. М., и др., Современный русский язык. ч. II. М., 1958.
- Гвоздев Н. А., Современный русский литературный язык. ч. II. М., 1958.
- Гвоздев Н. А. Об одной проблеме стилистики, в кн. «Очерки по стилистике русского языка», изд. 3-е, М., 1965.
- Горбань В. Г., К вопросу о разграничении полисемии и омонимии. «Вопросы теории и методики преподавания ин. яз.», вып. I, Казань, 1966
- Григорьев В. Л., Обсуждение проблемы омонимии, ВЯ, 1958, № 2.
- Данеш Фр., Опыт теоретической интерпретации синтаксической омонимии, ВЯ, 1964, № 6.
- Дрейзин Ф. А., Синтаксическая омонимия, «МПИ и прикладная лингвистика», 1966, № 9.
- Егерман Л. Ю. Об определении омонимов в плане отличия омонимии от полисемии, сб. «Вопросы современного русского литературного языка. Грамматический строй и стилистика», вып. 3, Челябинск, 1968.
- Ельмслев Л., Прологоны к теории языка.
- Иорданская Л. Н., Синтаксическая омонимия в русском языке, НТН, серия 2, 1967, № 5.
- Задорожный М. И., О границах полисемии и омонимии, М., 1972
- Звегинцев В. А., Семаснология, М., 1957.
- Золотова Г. А., Очерк функционального синтаксиса русского языка, М., 1973.
- Инвариантные синтаксические значения и структура предложения, сб. М., 1969.
- Ингве В. Г., Синтаксис и проблемы многозначности. «Машинный перевод», М., 1957.
- Исаченко А. В., О грамматическом значении, ВЯ, 1961, № 1
- Исаченко А. В., Бинарность, привативные оппозиции и грамматические значения, ВЯ, 1963, № 6.
- Кацнельсон С. Д., Содержание слова, значение и обозначение, М., 1965.
- Комлев Н. Г., Компоненты содержательной структуры слова, М., 1969.
- Коптилов В. В., О формальном разграничении омонимии и полисемии, сб. «Прикладная лингвистика и машинный перевод», Киев, 1962.
- Курилович Е. Р., Заметки о значении слова, ВЯ, 1955, № 3.
- Курилович Е. Р., Очерки по лингвистике, М., 1954.
- Мартин А., Нейтрализация и синкретизм, ВЯ, 1969, № 2.
- Мартин А., Основы общей лингвистики, НЛ, вып. 3, М., 1963.
- Мельчук И. А., Автоматический синтаксический анализ, Новосибирск, 1964.
- Муравицкая М. П., Некоторые вопросы полисемии, Киев, 1969.
- Мухин А. М., Понятие нейтрализации и функциональные лингвистические единицы, ВЯ, 1962, № 5.
- Новиков Л. А., Об одном из способов разграничения полисемии и омонимии, «Русский язык в школе», 1960, № 3.
- Новиков Л. А., К проблеме омонимии, «Лексикографический сборник», вып. 4, 1960.
- Новое в лингвистике. 1—5, М., 1960—1970.

- Пассек В. В., К омонимии словоизменительных суффиксов (окончаний) в английском языке, ВЯ, 1960, № 5.
- Потебня А. А., Из записок по русской грамматике, т. IV, М.—Л., 1941.
- Ройзензон Т. И., Абрамзон И. В., Совмещенная омонимия в сфере фразеологии, ВЯ, 1969, № 2.
- Скаличка В., Асимметричный дуализм языковых единиц, «Пражский лингвистический кружок», М., 1967.
- Смирницкий А. И., Лексикология английского языка, М., 1966.
- Смирницкий А. И., Некоторые замечания по английской омонимии, «Иностранные языки в школе», 1948, № 5.
- Сравнительно-семаснологические исследования, М., 1963.
- Степанов Ю. С., Основы языкознания, М., 1966.
- Тер-Арикелян Р., О различении омонимических синтаксических структур в современном русском языке в сопоставлении с армянским языком, Вестник общественных наук АН Арм. ССР, 1977, № 7.
- Трика Б., Замечания об омонимии, сб. «Пражский лингвистический кружок», М., 1967.
- Холодович А. А., Опыт теории подклассов слов, ВЯ, 1960, № 1.
- Шайкевич А. Я., О принципах классификации омонимов, «Процессы развития в языке», М., 1959.
- Шендельс Е. И., О грамматической полисемии, ВЯ, 1962, № 3.
- Шумилов Н. Ф., К вопросу о разграничении полисемантизма и омонимии, «Русский язык в школе», 1956, № 3.
- Щерба Л. В., Опыт общей теории лексикографии, «Избранные работы по языкознанию и фонетике», т. I, ЛГУ, 1958.
- Harper K. E., Contextual Analysis, Mech. translation, vol. 4, № 3, 1956.
- Karcevski S., Du Dualisme asymétrique du signe linguistique, CF de S, 14 Geneve, 1956.
- Kurylowitz J., Le probleme du classement des cas, BPTJ, IX, 1949.



Բ Ո Վ Ա Ն Կ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	
Հարցի պատմությունը	15
Քերականական համանունությունը և նրա տարբերակումը քերականական բաղմ- իմաստությունից	34
ՋԵՎԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՆՈՒՆՆԵՐ	
Ա. Համաճեղձ ձևային	34
1. Հոլովման համակարգի քերականական ձևայինները և նրանց կազմած համա- նունական շարքերը	34
2. Բայական համակարգի քերականական ձևայինների կազմած համանունական շարքերը	50
Բ. Բառաձևերի համաճեղձական շարքեր	65
1. Բառաձևերի ներհարացույցային համանունական շարքերը բայական համակար- գում	66
2. Գոյականական համակարգում գործող համանուն բառաձևեր	78
3. Խոնարհման և հոլովման համակարգերի բառաձևերի միջհարացույցային հա- մանունական շարքերը	79
4. Խոսքի մասերի սխեմայի հետևանքով առաջացած համանուն բառաձևեր	87
ա. Գոյական-ածական	88
բ. Գոյականի թեր հոլոված-ածական	94
գ. Գոյական-ենթակայական դերայ	95
դ. Ածական-հարակատար դերայ և գոյական-հարակատար դերայ	96
ե. Գոյական-մակրայ	96
զ. Գոյական-կապ	97
է. Ածական-կապ	99
ը. Բայ-կապ	99
թ. Ածական-մակրայ	100
ժ. Բայ-շաղկապ-եղանակավորող բառ, բայ-եղանակավորող բառ, բայ- շաղկապ-կապ	100
ի. Մակրայ-կապ, կապ-շաղկապ	101

ՇԱՐԱՀԱՅՈՒԹԱԿԱՆ ՀԱՄԱՆՈՒՆՆԵՐ	103
Նախադասության կառուցվածքի և բնույթի հետ կապված համաճեղքներ	107
Համանուն միակազմ նախադասություններ	107
Համանուն թերի նախադասություններ	113
Համանուն հարցական նախադասություններ	114
Համանուն հրամայական նախադասություններ	117
Համանուն երկրորդական նախադասություններ	118
Բառաների և կապական կառույցների գործառական համաճեղքությունը	121
Գոյականի ուղղվածների գործառական-շարահյուսական համաճեղքությունը	125
1. Ուղղական հոլովով դրված գոյականների գործառական համանունությունը	125
2. Սեռական-արական հոլովածեղքով դրված գոյականների գործառական համանունությունը	133
3. Բացասական հոլովով դրված գոյականների գործառական համանունությունը	143
4. Գործիական հոլովով դրված գոյականների գործառական համանունությունը	151
5. Ներգոյական հոլովով դրված գոյականների գործառական համանունությունը	159
6. Կապական կառույցների գործառական համանունությունը	161
Սծականի գործառական-շարահյուսական համաճեղքությունը	172
Մակրայնների գործառական-շարահյուսական համաճեղքությունը	175
Համառոտագրություններ	179
Օգտագործված դրականություն և աղբյուրների ցանկ	180

ԿԼԱՐԴ ԱՎԵՏԻՄԻ ՊԱՌՆԱՍՅԱՆ

**ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՆՈՒՆՆԵՐԸ
ԺԱՄԱՆԱԿԻՅ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ**

Տպագրվում է Հայկական ՍՍՀ ԳԱ
Հր. Անադյանի անվան լեզվի ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Հրատարակչական խմբագիր

Ժ. Մ. ԱԳՈՆՅ

Նկարիչ

Յու. Հ. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Պեղարվեստական խմբագիր

Հ. Ն. ԳՈՐՄԱԿԱԼՅԱՆ

Տեխնիկական խմբագիր

Հ. Մ. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

Սրբագրիչ

Է. Ա. ՍՈՒԿԻՅԱՆ

ՎՅ 00024

Պատվեր 1301

Հրատ. 4338

Տպարանակ 3000

Հանձնված է շարվածքի 6. 12. 1978 թ.: Ստորագրված է տպագրության 22. 05. 1979 թ.:
Տպագրական 11,75 մամուլ, հրատ. 10,0. մամուլ, պայման. 10,92 մամուլ: Թուղթ № 1,
տպագրական $60 \times 84 \frac{1}{16}$, տառատեսակ՝ «գրքի սովորական», տպագրություն՝ հարթ:
Գինը 1 ա. 55 կ.:

Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 375019, Երևան, Բարեկամության 24դ

Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչության Երևանի տպարան

Издательство АН Армянской ССР, Ереван, Барекамутян. 24-г.

Ереванская типография АН Арм. ССР, Ереван, Барекамутян, 24.



14.556



ՀԱՍ Յիմնարար Գիտ. Գրադ.



220062185

1a. 856



ՀԱՆՐԱՊԵՏԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏ. ԳՐԱԴ.



220062185